



829

七 五







ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1890

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1890 № 1

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Երես

1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ ԱԻՆՏԻԲ . . .	5	Գործերի զրույթիւնը:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ . . .	11	Կալ անգլին մի բան . . . (բանաստ.):
3 " " " " . . .	13	Ներքիւր ինձ . . . (բանաստեղծութ.):
4 ԱՐՄԻԻԵԱՆ . . .	14	Գարուս զաւակը (բանաստեղծութ.):
5 " " " " . . .	15	Հասարակաց մշակին (բանաստեղ.):
6 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ . . .	17	Պատրիկեանի նամակները:
7 ԲԱԼՈՒԳԵԱՆՅ ԶԱԽԱԳ . . .	36	Լեանցու հալ աղջկալ երգը (բան.):
8 ԱՐԵՂԵԱՆ Մ . . .	38	Աղղալին վէտը (չարունակութիւն):
9 ՊՈՌՇԵԱՆՅ ՊԵՐՃ . . .	50	Բզզէ (չարունակութիւն):
10 ՍԱՐԳՍԵԱՆՅ ԼԵՒՈՆ . . .	84	Ազց թիւրքաց Հալաստանին (չար.):
11 Լ. Ա., Ա. Ա. . . .	102	Դրախտութիւն:
12 ԼԷՐ . . .	113	Մեր կեանքից:
13 ԳԱԶԱՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԻ . . .	122	Բանւորների զրույթիւնը Կարսում:
14 " " " " . . .	131	Թղթակցութիւններ Արտասահմանից:
15 Շ. . . .	139	Քաղ. Տեռ. Կարողան 1890 չէմբում:
16 ԽՄԲ. . . .	154	Խմբադրութեան կողմից:
17 " " " " . . .	155	Բողոք Սիւլիւկի դէմ:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՈՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинианца, на Гол. просп. соб. д. № 41.

1890



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1890

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1890 № 1

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ԻՐ. Դ. ԻՌՏԻՆԵԱՆՅԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Декабря 1889 г.

Типогр. М. Д. Ротавіанца, на Гол. просп. соб. д. № 41.

„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1890 թ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակէի ամէն ամիս 9—11 թերթ մե-
ծութեամբ, եթէ բաժանորդագրութիւնը բաւականաչափ չաջող լինի:

«ՄՈՒՐՃ»-ի խմբագրութիւնը դիմում է իւր բոլոր ներկայ բա-
ժանորդներին խնդրելով, որ նոքա իրանց կողմից ջանք չը խնայեն՝
«Մուրճ»-ը իրանց շրջաններում տարածելու համար:

«ՄՈՒՐՃ»-ի 1889 թ. 12 համարները ծախուում են 12 րուբ-
լիով: Բայց ներկայ 1890 թ. նոր բաժանորդները արտօնութիւն
ունին անցեալ 1889 թ. «Մուրճ»-ը ստանալ 8 րուբլիով ուղղակի
խմբագրութիւնից, երկու հատորներով կազմած:

«Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 րուբլի:

Ուսուցիչները վճարում են 9 ռ., ուսանողները՝ 8 ռ.: Ընդուն-
ւում է բաժանորդագրութիւն նաեւ մաս-մաս, առաջին կիսամեա-
կում ամբողջը վճարելու պայմանով:

Ուրիշ տեղերից դիմում են՝ Тифлисъ. Редакция журнала
„МУРЧЪ“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase). Rédaction de la Revue
«MOURTCH».

"S 74 R U"

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

CHICAGO, ILL.

1904

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
PUBLISHED BY THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
CHICAGO, ILL.
1904

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
PUBLISHED BY THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
CHICAGO, ILL.
1904

ԳՈՐԾԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Բոլոր հաստատութիւնները, տարեմուտին, բնականապէս իրանց հարց են տալիս, թէ արդեօք ի՞նչ դրութեան մէջ են իրանց գործերը: Մենք ենթադրում ենք, որ մեր ազգը նոյնպէս ունի իւր գործերը, իւր խնդիրները: Խնդիրը սա է, թէ ի՞նչ դրութեան մէջ են նոքա այժմ, 1890 թւականի տարեմուտին:

Ընդարձակել բոլոր խնդիրների մասին, որոնք վերաբերում են հայերին առհասարակ,—մենք չենք կարող այստեղում:

Ռուսա-հայերիս նկատմամբ այն խնդիրները, որոնց հերթական կարող ենք համարել, կան՝ որ մարմնաւոր իշխանութեան օրդաններին կախումն ունին, կան՝ որ հոգեւոր իշխանութիւնիցն են բլրխում, կան՝ որ հասարակութեան և մամուլի ձեռնհասութիւնիցն են կախած:

Այդ հերթական խնդիրներից կարեւորագոյնները վերաբերում են ուսումնարանական գործին, գիւղացիների դրութեանը, երկրիս գիւղական արդիւնաբերութեանը, հողային հանգամանքներին և երկրիս առևտուրին:

Մենք այս անգամ կը բաւականանանք, վերաչիշելով այդ խնդիրները և ամենակարճաւօտ խօսքերով որոշելով նոցա ներկայ դրութիւնը:

Մեր երկրում, վարչական տեսակէտից, երեք կարգի ուսումնարաններ կան, ուր հայ մատաղ սերունդը մտաւոր և ոգեկան սնունդ և ուղղութիւն է ստանում: Ղոքա են՝ հայոց հոգեւոր դպրոցները, արքունական ուսումնարանները և, վերջապէս, քաղաքային ուսումնարանները, որոնք հիմնւած են և կառավարւում են քաղաքային ինքնավարութիւնից:

Այդ երեք կարգի ուսումնարաններից զուտ հայկական են բոլոր առաջինները և երրորդներից մի քանիսը, և առաջժամ միայն Թիֆլիս քաղաքում: Հայկական են՝ նոքա թէ անունով, թէ նրանով, որ նոցանում դասաւանդութիւնը կատարւում է հայերէն լեզուով և թէ վերջապէս այն պատճառով, որ նոցա մէջ միայն հայի զաւակներ կարող են ուսանել:

Այս վերջին կարգի ուսումնարանները, նոքա, որոնք քաղաքային ինքնավարութեան ներքոյ են գտանւում, համեմատապէս նոր են, որպէս քաղաքային ինքնավարութիւնը ինքը նոր հաստատութիւն է կովկասի համար և դեռ բոլոր քաղաքներում մնալով գործած չէ: Այդ դպրոցները պէտք է որ մեծ կարեւորութիւն ստանան: Ուրախալի է նոցա երեան գալը, բայց առ աջժամ կանխաժամ է նոցա մասին ընդարձակելը, քանի որ նոցա թիւը շատ է սահմանափակ և այն էլ Թիֆլիսում միայն գոյութիւն ունին:

Գալով հայոց դպրոցներին, յիշատակենք հայոց ծխական-եկեղեցական դպրոցների նոր կանոնադրութիւնը, որը, մեր ընթերցողները կարող են ամբողջապէս գտնել անցեալ տարւոյ «Մուրճ»-ում: Այդ կանոնադրութեան մէջ երկու կէտ առանձնապէս մեր ուշադրութիւնն են գրաւում. մէկը վերաբերում է հոգաբարձական կազմին, միւսը՝ ուսուցչական պերսոնալին:

Այդ կանոնադրութիւնով ծխական քահանաների վերայ բարձրւում է մի պարտադիր պաշտօն, քանի որ երեք հոգուց բաղկացած հոգաբարձութեան մէջ՝ մէկը անպատճառ պէտք է լինի ծխական քահանան, որը այդ հոգաբարձութեան միանգամայն և նախագահն է:

Իրանով, անշուշտ, քահանային մի նոր նշանակութիւն չի տրւում. ուսումնարանական դործը ոչ միայն խորթ չը պիտի լինի քահանայական կոչման, այլ երկուքն էլ զուգակից են. մէկը միւսին չի բացասում: Բայց մենք գտնում ենք, որ այդ նոր կանոնադրութիւնով ծխական քահանաների համար ստեղծւում է մի նոր պաշտօն, որը յաջողութեամբ վարելու համար նոքա, այդ ծխական քահանաները, պէտք է ունենան աւելի բարձր կրթական ցենզ, քան աջժամ նոքա ունին: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, յուսանք, որ հոգեւոր բարձր իշխանութիւնը առանձին ուշադրութիւն կը դարձնի այս առարկայի վերայ, կեանքի կոչելով քահանաների մի

նոր սերունդ, որը ընդունակ լինի նորա վերայ բարձած այդ նոր պաշտօնը ձեռնհաս կերպով վարելու:

Նոյն այդ դպրոցական կանոնադրութիւնով, կարծես, մի փորձ է փորձուած զէմն առնել այն մեծ չարիքի, որը յառաջանում էր ուսուցիչներին ամեն տարի փոփոխելուց, որով նոքա մշտական անսպահովութեան վիճակի մէջն էին զցւում: Կանոնադրութեան այն կէտը, որով նոքա երեք տարով են պայմանաւորուած, թերեւս կարողանայ ուսուցիչներին թափառաշրջիկ կեանքին զէթ մասամբ վերջ դնել:

Գիւղական ազգաբնակչութեան վերաբերեալ կարեւորագոյն խնդիրները մի քանի են. կան գաւառներ, որոնք սակաւահոգութեան վիճակի մէջ են. կան գաւառներ, որոնց համար կարեւորագոյն խնդիրը՝ ջրանցքների խնդիրն է. բացց բոլորին էլ ընդհանուր է էժանագին վարկի խնդիրը, որի բացակայութեան պատճառով մասնաւոր դրամատէրերի փոխառութիւնը վաշխառուական բնաւորութիւն է ստացած:

Սակաւահոգ գաւառների դրութիւնը բարւոքելու համար երկու միջոցներ կան՝ նոր հողեր բաժանել և կամ այդ տեղերում նոր արհեստներ մտցնել, որպէսզի հողագործութիւնից դուրս՝ գիւղացիները ունենան ապրուստի նոր աղբիւրներ:

Էժանագին վարկի հաստատութիւնը, որի մէջ մեծ անհրաժեշտութիւն է կրում մեր երկիրը, զեռ. ևս մեզանում գոյութիւն ունի միայն զբաղանութեան մէջ: Երականութիւն նա չի դառած զեռ. ևս: Նորա հեշտութեամբ իրագործւելուն, որպէս պէտք է ենթադրել, մեծապէս խանգարում է հողը գրաւ դնելու դժւարութիւնը, քանի որ մեզանում գիւղացիական հողատիրութիւնը գլխաւորապէս համայնական է և քանի որ այն երկիրներում, ուր էժանագին վարկի հաստատութիւնները ծաղկած դրութեան մէջ են, հողատիրութիւնը համայնական չէ, այլ մասնաւոր է, կալւածատիրական է: Այդ ցոյց է տալիս, որ գիւղական բանկերի մեր երկրին յարմարեցրած տիպերի մասին զեռ. պէտք է մտածել:

Մի շատ կարեւոր խնդիր մեր երկրի համար արօտատեղերից կանոնաւոր կերպով օգտուելն է գիւղական ազգաբնակչութիւնից: Հա-

րիւրաւոր գիւղերի անտեսութիւնը մեզանում ոչ այնքան հողագործութեան, որքան անասնապահութեան վերայ է հիմնւած: Արդ, այդ հողերից օգտուելու խնդիրը վերջին ժամանակներս գրաւել էր պետական կալւածների մինիստրութեան լուրջ ուշադրութիւնը: Այդ արօտատեղերը, զանազան շրջաններում, նորից հետազօտեցին յատուկ մասնախմբերի ձեռքով, նորից չափեցին և նոցանից օգտուելու սահմանները նորից որոշեցին. և թէև գործը դեռ ևս շարունակուում է, բայց պէտք է ենթադրել, որ կատարւած փոփոխութիւնները այժմ աւելի են համապատասխանում արդարութեան սկզբունքին, քան առաջ եղած դրութեան մասին կարելի էր ասել, երբ երկրիս ազգաբնակչութեան թափառական մասը սահման էր ուզում ճանաչել արօտատեղերի բացառիկ տիրապետութեան ձգտումների մէջ: Դորա հետ կից յիշատակենք նոյն այդ մինիստրութեան լաւ ձգտումը՝ այգեդործական, կաթնատնտեսական և գիւղական ազգաբնակչութեան համար օգտուէտ այլ ուսումնարաններ հիմնել մեր երկրում, որոնց սկիզբը մի երկու այդ կարգի ուսումնարաններով արդէն դրւած է, առայժմ թէպէտ միայն Թիֆլիսում:

Գիւղական խնդիրներին կից յիշատակենք գիւղացիների շարժումը դէպի Կովկասեան առևտրական և արդիւնագործական քաղաքները, որպիսիք են Թիֆլիս, Բաքու, Բաթում: Իբր խնդիր, նա դեռ ևս ուսումնասիրութեան Փաղիսի մէջ է: Բայց փաստը սա է, որ այդ «պանդուխտները» իսկապէս մշակներ են և բանւորներ, որոնց գոյութիւնը օրգանական կերպով կապւած է ներկայ արդիւնագործութեան և առևտուրի պայմանների հետ: Արդ, եթէ բանը նրանում չէ, որ այդ բանւորներին գիւղերը վերադարձնենք, այլ նրանում, որ այդ բանւորների ու մշակների կեցութիւնը բարելաւենք, մենք չենք տեսնում, որ այդ կողմից խնդիրը որ և իցէ քայլ արած լինի դէպի առաջ: Նոցա վերայ հասարակական խնամք տանելը, բանւոր դասակարգին յատուկ հաստատութիւններով մի խնդիր է, որի վերայ արժէ և հարկաւոր է, որ հասարակութիւնը այժմանից իսկ մտածէ:

Գիւղական արդիւնաբերութեան և ազգարնակութեան կեցութեան վերայ ահագին ներգործութիւն ունին առևտրական հանգամանքները: Խնդիրը սա է, թէ առևտրական ո՞ր ճիւղերը վերջին տարիներումն փոփոխութիւնների են ենթարկւել և այդ փոփոխութիւնները ի՞նչպէս կարող են ազդած լինել գիւղական արդիւնաբերութեան վերայ:

Մենք գտնում ենք, որ այդ կողմից կարելի է վկայել մի քանի յառաջադիմութիւնների մասին: Գլխաւորապէս երեք մեծ արդիւնաբերութիւններ պէտք է ենթարկւած լինին փոփոխւած առևտրական պայմանների ազդեցութեանը՝ գինեգործութիւնը, հացահատիկները և բամբակը: Եւ այդ երեքն էլ մեր երկրի գիւղական ամենանշանաւոր արդիւնաբերութիւններիցն են: Արդ, երբ մի հինգ տարի առաջ, մեր հացահատիկների համար բացւեց Եւրոպայի շուկան, նոցա գները միանգամից կրկնապատիկ բարձրացան: Եւ չը նայած, որ հացահատիկների արտահանութիւնը չը շարունակեց սկզբնական տարիների չափով, նոցա տեղական գները, այնու ամենայնիւ, երբէք այլ ևս չ'իջան մինչ իրանց նախկին ստոր ստորձանը, ի մեծ օգուտ գիւղական հողագործ ազգաբնակչութեան:

Մեր երկրի գինեգործութիւնը, նմանապէս, մի տասնեակ տարի առաջ, տեղական գործածութիւնից դուրս շուկայ չէր ծանաչում: Բայց այժմ մենք տեսնում ենք նորա առջև բացւած Ռուսիայի կենտրոնների ընդարձակ շուկան: Նորա ազդեցութեան ներքոյ տեղական գինեգործութիւնը դուրս եկաւ իւր նախկին նահապետական դրութիւնից և ստացաւ մեծ արդիւնաբերութեան բնաւորութիւն: Ինքը գինեգործութիւնը դարձաւ, այսպէս կոչւած, սարգափային տնտեսութիւն: Վազապահութիւնը, այսպիսով, դառաւ ապրուստի աւելի գնահատելի աղբիւր, քան առաջ:

Նստ աւելի մօտ ժամանակներումն, երկու-երեք տարի առաջ, մասնաւոր փոփոխութեան ենթարկւեց բամբակի առևտուրը: Բամբակը մշակող գիւղացիք, գլխաւորապէս Երևանեան նահանգում, քսան և աւելի տարիներ շարունակ, ուրիշ գնողներ չէին ծանաչում, քան Վովկասեան վաճառականներին, որոնք լոկ միջնորդի դեր էին կատարում գիւղական արդիւնաբերողների և Ռուսիայի կտաւագործ գործարանատէրերի մէջ: Չարիքը մեծ չէր լինել, եթէ միայն

այդ միջնորդները կարողանային ամենայն շիտակութեամբ իրանց ղերը կատարել: Բայց վաճառականական ամբարտաւանութիւնը մեր երգւեալ վաճառականներին մոռացնել տւեց, որ նոքա լոկ միջնորդներ են և ոչ գիւղացիների դոյքի տէրերը: Այդ տեսակ միջնորդների ասպարէզից հեռացնելը միայն բարիք պէտք է համարւէր և ոչ չարիք: Արդ, պայմանների փոփոխութիւնը կատարեց նրանով, որ Երևանեան շուկայի և Ռուսիայի, մասամբ նաև Կովկասի դործարանատէրերի մէջ աւելի անմիջական կապ ստեղծւեց: Եւ այդ փոփոխութեան համար հարկաւ գիւղական ազգաբնակչութիւնը չը պիտի լինի ողբացողը:

Անցեալ 1889 թւականը, իսկապէս, մի մեծ գործ առաջացրեց՝ զլուխ բերելով Կովկասեան Արդիւնահանդէսը: Նա առաջին անգամ միջոց տւեց՝ Կովկասեան բազմազան ազգերի արդիւնագործութեան մասին մի ամփոփ զաղափար կազմել: Պարզեաբաշխածների ցուցակից երևաց, որ երկրիս հայկական տարրը նշանաւոր մասնակցութիւն է ունեցած աշխատանքի այդ խաղաղ հանդիսի յաջողւելու մէջ: Կարելի է շնորհաւորել նրանց այդ յաջողութեան համար: Բայց յուսանք, որ ձեռք բերած յաջողութիւնը որպէս խթան ծառայէ ապագայ գործունէութեան համար՝ քրտնաջան աշխատանքի այդ ազնիւ դաշտի վերայ:

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

* * *

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Կայ անգին մի բան, որ մարդու գէմքին
Առուել շըքեղ, պայծառ է փայլում,
Քան մայր-աղամանդ պրսակի ճակտին,
Քան թէ ծիածան երկնակամարում:

Անկեղծութիւն է նորա անունը.
Նորան օր-գիշեր ես պըտում էի.
Սակայն իմ սըրտում, իմ հէգ սըրտումը,
Միայն նոր ցաւեր ես դիզում էի:

Նորա փոխարէն ո՞րտեղ չը գտայ
Մուր պատկերը կեղծաւորութեան.
Օ', նա փըռած է աշխարհիս վերայ
Առանց ավերի, ինչպէս մի ովկեան:

Ես գըտայ նորան լըրագիրների
Համեստ դիմակով ծածկւած էջերում.
Առաքինութեան քարոզիչների
Ճարտար շըրթունքից ելած խօսքերում:

Ես գըտայ նորան բարեկամների
Կարեկցական, ջերմ ողջագուրանքում.
Եւ դադաղի մօտ ազգականների
Սըգաւոր գէմքին և արցունքներում:

Ես գըտայ նորան և քերթողների
Երևակայական, շինծու վըշտերում,
Եւ խընջոյքներում պատանիների
Համբոյրների մէջ, փըքուն ճառերում...

Բայց հազիւ թէ ես նըշմարում էի
Մէկի մէջ նըշոյլ պարզ անկեղծութեան,
Ս', ի'նչ ցընծութեամբ ես մեկնում էի
Նորան ձեռքերըս բարեկամական:

Ես պատրաստ էի— փաթաթւել վըզով,
Անվերջ համբոյրներ դրոշմել ճակատին,
Հուպ տալ իմ կըրծքին, գոչել պարծանքով.
«Ահա բարեկամ, ահա մարդ անգին»:

Մօսկւա. 1889 թ., 12 դեկտեմբերի:

* * *

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Ներքի ինձ, դո՛ւ, վարդ, սոխակ և դո՛ւ, սէր,
Որ ձեզ իմ երգո՛ւմ յաճախ չեմ յիշում.
Առանց իմ երգի, գիտեմ, ձեր օրեր
Չափազանց ուրախ, անդորր են անցնում:

Բայց դո՛ւք, վըշտերով խոցոտւած սրբաբեր,
Որ անհիծում էք Աստուծոյ աշխարհ.
Տեսէք—սիրտըս եմ բերում ձեզ նըւէր,—
Յոյսերի աղբիւր է նա ձեզ համար:

Մօսկւա. 1889 թ., դեկտեմբերի 11:

ԴԱՐՈՒՄ ԶԱՒԱԿԸ

Ա Ր Ծ Ի Ի Ե Ա Ն Ի

Ծնւեց նա ի զուր, ապրեց անօգուտ,
Թշնամի դարձաւ սուրբ ճշմարտութեան.
Պաշտեց նա խաւար, խօսեցաւ միշտ սուտ,
Խեղդելով իւր մէջ խղճի արգար ձայն:

Ի՞նչ էր բարութիւն, խընամք, գութ, փրկանք,
Սէր գէպի աղքատն — այդ նա չը գիտէր.
Նորա չար սիրտը զգում էր հրճւանք,
Տեսնելիս տանջւող բիւր տնմեղ զոհեր...

Եւ կնքեց նա իւր կեանքը երկրաւոր՝
Ամբարշտութեան գրոշմը ճակատին.
Նա մեռաւ որպէս խարդախ, նենգաւոր,
Որպէս հալածիչ ազնիւն ու բարին...

Բայց մարդկութիւնը հոգով ստրկացած,
Խորին կսկիծով սգաց այդ վախճան.
Եւ դարուս ոգով իսպառ կուրացած,
Նւիրեց նրան փառաշուք արձան...

ՀԱՍԱՐԱԿԱՑ ՄՇԱԿԻՆ

Ա Ր Ծ Ի Ի Ե Ա Ն Ի

Թէ կրճքիդ մէջ բաբախում է
Հոգի անկեղծ, անկաշառ,
Եւ քո սիրտը միշտ ձգտում է
Դէպի բարին ու արդար—
Զնւր է յուսալ, գործի՛չ ազնիւ,
Այս աշխարհից անկեղծ վարձ.
Դու չես գտնիլ յարգանք, պատիւ,
Եւ ո՛չ հանգիստ քո խնդրած:

Թէ կոչւած ես դու կեանքի մէջ
Մի նոր շաւիղ հարթելու,
Շաւիղ դէպի լոյսը անշէջ,
Դէպի արեւ կենսատու—
Դու մի յուսալ, չարքաշ մշակ,
Սուրբ վաստակիդ հատուցում.
Մարդկանց աչքում ծաղր է—ծանակ
Ամեն մի վեհ զգացում...

Բայց թէ քո մէջ չը կայ անկեղծ
Սէր դէպի մի վըսեմ գործ.
Աւերիչ ես, որպէս մի ցեց,
Թունաւորող — որպէս օձ.
Թէ պատրաստ ես դու նենգ խօսքով

Պաշտպան կանգնել բռնութեան.
Մերձաւորիդ փոս փորելով՝
Մատնել նրան դառն անկման...

Յուսած, ո՞վ մարդ, և լիայոյս
Դու քեզ խնդրի՛ր զափնիններ.
Դարուս ոգին անտարակոյս
Կ'արդարացնէ քո յոյսեր...
Կը վայելես դու փառք, հռչակ,
Սև գործքերիդ գրւատում.
Եւ իբր յալթոյ — կը կրես պսակ
Դու միշտ այս նենգ աշխարհում...

1887 թ., 6 • գոստոսի:

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

ԱՊԱԳԱՅ ԱՂԱՆ

ՍԷՆԵԼԵ ՔՈՂՈՐ

Ակնատեանի մասին յաճախ լսել եմ. բայց որովհետեւ կարգին ծանօթութիւն չեմ ունեցած հետը, ուստի մինչեւ այժմ լսել եմ նորա մասին և քեզ ոչինչ չեմ գրել:

Ակնատեանը ա՛յս ասաց, Ակնատեանը ա՛յն ասաց, Ակնատեանը սրա՛ն համակրում է, Ակնատեանը նրա՛ն հակակրում է... Ակնատեանը հերքեց այս կամ այն կարծիքը, Ակնատեանը քաջ մարդ է, Ակնատեանը լաւ զլխի տէր է... — Այս տեսակ բառեր շատ անգամ լսել եմ:

— Ո՛վ է Ակնատեանը, հարցրի մի անգամ այդպէս խօսողներէց մէկին:

— Մի՛թէ Ակնատեանին չէք ծանաչում, պատասխանեց խօսակիցս, խորհուրդ եմ տալիս հետը ծանօթանաք. լուրջ մարդ է և բանիմաց:

Բանն այն է, որ Ակնատեանին վերադրած խօսքերը միշտ նույնատեսակ չէին լինում, որ ես կարողանայի դադափար կազմել նորա անձնաւորութեան և նորա համոզմունքների մասին: Եւ զարմանալի էր ինձ թւում, որ իմ բարեկամ ընկերները երբէք նորա մասին չէին խօսում և անունը չէին լիշում: Վերջապէս մի օր հարցրի լաւ ծանօթներիս շրջանում, թէ ո՛վ է Ակնատեանը:

— Ակնատեանը. ի՞նչ է պատահել, դո՞րժ ունէք հետը, կամ ծանօթացե՞լ էք:

—Ո՛հ. այլ միայն շատ անգամ լսում եմ նորա մասին:

—Ակնատեանը—ի՛նչպէս ասեմ—մեր հասարակական թիւրիմացութիւններէ մէկն է: Ակնատեանը սահմանափակ մարդ է. բայց հասարակութեան միջքանի շրջաններում հեղինակութիւն է ձեռք բերել:

—Ինչո՞ւ:

—Ճարպիկութիւնով կամուզիդն ասած՝ դուցէ իւր բնաւորութեան մի ուրիշ տեսակ կազմով: Համբերութիւն ունեցի՛ր լսելու: Զորօրինակ, նորերս մի տեղ, մի ընտանեկան խնջոյքում, որտեղ ես ևս հրաւիրւած էի, մէկը խօսք բացեց բարեկամութեան և թշնամութեան մասին, և պատմեց մի քանի հետաքրքրական դէպքեր իւր կեանքից... Շատերը խառնեցին խօսակցութեան մէջ: Ակնատեանը լուռ էր: Վերջում նա էլ միջամտեց և երկաթեայ ամուր ձայնով բացականչեց.

—Բարեկամութիւնը մե՛ծ բան է, բարեկամութիւնը պէտք է հաստատ պահել:

—Լաւ է, բայց որ քանդում են, նկատեց մէկը:

—Պէտք է հաստատ պահել, պէտք է նորա փէշից բռնել և բաց չը թողնել:

—Բայց որ չի լինում. աշխարհք է, բոլորն էլ մէկ չեն:

—Պէտք է հաստատ պահել, ասաց երրորդ անգամ Ակնատեանը և լռեցրեց բոլորին:

Մի ուրիշ ծանօթս պատմեց, որ մի անգամ Ակնատեանին նա հանդիպել է ձիաերկաթուղու կառքում, ուր երկու մարդ ինչ որ կոպէկի հաշի վերայ տաք տաք վիճաբանում են եղել և բոլորին ձանձրացնում իրանց անհամ խօսակցութիւնով. ոչ ոք սիրտ չէ անում եղել նոցա դադարեցնելու: Միայն Ակնատեանը ծուռ ծուռ նայում է եղել վիճողների կողմը և վերջապէս զազանային բարկութիւնով ազադակում է.

—Բաւական է, որչափ ձանձրացրիք. ի՞նչքէ կառքից և որտեղ կամենում էք՝ աջնտեղ կուեցէ՛ք:

Կուռողները նայում են Ակնատեանի չարացած աչքերին ու դէմքին և լռում են:

Երրորդ ծանօթս պատմեց, որ նա դէպք է ունեցել նրան տեսնելու մի թատրոնական մասնագողովում, ուր հաւաքուել էին մի

քանի երիտասարդներ պիես ընտրելու: Նաա խօսակցութիւններից յետոյ՝ կանգ առին մի պիեսի վերայ: Համաձայն չէ լինում միայն Ակնատեանը:

—Վատ պիես է, չիմար, աննպատակ, ասում է Ակնատեանը ու յամառում: Որչափ խօսում են, վիճում—Ակնատեանը ապացոյցներ չէ բերում, այլ միայն կրկնում է թէ չիմար պիես է: Ուրիշները աշխատում են գուշակելու Ակնատեանի աննպատակարժիքի պատճառը. բայց նա ինքը ամենեւին չէ էլ մոռածում պատճառաբանութիւնների վերայ, այլ մի բերան իւր ասածն է ասում:

Ահա՛ այս տեսակ են Ակնատեանի քաջագործութիւնները: Ո՛չ մի բան ինքը չէ անում, և ուրիշների արածներից էլ շատ բան չի հաւանում, կամ եթէ հաւանում է, այն էլ նայած հանգամանքին: Ճարպիկ կերպով շողքօրթել գիտէ հասարակութեան մէջ նշանակութիւն ունեցող անձնաւորութիւններին և աննկատելի կերպով նոցա հայեացքների արտայայտողը լինել: Չորս ամիս առաջ դա մի փոքր շրջանում՝ ուր ժողոված են լինում մի երկու «նշանաւորներ», որոնցից մի քանի սպասելիքներ է ունենում Ակնատեանը՝ սկսում է պաշտպանել նոցա սիրած մի հոգաբարձուի, բայց այնպիսի խորամանկութիւն գործ դնելով, իբր թէ այդ պարոնները այն հոգաբարձուի վերայ սկսել են ծուռ նայել, իսկ նա՝ Ակնատեանը պարտք է համարում նրան պաշտպանել:

Եւ Ակնատեանը հասնում է իւր նպատակին: Նա այժմ այդ նշանաւորներից մէկի բարեկամի մօտ նշանակւած է բոլոր նորա գործերի կառավարիչ, և ասում են՝ բաւականին օգտակար մարդ է, որովհետեւ մի տեսակ հնազանդութիւն է մոցրել ծառայողների մէջ:

Ակնատեանը այնպէս է հասկացրել իւր շրջապատողներին, թէ նա շատ տանջւել է և անքուն գիշերներ է անցկացրել, մոռանալով մեր հասարակական գործերի մասին: Նա, ի հարկէ, գիտէ իւր համար երկրպագուներ գտնելու եղանակները: Նա յաճախ այն տեղերքն է պատում, ուր ուժեղ հակառակորդների չի կարող հանդիպել. մի տեղ, երկու տեղ հեղինակութիւն ստանալով, նա սկսել է յանգզնել և աւելի հեռուները նայելու. ազահութիւնը բացւել է, նա ուզում է առհասարակ մեծ դեր խաղալ, և մինչև այժմ յաջողեցրել է:

Նա աչտեղ մի տեսակ հայրենասիրութեան մենավաճառի դեր է խաղում: Մէկի կարծիքը հերքելու համար՝ զործ է ածում այս նախադասութիւնը.

—Մեր ժողովրդի համար դա ֆնասակար է:

Եւ շատ տեղերում տպաւորութիւն է զործում: Այդ զէնքով նա հալածել է տալիս իւր չը սիրած անձնաւորութիւններին:

Այժմ նա բերան է արել մի քանինախաղատութիւններ այս տեսակի՝ թէ պէտք է խոհեմ զործել, պէտք է շրջանկաւ լինել, շտապել պէտք չէ. շատ բան կայ ասելու, բայց տեղը չէ, կամ ժամանակը չէ. պէտք է ակնարկներ հասկանալ. փորձերից պէտք է օգուտ քաղել, կամ փորձերը մեզ ցոյց են տւել և այլն:

Մի քանի շրջաններում տարածւած է այն կարծիքը, թէ Ակնատեանը հաստատամիտ մարդ է, շատ լուրջ և ազդեցիկ խօսող: Յիրաւի, նորա դէմքի նայւածքը, խօսելու ձեւը, նորա անդրդեւիտութիւնը վէճի ժամանակ, նորա կիսաարհամարհական ոճով քննադատելը՝ մարդու վերայ առաջին անգամը այն տպաւորութիւնն են զործում, որ մարդ ասում է, թէ Ակնատեանը սխալ թէ ուղիղ, բայց կշռած ու մտածած է խօսում:

Առաջին անգամը այդ տեսակ տպաւորութիւն կ'անէր Ակնատեանը և ինձ վերայ. բայց... պատմեմ՝ եղելութիւնը:

Նա գնացել էի աչտեղի օրիորդական դպրոցի աշակերտուհիների հարցաքննութեան ներկայ լինելու: Աշակերտուհիները պահում էին իրանց համեստ և պարկեշտ. պատասխանում էին բնդհանրապէս խելօք: Ներկայ եղողների վերայ հարցաքննութիւնը շատ քաղցր տպաւորութիւն էր զործում: Նրկու ժամ քննելուց յետոյ նշանակեցին մի քառորդ ժամ միջոց հանգստանալու համար: Ակնատեանը ուրախ ժպտով յետ ընկաւ ակթոռի վերայ և պատգամախօսի ոճով ծանր ծանր արտասանեց.

—Ահա ա՛յս պէտք է լինի մեր աղջիկների կրթութիւնը և սրանով էլ պէտք է նա վերջանայ: Տեսնո՞ւմ էք այդ պարկեշտութիւնը, այդ ամօթխածութիւնը: —Դա է մեր կանանց լաւ շտախանիչը և դա պէտք է մնայ միշտ իբրեւ պատմական ժառանգութիւն: Կանանց բարձր ուսումը բոլորովին հակառակ հետեւանքներ է արտադրում և նա պէտք է բոլորովին հալածւի մեզինց:

— Բայց վերջին ժամանակներս շատերը ձգտում ունին բարձր ուսումի ղնալու, նկատեց մէկը:

— Եւ շա՛տ վատ են անում: Մեր ժողովուրդը սիրողները պէտք է զինւին այդ շարիքի, այդ նորածնութեան դէմ: Բարձր ուսումը փնասակար է զանազան տեսակէտներից. նա, առաջինը, ինչպէս ասացի, գրկում է պարկեշտութիւնից մեր աղջիկներին, երկրորդ, նա փոխում է կնոջ դերը— անարարութիւնից, անտեսութիւնից— ասան շրջանից նրան հանելով և հրապարակ դուրս բերելով իբրեւ տղամարդի, երրորդ... էլ ո՛ր մէկն ասեմ:

Հարցաքննողները ակնածութիւնով լսում էին Անատեանի խօսքերը և մեղմ շարժում էին իրանց զուխները իբրեւ համաձայնութեան նշան: Միայն մէկը, որի բարեկամութիւն (ինչպէս յետոյ իմացայ) նոյնպէս ցանկանում է գնալ բարձր ուսումի, համարձակեց նկատելու.

— Պ. Անատեան, ես կարծում եմ, որ լաւ բացառութիւններ էլ կարող են լինել. լաւ տան կրթւած աղջիկը— միշտ էլ լաւ կը մնայ:

— Երբէք, պ. Արսէ՛ն, երբէք. բարձր ուսումը կինարմատի համար կորստաբեր է: Մենք հին և փորձւած ազգ ենք, և եթէ մինչև այժմ հաստատ մնացել ենք— այդ մեր ամուր ընտանիքի շնորհիւ է, շնորհիւ մեր կանանց նախկին դրութեան:

— Ես կարծում եմ...

— Ո՛չ, ո՛չ. դուք մի՛ ընդդիմախօսէք. ես ղիտեմ ձեր ասելիքը:

— Որովհետեւ...

— Ես գիտեմ ի՛նչ եմ ասում. դա է մեր փրկութիւնը... այո՛, այո՛ մեր փրկութիւնը. մեր ժողովուրդը պէտք ունի ձուլող զաղափարների. գոնէ կինը իւր ապտտամբութիւններով խտունակութիւնների պատճառ. չը պէտք է դառնայ:

— Բայց մի՞թէ...

— Է՛հ, պարոն Արսէ՛ն, ես ձեզ շատ ծանր մարդ էի ճանաչում:

— Ես ոչինչ չեմ ասում. ես լաւ գիտեմ, որ ձեր ասածները երկացն խորհած են: Բայց ի՛նչ անենք, ի՛նչպէս կանգնեցնենք հոսանքը:

— Որ հաստատ ուղեհանք— կը կանգնեցնենք:

Ես հեռու էի նստած Անատեանից և նորա հետ ծանօթանա-

լու պատիւը չ'ունեցայ: Ես նստած էի երեք բարեկամ մարդկանց շրջանում և զարմանքով լսում էի Անատեանի զատողութիւնները:

Բայց միևնոյն երեկոյեան ես չ'ունեցած պատիւը պատահաբար ստացայ, այսինքն՝ ծանօթացայ Անատեանի հետ: Բարեկամներս սրայմանաւորեցին երեկոյեան հիւր լինելու տիկին Սարեկեանի տանը: Նշանակել էինք ժամը 8-ին այնտեղ լինելու. բայց ես հազիւ կարողացայ Ծ-ի մօտերքը տեղ հասնել: Մտայ ներս, տեսայ որ մեծ բազմութիւն է ժողովւել թէ կանանց և թէ տղամարդկանց: Տիկնոջ հետ ծանօթ էի, տղամարդկանցից շատերի հետ նոյնպէս: Տիկինը ծանօթացրեց ինձ մի քանի կանանց և վերջումը պ. Անատեանի հետ, որ նոյնպէս անսպասելի կերպով հիւր է եղել այդ երեկոյ:

Տիկին Սարեկեանը ինքը բաւականին կրթւած և խելացի կին է: Նա Պետերբուրգ և Վերմանիա լսել է զատեալ մանկավարժութիւնից և ուրիշ գիտութիւններից և այստեղ ցանկանում է դործել: Սկսել է առ այժմ օրիորդական զպրոցների կազմակերպութիւնով հետաքրքրւելուց:

Ճիշդն ասած, ես երբ ներս մտայ, մի առանձին տրամադրութիւն զգացի հասարակութեան մէջ, իբր թէ բոլորը ինձ էին սպասում. յետոյ իմացայ, որ տիկինը կամաւ է ինձ ծանօթացրել պ. Անատեանի հետ ամենից ուշ:

Ծանօթացնելով պ. Անատեանի հետ, տիկինը ասաց ինձ խորհրդաւոր ձայնով.

— Պ. Պատրիկեա՛ն, գիտէ՞ք ո՛վ է միւսիւ Անատեանը. զաւգեմի ազատամիտ ուսանողն է, որ Մովսէսի բացակայութեան ժամանակ սկսել է հորթի արձանը ատուածացնել:

— Նո՛ւշ էք ուզում զրանով ասել, խօսքը կտրեց շփոթւած կերպով Անատեանը:

— Այն, որ դուք մեզ թշնամի էք:

— Ն'ս ձեզ թշնամի:

— Այո՛, դուք: Մի՞թէ դուք, պ. Անատեա՛ն, թէ ինձ և թէ իմ ընկերուհի Սուլօյեանին չէք ատում իբրև ազգամիտ անձերի:

— Ո՛վ է ձեզ ասել, տիկի՛ն, այդ տեսակ բաներ. ընդհակառակն՝ ես ձեզ յարգում եմ և շատ յարգում: Նե ուրիշ ի՛նչ զգացմունք ինձ կարող էր բերել ձեր տունը, եթէ ոչ զէպի ձեզ ունեցած յարդանքը:

—Բայց դուք մեզ, տիկիներինս, համարում էք անսարկեշտ, անհամեստ, ով զիտէ՞ մինչև անգամ անամօթ և աներես:

—Ի՞նչ են նշանակում այս խօսքերը, պ. Պատրիկեա՛ն, դարձաւ ինձ Ակնատեանը, երևի դուք մի բան զիտէք, որ տիկինը մինչև այժմ լռում էր և միայն այժմ է սկսել իւր անիննաց և անարդար յարձակումները ինձ վերայ:

—Ո՛չ, ընդհակառակն՝ ես եմ սպասում բացատրութիւնների, պատասխանեցի ես:

—Ես բոլորը յետոյ կը բացատրեմ ձեզ, պ. Ակնատեա՛ն, բայց դուք նախ անկեղծ յայտնեցէ՛ք ձեր կարծիքը իմ և իմ ընկերուհի Սուլօյեանի մասին. արդե՞օք դուք մեզ փնասակար էք համարում մեր ժողովրդի համար:

—Ի՛նչպէս թէ ձեզ երկուսիդ միայն: Ես ի՛նչ առանձին հաշիւներ ունիմ. ձեզ հետ. այստեղ թիւրիմացութիւններ կան:

—Ես ասացի՝ բացատրութիւնը յետոյ:

—Որ այդպէս է՝ լսեցէ՛ք. ես յարգում եմ բոլոր սրտից թէ ձեզ և թէ օրիորդ Սուլօյեանին: Դուք շատ օգնեցիք մեր օրիորդական զբոսը թէ լաւ վարժուհիներ զոնելով և թէ ձեռագործը կատարելագործելով և կենսական շինելով. իսկ Սուլօյեանը օգնում է մեզ իբրև անձնէր վարժուհի և իւր աշխատակից վարժուհիների վերայ շատ բարերար ազդեցութիւն ունի:

—Բաւական է, պ. Ակնատեա՛ն, բաւական է: Ես ինքնազոքութեան դէմ եմ. բայց ձեզնից պահանջում էի այդ խոստովանութիւնը, որպէս զի յայտնեմ ձեզ հետևեալը: Դուք, երևի, չը զիտէք, որ այս պարոն երիտասարդները այսօր ներկայ են եղել օրիորդական դպրոցում հարցաքննութեան և լսել են ձեր յարձակումները կանանց բարձր կրթութեան վերայ: Ես սպասում էի, որ վկաները ժողովւին, որ ձեզ հետ հաշիւս յետոյ տեսնեմ: Ես և օրիորդ Սուլօյեանը պատիւ ունինք բարձր ուսում առած լինելու: Եղէ՛ք անկեղծ և, առանց փոփոխելու ձեր խօսքերը, այժմ ասացէ՛ք—հերքե՞լ էք դուք կանանց բարձր ուսումը:

—Յիրաւի, ես դէմ խօսեցի, բայց չը հերքեցի:

—Պարզ խօսեցէ՛ք:

—Նս անդթուծիւն եմ համարում կանանցից այնքան երկայն տարիներ խլելը և նոցա ասողջութեան վնասելը:

—Ուրեմն խղճում էք մեզ՝ կանանցս:

—Տիկի՛ն, դուք բոլորը ձեզ վերայ էք ընդունում, մինչդեռ դուք պէտք է լաւ ճանաչէիք ինձ. դուք լաւ գիտէք, որ ես ձեզ շատ չարգում եմ և ձեր գործունէութիւնը գնահատում եմ աւելի քան ով և իցէ:

—Գուցէ, բացց ես պէտք է յայտնեմ կորուստի, որ ով դէմ է բարձր ուսումին, նա և իմ դէմն է. իսկ ինձ բացառութիւն համարելը ես համարում եմ շողքորթութիւն: Այո՛, դա ձեր սովորութիւնն է, — դալ մեր շրջանները՝ մեզանով, մեր խօսակցութիւններով, մեր ընկերութիւնով ապրել, իսկ յետոյ՝ մեզ չիշոց տալ: Եթէ մենք վատ ենք, անպարկեշտ ենք, այն ժամանակ մեզ հետ ծանօթութիւններից կրտրեցէ՛ք և ձեր պարկեշտների շրջանում անցկացրէք ձեր ժամանակը, այնտեղ վրձեցէ՛ք, զատեցէ՛ք և իմաստացէ՛ք:

—Տիկին...

—Կեղծել, միշտ կեղծել, միշտ խղճի հետ սակարկութեան մըտնել — դա է խորհրդաւոր անսխալականների վարմունքը և զործը:

—Տիկի՛ն, դուք վիրաւորում էք:

—Այո՛, վիրաւորում եմ. արդէն դուք ինձ վիրաւորել էք անպարկեշտ ածականով, ես էլ ձեզ վիրաւորում եմ անազնիւ և կեղծ անունով:

—Բացց տիկին...

Ներկայ եղողները միջամտեցին և խօսակցութիւնը զաղարեցրին: Ահնատեանը վերկացաւ տուն գնալու:

—Յաւում եմ, տիկի՛ն, որ այսօր ձեզ վատ տրամադրութեան մէջ եմ տեսնում: Յոեսութիւն:

—Իսկ ես ցաւում եմ, պարո՛ն, որ դուք տրամադրութեան և տեղին ու դէպքին էք նայում ձեր համոզմունքները փոխելու:

—Տիկի՛ն, դուք ինձ հետ կատակ մի՛ արէք:

—Ես ձեզ հետ կատակ չեմ անում. ես ձեզ խաղաղաւորում եմ: Ահնատեանի գնալուց յետոյ հասարակութիւնը աւելի կենդանութիւն և աշխոյժ ստացաւ, սկսեցին ընտանեւոր խօսել:

—Ի՛նչ հիանալի բան եղաւ. գիմակը հանեցինք: Այժմ թո՛ղ

աւելի զգոյշ ծպաւի, իւր զործերի ծաղրերը թաղցնի աւելի ճարպիկ կերպով և խաբի միամիտներին:

Յգրութիւն:

Քո Ս. Պ.

Դ Ա Ր Վ Ի Շ Ը

Ս Ե Լ Ե Լ Ե . ք ո ' յ Ը

Այս նամակը գրում եմ խառն ազդեցութեան տակ: Եւ ծիծաղ և ախուր մտածմունք—փոփոխակի ինձ վերայ ազդում են, երբ մտաբերում եմ այս օրւայ ինձ հետ պատահածները:

Յիշում ես վաճառական Մեսրոպեանին, որին մայրաքաղաքում մենք պատահաբար օգնութիւն հասցրինք՝ ոստիկանութեան մօտ նորա մասին միջնորդելով: Այդ պարոնը ամեն անգամ, երբ հետս պատահում էր, հարցնում էր՝ ե՞րբ եմ նորա ընտանիքը այցելելու: Ես խոստանում էի, բայց միշտ յետաձգում էի: Այսօր առաւօտը նա եկաւ իմ բնակարանը և ինձնից հաստատ խօսք առաւ, որ անպատճառ նորա մօտ եմ ճաշելու: Խոստացայ և նշանակած ժամին զնացի:

Ես որ մտայ տուն, Մեսրոպեանը վազեց ինձ ընդունելու. ծանօթացրեց երկու ուրիշ պարոնների հետ, որոնք նոյնպէս հրաւիրւած էին ճաշի, և հեռացաւ խնդրելով, որ ներենք նորա մի քանի բոլակի բացակայութիւնը:

Այդ պարոններից մէկը հեռագրատան ծառայող էր, շատ լուռ մի մարդ, որ ամբողջ 4—5 ժամայ միջոցին, ինչ հիւր էի, հազիւ մի քանի խօսք ասաց. միւսը Սերգօյեան անունով մի պարոն—ընդհակառակն մի մարդ, որ անընդհատ խօսում էր:

Ես որ մտայ հիւրասենեակ՝ Սերգօյեանը ձեռքին թերթում էր Թիֆլիսում տպւած ոտանաւորների մի փոքր ժողովածու: Տանտիրոջ գնալուց յետոյ Սերգօյեանը իւր պարտքը համարեց ինձ զբաղեցնելու:

—Պարոն Պատրիկեան, դուք ոտանաւորներ կարդո՞ւմ էք:

—Ինչու չէ՞ երբեմն, պատասխանեցի ես:

—Այս վարկեանին ես կարդում էի չերկու գրեհագրերները:

Դուք ծանօթ էք:

—Այո՛, ծանօթ եմ:

—Լաւ ոտանաւոր է, Թառևտին հաւասար:

Ես զարմացայ այդ համեմատութեան վերայ. բայց ենթադրեցի, թէ մի որ և է առանձին զուգադիպութիւն ազդել էր պարոնի վերայ, ուստի թոյլ-թոյլ աւելացրի.

— Համեմատելը դժւար է:

— Այո՛, համեմատելը անյարմար է, պատասխանեց Սերգօյեանը, որովհետեւ նոքա զանազան ժամանակներ են գործել:

Ես շփոթեցի, լսելով այդ տեսակ. դատողութիւն. ուստի ցանկանալով պարզել խօսակցութիւնը՝ ասացի.

— Գրեմագրերի դէպի Նապօլէօնն ունեցած համակրութիւնը երևում...

— Ինչպէ՛ս չէ, ինչպէս չէ, շտապով խօսքս կտրեց Սերգօյեանը: Այո՛, այո՛, դա մի դժբաղդ դէպք էր, որ Ֆրանսիան յաղթեց 1870 թւականին և Նապօլէօնը գերի բռնեալ:

— Ես առաջին Նապօլէօնի մասին եմ խօսում, չւարժ ասացի ես:

— Այո՛, նա երևելի հանճար էր: Հրաշալի են նորա խօսքերը, որ ասաց եզրապահան բուրգերին թէ...

— Սպասեցէ՛ք, պարոն Սերգօյեա՛ն, մենք շեղու՛մ ենք մեր նախկին խօսակցութիւնից: Ի՞նչ է երկու գրեմագրերից՝ սկսեցիք:

— Այո՛, այո՛, համաձայն եմ, գեղեցիկ ոտանաւոր է. կարծեմ՝ Նալբանդեանցն է նրան թարգմանել. նա լաւ թարգմանիչ է. ա՛խ, նորա աջն տողերը թէ՛

«Գիշերները ես քուն չ'եղայ,

Սրտասուքով լուացի»:

Ես լռեցի: Դժուար էր այդ տեսակ խօսակցութիւն շարունակելը: Բայց պ. Սերգօյեանը շարունակում էր.

— Ես հաւանում եմ՝ և՛ Բաֆֆիի գրածքները, նա ողևորում է: «Իսախիթ բէգը» մինչև անգամ աննմա՛ն է: Ի՛՜՜. բայց հայերը չը գնահատեցին: Իսկ իսկզ՞ն Հասրաթեանը մինչև անգամ մեռաւ ալքատ...

— Ո՛վ, հարցրեց լուռ պարոնը:

— Հասրաթեանը. նա մի հայ ուսուցիչ էր: Եւ միայն դոքա

չեն: Եթէ երկայն զատենք՝ մեր զբականութիւնը զուրկ է ուժերից. բայց էլի կան, էլի ունինք, փա՛ռք Աստուծաւ: Փլխաւորը ուսումնարանն է. բայց ի՞նչ արած, որ ժողովուրդը փող չի տալիս: Ելի լրագիրներն են վերջ ի վերջոյ մեզ մխիթարում ու ոգևորում: Ի՞նչ պէտք է անես: Զէ՛, մեզանում ժողովուրդը շատ է տգէտ. մեզք է: Յիշոցներից ախր ի՞նչ կրթութիւն կարող է յառաջանալ:

Այսպէս գուցէ երկայն շարունակէր, եթէ տան տէրը ներս չը մտնէր և չը փոխէր խօսակցութիւնը:

—Պարոն Պատրիկեա՛ն, ես ցանկանում էի, որ դուք ծանօթանայիք իմ այս երկու հիւրերի հետ. սաքա լաւ աղերք են. պարոն Մեհրաբեանը հանդարտ աղայ է, բայց սիրալ տաք է. եթէ հարկաւոր լինի՝ ունեցած չ'ունեցածը կը զոհի: Ինչ վերաբերում է պ. Սերգօյեանին, սա լաւ քարոզիչ է, ոգևորւող ու ոգևորող աղայ է. բայց իրան շատ է չարարում, իսկ մեր տգէտ ժողովուրդն էլ նրան չէ գնահատում:

—Ժողովրդի ազիտութիւնը, շտապեց միջամտելու Սերգօյեանը, այսօր կայ՝ էգուց չի լինիլ. մի՛ յուսահատուէք, պ. Մեսրոպեա՛ն: Պէտք է գործել: Աւրիշ ազդեր ի՞նչպէս են առաջ գնացել: Այնպէս չէ՞, պ. Պատրիկեա՛ն:

—Այո՛, պէտք է լուրջ գործել:

—Ի հարկէ լուրջ: Գործին չը պէտք է թեթեւ վերաբերւիլ:

—Բայց ձեր միտքը շարունակեցէ՛ք:

—Գիտութիւն է հարկաւոր տարածել ազգի մէջ, որովհետեւ եթէ մի ազգ...

Տան տէրը զմայլումով քնդհատեց Սերգօյեանին.

—Այո՛, պ. Պատրիկեա՛ն, սա այսպէս է. միշտ ոգևորւած կը խօսի: Փառաւորութեմ՝ սրան տեսնելով: Բայց ասացէ՛ք տեսնեմ, դուք ինչո՞ւ էիք այսքան խորշում մեր տանից:

—Ի՞նչ էք ասում, պ. Մեսրոպեա՛ն:

—Նս ձեզ միշտ խնդրում էի, ամեն հանդիպելուս Նս անշափ ուրախ եմ զգում այսօր, որ դուք շնորհ բերիք: Նս չեմ մոռանալ ձեր և ձեր քրոջ արած ինձ օգնութիւնը օտար երկրում:

—Դատարկ բան էր, հարկաւոր էր մեայն կարգին բացատրել. աւելացրի ես:

— Սախա՞ն ես ինքս այդ չը կարողացայ անել, իսկ դուք և ձեր քոյրը երաշխաւոր եղաք:

— Այո՛, օղնութիւնը և եղբայրսիրութիւնը, դարձեալ միջամտեց Սերգօյեանը, աւեն ազնիւ մարդու պարտականութիւնն է: Ձեր քրոջ արածը զովեւի է. մինչև կինը չը մասնակցի մեր հասարակական գործունէութեան— ո՛չ մի էական յառաջադիմութիւն չէ կարող լինել:

Դուռը բացւեց և մտան տիկին և օրիորդ Մեսրոպեանները, որոնց հետ ծանօթանալուց և փոքր ինչ խօսակցելուց յետո՛յ հրաւիրւեցինք սեղանատուն: Տիկինը կովկասեան զգեստով է, օրիորդը եւրոպական տարազով. երկուսն էլ բարի գէմքով են, բայց օրիորդը մի կիսահեգնական քմծիծաղ ունի, որ շատ սազում է նորա պաշտաւ նայածքին:

— Օրիորդ Նուա՛րդ, զիմեց նրան Սերգօյեանը, դուք վերջացրի՞ք զիրքը:

— Ո՛չ, դեռ չեմ վերջացրել: Բայց շուտով կը վերջացնեմ:

— Ես եմ՝ պատճառը, յուսահատ ձայնով ասաց տիկինը, որ Նուարդը չի վերջացրել: Նստում է ամբողջ ժամերով ու աչքերը ցաւացնում: Ես ասում եմ, ինչքան ուսումնարանում տանջւել է, սովորել է՝ բաւական է: Այդքան կարգալուց ի՛նչ պէտք է զուրս զայ: Միտքը միշտ մոլորւած է լինում, կարծես թէ մեր տանը չի ապրում:

— Զո՛ւր տեղը, տիկին, զուր, կրակեց Սերգօյեանը, կարգալը հարկաւոր է. կրթւած մարդը եթէ չը կարգաց՝ մեր հասարակութեան մէջ կը խելագարւի:

— Ես վախենում եմ, ամաչելով ասաց տիկինը, որ կարգալով աւելի շուտ մոլորւի ու խելագարւի:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ կին, միջամտեց տան տերը: Ատանց ուսումի մարդս ի՛նչ մարդ է: Տեսնում ես, որ մենք քեզ հետ միասին շատ բանից յետ ենք լնկել, բան չենք հասկանում:

— Լա՛ւ, մի՞թէ այդ ուսումին վերջ չը պէտք է լինի: Աւսումնարանը մի՞թէ բաւական չէ, յուսահատ ձայնով շարունակեց տիկինը:

— Ո՛չ, հանդիսաւոր կերպով շեշտեց Սերգօյեանը, բաւական չէ. մարդ պէտք է բոլոր խոր կեանքը կարգաց, վարժւի, ասած զնայ: Մեր սուրբ թարգմանիչները մեծ հասակ են ունեցել, երբ զնացել

են ուսումի և յեա են դարձել հայրենիք 40—50 տարեկան: Առանց այդ թարգմանիչների ո՛վ դիտէ մեր լեզուն անհետացած լինէր: Իսկ լեզուն ժողովրդի սննդող կրթարանն է: Ա՛յ, տիկի՛ն, դուք պէտք է օրիորդին այդ կողմից չը նեղէք:

— Ես չեմ՝ նեղում, այլ խղճում եմ: Ա՞յ կ'ուզի իւր որդու վատը կամ վնասը: Ես շատ շնորհակալ եմ, որ դուք օգնում էք զբրքեր բերելում և տանելում. բայց որ ամբողջ օրեր զրանով մարդ զբաղւի — անաանելի է:

— Բայց ապագայում կը տեսնէք, որ լաւ կը լինի: Ժօրժ — Զանդը յանկարծ սխեց զրականութիւնով պարտագել: Իմ ասածը կը հաստատեն և պարոնները:

Սերգօյեանը բոլոր խօսակցութեան ժամանակ այնպէս էր խօսում, որ կարծես թէ մենք նորա հետ համաձայն ենք: Բայց նկատելով, որ մենք շատ ենք լուռ, դարձաւ մեր օգնութեան:

— Եթէ ուսումն շատ լինէր՝ ես հիմա մի քիչ աւելի լաւ պաշտօնում կը լինէի, սրտի խորքից ասաց Մեհրաբեանը:

Ես լռեցի, որովհետեւ Սերգօյեանի հետ վէճի մտնելու ցանկութիւն չ'ունէի: Բայց տեսա, որ բոլորը սպասում են ինձնից մի խօսք լսելու: Իսկ օրիորդը, որ կարծես ամենեւին չէր հետաքրքրւում այդ վէճով — յանկարծ իմ կողմը նայեց և այդպիսով ուզեց ասել, թէ ինչո՞ւ չեմ ուզում խօսել: Ես էլ նայեցի նորա երեսին և ինձ հետաքրքրող հարց տւի նրան.

— Ի՞նչ էք կարդում այժմ, օրիո՛րդ:

— Մալամ Բօվարին:

— Հաւանո՞ւմ էք:

— Այնքա՛ն էլ ոչ:

— Պարոն Պատրիկեա՛ն, միջամտեց Սերգօյեանը, օրիորդը ո՛չ մի գիրք չի հաւանում: Այդ նորա սովորութիւնն է:

— Իսկ դուք հաւանո՞ւմ էք, դարձայ իրան Սերգօյեանին:

— Ես, այսինքն, ինչպէս ասեմ, ես հարեւանցի թերթեցի — շտապեցի օրիորդին տալու. ես չեառ կարգալու եմ:

— Այդ էլ ո՛ր. Սերգօյեանի սովորութիւնն է, ծիծաղով ասաց օրիորդը. նա ամեն գիրք կարդալու է յետոյ. իսկ ե՞րբ — այդ միայն Աստուած գիտէ: Նա միայն սիրում է լրագիրներ կարդալ:

—Օրիորդը ինձ մեղադրում է, որպէս զի ես իրան չը մեղադրեմ: Օրիորդը չէ կարդում մեր լրագիրները, ասելով թէ ամենեին հետաքրքրական չեն. նա սիրում է միայն օտարազգի գրականութիւն: Մինչև անգամ չի հաւանում իւր գեղեցիկ Նուարդ անունը: Մինչդեռ Նուարդ անունի հետ կապւած են մեր պատմական առաքինի հերոսներից մէկի անունը և նորա օրինակելի վարմունքը Շամիրամի հետ: Օտար ազգերը շատ են մեծացնում Շամիրամին և նորա արածները. բայց մեր Արան նրան մերժեց: Աս շատ եմ հաւանում և Յուդիդ անունը: Թէև հաշկական չէ, բայց գեղեցիկ է:

—Իւզի՛՛ կամ Յուդիդ՝ միւնոյն է, չէ՞. հարցրեց Մեհրաբեանը:

—Այո՛, միւնոյնն է:

—Ձեր կենացը, դարձաւ դէպի ինձ տան տէրը և բաժակը խրփեց բաժակիս: Բարև էք եկել. միշտ մեր տան սիրելի հիւրն էք. միշտ եկէ՛ք, այգւպէս խօսեցէ՛ք, վիճեցէ՛ք, ծիծաղեցէ՛ք: Միշտ մեծ հաճութիւն եմ զգում, երբ տեսնում եմ, որ մարդիկ զալիս են, նստում, խօսում, կուռում, հաշտում, բաժանում, էլի միանում: Մէջ տեղում ոչ փող կայ բաժանելու, ոչ տուն կայ շինելու, ոչ փողրաթ կայ վերցնելու. բայց մարդիկ աւելի են վառւում, կրակւում և էլի վերջ ի վերջոյ մեր ազգը առաջ են տանում:

—Այդ ճշմարիտ է, վերջ ի վերջոյ այդպիսով ազգը առաջանում է, վրայ բերաւ Սերգօյեանը:

—Ձեր կենացը, ձեր կենացը, ձեր կենացը:

Կամաց կամաց բոլորի կենացն էլ խմեցինք:

Օրիորդի կենացը խմելու ժամանակ Սերգօյեանը երգեց, և բաւականին յաջող: Սեղանակիցները շնորհաւորեցին Սերգօյեանին նորա յաջող երգի համար: Սերգօյեանը ոգևորւած շնորհակալութիւն արաւ: Բայց դառնալով օրիորդին ասաց.

—Օրիորդ Նուարդ, ես էլ կը խնդրեմ, որ ճաշից յետոյ մեզ համար մի բան ածէք դաշնամուրի վերայ, ասաց Սերգօյեանը:

—Օրիորդը շատ կ'ուրախացնի մեզ, եթէ բարեհաճի, աւելացրի ես:

—Ես, պ. Պատրիկեան, այնքան լաւ չեմ վարժւած, որ ու-

րիչների լսելու համար ածեմ: Ես ինքս ինձ համար եմ նւագում:

—Մի՛ հաւատաք օրիորդին, պ. Պատրիկեան, նա զեղեցիկ է ածում: Անցեալ օրը ես պատիւ ունեցայ լսելու մի եղանակ, որ Լէյտոն շարադրածն է. կարծեմ չեմ սխալւում, օրիորդ:

—Այսինքն Լի՞տոն:

—Այո՛, Լիտոն: Օրիորդը նախ սկսեց մեղմ և գրաւեց բոլոր ուշադրութիւնս. իսկ յետոյ, երբ նա խփեց գամման—հասաւ կատարեալգործութեան: Ես հաւանեցի այդ պարտի տուրը:

Օրիորդը յանկարծ կարեց Սերգօյեանի խօսակցութիւնը և հարցրեց ինձ.

—Դուք երաժշտութիւն սիրում էք:

—Այո՛:

—Եւ ինքներդ մի որ և է գործիքով նւագում էք:

—Այ:

—Կամ զուցէ երգում էք:

—Դժբաղդաբար ոչ:

—Եթէ երաժշտութիւն սիրում էք՝ ուրեմն ինչո՞ւ չը սովորեցիք մի որ և է գործիքով ձեզ զբաղեցնել ձեր միացնութեան ժամանակ:

—Պատճառներ շատ կան. ես փոքր ժամանակս չէի գնահատում այդ բանը. իսկ յետոյ ժամանակ չ'ունէի:

—Երաժշտութիւնը շատ կարեւոր մի առարկայ է, վրայ բերաւ Սերգօյեանը. նա պէտք է մտնի մեր դպրոցները, իբրեւ հիմնական դասառարկաներից մէկը: Եջմիածնի այդ գործունէութիւնը շատ յարգելի է: Մի Ֆիլոսօֆայ ասում է թէ՛ երաժշտութիւնը միացնում է մարդիկներին:

—Ի՞նչպէս թէ միացնում է, հարցրեց Մեհրաբեանը:

—Իիցուք, օրիորդը նւագում է, իսկ մենք բոլորս լսում ենք և, ազդւելով նորա նւագածից, միտրամադրութեան մէջ ենք ընկնում:

—Այո՛, ձիշդ է, բայց չը գիտէ՞ք արդեօք այդ ո՛վ է ասել, հետաքրքրւեց Մեհրաբեանը:

—Ձիշդ չեմ յիշում. բայց անպատճառ Օգիւստ Կանտը պէտք է ասած լինի:

—Կօնտը... այո՛...

—Յայտնի Օգիւստ Կանտը:

—Դորա զիրքը հայերէն կա՞յ:

— Պօլսեցիները դորա մասին մի քանի անգամ գրեցին: Առնալը և Լիթրէն ազգեցին Նորայրի վերայ և նա մի լաւ զեղեցիկ բառաբան յօրինեց, որի հաւասարը չը կայ:

Հացկերոյթը վերջացաւ: Որիորդը մեզ առաջնորդեց զէպի դահլիճը: Երբ նստեցինք, նա դարձաւ ինձ և ցածր ձայնով հարցրեց.

— Պարոն Պառիկեան, խնդրեմ ասացէ՛ք, զուք հաւանով եք փօրերի վէպը:

— Այո՛:

— Բայց ինչո՞ւ զուք այնպէս ծուռ էիք նայում սեղանի շուրջը կատարած խօսակցութեան:

— Իժևար է պատասխանելը: Ինչ վերաբերում է փօրերի վէպի նման գրածքներին, պէտք է ասեմ, որ խնդիրը այն է, թէ՛ նոքա ո՛րչափ լաւ են, այլ թէ ի՛նչ կերպ են կարգացում և ի՛նչ է սպասում կարգացածից:

— Աւրեմն, զուք ինձ երեսաց էք համարում:

— Ամենեւին ո՛չ: Նս ձեզ, օրիորդ, դեռ չեմ ճանաչում, ուստի ոչինչ չեմ կարող ասել ձեր վերաբերմամբ:

— Եւ չը ճանաչէք աւելի լաւ կը լինի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ անօղուա է, որովհետեւ զուք այսօր որ եկաք՝ դա մի տեսակ պատահմունք էր, չեմ կարծում թէ միւս անգամ ևս մեր տուն շնորհ բերէք: Մինչդեռ ճանաչելը պէտք է կրկին տեսութեան յուսով լինի:

— Այո՛, դժբաղդաբար ես ժամանակաւոր հիւր եմ այս քաղաքում՝ մի երեք շաբաթեաց: Բայց ինչո՞ւ մարդիկ պէտք է այդքան երկայն-բարակ հաշուեն: Այսօր այս զէպքով, եղուց մի ուրիշ զէպքով կարող են մարդիկ միմեանց պատահել:

— Բայց ինձ հասարակութիւն է հարկաւոր. իսկ ես նրանից զրկւած եմ, ասաց կարմրելով օրիորդը: Ինձ շրջապատողները խղճաւի մարդիկ են: Նս ապրում եմ յերաւի միայն գրքերով: Պարոն Սերգօյեանը մի անմեղ սոխակ է, որ երգում է իւր համար և ինքը հրճւում իւր երգով:

— Ինչպէս թէ երգում է իւր համար, զաբմայած հարցրեց Սերգօյեանը:

—Լա՛ւ, ասացէ՛ք, խնդրեմ, այսօր ո՞ւմ համար էիք այնքան քարոզում:

—Մարդ պէտք է իւր զգացածը յայտնի, իւր մտածմունքները հայտնի, շարած պատասխանեց՝ Սերգօյեանը:

—Որ ասում եմ իւր համար է երգո՞ւմ:

—Իսկ ուրիշ ի՛նչ կերպ կարելի է խօսել:

—Դա դժւար է երկայն բացատրել: Դիցուք ձեր շորը յանկարծ պատուեց. դուք ի՛նչ կ'անէք:

—Կարելի կը տամ, կարկատել կը տամ, ինքս կը կարեմ:

—Սուտ էք ասում. դուք ոգևորւած ճառ կը խօսէք այն բանի մասին, թէ շորը շատ կարևոր բան է, թէ առանց շորի ապրել անկարելի է, թէ շորի այս կամ այն յատկութիւնը—քաղաքակրթութեան այս կամ այն աստիճանի հասած լինելն է և ով զիտէ այլ ևս ի՛նչ տեսակ դատողութիւններ կ'անէք կարկատելու մասին:

—Օրիորդ Նուա՛րդ, այսօր դուք բոլորովին ուրիշ տեսակ էք խօսում, ես ձեզնից չեմ լսել այս տեսակ խօսքեր:

—Այս ասածները ձեզ համար չէին, այլ պ. Պատրիկեանի համար, որ ուզում է ինձ ճանաչել: Դուք, պ. Սերգօյեա՛ն, ինձ ճանաչելու կարևորութիւն չ'ունէք, առանց այն էլ ձեր պահանջի չափ ճանաչում էք:

—Ձեմ հասկանում, օրիորդ, շփոթւած կակազեց Սերգօյեանը, ճշմարիտ, ես չեմ հասկանում, դուք ինձ վիրաւորո՞ւմ էք, թէ անմեղ էք խօսում:

—Ի՛նչ վիրաւորելու պէտք ունիմ: Ես ձեզնից անչափ շնորհակալ եմ, որ դուք զալիս էք մեր տուն, ինձ զբաղեցնում էք և, բացի այդ, ինձ համար միջնորդ էք դիրք ստանալու գործում:

—Ուրեմն թողնենք այդ հանգոյցներով լի խօսակցութիւնը և զբաղւենք աւելի ուրախ բաներով: Օրիորդ, խնդրում եմք, որ մեզ համար նւագէք:

Սերգօյեանի խնդիրքին միացան և մեր խնդիրքները: Օրիորդը համաձայնեց, բայց նախ մի նկատողութիւն արաւ Սերգօյեանին.

—Սա առաջին անգամն է, որ դուք, կարծեմ, խօսակցութիւնից վախճում էք: Դուք ասում էք՝ հանգոյցներով լիքը: Ապա քանդե-

ցէ՛ք այդ հանգոցները: Իսկ ես միշտ պէտք էի զգում զբաղւելու շատ և շատ ուրիշ հանգոցների քանդելու խնդրով: Քայց ինձ վիճակւած է լսել, ճշմարիտ է, լաւ կ'անեմ ձեր խորհրդին հետեւեմ և նւագեմ:

— Լէյտտի, այսինքն՝ Լիստի շարադրութիւնը խնդրեմ, աղաղակեց Սերգօյեանը:

Օրիորդը իսկապէս հրաշալի էր նւագում, մեծ տաղանդով, մեծ զգացմունքով, մեծ հասկացողութիւնով: Ես հիացած էի. ուստի սրաւբուղիս ասացի.

— Շատ և շատ շնորհակալ եմ, օրիորդ. դուք իսկապէս վարպետ էք և՛ ինքնուրոյն երաժշտութեան մէջ: Ձեզ զովել անգամ աւելորդ է. դուք այնչափ զիտակցաբար էք ածում, որ դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը:

— Աւրեմն ես չէի սխալւել, ոգևորւած վեր թաւ Սերգօյեանը: Օրիորդի տաղանդը անվիճելի է: Մօտր նա մի առանձին ուժով ածեց, Կօնտի ասածը այժմ՝ ճշմարիտ է թէ ոչ, պ. Մեհրաբեան:

— Ճշմարիտ է, ճշմարիտ է. ես առաջ էլ չէի հերքում:

Օրիորդի խալի ժամանակ մեզ մատուցին սուրճ և տան տէրն ու տանտիկինը եկան նոյնպէս դահլիճ: Տիկնոջ շատ գիւր եկաւ խաղի մասին յայտնած իմ գովասանքը: Ուստի Մեհրաբեանի խօսքից յետոյ տիկինը ուրախ ուրախ ասաց.

— Սհա՛, պ. Պատրիկեա՛ն, ես այդ էի ասում, որ Նուարդս փոքր ինչ կարգալը թողնի և դաշնամուրով աւելի զբաղւի: Առաջ շատ էր սիրում երաժշտութիւնը. այժմ ինչ որ մտածմունքների մէջ է ընկել ու մի գլուխ կարգում է:

Օրիորդը մի անգամ ևս նւագեց. յետոյ հիւրերը ցրւեցին: Տան տէրերը մի տասն անգամ ձեռքս սեղմեցին, որ չը մոռանամ իրանց տունը: Օրիորդն էլ աւելացրեց.

— Փօքերի վէպի մասին վէճը չը վերջացաւ:

— Կ'աշխատեմ մի անգամ ևս ձեզ այցելել մինչև գնալս—ասացի ու դուրս եկայ:

Փողոցում Սերգօյեանը ինձ հարցրեց.

— Խնդրեմ ասէք, ձեր մասնագիտութիւնը...

— Արհեստագիտութիւն, տեխնիկ, իսկ ձե՞րը:

— Ես առաջ ուսուցիչ էի, իսկ այս տարւանից դրագրի պաշտօն եմ

ընդունել:—Ներեցէ՛ք, ես կարծում էի, թէ դուք դատարանում ծառայող Պատրիկեանն էք, իսկ դուքս է գալիս, որ դուք արհեստագէտ էք:

—Ի՞նչ ներողութիւն խնդրելու բան կայ այստեղ:

—Որչափ և իցէ, զանազանութիւն կայ: Եւ զիտէ՞ք, մեղաւորը պ. Մեսրոպեանն է, որ մեզ կարգին չը ծանօթացրեց:

—Ես ձեր ասածք չեմ հասկանում, պ. Սերգօյեան:

—Ձէ՛, ով զիտէ, կարելի է ես աննկատելի կերպով ձեզ վիրաւորել եմ իմ խօսակցութիւնով:

—Լա՛ւ, երևակայեցէ՛ք, որ ես դատարանում ծառայող Պատրիկեանն եմ, մի՞թէ ինձ՝ իբրեւ այն մարդուն՝ կարող էիք վիրաւորել:

—Ներեցէ՛ք, խնդրեմ, ես շատ յարգում եմ կրթւած մարդկանց և աշխատում եմ նրանցից շատ բան ուսանել:

—Յոետութիւն. ես այս կողմն եմ գնում:

—Յոետութիւն:

Սհա՛ այս տեսակ են այս օրւայ խօսակցութիւնները և դէպքերը: Խեղք մի բան կտրո՛ւմ է այս բողոքից:

Տգրութիւն:

Քճ Ս. Պ.

ԼԵՌՆՑՈՒ ՀԱՅ ԱՂԶԿԱՅ ԵՐԳԸ

(Բաֆֆիի «Սամուէր»-ից)

Ձ. ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

Դա մի երգ էր, երգ լեռնական,
Լեռնցի աղջիկ էր երգում,—
Եւ թըռչում էր երգը նըման
Հըրպարտ արծւին ամպերում:
Նա գինւած էր, զրահաւորւած,
Ինչպէս ագնիւ իշխաններ...
Եւ լիբբ պարսիկն կ'ընկներ խոցւած
Թէ մօտ գընալ խիզախէր:
Բնութեան կոյսը մերթ գոլում էր
Իւր հայրենեաց հովիտներն,
Կամ գըրկւում էր, սըլանում էր
Ջեփիւռի հետ դէպ' սարերն:
Մերթ աղջիկը նըւագում էր
Մութ անտառի մեղեդին,
Ուր դարաւոր կանաչում էր
Տերւախիտ եղևին:
Յանկարծ ձայնը մեղմանում էր,
Ծաղկանց հետը փըսփըսում,
Երբ կարմրելով որոնում էր
Սիրած եարին զաշտերում:

Բայց տես, ահա սաստկանում է,
 Լեռ ու ձորում սաւառնում...
 Աւսդ, յանկարծ նա դիպչում է
 Ապառաժին ու լըռում:

Կարծես, Հէնց այժմ—պարզ ու գրաւիչ
 Դեռ հընչում է ականջիս
 Դիւցազնուհու երգը դիւթիչ,
 Զօրեղ ձայնը անտառից:
 Կարծես, Հէնց այժմ չափըշտակած
 Դեռ լըսում եմ մեղեդին
 Եւ նայում եմ, նայում աւլած,
 Յաւերժական քաջ կոյսին:
 Եւ այն խըրսիտ թուխ-թուխ դէմքից
 Ինչքան եռանդ էր փայլում...
 Սիրած եարին սեւ աչերից
 Որքան սէր էր խոստացւում:

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱՐԵՂԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

«Սասունցի Գաւիթ» կամ «Մերի դուռ», Կ. Պօլիս, 1874, եւ «Գաւիթ եւ Մեր»,
Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-գիւ-
ցաղնական հին վէպ:

ԺԲ.

Գիւցաղներ ժողովրդի գաղափարաւորսն է, ժողովրդի ցանկութեան
մարմնացումն է. բառական չէ, որ նա միայն գաղաններին զտէ և աւերիչ
դէներին կոտորէ. բացի գաղաններից կան և ուրիշ թշնամի էակներ, թըշ-
նամի գիւցաղներ, որոնք նոյնքան վնասակար են ժողովրդի համար, որ-
քան գաղաններն ու դէները, և թերեւ նրանցից աւելի վնասակար. որով-
հասե թշնամի գիւցաղներն իրանց անչափ ուժի հետ միացրած են և մարդ-
կային բանականութիւնը, որ չ'ունին գաղանները և սղակաս ունին դէները:
Թշնամի գիւցաղները մենակ աւելի են, քան թէ բոլոր դէները և բաղմաթիւ
հրէշները: Ահա ալոպիսի թշնամի գիւցաղներից ևս պէտք է ժողովրդի
գաղափար կազմող գիւցաղներ ազատէ իւր ժողովրդին:

Ալոպիսի մի թշնամի գիւցաղն վէպի մէջ ներկայանում է Մարամե-
լիքը: Գաւիթը Սասունի քաղաքի տէրն է, իսկ Մարամելիքը Մարալ քա-
ղաքի տէրը: Մարալ մեղիք կոչումն է տրուում Մարալ քաղաքի իշխողներին,
որ ցատուկ անուն չէ, ալ մի հասարակ կոչում: Մարալ և Սասունի քա-
ղաքները երկու միմեանց թշնամի կենդրոններ են, որոնց մէջ կախն սկըս-
ւում է հէնց Աբամելիքի օրով: Մարալ մեղիքների սերունդն ևս հասարակ
մահկանացուների սերունդ չէ: Հ. Սրուանձտեանի վարիանսով՝ այդ իշխա-

1) Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. 10 և 11 համարները:

Նախան ցեղն ևս ծաղու՞մ է Արամելիքից, որ սպանու՞մ է Մարալ թաղաւորին: Այդ թագաւորի կնոջից և Արամելիքից ապօրինաբար սերւում է Մարալ մելիքների ցեղը. ապօրինի և անգրանիկ ծնունդ, որ չէր կարող երբեք հաշտ աչքով նայել Արամելիքի օրինաւոր՝ բալց կրտսեր սերնդի վերաջ, ինչպէս ապօրինի որդին, օրինաւոր բալց կրտսեր որդու վերաջ: Եւ ահա այս երկու ցեղերի մէջ սլատերազմ է սկսւում և, ինչպէս երևում է, շարունակւում է որդէց որդի մինչև Գաւթիթը. մէկը սպառնում է Սատմալ քաղաքն աւերել, իսկ միւսը՝ Մարալ քաղաքը: Պատերազմի չաջողութիւնը միշտ Սատնու տէրերի կողմն է: Թլօր Գաւթիթի ժամանակ, երբ որ սա զեւ երկնայ էր, իսկ հալըը մեռած, Մարալ մի ուրիշ մելիք ցարմար միջոց է գտնում Սատմալ քաղաքն իրան ենթարկելու:

Մարալ և Սատմալ քաղաքների կռիւները լիչեցնում են իրանի և Թուրանի կռիւները Շահնամէի մէջ. իրանի փոխանակ Սատնեն է զուրս գալիս, իսկ Թուրանի փոխանակ՝ Մարալ քաղաքն իւր մելիքներով: Սատնու տէրերը հանգիստանում են իբրև ժողովրդին սիրելի, ազնիւ ախլեր, որոնց զլխաւոր ոչ ու միտքը նորա վերաջ է դարձրած, որ իրանց երկիրը պաշտպանեն օտար բռնութիւնների դէմ: Մարալ մելիքները, ընդհակառակը, ժողովրդի համար սիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեպհական ժողովրդի վերաջ բռնութեամբ են իշխում, և այս լուս կիրպով չաշտնում է պատերազմի մէջ «իբր հալիւոր» զինւորի խօսքերից. «Գաւթիթ, դիւ ինչո՞ւ էսա մարդեր կը սպանու... Մարամելիք զօրով ի բերի»:

Ահա ալ՝ իւր ժողովրդի համար իսկ ատելի Մարամելիքը կամենում է իրան հարկատու չլինել Սատնու տէրերին և, հաւաքելով իւր ժողովրդից կատարեալ սպառազինութիւն—նորելուձ մանուկներ, բեզդար տղաներ, թուի միւրօքաւորներ և սպիտակ միւրօքաւորներ, գալիս է Գաւթիթ վերաջ: Բալց միթէ Մարամելիքն անձամբ բաւական չէ կուսելու Գաւթիթի դէմ:

Մարամելիքն աշխարհի սլարազաներով է նկարագրւած վէպի մէջ, որովոր սլարազաներով նկարագրւում են մեր հէքիաթների մէջ զիւսական անձուներ, հրէշաւոր արարածները: Նա, իբրև մի տխրանալի հոկայ զների պէս եօթն օր անգարթնելի քուն է մտնում. նա ալը քնից չի զարթնիլ ոչ մի թեթև բանով, որով զարթնում են հատարակ մարդիկ. նրան զարթեցնելու համար պէտք է երկաթէ շամփուրը կամ գութանի խովը կրակացնել և տալ նորա ոտքերին: Պէտք է երեակալել աչն հոկան, երկալնալէզ, անհեղեղ հոկան, ինչպէս Խորենացին գնում է Բէլի հոկաների համար,—որի համար չիկացած երկաթով խարելը նոյնն է, ինչ որ հողածիճների համար լուի կծելը, որից մարդ զարթնում է, բալց դարձեալ թմրութեան քնի մէջ է մտնում ¹⁾: Վերջապէս Մարամելիքը զարթնում է և, իբրև մի տարերաւիան

¹⁾ Արտայայտութեան սոյն եղանակը գտնում ենք և հուսաց տարերաւիան աւաղ զիւցաղնուհի Նոստասիա Միկուիշինայի և մարդանման կրտսեր հոկայ Գոբբի-

գերբնական հսկայ, աւելի աւագ քան թէ Գաւթիթը, որ մարդանման կրտսեր հսկայ է, մի տեսակ արհամարհական հաւանքով, կարծես, բարձրից՝ ամպերից է նախում Գաւթի վերաւ և փչում.—նորա փչելով ամեն մի հասարակ արարած պիտի թռչի: Կատարեալ նմանութեան մեր հէքլաթներում պատմած երկաթէ մարդկանց նկարագրին, որոնցից մէկի պատկերը զոռնում ենք հ. Արուանձտեանի «Համով-Հոտով»-ի Խան-Բօղուի անձնաւորութեան մէջ: Երկաթէ մարդ Խան-Բօղուի փոնգաոցից Բաղիկանը մի արտ է միայն հեռու թռչում, որովհետեւ ինքը՝ Բաղիկանն էլ կտրիճ մէկն է, դեւերի և ափղահաների (վիշապների) հետ տուել ու առել է, ման է եկել Լոս-աշխարհք, Մութ-աշխարհք, Աջոջ-Մաջոջ, Գեռ Ազնաւոր, ինսան ու ջանաւար—ամենքի հետ կուել է և ամենքին չալթեւ է:

Չը նախելով, որ Մարամեղքն ալսպիտի մի աւագ զիւցաղնական ուժի տէր էակ է, բայց նա զարձեւալ չէ համարձակում մինակ գնալ կուլի Սասնու վերայ և բաց ճակատով կուլի մտնել Գաւթի դէմ. նա ամեն դէպքում խորամանկութեան և խաբէութեան է զիմում: Առաջին անգամ հերոսին չատուկ հիւրասիրութեան պատրասկով, Գաւթին խաբում, ձգում է քառասուն նետ խորութեամբ հորի մէջ և նենդաւոր մարդու չարախնդաց յալիսով առում. «Դէն էր, ինչ ար խեղ ձի կուլ էնէր, թրի կենալ էնտիս, չուր ուկորքեր փոխ»: Բայց Գաւթի խաչ-Պատարազինի զերբնական զօրութեամբ հորից աղաւտում է: Մեկիքը զիմում է երկրորդ նենդութեան՝ հերթով կուելուն, որպէս զի ինքն առաջին հարածն իջեցնէ. ալս էլ չէ չաջողում: Նա զիմում է երրորդ նենդութեան և օգտւում է Գաւթի բարեսրտութիւնից: Նա ասում է Գաւթին. «Կ'ուզեմ, որ քառասուն գետլ խուր փորեմ.—ես երթամ, ընկնեմ մըջ խորուն, քառասուն ջաղցի քար քաշեմ վարիմ, քառասուն դեղած գոմէի կաշի լէ առնեմ, քցեմ վար ջաղցի քարին»: Բայց Գաւթի լախտի մի հարածով «քառասուն գոմէու կաշին կարեց, քառասուն ջաղցի քար լէ կարեց, Մարամեղքի գլխու գազաթ լէ կարեց»: Ալսպիտի առասպելական պաշտպանութեան վահանների տակից Մարամեղքի գլխի դաղաթը կարած է և նա երկու կէս է կղած, բայց զարձեւալ, ինչպէս դեները հսկաների ձեռքով երկու կէս լինելուց չհոտ, ձայն է առլիս և արհամարհում Գաւթի հարածը, կարծելով թէ ինքը չէ միասւած. բայց երբ որ իրան թափ տւեց, ամէկ կտոր ընկաւ էստեխ, մէկ էնտեխ»:

ԺԳ

Սասնու տէր Գաւթին էլ հսկայ է. նա, դեռ մանուկ, առանց գէնքի

Նեա Նիկիտիչի կուլ մէջ. Գորբինիան երեք անգամ իւր բոլոր ուժով լախտով ետեւից լափում է Նաստասիային. բայց սա միայն երրորդ անգամը յետ է զառնում և ասում՝ ես կարծում եմ թէ մոծակներն են կծում:

զտուել է դադաններին և կոտորել քառասուն ղեկերին. բայց այդ ղեկերն ու դադաններն ինչ են անարի և չուերթ հոկաչ, խորամանկ Մարամելիքի մօտ,— չնչին և անխմաստ արարածներ: Սակայն Գուրիթն, իբրև զիւցաղն, պէտք է կուէի Մարամելիքի գէմ: Հեշտ ու թեթեւ բան չէ ալլալիսի մի հրէշաւոր զիւցաղնի գէմ կուսելը. նորա գէմ՝ կուսելու համար հերոսը պէտք է ունենալ աւելի քան իւր ժողովական բնական ուժը, և ուրիշ գէնք, քան իւր հովական ցուպը. և ահա ժողովուրդն իւր զիւցաղնին չըջապատում է ալլալիսի պաշտպանութեան ղէնքերով, որ պէտք է ունենալ ամեն մի կատարեալ զիւցաղն:

Ամենից առաջ զիւցաղնը պէտք է ունենալ ներքին բարոյական արժանաւորութիւն: Ժողովրդի հասկացողութեամբ, ինչպէս ամեն մարդու գործի աջողութեան համար պահանջւում է, որ սկսած գործն աստուածահաճոյ լինի, նոյնպէս և զիւցաղնի համար պահանջւում է արդարութիւն ունենալ, ալսինքն՝ Աստուծու աչքին սիրելի լինել, սրովհետեւ զիւցաղնը, ինչքան էլ քաջ ու գորեղ լինի, զիք, աստուած չէ, զիւցաղնը, ինչքան էլ իւր արարքներն անձնիշխանութեամբ կատարէ, նա դարձեալ մարդկալին սերունդ է, և նորա վերայ եւ ճշնում է աստուածալին, զիւցաղնի ալն դերադոյն զօրութիւնը, որի ձեռքի տակ են թէ մարդիկ և թէ զիւցաղններ, և որի կամքի մի արտապատութիւնը միայն բաւական է, որ զիւցաղնի բոլոր վիճակը փոխւի և նա հուսադարձի ստիպական մարդուն: Մեր ազգային վէպի մէջ՝ աստուածալին զօրութիւնը բռնում է ամենամեծ տեղը, և Աստուծու կամքով ձեռնարկած գործն է միայն չաջողութիւն գտնում. զիւցաղնը, ամեն մի նեղ տեղն ընկած միջոցին, խոնարհութեամբ հնազանդւում է դերադոյն ուժի հրամանքին, որ իւր ճակատագիրն է, բայց միանգամայն և ցոյլուն, որ ալ դերադոյն ուժն իւր բարեարութեամբ ձեռքից չի թողնիլ իւր զիւցաղնին, սրովհետեւ սա արդար է և սուրբ գործի համար է կուում: Զիւցաղնի առ Աստուած զիմեղու սովորական ձևն այս է.

«Օրհնեալ, բարերար Աստուած,

Քո հրամանքն էր չառ.

Հրամանք անեա՝ և ալլա:

Ալլալիսի մի ազօթական երգով, որ հնութիւնից եկած վիպականութիւն ունի, հերոսները չառ անգամ զիմում են դերադոյն զօրութեանը, և նա կատարում է նրանց խնդիրքը. բայց կատարում է ալն խնդիրքը, որ զիւցաղնական ուժի սահմանից դուրս է, որ զիւցաղնական անչափ ուժով անգամ կարելի չէ անել, ինչպէս՝ վէպի մէջ՝ հարաւքամի բերելը, և ուրիշները: Իսկ ինչ որ վերաբերում է զիւցաղնական ուժին, և ալլա ուժով կատարելու հնարաւոր գործերին, հերոսի ալլա զիւցաղնական ուժն Աստուծու անուանը զիմեղով չէ ամեն անգամ սատկանում և չափից անցնում:

ալ Աստուած, ինչպէս գիտենք, ալ չհորհրդէ խաչ-Պատարաղին պատկերով մի անգամ ընդ միշտ արդէն աւել է Դաւթին և իւր հօրը, որովհետեւ նրանք արդար մարդիկ են, և ալ ևս նրանցից չէ վերցնում, քանի որ նրանք արդարութեամբ և ուխտապահութեամբ կը վարեն իրանց կեանքը: Աստուած իւր զօրութեամբ միշտ նրանց հետ է, որոնք իւր արդարութեան ճանապարհով կ'ընթանան և Աստուած իւր ալ չհորհրդի բաշխումը ոչ թէ իւր ինքնակամութեան է թողնում, ալ հերոսի անձնակամութեանը:—Ճիշդ քրիստոնէական գաղափար մարդու անձնելիանութեան մասին: Առհասարակ մեր ազգային վէպը՝ հեղհեղած է կրօնական գաղափարներով, որոնք աւելի քրիստոնէական ժամանակին ևս պատկանում, քան թէ հեթանոսականին. և ալ բնական է մեր ազգի համար, որի պատմական արտաբանութիւնը միայն եկեղեցու մէջ են ուղում սեփնել:

Աստուծուն սիրելի լինելն արդարութեամբ և անպարտելի զօրութիւն տաճարու միջնորդ «Խաչ-Պատարաղին» ունենալը դեռ բաւական չէ. շատ էլ զիւցաղնը բարոյական արժանաւորութիւն ունի և ներքին զօրութեամբ լիքն է, նորա արտաքինը դեռ մի և ճոճ սոսկական մարդունն է. հասակը հասարակ մարդու հասակից վեր չէր կարող լինել, որովհետեւ թէպէտեւ զիւցաղնական սերունդ՝ բազմ գեղ. մանուկ էր. հագուստը հովական հասարակ հագուստ էր, իսկ զէնքը ցուպ և հասարակ նետ ու աղեղ էր: Դիւցաղն իւր ներքին արժանաւորութեան հետ պէտք է ունենալ և զիւցաղնի վաղէ արտաքին արժանաւորութիւն. նա պէտք է հսկակական չաղթանդամութիւն, քաջամարտիկ մարդու զէնք ու զրահներ և իշխանական հանդերձանք ունենալ: Ժողովուրդն իւր սիրելի զիւցաղն Դաւթին հազցնում է իւր հօր իշխանական հագուստը. «զլխու-գօտին», «կապէն-խարուկին», և «քամարըն ի մէջքին», իսկ որ ամենից զլխաւորն է, նրան տալիս է «թուր-կէծակին», և «Քուռկիկ—Ջաւալին»:

Կալծակի-թուրը, զաւամենընալիւ զէնքն է, որ մեր ժողովուրդը տալիս է իւր ամենից սիրելի հերոսներին: Կալծակի-թուրը թէպէտեւ երկրիս վերայ է արւեստում, բայց նորա նիւթը երկրալին չէ, ալ երկնալին. նա ծնւում է ինչպէս «կալծակի» անունն իսկ ցուց է տալիս, ահա զազօր կալծակներէ, որոնց առաջ անհատանելի բան չը կալ աշխարհիս վերայ, ուստի և Կալծակի-թուրից աւելի հաստ սուսեր չը կալ երկրիս վերայ, և զիւցաղնը, եթէ կատարեալ զիւցաղն պէտք է լինի, պիտի ունենալ ազգային մի թուր: Ափսոս, որ մեր վէպի մէջ չէ փշտում թէ ինչպէս է Կալծակի-թուրը ձեռք բերել. որովհետեւ ալ թուրը Դաւթին իբրեւ հաղթական ժառանգութիւն է ստանում, իսկ վէպի մէջ չը կալ Դաւթի հօր մասը, մինչև իսկ Դաւթի ծնունդն և առաջին երեսաւորութիւնը: Մեր ժողովրդական աւանդութիւններից չալտնի է քիչ ու շատ թէ ինչպէս է հերոսը ձեռք բերում Կալծակի-թուրի նիւթը:

Կան աշխարհի լեռներ, սրտնց զլիսին միշտ վտժորիկ է և միշտ կաշծակներ են խփում. աղ կաշծակները գետնին խփւում են և խփոյն վերանում են երկինք, գետնի վերայ չեն մնում: Եթէ հերոսն աշխարհն սիրտ առնեալ, որ անվախ կերպով բարձրանալ կաշծակի-ոտարը, և հետը տանի թաց թաղիք, գնի տարի զլիսին,—կաշծակը, խփուելով թաց թաղիքին, կը մնալ թաղիքի մէջ և հերոսը կարող է կաշծակը բռնել, բերել ներքե և ուղած թուրը շինել: Այս աւանդութեան հետ զուգ դռնում ենք և մեր հին մատենագրութեան մէջ շանթ բառի ուրիշ դործածութիւնը. ահն է, որ շանթ նշանակում է թէ կաշծակ և թէ շիկացած երկաթ. բացի աղ՝ կաշ և շանթ երար բառ, որ Անանիա Շիրակացին, է. դարում, իւր ստոեղաբաշխութեան մէջ բացատրում է. «Ասեն ոմանք զշանթեքարն որոտմամբ հանդիւժանկեալ նման կրիպի զլիսոյ» (տե՛ս «Հաւկազեան լեզ. բառ. ընդ., որի մէջ շանթեքարի համար առւում է՝ քար պատուական, որ կարծի անկեալ զուգ ընդ շանթի»): Շանթ և շանթեքար բառերի այս հին նշանակութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովրդի մէջ եղած արդի հաւատալիքը Կաշծակի-թրի ծագման մասին գալիս է աւելի ևս հին, առասպելական (միթական) ժամանակներից:

Կաշծակի-թրի հետ պէտք չէ մոռանալ և «Հաււունի-թուրը», որ գրեթէ նոյն լատիւթիւններն ունի, ինչ որ Կաշծակի-թուրը, միայն ծագմամբ ուրիշ է: Հ. Սրուանձատեանը «Համով-Հոտով» մէջ ապալէս է դնում Հաււունի-թրի մասին. «Հաււունի կը նշանակէ հաւու ունի. իբր թէ երկաթը կը մանրեն կորեկի պէս, կուտան հաւերուն, կ'ուտեն, և անոնց ծերտերը ժողվելով կրակով կէրեն, ելած երկաթը կը լինի զուտ չաւիկ և դարմանալի սուր ու կտրուն» («Համով-Հոտով», երես 75): Հաււունի-թուրն ապալին վէպի մէջ դուրս է գալիս Պարոն-Ասողկի ձեռքին, որ Գաւթի հօրեղբոր սրդին է: Հաււունի-թրի աւանդութիւնն ևս, ինչպէս Կաշծակի-թրինք, հնութիւնից է գալիս. աւանդութեամբ՝ բաղմալաղթ Տրդատ թագաւորն ևս ունեցել է Հաււունի-թուր:

Բացի Հաււունի և Կաշծակի թրերից, զիշատակում է զուրդ-լախոյ, որ մեր հերոսների ամենասիրելի զէնքն է. գուրդի մասին մենք վերեւում խօսեցինք: Գաւթիքը, չը նաչելով՝ որ ունէր Կաշծակի-թուր, Մարամելիքի հետ թրով չէ կուռում, ալ լախոտով, և այս ցոյց է տալիս, որ վէպի աղ մասը, աչինքն Գաւթի և Մարամելիքի կռիւն աւելի հնութիւն ունի, քան թէ Կաշծակի-թրի զրուցը, որ աւելի հետագայ ժամանակի ծնունդ է նոյն իսկ իւր արեւոտով. բոլոր նախնական հերոսները, ինչպէս լուծաց մէջ Հերակլէսը, կուռում են միայն լախոտով, որ մի պարզ ու բիրտ զէնք է, ինչպէս և իրանք հերոսները պարզ ու բիրտ են: Հ. Սրուանձատեանի վարժանաւոր Կաշծակի-թուր չը կաշ, բոլց դուրս փոխանակ Գաւթին ունի խալիսան—վահան, որ իւր զլիսին է բռնում Մարամելիքի հետ կուռելու ժամանակ: Աւելացնենք ալ զէնքերի վերայ և նկատ ու աղեղը, որ ունէր Գա-

ւիթը, կը ստանանք զիւցազնի սպասազինութիւնը՝ Նաչ ծ ա կ ի կամ Հ աւ-
լ ու ն ի թ ուր, լ ախա, վ ահա ն ե ն ետ ու ա զ ե զ: Պէտք է նկատել,
որ ազգային վէպի մէջ զէնքերն աչտպէս են վիշուում, իսկ զրահաւորու-
թիւն չը կալ, եթէ զրահներ չը համարենք «զլիւս գետին», կապէն-խա-
բուկին, քամարն ի մէջըին», որոնք մեկնութեան են կարօտ և մենք գրծ-
ւարանում ենք բացատրել, բայց և աչտպէս կարծում ենք, որ զրանք աւելի
հաղուտ պէտք է լինին, քան թէ զրահներ:

Վերադառնալ զէնքերից թուրն ու լախտը զիւցազնի անրածան ընկեր-
ներն են, բայց զիւցազնի համար կալ և մի ուրիշ անրածան ու հաւատա-
րիւմ ընկեր, զա նորա ձին է, ձին, որ աչնքան նշանաւոր դեր է կատա-
րում ինչպէս ընդհանրապէս մեր բոլոր հէքիաթներում, աչտպէս և մեր ազգա-
յին վէպում: Վիւցազն առանց նժուղի զիւցազն չէ. պարսից զիւցազն
Ռուստամի իրան առանց ձիու փահլեան չէ համարում, և նա կարծում է,
որ իրան միայն աչն ժամանակ հսկալի տեղ կ'ընդունեն, երբ որ ինքն իւր
սիրելի Ռաշի վերալ է: Նա ձիու համար հսկան իւր կեանքը կը տալ, ո-
րովհետև առանց ձիու չի կարող ոչ մի սխրագործութիւն կատարել. լաւ
ձին հսկալի մարտակիցն է պատերազմի մէջ և նորա պահապանն ու պաշտ-
պանն է թշնամիների լարձակմունքների դէմ. նա միանգամայն և հերոսի
հաւատարիւմ խորհրդականն է, որովհետև զիւցազնական ձիւրը մեր հէքիաթ-
ներում, ինչպէս և մեր ազգային վէպի և ուրիշ ազգերի վէպերի մէջ, անբան
արարածներ չեն, այլ բանաւոր, խօսուէն արարածներ են. նրանք մինչև
անգամ զուշակութեան շնորհք ունին, նախազգում են վտանգը և նախա-
զգուշացնում են իրանց տիրոջը,—մի հանգամանք, որ վկայում է վէպի
խորին հնութիւնը, աչն ժամանակին, երբ որ մարդիկ աստուածացնում էին
բոլոր բնութիւնը, և բնութեան բոլոր առարկաների, կենդանիների և նոյն
իսկ անշունչ առարկաների մէջ երևակաւում էին կենդանի ոգի և բա-
նականութիւն:

Վիւցազնական ձիանքը մեզնում կոչւում են հրեղէն ձիանք,
կրակէ ձիանք,—արդեօք կրակից շինւած, թէ՛ կրակ զարձած վազող ձի-
անք: Աւելի հաւանական է, որ ոչ մէկը լինի և ոչ միւսը, այլ հրեղէն
բաւը ծագած է մի ուրիշ արմատից, որից դուրս է եկել և հուրի—հրե-
ղէն կոչումը, որ տրւում է գերբնական, զիցական կին էակներին, հուրի,
հուրնի-հրեղէն կամ հուրի-հրեղէն, և կամ լոկ հրեղէն ազջիկներին: Մեր
հրեղէնները կամ հուրիները ջրերի պաշտամունքի աստուածութեան են վերա-
բերում: Մեղ թւում է թէ հուրի կոչումը նոյն է, ինչ որ հօրոտ կամ հօ-
րուտ, որով հեթանոս հաւերի մէջ ջրերի պահապան և խնամակալ ոգի-
ներն էին կոչւում. իսկ հօրուտ կոչումը պարսից Հ ա ու ռ ու ա տ ամենա-
պանծալի կոչումն է, որ նոյնպէս ջրերի պահապան ոգի է եղել ¹⁾: Արդի

1) Տե՛ս պ. Կ. Կոստանեանի «Հայոց Հեթանոսական կրօնը», երես 33.

ժողովրդական հուրի (հուրիկ և հրեղէն մինչև այժմ կնոջ անուն է) բառն ևս հատուրաւ բառի ուրիշ նւագական ձեւէպէտք է լինի¹⁾, որով և հուրի-հրեղէնները ներկայանում են իբրև հին հօրաւոր կամ պարսկական հաու-րաւոր, աշխնքն՝ ջրերի խնամակալ սղիներ, և ալս հակառակ չէ մեր սրբի ժողովրդական հաւատալիքին հուրիների կամ հրեղէնների մասին, որոնք սպրտում են ջրերի մէջ, առաւելապէս փոքր լճակների չտախում: Մինեւոյն ջրերի մէջ, հուրի—հրեղէն աղջիկների հետ ապրում են և հրեղէն ձիւնք ու հրեղէն գոմէշներ, որոնք նոյն բնորոշ չատկութիւններն ունին, ինչ որ հրեղէն աղջիկները: Հրեղէն բառը աղջկան չատկացւելով, ցոյց է տալիս աղջկալ գերբնական, զիցական էակ, կամ աշուպէս ասած, զիցուհի լինելը, ինչո՞ւ ուրեմն չ'ենթադրել թէ նոյն հրեղէն բառը, ձիւն վերալ ևս դրւելով, ցոյց է տալիս ձիւն զիցական կամ գերբնական էակ լինելը, քանի որ աղպիսի ձիւնքը հրեղէն աղջիկների հետ մինեւոյն տարրի մէջ են ապրում, և ունին գերբնական չատկութիւններ. և ալս հակառակ չէ վէպի ոգուն, որի մէջ ինչպէս զիցազները ծագմամբ զիցական էակներից են, այնպէս և նրանց ձիւնքն ևս շատ անգամ զիցական էակներից կամ աստուածներից են դալիս, մինչև իսկ հսկաների գէնքերն հրեմն գիցու-կան ծագում են ունենում:

Գաւթի ձիւն, Քուռիկի-Ջաւալին, հրեղէն ձի է և ունի հրեղէն ձիւն բոլոր չատկութիւնների հետ և բանականութիւն ու գերբնական ուժ, աշուպէս որ նորա մի աքացուց գոմի պատն տարողջ շուռ է գալիս: Հրեղէն ձի է և Պարոն-Աստղիկի ձիւն, որ թեաւոր է և «մըչ երկինք, մըչ գետինք» թուչում է օդի մէջ և, ինչպէս հէքիւթների մէջ ասում են, «աստղերի հետ խաղ է անում»: Զէնով-Յովանի սպիտակ, կարմիր ու սև ձիւնից Սև ձիւն նախապէս հրեղէն է և մի ակնթարթի մէջ ինչքան տարածութիւն ստեղծ կորում է, նման Ռուստամի Ռաչին, որ փոթորկի պէս ուժեղ է, կաշմակի պէս սլացող, թուչումի պէս թուչում է օդի մէջ, ձկան պէս լողում է ջրի մէջ, և որի վրայից ձիւնորն իւր արձակած նետից աւելի շուտ է հառնում թշնամուն:

Ուրիշ ասանդութիւններից դիտենք, որ հսկաներն երեք տեսակ են հրեղէն ձիւնք ձեռք բերում: Ինչպէս ասացինք, հրեղէն ձիւնը հրեղէն աղջիկների և գոմէշների հետ ապրում են լճերի տակ. Հալստտանում շատ կան աղպիսի լճեր, որոնց մէջ, ժողովրդի հաւատալիքով, կենում են հրեղէն ձիւնք և սղե լճերը շատ անգամ կոչւում են «Աղբըր գեօլ», աշխնքն «գով-տակի լիճ», աղբ լճերի ավերին տրածող մաստակ ձիւնի և լճերի հրեղէն

¹⁾ Ինչպէս խաչատուր—Խաչիկ կամ Խաչիկ, Մաթէոս—Մաթիկ կամ Մաթի և այլն, այնպէս և Հատուրաւ—Հատուրի կամ Հուրի, Հուրիկ: Թերևս ուրիշ անգամ մեզ գէպ լինել անելն ընդարձակ լրօսել հայոց հին հեթանոսական զիցական էակների մասին արդէ ժողովրդական հաւատալիքներից վերցրած:

ձիւրի զուգաւորութիւնից ծնւում են ձեւի-ձերմակ և անարատ ձիւր, որոնք իսկապէս կէս հրեղէններ են լինում: Բայց եթէ հերոսն ուղւում է իսկական հրեղէն ձի ձեռք բերել, նա պէտք է լծերից քորապ հրեղէն ձի, զորա համար հերոսը պէտք է թագ կենալ լուսաւի լծերի ստիւմ և սպասէ տոն ժամանակին, երբ որ հրեղէն ձիանքը, լծից զուրս ելած, խաղ են անում իրար հետ լծափի արօտներում. չարմար վալրկեան զտնելով, նա պէտք է թռչի հրեղէններից մէկի վերալ և, եթէ կարող է, իրան պահէ ձիւ. մէջքին և ձիւ աչքերն աւժամանակ ծածկէ ազլիսով: Աչքերը բանալուց զետու ձին ալ ևս գէպի լինը չի գնալ, ալ գէպի վերեւ, գէպի արեղակը կը թռչի, որ հսկալին տալ արեղակին և ալքէ: Անշուշտ տոն զործողութեանն է անհարկում և ազգալին վէպի մէջ Քուռկիկ-Ջալալինի ալս խօսքը. «Աւրամ գրե տամ էրիդական՝ էրիցիտ», որ ձին ասում է Դաւթին, երբ որ սա նորա կողաշարը կոտրում է ասպանդակով խփելով:—Հսկան եթէ խելօք ու ճարպիկ մէկն է, երբ որ տեսնէ թէ հրեղէն ձին իրան գէպի արեղակն է տանում, պէտք է մտնի ձիւ փորի տակ և ասէ ձիւն. «եթէ արեղակին տաս, առաջ զու պիտի սպրես, զետու ևս»: Ձին կը տեսնէ, որ իւր զիտաւորութիւնը՝ հերոսին արեղակին տալը անպաշտ պիտի լինի, որովհետեւ առաջ ինքը պիտի սպրի, կը սկսի բարձունքից արապ սլանալ գէպի ներքի, որ փորի տակ մտած հերոսին գետնին խփէ: Հերոսն իսկոյն պէտք է ուղղւի մէջքի վերալ և ասէ. «առաջ զու գետին կը մտնես, զետու ևս»: Այս զործողութիւնը կատարելուց զետու հրեղէնը կը ճանաչէ, որ իւր հեծաւորը հասարակ մահկանացու չէ, կը հպատակէ նրան, իրիս իւր տիրոջ, և ալ ևս նրանից չի բաժանել:

Բացի լծերից ալս երկու եղանակով հրեղէն ձի ձեռք բերելուց, հրեկաները հրեղէն ձիւ տէր են դառնում և զների ձեռքից խլելով: Գեները, առաւելապէս Մութ-աշխարհում ապրող զները, իրանց ստորերկրեալ գրերում կամ ալրերում ունենում են նոյնպէս հրեղէն ձիւր, որոնցից, սակաւն, նրանք շատ էլ չեն օգտուում, որովհետեւ զներն իրանք արաղավաղ են, և շատերը մինչև անգամ թխաւոր են և թռչում են օդի մէջ: Հսկաները զներին կոտորելուց զետու, չափաւորում են նրանցից հրեղէն ձիւրն և իրանք են բանեցնում: Հ. Սրուանձտեանի վարիանտով Դաւիթը, քառասուն զներին կոտորելուց զետու, նրանց ալրից հանում է և մի քուռակ, որի զօրութիւնը լեզուով չի պատմել. ալ քուռակը պէտք է լինի և Քուռկիկ-Ջալալինը, թէպէտ և ալ քուռակը ոչ մի զեր չէ կատարում վէպի մէջ, և նորա անունն անգամ վէպի շարունակութեան մէջ չէ լինում: Բայց ալստեղ մի անհամաձայնութիւն է զուրս զալիս երկու վարիանտի մէջ, ալն է, որ հ. Սրուանձտեանի վարիանտով Դաւիթն է ձեռք բերում հրեղէն ձին, իսկ մեր վարիանտով Քուռկիկ-Ջալալինը Դաւթի հօրն էր. ալ անհամաձայնութիւնը կը պարզւի, եթէ ընդունելու լինինք, ինչպէս մենք կարծում ենք, որ հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ միացած են

Թուլան և Թլօր Դաւթի վէպերը, և մինչև Դաւթի և Մարամելիքի մենամարտութիւնը (Ասղար կաջնան և դաւա էրէցին...) եղած մասը վերաբերում է Թուլան Դաւթին, որ Թլօր Դաւթի հայրը պէտք է լինի, որով և մեր վարիանտի համեմատ՝ Քուռկիկ-Ջալալինը, ինչպէս և Սաչ-Պատարաղինը (ս. Նշան) Թլօր Դաւթին իւր հօրից կը գան իբրև ժառանգութիւն: Այս ենթադրութիւնն անելու հիմքերի³⁶ մասին թողնում ենք աչտեղ գրելը, միայն աչքսանը պէտք է ասել, որ այս³⁷ ենթադրութեամբ երկու վարիանտի մէջ եղած բոլոր անհամաձայնութիւնները պարզւում են և երկուսից կաղմըւում է մի կապակցական ամբողջ վէպ: Գանք մեր խօսքի չարունակութեանը:

Դաւթին ունի, ինչպէս տեսանք, զիւցսպին վաղել գրահաւորութիւնն ու հանդերձանքը. բաց նա դեռ մանուկ է և չ'ունի զիւցաղնի հսկաչահասակ չաղթան դամուկիւնը. նա միայն իւր հօրեղբօր կին Սաուի աչքին չէ ծիծաղելի իւր արտաքինով, որովհետև իւր զլխու գօտին աչքան մեծ է իրան համար, որ քառասուն լիտր բամբակ է մէջը դրել, որ զլխին գաչ, մէջքի քամարը քառասուն փաթ է եկել, իսկ Կաթակի-Թուրը Քուռկիկ-Ջալալինի վերաջ նստած անգամ դետնի հետ քարչ է գնում: Հրեղէն Քուռկիկ-Ջալալինն անգամ զգում է իւր տիրոջ ծաղրական դրութիւնը, բաց և նա գիտէ ալդ դրութիւնից դուրս գալու ճարը: Դորա ճարը կաթնաղբիւրն է, աղբիւրը, որ մեր ժողովրդի ամենասիրելի ջուրն է, անմահութեան կաթնաղբիւրը, որ աչքան մեծ դեր է կատարում և մեր հէքիաթների մէջ: Ամեն աղբիւր կաթնաղբիւր չէ: Յիշենք միայն այն, որ անմահութեան աղբիւրի ջուրը մահից վտ է զարձնում մարդուս, ամեն մի վերք ու ցաւ լաւացնում, նորոգում է, աչքերը լուսաւորում և ոյժ ու կարողութիւն է տալիս իմողին: Հէքիաթների մէջ հերոսները, վերքի կամ ախտի մէջ նեղն ընկած հանգամանքում, անմահութեան աղբիւրին են դիմում. նորա մի կաթիլ ջուրը ածում են վիրաւորի կամ ախտաւորի վերաջ և նա լաւացնում է, մինչև անգամ մեռելին չարութիւն է տալիս. բաց անմահութեան աղբիւրից ջուր բերելն էլ հեշտ չէ. որովհետև աղբիւրը չըջապատւած է ամենաղվար պարագաներով. նրան պահապան են վիշապներ և ամեն տեսակ պաղանների ու հրէշների, որոնք արգելում են անմահութեան ջուրը մարդկային ձեռքն անցնելուն: Հերոսը պէտք է ալդ հրէշների դէմ կռւի աղբիւրից ջուր վերցնելու համար:

Ազգային վէպի մէջ ևս կաչ մի ազգային աղբիւր, որ Դաւթի հօրն էր պատկանում, որի մօտ թերևս չառ անգամ գալիս էր նա, ջրից խմում և մօտին պտուկիւով կաղդուրում ու նոր ուժ ու զօրութիւն առնում, նոր սրկարագործութիւններ անելու համար: Այդ բանը տեսած պիտի լինէր Քուռկիկ-Ջալալինը, որ իւր տէր Դաւթին ուղղակի դէպի կաթնաղբիւրն է տանում. Դաւթի ջուրն ջրից խմում է, հաց ուտում և ափին մի ժամի չափ քուն մոռնում. քուն հրաշալի, որ պէտք է նրան աղբիւրի ջրի զօրու-

Թեամբ ամենամեծ կերպարանափոխութեան ենթարկէր: Նա քնից ելաւ.

«Տեսաւ Էնպէսն ի լցուի,
Էնպէսն ի խառտացի,
Էնպէսն ի զօրութիւն, ոժ առի,
Որ չափաւամբն ի եղի»:

Ալժմ նորա հագուստն ու զէնքերը նրան աչնպէս են դալլա, ինչպէս իւր սեպհակաճը, որովհետեւ նա մարմնով արդէն գիւթական ջրի զօրութեամբ վիթխարի հսկաչ է դարձած. ալժմ նա կարող է համարձակ, առանց մէկի ծիծաղը շարժելու դուրս գալ անհեթեթ հսկաչ Մարամելիքի գէմ:

Սակաչն ձին գեռւս է: հաւատում իւր տիրոջ հսկայական ուժին, մանաւանդ որ նա մի անգամ մոռացել էր իւր ասած խօսքը, ձին խորհուրդ է տալիս Գաւթին, նախ քան պատերազմ դնալը, իւր ուժը փորձել զաչտի մէջ տնկւած երկաթէ սեան վերադ: Գաւթիթը կաշմակի-թրով աչնպիսի մի հարւած է իջեցնում երկաթէ սեանը, որ

«...Թուր սուն կտրեց,
Կալամ վըր կալամին կաշնաւ,
Շուռ չառեց՝ որ իջնէր գետին»:

Սարսափելի արագութիւն և ուժ, որ տատանում անգամ չէ պատճառում սեանը, և որ գիւցաղնին անգամ կասկածանքի մէջ է թողնում իւր ձեռքի ուժի վերադ, աչնպէս որ նա չուսահատւած լալիս, ասում է.

«Ձեռնիկ, տիւ կոտուր կենէր,
Որ զարկեցի, թուր չը կտրեց.
Աչքիկ, տիւ խաւար կենէր,
Որ էսա բաներ ևս չը տեսնէր»:
Ասաց, — ձեռ կոտորաւ, աչք խաւարաւ:
Ասծու հրամանքիւ ձին լեղու էկաւ, ասաց.
— Քեռ բերան կոտորուի, տէր իմ,
Քամի մ'աղէ Ասծուց:
Դաւիթ երդեց, ասաց.
«Պրհնեմ, բարերար Աստուած,
Քեռ հրամանքն է չառ.
Հրամանք անես՝ հարաւ-քամին իջնէր,
Էսա սուն լէ վիրարուց կտոր էնէր»:
Ասծու հրամանքիւ հարաւ-քամին որ էկաւ,
Սուն շուռ կտուր,

Մէ կտոր էտտիւ ընկաւ,
 Մէ կտոր էնտիւ ընկաւ Ասաց.
 «Ձեռնիկ, տիւ կանաչ էլնէր,
 Աչքիկ, տիւ լուսով էլնէր»
 Ածու հրամանքիւ ձեռ. սաղաքաւ,
 Աչքեր լի լուսաւորւան:

Իւր հակադրական ուժը փորձելու այս մի եղանակի մէջ, որ ուրիշ ազգերի վկայերի մէջ ևս կազ ուրիշ ձևով, սրբան նախնական պարզութեամբ արտայայտուում է զերազոյն էտիկ՝ Աստուծու կամ զից, զիւցազնի և իւր զիւցազնական — հրեղէն ձիւ լարաբերութիւններն իրար հետ. և սրբան սկզբնական կենդանի հաւատքով լցւած է թէ ինքը զիւցազնը, թէ ալն նախնի մարդը, որ մի քանի անարեւատ խօսքերով ստեղծել և չափունել է իւր կիտնքի ալս պարզ նկարագիրը, և թէ նա, որ մինչև մեր օրերը պարձեալ հաւատքով լցւած կրկնում է նոյնը: Դաւթի ուժի փորձը, որով զերազոյն զօրութեան հաճութիւնն իւր կողմը լինելն ևս իմացաւ, չաջող էր, և նա ամենալն վստահութեամբ չարձակուում է Մարամելիքի բանակի վերաջ. բաց զիւր ողու համեմատ, սիտի կռիւն ոչ թէ բանակ բանակի հետ կամ մի զիւցազն ամբողջ բանակի հետ, ալ զիւցազն զիւցազնի հետ. և ահա՛ Դաւթն ու Մարամելիքը մենամարտում են, և Դաւթի՛քը, Մարամելիքին ևս չաղթելով ու սպանելով, հանդիսանում է իբրև կտորարեալ զիւցազն ալն բոլոր լատիւթիւններով և արարքներով, որ պէտք է ունենալ զիւցազնը:

(Կը չարունակի)

Բ Ղ Դ Է

Գ Ե Ր Ճ Գ Ռ Օ Շ Ե Ա Ն Յ Ի

Նուէր մեծ. բժշկապետ Գովհաննէս Գասպարեանցին:

(Շարունակութիւն 1)

Է.

Ջ Հ Ո Ւ Տ Ա Ղ Ա Ջ Ա Ն Ը

Կարբու արեւմտեան կողմը, եկեղեցուց դէպի հարաւ, երկու կարգ հին ասիական ձևով շինուեցին Բայազիպից գաղթածների խանութները:

Փոքրիկ դռներով նեղ և մութ խորշեր էին դուրս. ոչ մի լուսամուտ չէր ձգում դէպի ինքն պայծառ արեգակի ճառագայթները, լոյսը ներս էր մտնում շարունակ բաց դռներիցը:

Մի քանի թօփ խամ չիթ, նոյնչափ ալ տալ կոշուած կանաչ ու կարմիր շերտաւոր կերպաս, ստանալափ կտոր շիւ աչ անուն կրող կարմիր ներկած կտաւ, քսան— երեսուն գաղ զոյնզղոյն մետաքսեայ երկզ (շայնան) խանութների մեծագոյն մասի առևտրականութեան պարագայքն էին:

Առաւօտեան ժամից յետոյ՝ մինչև երեկոյեան առետաբեր կոշնակի հատուածական թիկթիկոցը՝ ծնկան վերայ չոքած էին խառահրօն ձգնաւորի անշուք խցիկների մէջ Կարբու նոր խօջաները:

1) Տե՛ս ՎՊԵՐՃԻ-ի 1889 թ. № 12:

Ուրիշ բանի նմանութիւն չենք կարող տալ խանութի պատուանոսով վերաձայնուած խոնար և ցած հիւղերին:

Լայնարձակ և լուսաւոր շէնքերի մեծ պահանջ էլ չը կար. մի փոքրիկ եւակարգ կամ քառակարգ զափազայ (գարալ) բաւական էր կրել իւր վերայ սակաւութիւ յաճախորդների մերկութիւնը ծածկող զիւրամատչելի կաւեղէնները:

Խանութպանները Բայազիդում հռչակաւոր վաճառականի փայլը փայլող Կարբի գաղթած խոջաներն էին:

Արդէն համոզուել էին սրանք, որ Կարբու ներկայ պայմանները չեն ներում իրանց նախկին վաճառաշահութեան փառքին բարձրացնելու իրանց նոր հայրենիքը, բայց ճար չ'ունէին, ընկել էին, պիտի հաշտուէին նոր դրութեան հետ. իրանց կեանքի երկու երրորդ մասը վաճառականութեամբ էին անցկացրել, այժմ, օր ծերութեան, ուրիշ գործ սկսել չէին կարող, պարապ մնալն էլ մահ էր իրանց:

Այդ պատճառաւ խօսքը մէկ արին, այդ ծակերը շինեցին՝ միայն ժամանակն սպանելու, մէկ մէկի երեսը տեղնելու և կորցրած փառաւոր անցեալի քաղցր յիշողութիւններով շնչելու համար:

Բոլորովին տարբերութեամբ էր թէ մեծութեամբ, թէ նպատակով և թէ միջի ապրանքով խանութների վերջին ծայրումը գտնուած մի հատիկ լալն ու բարձր կրպակը:

Մանրազնայի շտեմարան էր այդ, քան թէ, ինչպէս ասում էին, խանութ: Անդարձակ սենեակի մի կողմը մեծ մեծ պարկերի մէջ զետեղուած էին մանրունք ծախողի բազմաթիւ ապրանքները, որոնք միայն առաւօտաղէմ անհանգիստ էին լինում. ուրիշ ժամանակներ ձեռք չէր դիպչում նրանց:

Խանութի առաջի կողմը, օակայն, մանր տոպրակների մէջ շարուած էին գետնի վերայ վերոյիշեալ ապրանքների տեսակները:

Մի միջին տարիներով մարդ, օրն ի բուն չոքած ծնկան վերայ, գոհացնում էր իւր փոքրաքանակ յաճախորդներին:

Ջհուա Աղաջան էր նորա անունը:

Ինքը թէև ջերմասեղ հայ-քրիստոնեայ էր, համեստ, առաքինի և աղօթասէր, բայց զէպքերի բերմունքը վերականգնել էր նրան ծակովք նահապետի հարազատների աւազանի մէջ:

Ջհուտ անունը սեպհականութիւն էր ստացել Աղաջանը իւր նախկին պաշտօնից:

Նա մի ժամանակ բաղազի ասորանքը մի կապոցի մէջ պինդ ամրացրած՝ ուսին ձգած՝ կիսադազը ձեռքին, թափառում էր գիւղերումը և գիւղացւոց հազուստն էր հայթհայթում: Այդ գործը շատ հին ժամանակներից Պարսկաստանից եկած հրէաների սեպհականութիւնն էր:

Աղաջանը միակ հայն էր իւր պաշտօնով հրէաներին նմանող և երբէք չէր նեղանում, երբ ամենքն իրան ջհուտ էին ձայն տալիս:

—Ջհուտ Աղաջա՛ն, ջհուտ Աղաջա՛ն:

—Ջհուտ Աղաջա՛ն, լաւ շիւտ ունի՞ս:

—Ջհուտ Աղաջա՛ն, մի քանի գաղ խամ չի՞թ տո՛ւր:

—Ջհուտ Աղաջա՛ն, մեր տանը քեզ կանչում են:

Աղաջանն ամենայն սիրով բոլորի կամքն էլ կատարում էր:

Աղաջանն իւր քաղցր բնաւորութեամբը բոլոր գիւղերի աչքն էր մտել. նա մի գեղեցկադէմ, բոլորակ երեսով, սև և բարձր ընչացքներով մարդ էր, զուարճախօս էր, քաղցրաբարոյ էր, բարեհամբոյց էր և արդարամիտ էր:

Մանուկներն ամենքից աւելի սիրելի էին նրան:

—Ջհուտ Աղաջա՛ն, ջհուտ Աղաջա՛ն, ձայն էին տալիս քամակից և վազում, նորա գիրկն ընկնում գիւղական երեխայքը:

—Ի՞նչ էք ասում էք, ի՞նչ էք ճվճվում էք, ջանէ՛ ջա՛ն:

—Եզուց ո՞ր գեղը պիտի գնաս:

—Տօ չէ՞ գիտէք էզուց ի՞նչ օր է:

—Գիտենք, բայց խնդրում ենք դու ասես:

Եւ նա քաղցր ժպիւր երեսին սխտւում էր.

Երկուշաբթի, հինգշաբթի Աշտարակ,

Գինով կը թրջեմ չոր բողազիս ծակ.

Զորեքշաբթի, ուրբաթ կ'երթամ Փարբի,

Իրիկուն քաղցած կը դառնամ Կարբի.

Երեքշաբթի օրը քամբախ ¹⁾ Հանապանք՝

¹⁾ Աւերակ:

Ձաւարով վռիկ, չոր հացի փշրանք.
 Շաբաթ օրն եղվարդ զօւ կը տամ ցորենին,
 Մատաղագող մողնեցի՛ք, ձե՛րն է կիրակին:

—Մեղք չի՞, որ կիրակի օրն առուտուր ես անում, խօսեցնում էին Աղաջանին մանուկները:

—Տօ՛, ձեզի զուբա՛ն, մողնեցին ի՛նչ ունի, որ ի՛նչ առու-տուր անի, անբան մարդու տանը հաց, հաղին շոր ե՞րբ էք տեսել. թէ որ սուրբ Գէորգի վանքը Մողնումը չը լինի, նրանք քաղցած կը կոտորուեն. ամեն տուն տարէնը մի երկու թօփ խամ չի՞թ կ'առնի, կը բնգեն, վիղնեքը կը զցեն, որ աշնան Մողնու ուխտին տեղը մա-տաղի գողացած մորթի տան. կիրակի օրն ես զնումեմ Մողնի նորա համար, որ ուխտաւորն էդ օրը սուրբ Գէորգի դռնից անպակաս է, մողնեցու տանից մսի հոտ է դալիս, լի օրը զնամ՝ շօռ ու ցա՞ւ ուտեմ:

Բաւական տարի էր անցել Կարբին շէն անելու օրից և բոլոր ժամանակը Աղաջանն իւր սիրելի թափառական բաղազութեամբն էր պարապում:

Սկզբումը Խարայէլի զաւակները շատ խէթ աչքով էին նայում Աղաջանի վերայ, բամբասում էին, նորա ապրանքը փոած ու ան-պէտք էին քարոզում, բայց Աղաջանը, կարծես, խուլ էր դէպի այս տհաճութիւնները, գլուխը կախ՝ իւր ճանապարհն էր գնում:

Լսուում էր մինչև անգամ, որ հայր Աբրահամու թոռները Աղաջանի դէմ զաւ լարելու հնարքներ ես մտածում էին: Գտնուել է անգամ իրանց միջից մի յանդուգն, որ քաջասրտութիւն է ունեցել յայտնելու, որ ինքը սուրը կը վերցնի, մի քարի տակ դարան կը մոնի և երեկոցին Կարբի վերադառնալու՝ Աղաջանի փորը կը կոխի:

Խիստ ոգևորուել են երիտասարդ կարիճի համազգայինքը, մոռացել են մի քանի բոպէ իրանց բնական զգուշութիւնը և համայնական հանդանակութեամբ կարգադրել են սուր գնել՝ ազատելով անձնագորհ քաջին հանդանակութեան վճարքից:

—Այդ ամենը շա՛տ լաւ, աւելացրել է երիտասարդ վրէժ-խնդիրը, բայց ձեզանից թող մի երկուսը դան ինձ հետ թաղ կե-նան. լոյսն ու մութը բաժանուելուց յետոյ՝ ես վախճնում եմ մէն-մե-նակ ամալի դաշտ դուրս գալու:

—Ա՛ս էլ եմ վստում, ե՛ս էլ, ձայներ է բարձրանում ամեն կողմից:

—Առեցէ՛ք, սուս կացէ՛ք, մէջ է եկել մի խոհականը, որ խորհրդականների հետ սկզբից անհամաձայն է եղել: Ե՛հ, սիրելի՛ք, ճառել է նա, զուր էք բորբոքում, աւելորդ էք տաքանում: ոչ դուք մի կուպէկ սրի փող կը տաք և ոչ սա իւր երկուսասարգութեան ցնորքները կարող է իրագործել. կռուելու, ծեծելու, ապանելու ընդունակութիւնը Նհովան վաղուց մեր բնաւորութիւնից հանել է, Կուսի զաւակի անէծքը մեզ պէտք է ճնշի մինչև ճշմարիտ Մեսիայի գալուստը, մինչև այն օրը մեր գլխին պէտք է ծանրանայ տեղից շուտ զարթնողի հաստ մուրճը. ինձ լսեցէ՛ք, մինչև այսօր մեր հայրերն ու պապերը ի՛նչ ճանապարհով գնացել են, դուք էլ նրանց հետքից մի՛ խոտորուէք, ձեր առուտուրը ճանաչեցէ՛ք, փող գանձելու հոգսումը կացէ՛ք:

—Հապա Աղաջանը մեր շահերին փնասում է, մեր յաճախորդները խլել է:

—Երբէք չը մտածէք, որ վաճառականութեան մէջ հայը հրէային յաղթէ, դուք ձեր գործը ճանաչեցէ՛ք և խոհեմ եղէ՛ք. Աղաջանն ինքն իրան յետ կը քաշուի ասպարիզից:

Անկարծիք, խելօք խորհրդատուն մարգարէի սերնդից է եղել. շատ չը քաշեց, Աղաջանի ոտքը գիւղերից կտրուեց:

Մի օր էլ լսուեց, որ ջհուս Աղաջանն իւր ջհուսութիւնին բարե մնաց է ասել, թողել է կոտաւաճառութիւնը, ծածկել է Կարբու խանութների ամենավերջին մեծ աւերակը, գնել է բաւականաչափ մանրավաճառի ապրանք և նստել է մէջը:

Ո՛վ անես, չը զարմացաւ, ո՛ւմ լեզուն նորա դէմ չը բացուեց. Կարբու ո՛ր խօջան չը գնաց, չը կանգնեց Աղաջանի նոր խանութի առաջին և գլուխը չը շարժեց: Ի՛նչ քամի է մտել այս մարդի քիթը, գժուել է, տարիներով չի կարող ծախել բերած ապրանքի կէսը, բոլորը կը փոփ, կը փչանայ, կը կորչի և այլն և այլն. խօսք չը մնաց, որ չ՛ասէին, հարցմունք չը մնաց, որ Աղաջանի գլխին չը թափէին:

—Ոտքերիս ոյժը հատուա, հանգստանալ եմ ուզում, պատասխանում էր ժպտալով ամենքին Աղաջանը:

Կարճ միջոցից՝ ամենքն իրանց սխալ ենթադրութիւնները ճանաչեցին, միաձայն վճռեցին, որ Աղաջանն իւր անելիքը լաւ է հասկացել ու կշռել:

Աղաջանի շտեմարանի ապրանքը շուտ շուտ վերջանում և նոյն արագութեամբ նորոգուում էր. ամիս չ'անցներ, որ Աղաջանի ոտքը Երևան չը հասնդիպէր. ամեն զնալուն բեռներով նոր ապրանք էր տուն ածում:

Իսկ ի՞նչ մարդիկ էին նորա յաճախորդները:

Կարբու միջնակարգ ժողովրդի որպիքն էին նոքա:

Այս աչն դասակարգն էր, որ մնիւել, վերջացրել էր Բայաղիկից բերած աննշան հարստութիւնը, որոնք Բայազէդ եղած ժամանակ մանրափաճառի առևտրով են ապրուստ արել և այսօր ոչ այն կարողութիւնը ու յարմարութիւնը կայ, որ իրանց նախկին սովոր գործը շարունակեն և ոչ Կարբու հանդն ու դաշտը օրինաւոր ապրելու և կարգին երկրագործութիւն անելու միջոցն է նրանց ընձեռնում:

Հարկաւոր էր կամ օրավարձ մշակութեան ընտելանալ, ինչպէս որ շուտ սկսեցին Կարբու ստորին ժողովուրդը և կամ կեանքի ուրիշ եղանակ ընտրելու հոգսը քաշել:

Աղաջանը նախատեսեց և յաջողեց:

Նա նախ ապրանքը տուն բերեց, Կարբումը շտեմարանեց և ապա կանչեց ձեռքից գործ եկող, պարապմունք որոնող երիտասարդներին, բարի իւրհրդի հետ ապառիկ ապրանք հաւատաց, մի մի խուրճին իւրաքանչիւրի ուսիցը կախեց և չարչի անունը տալով՝ ցրուեց ամենքին Կարբու շրջակայ գիւղերը, ծալրը մինչև Աբարան հասցնելով:

— Տարէ՛ք, ծախեցէ՛ք, փոխարէնը փող, բուրդ, ցորեն, իւղ, դարի, պանիր, չորացրած ծառապտուղ, մի խօսքով՝ ինչ որ արժան կը համարէք, ստացէ՛ք, բերէ՛ք իմ հին պարտքը վճարեցէ՛ք, նոր ապրանք տարէ՛ք, ասաց Աղաջանը. կարող էք փողի փոխարէն ձեռք բերած ապրանքով ինձ վճարել, համաձայնեց նա:

Այդպիսով առաջին անգամն Աղաջանը ստեղծեց Կարբեցի չարչիներին, որոնք մի ժամանակ մրջիւնների նման ցրուած էին Կարբու շրջակայ գիւղերումը, իսկ այսօր հետզհետէ չքանում են. նրանց տեղը գիւղերը խանութներով լցուում է:

Աղաջանը սխալուած չէր. տանը հանգիստ 'նստած' ընդարձակեց իւր առուտուրի ծիւղերը:

Զգալի նեղութիւնը որ կրում էր, այդ, ինչպէս ասացինք, ամիսը մի անգամ բարձած բեռներով Նրեան գնալ և կրկին բարձած բեռներով դառնալն էր. գնում էր չարչիների հաւաքած լարիքով, գալիս էր չարչիներին մատակարարելիք մանրավաճառի ապրանքով:

Աղաջանի խանութն էր ամենքից առաջ բացուում Կարբումը. դեռ առաւօտեան կոշնակը չէր ծեծուած, որ մինը մալթանքներ մրմնջալով՝ Կարբու նեղ շուկայովն անցնում էր. այդ Աղաջանն էր մութէ-մութ բարի լոյս տալիս իւր խանութի դռանն արդէն սպասող չարչիներին:

Հէնց այդ չարգելի պատճառաւ տէրուէրն իրաւունք էր տուել Աղաջանին կիւրակի օրերը միայն ժամ գար:

Քանի դնաց, Աղաջանի նշանակութիւնը բարձրացաւ Կարբու և մօտիկ ղիւղերի մէջ:

Իւր բնատուր բարութեամբը նա մտածեց անձարների ու կարօտեալների կարիքին ևս հասնել զժուար րօպէներուով. արքունի հարկը ժողովելու, հացի սակաւութեան գէպքերում, նա ինքն իւր կողմից էր առաջարկում կարեւոր նպատոր:

Այս օղնութիւնն անում էր նրանց, որոնք կարող էին ընչով և իցէ, ե'րբ և իցէ վերադարձնել իւր տուածը աննշան տոկոսով:

Բնական էր, որ ջհուտ Աղաջանի անունը ամենի բերանից օրհնութեամբ էր լսուում. ժողովրդի մէջ սառն արհամարհանքով հընչուող «ջհուտ» խօսքը Աղաջանի անուան վերայ մի տեսակ քաղցր և համակրական ներդաշնակութիւնով էր արտասանուում:

Մի առաւօտ չարչիներին ճանապարհ գնելուց յետոյ՝ մինչ ծունկը դեանիցը կորեց Աղաջանը, կամենում էր խանութը վախել, տուն գնալ, իւր ստամոքսի պահանջը լցնել, ինչպէս ինքն ասում էր՝ մի քիչ նհար անել (նախաճաշել) և յետ դառնալ, խանութը ներս ընկաւ յանկարծ մի բոկոսն ու անվտանգ պատանի և ուղղակի չոքեց, Աղաջանի ոտքը համբուրեց:

— Եա', դու ծո'ւո ես, տղա'յ, էդ ի'նչ ես անում ես:

— Քո գունն եմ ընկեր եմ, ամբ' (հօշեղ քօշ), գլուխը կորացրած աղեխարշ գէմքով մրմնջաց պատանին:

—Տօ դա՛, ի՞նչ կ'ուզես:

—Ինձ չբաղ արա՛, մի կտոր հացի տէր շինի՛ր:

—Տղա՛յ, Բղդէ՛, դու դեռ երեկուան ձիժն ես, ես քեզի հետ ի՞նչ անեմ, ուսերը վեր քաշեց բարեսիրտ ջհուտ Աղաջանը, բնչի՛ ախոր չես գնացեր ես Աշտարակ խաղողաքաղ, մի քանի ձուժ խաղող կը բերէիր, մօրդ հետ կ'ուտէիր, մե՞ղք կը լինէր:

—Խաղողով փոր չի կշտանալ, ցամաք հացի գին է պէտք, էդ մի կտոր հացը քո ձեռքովն ինձ տուր, իմ տէրս և բարերարս դարձի՛ր, գլուխը վեր բարձրացրեց և հաստատուն ձայնով ասաց Սալբու աղան:

—Տղա՛յ, Բղդէ՛, խորամուխ նայուածքով հարցրեց Աղաջանը, դու քանի՞ տարեկան ես:

—Ալէս (հայր)՝ ասում է, որ Կարբումն ինձանից յառաջ ոչ մի բայազիրդի երեխայ չի աշխարհ եկել:

—Տեսա՛ր, 15 տարիդ նոր է լրացել, ես քեզ ի՞նչ կարող եմ անել:

—Ոչ ի՞նչ և ամեն բան:

—Ի՞նչ:

—Աշխարհը քո հացն է ուտում, գեղերը ման եկող բոլոր շարձիներին դու ես ապրանք հաւատում, քո արդար վաստակովն են նրանք առուտուր անում, քո ի՞նչդ կը պակասի, որ շատերից մինն էլ ես լինիմ:

—Տղա՛յ, բերանիցդ ծծած կաթիլ հոտը դեռ գալիս է, դու ի՞նչ չարչուծիւն անող ես:

—Ոտքդ պագնեմ, տարիներիս մի՛ նայիր, ահա՛ այս թող քեզ մօտ դրաւական մնայ, ասաց Բղդէն և դրեց Աղաջանի առաջը մի փոքրիկ ձեռնաչափ կապոց:

—Ի՞նչ է այդ, հարցրեց Աղաջանը:

—Բա՛ց և տե՛ս:

Աղաջանը վեր առաւ կապոցը, ձեռքի մէջ շուռէշուռ տուեց, շօշափեց, ուսերքը վեր քաշեց, գլխով աչքով տարակուսական շարժումներ արեց և մեկնեց դէպի Բղդէն:

—Ինքդ բաց արա՛, ասաց նա:

—Ո՛չ, քո օրհնած ձեռքը թող կպչի իմ արդար վաստակին, բացասական շարժում արեց Բղդէն:

Աղաջանը շրթունքներն ուռեցրեց և ստիպուեց կապը քակել:

Մի ուրիշ նոյնպիսի փալաս գտաւ նա կապած: Յետ արեց և՛ երկրորդը, և՛ երրորդը և՛ չորրորդը: Շարունակ միմեանց հետևում էին նոր կապեր:

— Տղա՛յ, էս մասո՞ւնք է, սրբի գերեզմանից առած օրհնութեան հո՞ղ է, ի՞նչ է, որ հազար փալասում կապել ես:

— Ծառա՛յ եմ սրբերին, պատասխանեց Բղդէն, մասունքն և օրհնութիւնը սուրբ բաներ են, պատիւ ենք տալիս, մի քանի կապերի մէջ ենք պահում, բայց մարդիս հալալ քրտինքն էլ իւր համար գին ու արժէք ունի:

Վերջապէս Աղաջանը քակեց վերջին կապը:

Նա շշկեց, շփոթուեց և փաթեթների միջից դուրս եկած առարկան ձեռքից ցած գլորեց իւր նստած թաղիքի վերայ:

— Եամա՛ն, Աղաջան ամի՛, զլխի՛դ մատաղ, խնայի՛ր, իմ դուռը քրտինքն է, այդպէս արհամարհանքով գետին մի՛ ձգիր, ասաց պաղատագին Բղդէն և յափշտակեց, քան թէ վերցրեց զեանից նուիրականութիւնը և մեկնեց դէպի Աղաջանը:

— Տղա՛յ, էս ի՞նչ երկու շահանոց է:

— Քեզ ասում եմ, որ իմ առաջին աշխատանքն է՝ հալալ ապրանքն է, իմ հարստութեան մայէն (խճրն) է, չափահաս և հասկացող մարդու ծանրութեամբ պատասխանեց Բղդէն և մի առ մի պատուեց երկու շահանոցի ձեռք բերելու դէպքը:

— Այս երկու չուրուկ շահին ինձ երեխայութիւնից կատարեալ տղամարդ շինեց, շարունակեց Բղդէն, ինձ հիւանդացրեց, գերեզմանի դուռը տարաւ, բայց էլի յետ բերեց. հիւանդ ժամանակս իմ ցաւերս մոռացած, սորա վերայ էի մտածում, սորա յուսոյն էի ապրում. սրանով ես հասկացայ, որ փողը քաղցր բան է և ահա՛ բերել եմ քեզ մօտ, աւանդ եմ դնում մօտդ, պահի՛ր այս իմ համար ամենաթանկագին իրը և փոխարէնը սպառիկ ապրանք հաւատա՛, տանեմ գիւղերումը ծախեմ, բերեմ քո փողը տամ, աւելցուկը սորա վերայ դարսեմ: Աղաչում եմ, երբ կամքդ կը տայ, Աղաջան ամի՛, ապրանք բա՛ց թող ինձ. մօտդ պահի՛ր իմ երկու շահանոցը, լա՛ւ պահիր, քո ձեռքովդ կապտոթի՛ր կրկին իւր փալասների մէջ և թող

քո փողերիդ կողքին ընկած մնայ. մի՛ կորցնիր, ձեռքից մի՛ թողնիր, դա իմ քիսադիբին է լինելու:

Բղդէի խօսքերը շատ վատահ էին, մի հաստատակամութիւն, մի գերբնական զօրութիւն, մի անընկճելի կամք պարզ նկատուում էին նորա մէջ, նորա ներսումը, կարծես, բորբոքում էր մի հնոց, որի ծինելոյցը նորա կաջներ արտացոլող աչքերն էին:

—Դու հաց կ'ուտես, զաւակս, քեզանից մարդ դուրս կը դայ, ասաց և գրկեց Աղաջանը Բղդէին. ահա՛ դու, ահա՛ իմ խանութը, տա՛ր ինչքան կամենաս, ո՛ւր կամենաս, դուռս քեզ համար միշտ բաց է, քեզ արգելք չը կայ. իսկ այս քո երկու շահանոցը կրկին դի՛ր քսակիդ մէջ, թող քո քիսադիբին քո ծոցումը մնայ:

—Ո՛չ, գլուխը շարժեց Բղդէն, մինչև որ իմ երկու շահանոցը ձագեր չը հանի, ես քեզանից տանողը չեմ. սա մեղուների փեթակի մայրն է, սա խողի մէրուն է, տարին մի քանի անգամ ձագ պիտի տայ, շատանայ, ապաթէ նոր ես քո արկղիցդ հանեմ, իւր համար առանձին փեթակ շինեմ:

—Ուրեմն թող այս դնենք առանձին քսակի մէջ, թող իւր առանձին բունն ունենայ. ահա ա՛ռ այս քսակը, կապի՛ր քո ձեռքով սորա բերանը, որ կրկին ինքդ բաց անես:

Այդ օրից կարբեցի չարչիների թուում զիւղերը թափառող մի մանուկ չարչի էլ աւելացաւ:

Դա Բղդէն էր, որ զսասաւորեց խուրջինի մէջ կարևոր ապրանքը, համբուրեց ջհուտ Աղաջանի ձեռքը և ճանապարհ ընկաւ:

Ը.

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է

Ո՛վ ասես, որ առաջին անգամը փորը բռնած չը ծիծաղեց, երբ լոյս ընկաւ գիւղերումը ճղճղոտուած, պատառոտուած բոկոտն մանուկ չարչին. ո՛ր ծակ բերանը նորա վերայ չը խօսեց, ո՛ւմ ձեռքն ասես, որ խեղճ Բղդէի գլխին չը բարձրացաւ. նա ամենքի խօսակցութեան նիւթը դարձաւ: Բարկութիւն, հայհոյանք, ծաղր ու կատականք, հեղնութիւններ, արհամարհանք մեծ ու պտուկից, արուից ու իգից նորա գլխին էին թափուում:

Տղամարդիկը ծիծաղում, անց էին կենում, պառաւները հինգ մատը յետ բաց արած՝ չանչում էին, հարսներն ու աղջիկները քիթ էին բարձրացնում, իսկ երեխայքը օջին չէր մնում, որ զլխին չը խաղային—հող էին ածում գլխին, խուրճինն էին ձգձգում, շներն էին գրգռում ու ինչ տեսակ նեղութիւն ասես, տալիս էին:

Մի տեղ լալիս էր Բզդէն, միւս տեղ զլուխը քաշ՝ չը լսելու դընում, անց կենում, իրանից փոքր երեխաներին ձեռքի փայտովը հալածում, մեծերին մի բուռը չամիչ տալիս, աղջիկներին ասեղ ու քորոցներ բաշխում, հարսներին ծածուկ ղեղադրիք ու ասղամանների ցոյց տալիս, պառաւներին մեծ ծամելու մատտակ առաջարկում և իւր զործն յառաջ տանում:

Այնուհետև ոչ ոք Բզդէից չէր խրոնում, ոչ ոք նրան չէր վիրաւում, ընդհակառակը՝ շատերը հետաքրքրութեամբ լսում էին նորա նոր շարադրած դովասանական մեղեդին, երբնա ձեռքով խուրճինը ցոյց տալով՝ նորա միջի ամեն մի սպրանքի համար մի-մի հրապուրիչ խօսք էր շուայում:

Բացուեց հետզհետէ Բզդէի բազդի գուռը, նրանից ձեռնտու չարչի չէր լինիլ, քաղցրալեզու, էժման ծախող, ապառիկ հաւատացող և անմիաս:

Սիրելի եղաւ մանաւանդ աղափ աղջիկներին ու չըխօսքան նոր հարսներին. մի մասն երեխին ո՛վ մարդատեղ կը դնի, ո՛ր մայր ու սկստւոք կը բարկանան, եթէ չարզեւոր հարսներին ու ամօթխած աղջիկներին տեսնեն օտարական մանուկի հետ քնթկալը ցած թողած, խօսալուս ու ծիծաղելուս. ամօթ կը լինէր, եթէ նրանք մեծ մարդկանց հետ աջդ կերպ վարուելիս լինէին. ի՛նչ անենք, թէ օտարական են, դարիւր են. տղամարդը տղամարդ է, տղամարդին պատիւ է հարկաւոր. մուրացկան զգգուած տղքատի հետ էլ հարս ու աղջկէքն իրաւունք չ'ունին խօսելու:

Նրանից աւել նպատաւոր զէ՛պք. ասել չի պէտք, որ նորա առեւտուրը կարճ միջոցում չաջող ընթացք ստացաւ, նորա գնորդները հետզհետէ աւելացան: Շատ չը քաշեց, Բզդէն զիւղերի համար սովորական դարձաւ, ամեն բալի ազատ ալցելուն համարուեց, շները մինչև անգամ հետը բարեկամացան, երբ որ նորա տուած կախուղ բոքոն հայի ճաշակն առան: Ել ի՛նչ ասել կ'ուզէ, որ Բզդէի

ապրանքը ուրիշ չարչիների ծախածներից գերազանց հռչակուեցաւ:

Ամենքի ջուրը գտաւ Բղդէն, ամեն պայմաններ հեշտացրեց, միայն մի կողմից շատ դժուար դրութեան մէջ էր և երկար միջոց պարտական էր դիմանալ:

Կարբու միւս չարչիների աչքի փուշը լինելը շատ բնական էր. նրանց ղէմ մի վտանգաւոր ատոյեան էր յառաջ եկել և այդ շատ ցաւ էր չարչիների համար, այդ նրանց մտածութեան զլխաւոր հոգսերից մէկն եղաւ:

Ահա՛ վերադառնում են նրանք ամենքը մի ղիւղից, երեկոյեան ղէմ, և սովորական ողջունից յետոյ սրտի ցաւերը միմեանց պարզ յայտնում:

—Այսօր առուտուրդ ի՞նչպէս էր:

—Կար էլի՛. իսկ քո՞նք:

—Էլ մի՛ հարցնիլ, ամեն խէր ու բարաքաթը կարուել է:

—Հանդիպե՞ց քեզ լամուկը:

—Ո՛ւր է, ձեռք ընկնո՞ւմ է, որ մարդ վարկի, շան նման սառուկացնի:

—Ինձանից էլ միշտ փախս տուած է ման գալիս:

—Դիւղերումը մէկ-մէկ աչքի է ընկնում, բայց գիւղամիջին ի՛նչ կարող ես անել: Մի օր Կարօն Աշտարակումը մի շամառ (տղա՞ն) էր հասցրել, զեղովի հաւաքուել էին, խեղճ Կարօյին էնքան թափել էին, որ գնացած ճանապարհը մոռացել էր:

—Դա մեր հացը կը կտրի:

—Չարչին էլ չարչի լինի, ո՛ւմ ցաւ կը թուի.— գետնի երեսին չի երեւում. Պօղոս աղայենց զրան երեկուան շների լափի գուռը (գո՞ւլ) լպստողն է, էսօր մեր ոտքի տակ սառուց է դնում:

—Ո՛ր տունը մանում ես, մի գլուխ լսում ես, թէ կօլոտ Բըղդէից առանք էժան, լաւ ու նիսիա:

—Ջհուտ Աղաջանն է մեղաւոր, ո՛ւմ ասես, ապրանք է բաց թողնում:

—Գնանք խնդրենք, որ էլ չը տայ:

—Մարդ իւր հացին քացով կը տա՞յ. նորա ապրանքը ծախուի՝ մսխողն ով կ'ուզէ թող լինի:

—Յետոյ Բղդէն փող տալի՞ս է:

—Հապա Աղաջանին հարցրո՛ւ. զուք շաբաթ օրերն էլ չէք կարողանում ձեր շաբաթական հաշիւը վերջացնել, ասում էր ինձ ջհուտ Աղաջանը, Սալբու տղէն ամեն իրիկուն բոլոր աշխատած փողը բերում, ինձ է տալիս:

—Որ էդպէս է, բոլոր շաբաթներս խօսքը մէկ անենք, որս հասնենք, քիթ ու մուկը արորենք:

—Դու ես ասում՝ գիւղերումը չի կարելի, ճանապարհին էլ ձեռք չի ընկնում, շօլերովն է գնում—զալիս:

—Սրական մէկը մեզանից հերթով թող բուսուն պահի (գութան ճո՞նէլ), լուսը չը բացուած՝ ճանապարհը կարի, հէնց որ Կարբուց դուրս եկաւ, բռնի մի լաւ ծեծի և անցկենաց իւր գործին գնաց:

Աւերջին հնարքն էլ չը յուսահատեցրեց Բզդէին. շաբաթ չէր անցնում, որ մէկ կամ միւս շաբաթ ապտակների համը չը տեսնի. — գումում էր, լալիս էր ու կրկին ուժեղ հակառակորդի հեռանալուց չետո՞յ՝ վեր կենում, աչքերը սրբում և ճանապարհ ընկնելով՝ ասում.

—Նազած եզը լաւ կալ կ'անի, էնքան է զուք ինձ կենդանի թողէք, օրական տասն անգամ ծեծեցէ՛ք, օր կը գայ, որ փոխարէնը մէկ-մէկ կը տուանաք, կը ապասենք՝ կը տեսնենք—համբերութիւնը կեանք է:

Թ.

ՄԱՏԱՄԵՍ ԿՆՔԵՅԻ

Գիւղ չը ֆնաց Կարբու շրջակայքումը, ուր Բզդէն պարտապաններ չ'ունենայ, տուն չը ֆնաց, որ մի տեսակ նորա հեռ չը կապուի. նա այժմ մարդամէջ է մտել, մարդի կարգն է անցել և իրաւունքները մեծացրել է:

Ո՛վ ասես՝ նրան բարեւ չի տալիս, նորա հեռ հարց ու բարով չի անում, նրան չի ընդունում, ո՛ւմ անունը չը կայ՝ նորա ծոցադրպանումն ու ձեռաց տօմարի մէջ:

Առաջինումը մասնաւոր մուրհակներ էին մի-մի կտոր թղթերի վերայ գրած, երկրորդումն ասեւնոն տպաւորիկների ցանկն էր՝ չիղդութիւնից չը թռչելու համար:

Գիր ու գրիչ անձանթ էին Բզդէին և նա կարիք էլ չէր զգում:

Քէպէտ գրաճանաչներ մատով էին համարուում՝ այն ժամանակը, բայց այդ եղածներն ամենքը պատրաստ և պարտական էին նորա երբով (վաթաւորէն) առաջարկած խնդիրը կատարել:

—Եւ անենք, ախպէ՛ր, կարո՞ղ ենք չէ ասել, աշխարքն էն օրին է հասել, որ մի կտոր գունդ ու կծիկ, անճոռնի, երկոտանի անասունին մեր գլխի տէրն ենք շինել, մենք մեր ձեռովը ազատ արուկ ենք գրուել, արգարանում էր ուրիշների և իրա սեպհական ես-ի առաջին գիւղական գրագէտը, երբ ստիպուած էր լինում կարեօր գործը թողուլ և ժամու ու տարածամու Բղդէի խօսքը լսել, նորա ապառիկը գրել:

Զուր էլ նեղանում էին. շատ ժամանակ կորցնելու ոչինչ չը կար, մի անուն միայն պէտք է նշանակէին և ապառիկի գումարը: Զեռաց ոտքի վերայ գրում և իրանց գործին էին գնում:

Մեծ ցաւ էլ չէր Բղդէի համար, եթէ գիւղերումը գրէի տէր էլ չը գտնուէր. ո՛ր տէրտէրը նորա սիրտը կը կտարի, ո՛վ չի հօտորակ Բղդէի մօր ձեռքով պատրաստուած, ախորժ փռշտացնող, անուշաբոյր քթախոտը: Բացի եղան փամփուշտի մէջ ծախելու համար ունեցածը՝ Բղդէն միշտ գրպանումը պարկը լիքը պատրաստ ծխախոտ ունէր. ծեր իշխանների, պառաւ մեծ նանինների և ամեն մի քթախոտի սիրահարի հանդիպելու՝ առաջին գործը պարկի կապը յետ բաց անէն և քաղաքավարութեամբ ու ժպտալով մօտ տանելն էր լինում: Անիծածը շատ ժամանակ չը քաշողների ախորժակն էլ գրգռում էր. էնպէս շնորհքով էր յառաջ բերում, թաւաղայ անում պարկը, որ չէ ասել չէիր կարողանում, մի պողոնաց վերցնում էիր, մինչև քթիդ վերին ծայրը ներս քաշում ու երկու զոյգ մի կենտ փռշտում:

—Առողջութի՛ւն, ձեռաց վրայ էր բերում Բղդէն ու իւր սիրելի բօշի տղայ եղբօրը ձեռքով յառաջ վարում: Կսօր մէկ, էգուց երկու և Բղդէն լաւ գիտէր, որ երրորդ օրը գրպանումը մի քթախոտի պարկ պէտք է բռն զնի և ուրիշ պարտքերիդ վերայ թուլութունի փող էլ աւելանայ:

Քթախոտի պարտք չէր նշանակուում Բղդէի ձեռաց տօմարի մէջ միմիայն տէրտէրների վերայ: Հէնց այդ էր պատճառը, որ Բղդէն ոչ մի նաւակատիկի, ոչ մի մեռելոցքի գերեզմանատուն չէր

գնում: մի կոպէկ իւր հօր հոգուն չիշէքի կամ՝ զերեզմանօրհնէքի չէր տուած, և կարիք էլ չը կար, որովհետեւ ամեն անգամ տէրտէրի քթախոտի պարկը լցնելու՝ նա իւր ախանջովը լսում էր տէր-հօր օրհնութիւնը:

— Աստուած ծնողիդ հողին լուսաւորեցէ՛:

— Մօրս էլ օրհնի, տէր-հա՛յր, յաւելացնում էր Բղդէն, մայրս իւր ձեռքովն է պատրաստում Մշու թամբաքուից էն անուշահոտ բուռնութիւն:

— Աստուած մօրդ կոնքերի ոյժը ոչ պակասացնի՛, ասում էին տէրտէրները, բայց երբեմն էլ աւելացնում էին.

— Ուղիղն ասա՛, եղբայր Բաղդասա՛ր, էս անգամի բուռնութեւ երկու բաժինը, հէնց իմանաս, ծեծած ածուխ լինի, թամբաքուի հոտը շատ քիչ է:

— Ողջ մէկ է, տէրտէ՛ր, հոտը դա՛ բաւական է, քսակներին փնտս կը լինէր Մշից թամբաքու բերել տալ. փա՛ռք Աստուծոյ, ձորը լիքն է ուռի ծառերով, անփող, անփարայ ինչքան սիրող կ'ուզի, երի, ածուխ շինի՛ր, փոշի արա՛, մի երկու թութունի տերեւ էլ հոտը տրորի՛, երկու հատիկ միսակ, հիլ, կոլոլ տաքտեղ, և ահա՛ բուռնութիւն պատրաստ է, հեքան քաշեցէ՛ք՝ քթերդ մրմնան. ես քաշող չեմ, որ դարդ անեմ:

— Այ տղայ, ասած է՝ «շիտակ խօսքը հանաքով կ'ասեն», չը լինի՞ թէ ուղիղ այդպէս է:

— Կէսն է հանաք, կատակի էր տալիս Բղդէն և տէրտէրի պարկը լցնում ու իւր էջը քշում, զիտենալով անշուշտ, որ շատ չի տեխի՛ մէկի հետ կրկին դէպի տէրտէրը կը վերադառնայ:

Բղդէի հաշիւն ուղիղ էր: Յը չը լինէր, որ մէկ կամ միւս պատականի մուրհակը չը նորոգել տար, կամ նոր մուրհակ չ'աւելացնէր իւր ծոցաթղթերի մէջ:

Մի որոշ սահման էր նշանակել նա իւր ձեռաց ապառիկները մուրհակի փոխելու համար:

Խօսք չը կայ, սկզբումը կոպէկներ էին լինում այդ պարտքերը, որոնք աստիճանաբար աբասու, հազար դեանի (30 կոպէկի) և ապա մանէթի ու թումանի էին փոխուում: Մի հազար դեանը երբ 5000 դեանի (1 ռ. 50 կոպ.) հասաւ, նա կը ջնջուի ձեռնաստամարից և

մուրհակի կրփոխուի. վեց ամիսը մի անգամ էլ մուրհակի սովորը զլուի կը դառնայ:

Բղդէի առաւելութիւնը միւս չարչիների վերայ այս էր, որ ուրիշների նման երբէք ինքը չէր ձանձրացնիլ պարտապաններին վրձարելու, կամ մուրհակը նորոգելու. ի՛նչ մի աներեւոյթ ոյժ կար նորա մէջը, որ ամեն մարդու ստիպում էր դէպի պարտաճանաչութիւն:

Շատ են խօսեցել այդ մասին խելացի մարդիկը և այդ մեծ դօրութիւնը դտել են Բղդէի աչքերի, նորա հացեացքի մէջ:

Մի քանի տեսակ նայուածք ունէր Բղդէն. այլ էր նոր մուշտարու հացեացքը, ուրիշ էր ջահէլ աղջիկներինը և նորահարսներինը. սրանց երկուսինի միջի եղած զանազանութիւնը շատ չէր, մի տեսակ քնքշութիւն նկատելի էր աչքերի, գէմքի, շրթունքների և շարժմունքների մէջ. ձայնն էլ, կարծես, կորցնում էր իւր բնական խաղտութիւնը և մի քաղցրանուագ սոսաձգականութիւն էր ստանում: Պառաւ կանանց հետ առուտուր անելու ժամանակ՝ աչքերի բլբլերը շուտ շուտ էին պտոցանք անում, մի կիսահեգնական արտայայտութիւն էին զգալ տալիս խօսակիցներին, բայց ոչ այն չափով, որ սրանեղելու իրաւունք ունենան. գիւղերում նշանակութիւն և իրաւունք ունեցողների հետ խօսելու ժամանակ նորա աչքերը իրանք իրանց կորանում էին և խորին հպատակութիւն ու ակնածութիւն էին արտափայլում. պարտապաններին մուրհակ տալու, կամ նորոգելու յիշողութիւն անելիս՝ բիբերը մի քանի վայրկեան դադար էին առնում շարժողութիւնից և հէնց իմանաս, թէ դուրս էին թողում իրանցից ասեղներից էլ բարակ սուր սուր նետերի արցակներ (չաղէր) և շաղ էին տալիս պարտապանի սրտի խորշերումը:

Այդ ժամանակ, ինչքան որ խտասիրտ, կամ իւր հաշիւների մէջ անճշդութիւն սիրող պարտապան լինում էր, ինքն էր շտապում բարեւ տալ Բղդէին, կանգնացնել և յիշեցնել նրան իւր պարտքը:

— Բղդէ ջա՛ն, ի՛նչ անենք, որ երկ' օրից փողիդ ժամանակն է ու ձեռքս պակաս է, մօտ է գալիս ձեռքը բօշի աղի վզին դնում փողոցի մէջ տեղը որ և է մի պարտապան, դիցուք, փարբեցի Մաղաբը:

— Բո ցաւը տանի՛, Մաղաբ ջա՛ն, ունեցած ժամանակդ տո՛ւր:

ո՞վ է քեզանից էս օր փող ուզողը, տաս էլ ի՞նչ պէտք է անեմ, քեզանից լաւ մարդի եմ տալո՞ւ։

Ի դէպ՝ մեր Բղդէն այժմ քաղաքակրթուել է, նա աշխատում է, որքան կարելի է, փախա տալ իւր մայրենի բայազիզցութեանը, չը գիտենք՝ ամօթ է համարո՞ւմ, թէ Արարատեան բարբառի ճաշակին է ընտելացել նորա լսողութեան զործարանը։

— Աւրեմն թուղթը նորենք, մինչև աշունքը կալ ու կուտը կը ժողովենք, բաղամասիլը (այգեղորոշ) տուն կ'ածենք, հողիս կ'ազատեմ, առաջարկում է ինքը Մաղաքը։

— Ինչպէս քո բարի կամքդ կը հաճի։

— Թէ էգպէս է, էգուց սանազը (ճաւհոյ) չը մուսնաս, հետո՞ վերցնես։

— Մէկ էլ ընչի՞ եմ էգուց քեզ նեղութիւն տալիս, Մաղաք ախպէ՛ր, եթէ կը կամենաս, թուղթը մօտս է, մէկի հետ հաշիւ ունէի, կապողը վերցրի, ծոցս դրի, թէ չէ ո՞ւմ միտն է գալիս, տարիներով տան քնջնումը թողերի միջին ընկած մնում է, երեսին էլ չեմ մտիկ տալիս. մի օր էլ մէրս, չիմանալով, աղբի հետ սրբելէր ու տարել աղբանոցը քցել. մէկ էլ մէրս յետ է մտիկ տալիս, տեսնում, որ շներն աղբը խառնշտորում են հացի փշրունք գտնելու համար ու մի շուն դնելով մի կապողի պէս բան է քանդքնդոտում. բարկանում է, բերնիցը խլում, տեսնում թղթեր, վերցնում է տուն բերում, էլ յետ քնջնումը վէր քցում։

— Ախպէ՛ր, լաւ մարդ ես, որ պարտքիդ թղթերն անաէր անտիրական շարտում ես, զարմանում է Մաղաքը. իմը որ լինէր՝ օխտը փախի տակ կը պահէի։

— Քո ա՛րևը, տարիներով միտքս էլ չեն գալիս, Մաղաք ջա՛ն, թէկուզ կորչին, էսքա՛ն էլ դարդ չեմ անիլ. նա հոգածութեան չափսը ցոյց տուեց իւր եղունգի աւելորդ մասը. ընչի՛ց եմ վախում, ես հարամիւր մարդիանց հետ հաշիւ չ'ունիմ, իմն աղպեր-տղէքանց հետ է, որ բոլորովին չը տան էլ, իրանց մօր կաթի պէս հալալ ախպերութիւնովն եմ երդում ուտում, Մաղաք ջա՛ն, որ էս օր էլ չէի սանազները վերցնիլ, թէ որ քեզ պէս մի աղիղ բարեկամ երեկ ինքը զօռ արած չը լինէր՝ թէ մուրհակս բե՛ր, հաշիւը վերջացնենք։

— Բաս էդ լաւ էլաւ, հէնց էս օր դրենք, վերջանայ կորչի։

— Քո քեֆն է:

— Ո՞ւր գրիլ տանք:

— Հրէ՛ ա՛յ տէրտէրը իշխանների հետ պատի տակին նստած՝ գրից են տալիս. Աստուած իրան փառաց պահի, չի էլ թողալ բերան բանանք, դու էլը քշի դպա ժամի բակը, ես աչքով կ'անեմ տէրտէրին, մեզանից շուտ կը գայ:

— Լաւ գրի՛, աջի՛դ մեռնեմ, սխալ չը գաս, շահը ուղիղ հաշիւ արա՛, հոգու պարտք է:— ու տի որդին, վճարի հողին, արտիանկեղծ համոզմունքով աղաչում է Մաղաքը:

— Գլուխն ի՞նչքան է, մէջքը եկեղեցու պատին տուած՝ նստում է քարի վերայ տէրտէրը, մինչ կօլտո Բղդէն չօ՛ղջ... անելով՝ դէմ է ձգում սև իշուկի վզին մահակը, ձեռքը ծոցը տանում, հանում իւր գրպանից կապուտ կոստի քսակը, զգուշութեամբ յետ է բացանում երիզը և մի ուրիշ կապոց հանում միջից, արձակում հանգոցը և մի ծալք ծալծրոտած և աղտոտած թղթեր դուրս հանում ու մէկ մէկ իշի համետի վերայ յետ դարսում, մինչև որ վերջապէս գտնում է Մաղաքի մուրհակը:

— Լաւ իզան (յեղաշէն) ունիս, ախպէր Բղդէ՛, որ անկարգալ տեղովդ կարողանում ես սանապենին իրարից ջոկոտել, զարմանում է Մաղաքը:

— Դժուարը աչքդ մի անգամ վարժացնելն է, պատասխանեց Բղդէն, մէկ էլ որ հէնց այք-բէնը չը պիտի խմանանք, որ գրի սևն ու սպիտակը զանազանենք, ես էլ իմ՝ գրերն ունեմ. ա՛յ, մտիկ տո՛ւր, սրանք են իմ գրերը:

Արդարև, ամեն մի մուրհակի արտաքին ծալքի վերայ չինական նշանագրերի նման որոշ որոշ խաղիզուածքներ կային դժած. նոցանից իւրաքանչիւրը մի պարտապանի անունն էր: Բղդէի իւր սեպհական մոքի ծնունդն էին նոքա:

Իւր բազմակողմանի ընդունակութեանց հետ՝ մի սուր յիշողութիւն ևս չի զլացել Բղդէին բնութիւնը. նա դիտէ ամեն մի մուրհակի բովանդակութիւնը, դումարի, տոկոսի, կրկնատոկոսի հաշիւը և ամսահամարը. նա ամսով յատաջ հաշուած և պարտատուած ունի տաճիկաց ժամանակամիջոցի պարամգլխի որքանութիւնը և նա այդ անում է, հաստատ պիտեմալով, որ իւր պարտապանն այժմ՝ վճարելու չէ իւր պարտքը:

Ահա Բղդէն գտաւ Մաղաքի մուրհակը — փալատից յետ տուած լեղակի զուռով կապտացած մի փոքրիկ թղթի կտորը և տուեց տէր-տէրին:

— Օրհնա՛ծ Մաղաք, դէ՛ ասա, թէ գլուխը որքա՛ն է, մէկ էլ աչք ցաւացնենք, կարդա՞նք. ծերացել եմ, աչքերս լաւ չեն տեսնում:

— Գլխի մասին էլ մի՛ հարցնիլ, աջիգ մատա՛ղ, սրտի ամենա-մութ անկիւնից մի հառաչ է արձակում խեղճ Մաղաքը, թէ գլուխն ես ուզում իմանալ, մի պոպոքը (քնիոյդ) մեծացել՝ ձմերուկ է դառել. մեր տնեցիք ասեղ-մասեղ էին առել, էլ չէին մտածել, թէ մի բռնն ալիւր, մի ամանով չիր ու փշատ տան, վերջացնեն. մնացել էր նիսիա (սպառնիլ). իմ արխալղի համար էլ զայլթան (չեքիլ) ու կոճակներ էին հարկաւոր, էն էլ վրէն աւելացրինք, զարնան թագաւորական խարջից (հարջ) մի մանէթ պակաս էր, օխտը զուռն ընկալ՝ տուող չէլաւ, եասառւնն ու զաղախը չէին թողում, թէ ոտս ոտիս յառաջը դնեմ, զամշի (մարտի) էր, որ թիկունքախառը ուսա-գլխներէն հասնում էր. մնացել էի մոլորուած. շնորհակալ եմ, սորա հէրը լո՛յս դառնայ, էն կողմիցը դուրս եկաւ, հալս տեսաւ իւր բարի աչքովը, առանց իմ բերան բանալու ինքը մօտ եկաւ, քիսէն հասնեց, մանէթն ուխները քցեց, միջքիս զաղդղորիկ զալը կտրեց, երեխէքանցս տակի կարպետը ծախելուց ազատեց: Հին պարտքն ու նորը հաշուեցինք, էլաւ հինգ հազար դեան տաս շահի (1 մանէթ 65 կոպ.), շահը գլուխ արինք, դասաւ վեց հազար դեան. ժամանակին ձեռքներս չը հասաւ, որ տացինք, ես-խէքս (օջիք) ազատէինք, հիմի հինգ մանէթից աւելցել է. էնպէս չի՞, աղպէր Բղդէ:

— Միտքս չի գալիս, գիրը կը խօսի, ինչ որ կայ՝ կայ, իմ ասելովը չի աւելանալ, քո խօսքովը չի պակասիլ. եթէ ուզում ես, քո գլխին մատաղ լինի, թուղթը ճղենք՝ կորչի:

— Վա՛յ, Աստուած էն օրը մահ տայ, Բղդէ ջա՛ն, մեր հոգու պարտքն է, քեզանից քաշեմ, կտրեմ, քո դառը, հալալ քրտնքին չար աչքով մտիկ տամ, ո՛ւմն ուտացնեմ:

— Ախար ընչի՞ էք ծռծռացնում, ձգձգում, ինձ նեղութիւն տալիս, այ որչի՛ք, դուք երկուսդ էլ անպատճառ ձեր առնելացուկի ու տալացուկի հաշիւը լաւ գիտէք, ասացէք ու վերջացրէք, մէկ էլ

աչքերիս զօտ չ'անեմ, արդար տրտունջ յայտնեց հաղալով և իրկորդը մաքրելով տէր հայրը և ճարահատեալ սկսեց շուտ շուտ կարգալ:

—Դէ՛ որ էղպէս ջրի նման սուար (աբաֆ) կարող ես կարգալ, ա՛յ տէրտէր, էլ ի՞նչ ես մեզ խօսացնում, կարդա՛ ու պրծի՛. իրաւամբ կշտամբում էր տէր հօր ուշացնելը Մաղաքը: Բայց Մաղաքի պահանջն արդարացի էր. տէր հայրը ինչ արագութեամբ որ սկսեց մուրհակի կարգալը, նոյն ձևով չք կարողացաւ մինչև վերջը հասցնել. կիսումը յանկարծ կանգ առաւ և ը՛...ը՛...ըա՛... ծորելով՝ մատներին ծայրով սկսեց աչքերը տրորել:

Աւելորդ թող չը լինի կրկնել տէր հօր կարդացածը. «Զօրութիւն զրօյս այս է, որ ես Փարբի դիւղի բուն բնակիչ Սէթօյի Մաղաքս վեր առի և պարս եմ՝ Կարբի գիւղի վերաբնակիչ Պսպէի Բղդէից, այսինքն չարչի Բաղդասարից...»

Հէնց այստեղ կանգ առաւ տէրտէրը, թուղթն աչքերին մօտ բերեց և ը՛...ը՛...ը՛... անելով, ամեն մի ը՛... հնչիւնի հետ զլուխն էլ յաճախակի տմբացնում էր:

—Դէ՛, Բղդէ ջա՛ն, վրայ քցի՛, ասա՛, տէրտէրին նեղութիւն մի՛ տալ, ընդհատեց Մաղաքը:

—Վալլահ (յանան Աստուծոյ), լաւ միտքս չի դալիս, կարծեմ, զլուխը պէտք է լինի երկու թուման, տասն ու հինգ շահի (6 մ. 15 կոպ.) վրայ բերեց Բղդէն:

—Վա՛յ գլխիս. թափահարուեց ոտից զլուխ Մաղաքն և ատմներն անզիտակցաբար մին մին կպան՝ ճիշդ պղնձգործի սալի վերայ մի քանի հոգւով միմեանց ետևից կռանահարողների հարուածների նման. նորա ուսերքի մինը բարձրանում, միւսը ցածրանում էր, մարմնի ամբողջ ջղերը շամփուր շամփուր ցնցուեցան և լեզուն բերանումն ինչ որ անհասկանալի հնչիւններ էր շաղկապում:

—Ի՛նչ պատահեց քեզ, օրհնեալ լինիս դու, Մաղա՛ք:

—Ոչի՛նչ, ոչինչ, տէրտէր ջա՛ն, գրի՛ ինչ որ խապէր Բղդէն ասում է, զրան աւելի լաւ է յայտնի, թուղթն ամեն օր կշտին է՝ կարգալ կը տայ, կ'իմանայ. մէջ տեղը վեց ամիս է անցկացել, ինձ պէս հաղար ցաւ ու հոգսի տէր, մաքամալոր մարդի մաքին բան կը մնա՞:

—Ինձ չես հաւատո՞ւմ, զարմանք յայտնեց Բղդէն:

—Դէ՛ք քանի՞ զլիսանի եմ, որ չը հաւատամ, երևում է՝ ես եմ՝ սխալ, իմ կարճ խելքովը հինգ մանէթ ու մի քանի սև փող էր, հալբաթ ձուտեր է հանել:

—Փա՛ռք Աստծու, տէր հօր ձեռքին է, քո էլ մուրհակն է, թո՛ղ տէրտէրն իւր օրհնած բերանովը կարդայ. դու է՛լ զիտես, վերեն Աստուած է՛լ, ներքեւ բանդէն (Տարբ) է՛լ, որ ես ոչ զիր զիտեմ, ոչ զալամ: Աջիւ մեռնեմ, աչքերիւ մի լաւ զօւ տո՛ւր, ձմա՛ն, թող ջուրը թափուի, զրաճները լաւ ջուրի, խնդրեց Բղդէն. մարդ ենք, հողեղէն ենք, սխալական ենք, օրը հազար մարդի հետ հանդիպում եմ, կարելի է, մուսացի եմ, երեկուայ կերածս միտքս չի, վեց ամսուան դորճն ի՛նչ կը փնար:

—Ո՛ր...ը՛...ը՛... կրկնում է նորից տէրտէրը և աշխատում զիր կապելով մի բան զոյացնել. հո՛ր... ինի՛... նո՛ւ... չէ՛, չէ՛, հէնց իմանաս եչի նման է... ե՛չ...բէ...:

—Վաքի էլ ընէ՛ի՞ ես զլիսիդ ու աչքերից նեղութիւն տալիս, քո աջի՛ն մատաղ, ընդհատեց Մաղաքը, մեր Բղդէ ախպէրը մի քանի շահու համար իւր հողին հօ՛ սեւացնելու չի. թէ որ ասում է՝ երկու թուման տասնեհինգ շահի է, հէնց էդքան էլ կը լինի: Եգուց չէ էլօր, դարնան Մողնու ուխտի շարաթ օրը, ժամանակը լրանում է. հաշիւ արա՛ էս օրուանից մինչև նաւասարդի պաս երկուշաբթին, ինչքան շահ կը բռնի՝ վրէն արի՛, տասին երկու շահով խղբղի, մատու հուպ տամ՝ վերջանայ: Ինչքա՞ն կը բռնի, Բղդէ ջա՛ն, դու ինքզ հաշուի՛, դու աւելի զլիսի ես (Հմար էս):

—Ես ի՛նչ զիտեմ, ախպէ՛ր, տէրտէրի ոտը մեր զլիսիցը շատ զիտի:

—Օրհնա՛ծ, օրը մինչև իրիկուն դու ես փողի հետ խաղում, էս հօ «Հոգուց» չի, «Պահպանիչ» չի, որ աչքդ բաց ու խուփ չարած՝ հինգ անգամ ջրի պէս ասեմ ու փէշս թափ տամ, յետ կանգնեմ, ասիլ տուողի ձեռին մոտիկ տամ, թէ ի՛նչ պո՛ր հանի քիօլցն ու բռնուս պնի:

—Շահը գլուխ արած՝ մինչև նաւասարդը կը բռնի ճիշդ, մի սև փող ոչ աւել ոչ պակաս, երկու թուման ու կէս ու մի շահի, թող շահին էլ մեր ախպէր Մաղաքի ցաւը տանի, հաշուեց և առատօրէն նուիրեց կօլօտը:

—Ս'հ, միտս արթարթաց, էդ ի՞նչ ասացիր, Բղդէ ջա՛ն, տաս հէնց էս օրուանից երեխէքանց կուռը բռնեմ, ջուրն ածեմ:

—Ընչի՞ ես նեղանում, Մաղաք ջա՛ն, բոլորը քեզ մատանդ, ասհա ա՛ռ էս մի մատը թղթի կտորը, պատուի՛ ու շարտի՛, ես չեմ ուզիլ, որ իմ ձեռից քո մի մազը թեքուի. մենք ախպէր-տղէք ենք, տես ու ծանօթ, աղ ու հացկեր ենք. ի՞նչ ես հրամանք ա՛նում, աջի՛դ մեռնեմ, տէր հա՛յր, քո կարգն ինձ զուռդ ու կծիկ ածի, թէ խօսքումս սուտ գտնուի:

—Զէ՛, ախպէ՛ր, շատ շնորհակալ եմ, քո հաս սե փողն ինձ լեղի թող լինի, մօրդ անուշ կաթի նման քեզ հալալ ու մարսական. թէ որ երկնային Թագաւորն իր ողորմութեան դռները բաց կ'անի, իր քաղցր աչքովը մեզ մօտիկ կը տաչ, հողը քցած բերքերս անվնաս տուն կ'ածենք, բաղերն էլ երես կը տան, կարկտից, թրթուռից, ցասումից, ցաւ ու շուռից մասիլներս (Եւսթաս) ազատ կը պրծնի, մենք էլ քո մօտ սեւերես չենք մնալ. թէ չէ, Տէրը մի՛ արասցէ, լեզուիցս թռչի, քամին տանի, մեր ծովացած մեղքերի համար Աստուած զլիններիս խռով կը կենայ, իւր բարկութիւնը մեր վրայ կը թափի, էն էլ իր սուրբ կամքն է, վերջին շապիկս կը ծախեմ, տաշտիս տխումբը (Խճոր, Տաշտ, Խաշ) — երեխէքանցս բերնի պատառը կը խլեմ ու հօգիս չեմ սեւացնիլ ու յետոյ վիզս մի գութանի զնջիլ (շղթա) կը քցեմ, անմեղ խմորակերների կուռը կը բռնեմ, երկրէ երկիր քաշ կը գամ, կը մուրամ, ժողովարարութիւն կ'անեմ և ուրիշի դառը քրօնքին խէթ չեմ մօտիկ տալ: Դրի՛, տէրտէր ջա՛ն, զրի՛, ինչ որ Բղդէ ախպէրն ասում է. Աստուած ողորմած է, թէ որ մեռնիլ չենք՝ կը վճարենք, դու ողջութիւն, առողջութիւն ասա՛, ամեն բան հեշտ է:

—Տէր ինքը կ'ողորմի, որդեա՛կ, մի՛ վախիլ, Աստուածասհայր մարգարէն Դաւիթ իւր օրհնաբանեալ սուրբ բերանովն ասել է, թէ «գուրն զոր փորեաց և պեղեաց, ի նոցն անկցի ի խորխորատ զոր և գործեաց». այսինքն՝ թէ խոր հորի ու փոսի բերնին էլ որ կանգնած լինիս, իմ անուը որ տաս, արագահաս սուրբ Սարգսի զօրութիւնովը կողբիդ կանգնած եմ, կռնիցդ կը բռնեմ, յետ կը քաշեմ, չեմ թողալ, որ գլորուես, գրի մէջն ընկնես, քիթ ու պուռնդդ ջարդես:

—Որ էղպէս է, տէր հայր ջա՛ն, գրի՛, մեռնեմ սուրբ Դրիգորի

զօրութիւնին, ընդուր համար է եկել մեր բաղերի միջին իր համար վանք շինել, որ մեր կուսը կենայ, թէ որ մեր սուրբը արար-աշխարհքի կատաղածներին փարատում, փրկում է, փարբեցուն կը թողա՞յ որ Բղդէի պէս մարդի առաջին ամօթով մնանք, էնպէս չի՞, ախպէր Բղդէ՛:

—Յառա՛յ եմ սուրբ Գրիգորի զօրութիւնին, երեսին խաչ քաշեց Բղդէն:

—Դէ՛հ, զվիթ-ղալամդ (Գրիգոր-Նաթաճաճան) հանի՛, Բղդէ՛, աչքերի հաեացքով ցոյց տուեց տէրաէրը Բղդէին իւր զօտին:

Բղդէն հանեց իւր զօտածալից պղնձեայ երկայնաթիթ ափսկան թանաքամանը, հանեց կոթի գատարկութիւնից սաղի դրիչը և զրեց քարի վերայ՝ տէրաէրի կողքին:

—Դէ՛ թուղթ էլ հանի՛, որդի՛ս, շուտ արա՛, ես «Տուն փարատումի» պէտք է զնամ, Բաբելոն տղայ է ծնել, եկող շաբաթ մի լաւ կնունք ունինք ուտելու. օրհնած Բաբելոն անքուն ցեցերի պէս ոսկիքը հաւաքել է ու մի յիշատակ չ'ունէր, որ իրանից յետոյ շուն ու զիլի բաժին չը դառնար, հիմի փա՛ռք Աստու, արու զաւակ ունեցաւ, իր աշխատածն իր տանը կը մնայ:

—Ա՛յ մեռած Բղդէ ախպէր, ծաղրել սկսեց Մաղաքը, ասում էս զիր ու զալամ չը զիտես, բայց քեանդիրբազի (լաբախողաց) տակի մասխարի պէս հպարտ հպարտ զվիթը գօտիկդ ես խրել, զլուին էլ երեւցնում, տեսնողներն էլ կ'ասեն փիլիսոփայ ես, երկնքիցն ասողեր ես վէր բերում:

—Դէ՛հ, ի՞նչ անեմ, շուտ շուտ պէտք է դալիս, քանի՞ դեղում թանաքաման կը ճարես, Աշտարակը մի կողմը դի՛ր, որ մի քանի հատ կայ, մնացած զեղերը բոլորը կրակ տո՛ւր,— մէկը չես գտնիլ:

—Կ'ուզե՞ս մէկի տեղակ երկուսը դուս բերեմ մեր տանիցը, ո՞ւմ ես վէր քցում, գեանովը տալիս, օրհնած Բղդէ՛, վշտացաւ ամենայն իրաւամբ տէր հայրը:

—Նս մեղա՛յ Աստու, տէրաէր ջա՛ն, քո ոտի հոգն ու մոխիրն եմ. իմ ասելիքս քո համար չէ, քո հասն էս կարբու մհալումը (Գաւառ) ո՞ր գիւղումը կը ճարուի, դու մէկ ես, որ կաս:

—Լա՛ւ, լաւ, պրծի՛, թուղթը հանի՛, հանաք եմ անում, քաղցրացաւ տէր հայրը:

Բղդէն յետ բաց արեց սև իշուկին դէմ ընկած խուրճինը, հանեց կէս թերթ թուղթ, նորա կէսը կարեց, խնամքով ծալեց, պահեց, միւս քառորդը տուեց քահանային:

Լուսթիւնը մի քանի լոպկ տիրեց. լսուում էր միայն գրչի ծանր և անհաստատ ձուձուոցը. հմուտ գրագէտը, առանց տեսնելու, հեռու տեղից կարող էր հաստատապէս վկայել, որ գրողն անփորձի մէկն է և ձեռքերը զոզում են:

Վերջացրեց տէրտէրը մութհակը և մի թեթև հագով կոկորդի լարերը մաքրելով՝ զլուխը բարձր բռնած՝ սկսեց կարդալ. հասաւ մինչև չարաբաստիկ «վեր առի և պարտեմ»-ը, բաց առաջուայ պէս էլ կանգ չ'առաւ թշուառական նախադասութեան վերայ, ընդհակառակն՝ լաւ հասկացնելու համար շեշտեց, «վեր առի և պարտեմ» Գապէի Բղդէից, այսինքն Գասպարի որդի Բաղդասարից երկու «թուման ու կէս փող, տասին երկու շահովն. այս զարնան Մողնուխ» տի ուրբաթ օրուանից վաղէն՝ այսինքն ժամանակն դնայ հասնի «մինչև նաւասարդի պահոց երկու շաբթի օրն, այսինքն վեց ամիս «ժամանակաւ, տասին երկու շահովն վճարեմ անպատճառ. աստուած «ծակոյս կողմանէ զիր չը դիտենալով՝ մատամբս կնքեցի. Կարբու «բուն բնակիչ Սեթօյի Մաղաքիս հոգու պարտքն է»:

—Այսպէս է, որդիք, թէ էլի բան մնաց, յաւելացրեց տէրտէրը:

—Քո զաւամբ (գրչի) անսխալական է, աջիդ մեռնեմ, դու ուրիշ տէրտէրների պէս հօ չե՞ս, որ այբը հազար չանգալով են բռնում, մինչև նրանք զրիչը ձեռի միջին պտիտ կը տան, դու երկու երես կը լցնես, էս զիր հօ չի, էս շարած մարգարիտ է: Էնպէս չի՞, Մաղաք ջա՛ն, սուտ եմ ասում, մատդ տար, աչքս կոխի՛:

—Մեր տէրտէրին տէրտէր չի հասնիլ:

—Տէր լուսաւորեսցէ՛ զուռնաչի Փիլօյի չրաղ (որդեգր) մեծ տէր Սիմոնի հոգին, ես նորա ձեռացածուրն եմ, նորա չրաղն եմ, լսի բաժին եղիցի. մի տուն սաղմոսի համար օրական հինգ անգամ ինձ ֆալախայ էր դնում. էս օր ես դեռ յառաջ նորա համար իմ «շոգ-ւոց» ասում, յետոյ իմ մարմնաւոր ծնողաց համար: Եթէ լուսահոգի տէր Սիմոնը չը լինէր, ես էլ ուրիշ տէրտէրներից մէկը կը լինէի, որ մինչև զրբին մոռիկ չեն տալիս, մի կարճ մաղթանք չեն կարո-

դանում ասել. ես Ատենին ու ձայնաքաղ Շարականը գլխէ գլուխ ասում եմ ինչպէս առատաբուղիս քչքչան աղբիւր:

—Դէ՛, դու ժամի մեծ զիրքն էլ ես եղին-եզին կարդում, ուրիշները քեզ ընչի՞ պէտք է հասնեն, մէկ էլ թէ մեր Բղդէնց բօլը մի թիզ, միրուքն երեք թիզ տէրտէրը կարայ քեզ հետ ոտ ձգել ա՛յ, պարծեցաւ Մաղաքը:

—Խոստովանք ըլի, մի քիչ դժուարս գալիս է ձաշոցի ուշ-ուշ կարդացուող աւետարանները. ասենք զրանց ճարը հէշտ եմ գտնում, մեռել թաղելու ու մկրտութիւնի աւետարաններն անգիր գիտեմ, հէնց որ նեղ տեղն եմ ընկնում, մէկն ու մէկը բերան ասում եմ, հասկացո՞ղն ով է. բայց ամենից ծանր լուծ են, շէքի միս են տէրունական տօների համար զրած երկար ու ձիգ աղօթքները, ևս առաւել Զորհհէքի մեծ պատից երկար «Ասորները». մէկէկները բաց եմ թողում, գլխահան եմ անում, բայց Զորհհէքի աղօթքի կէսն էլ է պէտք է, ոնց լինի, զգես, թէկուզ հազար էլ կուշ ու ձիգ անես:

—Հերու, տէրտէր ջա՛ն, ասաց Բղդէն, ես Գաւառ. (նոր Բայա-ղէր) էի գնացել՝ մեր քեռոնց տես. յետ դառնալուս՝ խաչը ջուրը քը-ցելու օրը բքարգ (բռնագել) ֆնացի Ախտա գեղո՛մը. մի վարդապե-տի վանքիցը սլաոժել էին, Սեան էին զրկում, աւելի անունը, կար-ծեմ, Նամօ պէտք է լինէր: Նա էլ վանքի թուանքէս հետ ինձ պէս բքարգ էր ֆնացել Ախտումը: Եղ երկար աղօթքը տէրտէրները հա-մեցէք արին վարդապետին կարդալու:

—Յեռո՞յ:

—Գզեց ու զզեց, հազաց ու հաղաց, տնքաց ու տնքաց, աչ-քերը տրորեց, քիթը ճմռեց, բան յառաջ չ'ընկաւ, խօսքերը բե-րանիցը դուրս չ'են գալիս: Վերջը որ չարէն կորեց, յետ դառաւ ժո-ղովրդին ասաց. օրհնեալ ժողովուրդ, չ'ասէք, թէ վարդապետը կար-դալ չ'ը դիտի, աչքերս ձիւնով են ընկել, զրբն աչքիս տակիցը փակնում են, ուրեմն կարճ կորենք. այսօր մեր Տէրը Յորդանան գե-տումն էս խաչի պէս կզուել էր, տաղ էր արել, Յովհաննէս Մկրտի-չըն էլ բռնով ջուրը գլխին էր ածում, լողացնում էր. օրհնեալ էք և օրհնեալ լինիք. ա՛մէն:

—Դէ՛, Նամօ վարդապետը խաչագող է. չե՞ս իմանում, որ խա-չագողին ջաղացի բուգն (խէրդ) էլ քցես, դուրս կը պրծնի. մարգը

մի տեսակ զլուխը խաչտառակուելուց ազատել է, ակտեցիք էլ էշ մարդիկ էին՝ կը հաւատային:

—Լա՛ւ, տէրտէր ջա՛ն, յետոյ մեղք չի՞, որ կիսատ էք թողում, հարցրեց Մաղաքը:

—Ե՛յ, ա՛յ որդի, մեղքի թողութիւն տուողը տէրտէր—վարդապետները չե՛ն, մեղքը ձեր աշխարհականների համար է դրած. մենք՝ հոգևորականներս էնքան աղօթք ու մաղթանք ենք կարդում, որ Աստուած կը ների ու կը ների:

—Ես մեղաց Աստծո՛ւ:

—Էդ մեր բանն է, Մաղաք ջա՛ն, դու ճկոյթդ մօտ բե՛ր, հուպ տո՛ւր էս թղթի տակին:

Տէր հայրը գրիչը թանաքով լցրեց և մուրհակի վերջումը՝ ճիշդ ստորագրութեանը կից՝ կաթեցրեց մի կաթիլ թանաք:

—Ա՛յ, էս թանաքի վերայ ճկոյթդ հուպ տո՛ւր և ինձ հետ կրկնի՛ր՝ «դիր չը գիտենալով՝ մատամբս կնքեցի. Կարբի գիւղի բուն բնակիչ Սէթոյի Մաղաքիս հոգու պարտքն է»:

Մաղաքը բառացի կրկնեց և աւելացրեց.

—Հոգու պարտք չի, բաս ի՞նչ դարտ ու բախաց է, աշխարհքս առուտուր է, առ ու կուլ հօ չի՞:

Նա երկիւղածութեամբ առաւ մուրհակը տէրտէրի ձեռքից և մեկնեց դէպի կոլոտ Բղդէն:

—Էս էլ քո հին թուղթը, ասաց Բղդէն և յետ տուեց հին մուրհակը:

—Ձհինն ի նորս փոխելով, դստուերն ի լոյս ճշմարտելով. հէնց դորա համար է ասել «Այսօր անճառը», հաստատեց տէրտէրը:

—Քո ժամացն իմ արեւից էրուած ու խանձուած շինքին, աջի՛դ մեռնեմ. աշնանը Եջմիածնի պողին հաւաքելուս, թէ ցորեն կը հաւաքէք, երկու կոտ աւել կը լցնեմ քեզ բաժին, բացց եթէ դինի կը ժողովէք, մի մեծ ուսարդող գինի աւելի շուռ կը տամ ակի մէջ, որ անուշ անես, ինձ համար աղօթք անես, Բղդէի պարտքիցը շուտ պրծնեմ:

—Յրհնեա՛լ լինիս, Մաղա՛ք, կը ղրկես, բաս ի՞նչ կ'անես. դու միշտ տուել ես, էլի կը տաս, դու որ կաս, մեր տան մերուն հաւերից մինն ես, քո ձուն միշտ կերել ենք, էլի կ'ուտենք. թուականը

էս մեր Բղդէն է, որ քչիցը տարին հինգ մուրհակ զրել է ապլիս էն օրից, որ խուրջինն իւր ուրից վերցրեց, իւր անբաժան ընկեր, մոխրաթաւալ, հնազանդ, բօշի տղայ, սև իշի շալակը քցեց. ամեն գրելուս մի-մի բան խոստանում է ու անցուկ-մոռացուկ անում, ահանջի քամակը քցում: Սրան ներելի է, կարբեցի է, սատանախաբ կարբեցի է:

— Մասխի զլխի արեւն ես հրամանք անում էլի՛, տէր հա՛յր, շեշտեց կատակ անելով Մաղաքը:

— Միայն այդ չի, որդի՛, էլի կայ. չը գիտե՞ս:

— Ո՛չ, տէրտէ՛ր, ես էդ մէկն եմ լսել, հրամանք արա՛ տեսնենք:

— Եթէ ամեն բան գիտենայիք, դուք էլ ինձ պէս բարունի կը լինէիք, ինքնաբաւական պատասխանեց քահանան և պտտմեց հետեւեալը:

— Երբ որ չարն սատանէն, անիծուի՛ ինքը, կործանուի՛, անշարժ քարի տակն եղիցի՛, իմացաւ, որ կարբեցին արեւն իրանից շուտ տեսաւ, ինքը սևերես, ամօթով մնաց, միտք արեց մի հնարքով երեսի կեղտը սրբել, խօսքի տակ չը մնալ:

— Եթէ դու այդքան գիտուն ես, ասաց նա կարբեցուն, կը նշանակի մի պտտիկ սատանայ էլ դու ես. արի՛ եղբայր դառնանք, աշխատանքի կաշենք, առուտուր անենք, թէ կ'ուզես՝ վար ու ցանք անենք, դատումը (օգոստոս) հաւասար բաժին անենք:

— Շատ լաւ, ասաց կարբեցին. ու մէջները համաձայնութիւն կապացաւ:

— Ի՞նչ դործ բոնենք, որ օգոստոս շատ լինի, մտածեցին նրանք ու վերցրին, զազար ցանեցին:

Տարին անձրևային էր, զազարի թուփը մի զազ բարձրացաւ:

Սատանէն, զորթ է, սատանայ է, ճարպիկ ու զալում է, բայց մարդիկ մոլորեցնելուց ու մեղքի մէջ գլորելուց աւելի ուրիշ շնորհքներն Աստուած նրանից կտրել է. նա իւր կեանքումը հողագործութիւն չէր արել: Բայց ի՛նչ կ'անես, որ աչքածակ է. միտք արեց, թէ ի՛նչ հնարքներ դործ դնի, որ կարբեցուն խաբի, օգոստից զրկի:

— Արի՛, ասաց, կարբեցի եղբայր, էլ դու նեղութիւն մի՛ քաշիլ զազարը հնձելու, ես ինքս կը հնձեմ, երեսն ինձ՝ արմատը քեզ. ես ինքս կերած չեմ, բայց լսել եմ, որ զազարի արմատը թփերիցը համեղ է:

Կարբեցին մահի տուեց սատանի աչքերին, իւր սուր խելքովը նրան ոտից զլուխ չափեց, տեսաւ, որ էլ անպողի հէնց անուներն է սատանայ, ինքը կատարեալ անասունների անասունն է, երևում է, որ գաղարի հոտն էլ չի առել, ծիրանի ու դեղին զոյնն էլ չի տեսել:

—Շատ լաւ, ասաց նա սատանին, թո՛ղ քո ասածը լինի, քեզ փէշքեա՛շ, դնա՛ երեսը հնձի, վեր կա՛լ, տակը թող ինձ մնաց:

Ուրախ ուրախ հնձեց սատանէն գաղարի տերեւները, գեղացու պատկերի մէջ մտաւ, մի մեծ սէլ լցրեց ու տարաւ Նրեան ծախելու:

—Գաղա՛րեմ ծախում, գաղա՛ր եմ ծախում. քանի ոցժ ունեք, սխեց գոռալ ու մուշտարիք տաքացնել սատանէն:

—Յիմա՛ր դեղացի, լսողը պատասխանեց, էշն ինքդ ես, որ ուզում ես մեզ իշացնել. ո՛վ չը գիտի, որ գաղարի թփերն էշն էլ չի ուտում:

Ղորթ որ շփոթուած ու մոլորուած կանգնել էր սատանէն շաշի նման, բերանը բաց:

Մէկ էլ ի՛նչ տեսնի, իւր հարակաշ (քնիւթ) կարբեցին գաղարի բեռն իշին բարձած՝ բերեց մէջքանումը վէր դրեց: Բաղմութիւնը գլխին հաւաքուեց, ձեռաց մարդի ապրանքը ծախուեց, փող դառաւ:

Անողը յետ էր դառնում, սատանին անպատուում, թէ՛ անխելքի որդի անխելք, աչքերդ չորս բաց արա՛, գաղարի թփերն իշի նման դու կե՛ր ու արմատը բեր մեզ ծախի՛ր. էս մարդիցն օրինակ վե՛ր կալ, սա էլ քեզ նման մի գեղացի է:

Չարն սատանէն սրտի հերսիցը (Բարիւն-Բիւն) սևացաւ, կուպր դառաւ, ինչպէս իւր պիղծ հոգին սև է, ամօթիցը տեղն ու տեղը անդունդը հալածակուեց. բայց ատամները կրճուացրեց կարբեցու վերայ, թէ՛ ես սատանայ չըլնեմ, եթէ վրէժը չը հանեմ:

—Առա՛ւ վրէժը, տէրտէ՛ր, հարցրեց Մաղաքը:

—Չողը գլխին, ցեխն արեին առաւ. միւս զարունք էլ եկաւ, կարբեցուն առաջարկեց ընկերանալ: Նա էլ համաձայնեց:

Եղ տարին հացի թանգութիւն էր, վճռեցին ցորեն ցանել:

—Ձէ, ախպէ՛ր, ասաց նրան աշունքը սատանէն, հերու դազարումն ես քնաս քաշեցի, խաբուեցի, երեսը ես վերցրի, տակը քեզ տուի, էս տարի մեռել ես, կտրուել ես, արմատը ես պէտք է վերցնեմ:

երեսը քեզ տամ, հնձի', առ զնա', կ'ուզես ինքդ կե'ր, կ'ուզես տա-
ւարիդ ուտացրո՛ւ։

— Համ ինքս կ'ուտեմ, համ տաւարիս կ'ուտեցնեմ, պատասխան
տուեց կարբեցին և մարանդուն (Ջծ Դանգաշ) զրեց, ցորնի արտը հողի
բերնիցը հնձեց, վերկալաւ, անպէտք արմատը սատանին բաժին թողեց։

— Էս բաների համար է, որ կարբեցոնց «սատանախաբ» են
ասում, շարունակեց տերտէրը և դարձաւ զէպի Բզդէն։

— Ղէ Բզդէ', որդի', օրհնեա՛լ լինիս, յետ բաց արա՛ խուրջնիդ
բերանը, տեսնենք՝ քո հալալ սրտիցդ ի՞նչ է բզխում տէրտէրիդ
համար, ի՞նչ ևս շնորհում։

— Երեւան զնալուս քեզ համար մի քթի աղլուխ կը բերեմ,
պարտքս լինի։

— Ձէ', որդի'։ ասած է՝ էգուցուան բանին ձիւն է եկել, էս օր-
ուայ սե. փողն էգուցուայ սհաբզուանից (30 կ.) լաւ է. հանի' ինչ որ տա-
լու ես, հիմի՛ տուր։

— Ղէ հիմի գիտես, որ մօրս շինած, անուշ հոտով բուռնութե-
ցըն աւելի քեզ վայել բան չ'ունեմ։

— Ծանիցը մազ պոկելը խէր է, ծիծաղելով ասաց տերտէրը և
հանեց իւր քթախոտի պարկը լցնել տուեց։

— Երեխեքանց համար էլ մի քիչ ծամելու մաստաք տո՛ւր, յա-
ւելացրեց տէրտէրը։

Եստ շողոքորթ հաճոյախօսութիւններ գործ զրեց ընչաքաղց
կօլօս Բզդէն, որպէս զի մի հնարքով քահանայի աննշան պահան-
ջից ազատուի. բայց, տէրտէրի խրատական խօսքերի բոպէական սր-
պաւորութեան տակ՝ տոխպուեց մի կտոր ծամոն պարզ և ուղարկեց
նորա սիրելի զաւակներին։



ԿԱՐԲՈՒ ԿԱԼԱՏԵՂԸ

Քասախ գետի ձախտիղովեան ափին, Կարբուն հանդիպակաց մի
ընդարձակ զաշտավայր շատ անցիշելի տարիներից անջուր ընկած էր։

Մշակելու, վարուցանքս անելու համար չէր պէտք զալիս ա-
մուլի հովիտը. չու զնացող Զոբանքեարաների և Քրդերի անասուն-

ների փորն էր կշտացնում, Աշտարակի նախիրն էր ծնկնահար խինալի խոտը ուտում և փխփխալով կաթը տալիս:

Արայի մեծանիստ լեռան շրջապատի արևմտա-հիւսիսային ստորոտն է մեր ասած տեղը:

Արայի հնադարեան, պատմական, վեհապանձ սարը՝ ընդհատուած իւր շրջակայ Մաղիոցաձորի և Փամբակու լեռնագոտիներից և հսկայական Արագածի բարձրաւանդակութիւնից՝ զուողաբար բազմել է այն լայնատարած տափարակի վերայ:

Արեւելից՝ Արայի լեռան քղանցը համբուրելով՝ սահում է դէպի երևան կարկաձայն Հրազդան—Ջանգուն. արեւմտից՝ սարի ստինքից դուրս բղխած աղբիւրների ծորակներն իւր մէջն առած՝ յորհանում է համեղաճաշակ և առողջարար Քասախը:

Այս երկու անոսանի գետակների շնորհիւ արգասանդութեան հռչակ է ստացել Արարատեան բարեբեր դաշտը: Ժողովրդի բերանում աւանդաբար այսօր էլ ասուում է. Ջանգուն օրական մի լիտր ոսկի է տալիս, Քասախը՝ մի լիտր արծաթ:

Յիշեալ տափարակի վերայ, դարաւոր ժամանակից կողք կողքի տուած, ապրում են բաւականին աւերակներ:

Մէնքից-շնորհից՝ արտաքուստ զիւղատեղի նմանութիւն ունին աւերակները. հաւանական է, որ հնումն այնտեղ բանել է մի աշխատասէր ժողովրդի գութանի սուր խոփը, խմելու համար օգտուելով Քասախի ջրից. բայց ի՞նչ կ'անես, որ առաջ էլ լսուել է, այսօր էլ լսուում է, որ աւերակները Վարբու կալատեղերն են եղել. դրանով հաստատուում է, որ մեր հին նախնիքը մեր նոր պապերից շատ խելացի են եղել. հները հասկացել են, թէ ուր զազաչափ խոտը ամիսներով թարմ կը մնայ, այնտեղ ցորենն ու զարին առանց ջրի կը բուսնին ու կ'ածին, իսկ նորերը կամ մեծ կարիք չեն զգացել, կամաւ խոսքն են թողել, կամ թէ՛ Արայի սարի անհամար այրերում բնակալած աւաղակների խմբերի երկիւղից՝ քչով բաւականացել են և այն արիւնի հոտ եկած տեղերից հեռու են փախել:

Քան, երեսուն տարի է, սակայն, որ մենք հին պապերին նըմանեցինք, այդ առատաբեր, մեծատարած դաշտը մէկս մէկու ձեռքից խլեցինք, մօտադայ զիւղերի վերայ բաժին-բաժին արինք, պատ-

ուսական զոված ցորենի տէր դասանք, Զօբանքեարի անխիղճ աւերածութիւնից արօտներն ազատեցինք և մեր նախորի համար ընդարձակ արօտատեղեր պահեցինք:

Ամենայն իրաւունքով, ուրեմն, ներկայ կարբեցին էլ իւր բաժինը կը ստանար: Կարբու կալատեղերը իրանց շրջակայ հողերով ներանցն էր և նրանց մնաց:

Այնտեղ է կալում ալժմ կարբեցին Արաչի դաշտից հնձած ցորենը, աւերակներն մէջ է տեղաւորում առժամանակ իւր դարմանը:

Տաճանելի աշխատութիւն է քաշում կարբեցին, մինչ տեղափոխում է իւր բերքը կալատեղերից. անհուն ձորը, որի միջով անցնում է մեծարդիւն Քասախը, իւր անմատչելի քարափներով կտրել է գետի երկու ափերի հաղորդակցութիւնը, բաց բնութիւնը սիրել է իւր բարիքներից օգտուող մարդին. նա տեղ-տեղ բաժանել է իրարից ժայռերի միաւորութեան շարունակութիւնները ու հնարաւորութիւն է տուել մօտակայ ժողովրդին անց ու դարձ անել գետի այս ափից միւսը:

Ահա՛ այսպիսի մի ձորախորշի մէջ եղած նեղ շաւիղ կապում է Կարբին իւր զիմացը գտնուող կալատեղի աւերակների հետ:

Ուղիղ դէպի կալատեղն էր բարձրանում ձորից հեւալով՝ խուրջինն ուսը ձգած՝ մի կարճահասակ երիտասարդ:

Փարնան մի ցուրտ առաւօտ էր այդ օրը:

Խոտն ու ծաղիկները թէպէտ սփռուել էին ձոր ու դաշտերում, բաց խտտաշունչ քամին քարից քար, խորշից քունչ զխլելով՝ կորցրել էր միանգամայն բնութեան սքանչելահրաշ պարզւոյնների գեղեցկութիւնը և անուշ բուրմունքը. անկարգ, անկանոն մէկ աջ էր ճրկում բարակ ցողունները, մէկ ձախ, մէկ վեր, մէկ վայր. քիչ էր մնում՝ քարերն էլ տեղահան անի, ո՛ւր կը մնային բոցս ու բուսականութիւն:

Զը նայած այս դաժան եղանակին և դժուարադնաց նեղ շաւղին, երիտասարդը կռուում էր փոթորկալից հողմի դէմ և ձորախորշով վեր էր մաղլցում, բռնելով քարերի փոսերը, որ վայր չը զլորուի, քիթ ու մուկ ջարդ ու փչուր չ'անի: Նա շտապում էր: Մի գերեմաստի մահակ բաւականին թեթեւցում էր նորա ծնկների յոգնածութիւնը:

Երիտասարդը մի գիւղացի էր. նորա հագուստից տւելի չքաւորի, քան թէ կարողութեան տիրոջ հոտ էր զալիս: Դոյնն ու ձեւը կորցրած մի հնմաշ արխալուղ, տակիցն երեւցրած կապոյտ օձիքով՝ կտաւի շապկի հետ միասին՝ խեղճ հողագործի տեսք էին ընծայում մարդին. նոյնը չէին հաստատում, սակայն, երիտասարդի գորշ հնացած եամանի կոշուած կօշիկներն և ուղտի բրդից կարած կոպիտ շալ չուէին. վերջինս չէր համապատասխանում իւր ձեռնն ու տարազովը տեղական արխալղին. այդպիսի չուխաներ սովորաբար հագնում են Պարսկաստանից իշակարաւանով ապրանք կրող պարսիկները:

Պարզ երևում էր, որ անծանօթն իւր հայրենի հագուստի մէջ չէ ու երկրագործ էլ չէ: Բայց թէ ի՞նչ է, ո՞վ է — ոչինչ չենք կարող վճռաբար ասել. առաւել լաւ է, մենք հետեւենք նրան:

Քրտինքը ծլծլալով ցած էր իջնում այս մարդի երեսովը և երբ ժամանակ ժամանակ վերցնում էր հնոտի արխալղի քղանցքը ճակատի կաթիլները սրբելու, գոլորշին դալարութեով յափշտակւում էր սառը քամուց և անխաղաղ մթնոլորտի մէջ անհասանում:

— Էս անտէրի՞ քամին էլ ո՞րտեղից սար ու ձոր դուրսն առաւ. տանից դուրս գալուս շատ հանդարտ էր. չը լի՛նի թէ խոխա քարին առնի, մոլորումս դրածին չը կարողանամ հասնել. էն ժամանակն իմ՝ դուրսս էլ ընչի՞ է պէտք, լաւն էն չի՞ մեռնեմ ու վերջանամ:

Այս տրտունջն անում էր մարդը, երբ ոտքը քարին առաւ, զայլ թեց, վայր ընկաւ ու ճակատը դիպաւ քարափին ու քերցուեց:

— Օ՛հ, արի՛ւն, բացականչեց նա՝ ձեռքը դաւած տեղը քսելով:

— Վնա՛ս չ՛ուների, տղամարդի կէսը կտրեն՝ ա՛խ չը պէտք է անի. մինչև մարդ դժուարութիւններ չը քաշի, հեշտ ու հանդիստ չի կարող ապրել: Էս օր չի, որ ես քաշում եմ, պէտք է սորա ճարը գտնել. հէնց դիտէ արածը շատ մեծ բան է. օրը մէկ է, գլխիս կարդացած զայլի աւետարանները՝ հազար ու մէկ. — շատ նեղութիւն մի՛ տալ, մուշտարու հետ սիրով կառավարուի՛ր, շատ շահ մի՛ վերցնիլ, առուաւորիդ մէջ հարամ մի՛ մոցնիլ, քչով բաւականացի՛ր, որ Աստուած քեզ շատ տալ: Զէ՛, չէ՛, մինչև հիմի լուեցի, էլ չեմ կարող համբերել, մի օր էլ զիժ կովի պէս կը պողա հարեմ, արած լա-

ւութիւնը ոտնատակ կը տամ, կը տրորեմ: Երեկ էլ վրէս հարփ ու զօրփ էր անում (սպառնալ). — պարտքատէրերիդ նեղացնում ես, ասում է, եթէ միւս անգամ լսել եմ, ապրանք չեմ բաց թողալ: Քիչ մնաց, որ ասէի՝ դո՛ւ էլ, քո ապրանքն է՛լ. բայց էլի բերանիս հուպ տուի, միտք արի, որ եթէ ջհուտ Աղաջանն ինձ ապառիկ ապրանք չը տայ, էնքան կարողութիւն չ'ունիմ, որ երեւանից զուտ փողով առնեմ:

Երիտասարդը կրկին վայր ընկաւ:

— Մեռնեմ էլ՝ պէտք է բարձրանամ, էս է քիչ է մնացել ձորը գուրս գալուն: Տուտու նանէն ասում էր, որ ինքը նետ դնելով չի կարող հասկանալ մարդի գլխի գալացուկը, բայց զարաչի Ծաթմին շատ էր գովում. նա, ասում էր, գետնի տակի գանձ ու հարստութիւնների չափն էլ գիտի՝ բացի տեղը, իւր համար իրաւունք չ'ունի վերցնելու, բայց ում ձեռքն ընկնելու է՝ պարզ, աշկարաց կասի: Գնամ մի տեսնեմ, էդ փող ու կայանքից ինձ էլ բաժին կա՞յ, թէ մինչև մահս չարչի պէտք է մնամ, մեծ ու պտիկի՝ ծաղր ու ծանակ պէտք է լինեմ՝ Կօլօտ Բղդէ, ծառի որդ, բօշի տղի ակապեր ու հաղար ու մի թքանք ու մրանք անուններ պէտք է լսեմ, ջհուտ Աղաջանի աչքին պէտք է մտիկ տամ, նորա փթանոց թուք ու մուրը պէտք է մարսեմ:

— Ախար արի՛ ու համբերի, մարդ ես՝ դիմացի՛ր. Փարբու տէրտէրն էլ երկու տող մուրհակ խզմզելու համար ինձ ծաղր է անում, խուրջինն, ասում է, քո ուսից վեր առար՝ քո մոխրաթաւալ ընկերի շալակը տուիր:

— Կա՛ց, տէրտէր ջա՛ն, շատ չի քաշիլ, քո բարի աչքովդ կը տեսնես, որ մոխրաթաւալ բօշի տղէն Արաքստանի հրեղէն ձիու է փոխուել, էս օրուայ կոպիտ չարչի Բղդէն խօջայ Բաղդասար է դառել:

— Դէ՛հ, սուտ էլ չէր ասում տէրտէրը, շատ էլ յառաջ չեմ գնացել, մի քանի շահի ունիմ գեղերումը սորա նորա վերայ, էն էլ անունը կայ՝ ամանումը չկայ. ինձ տուր՝ քեզ տամ, ով գիտէ, ձեռքս պէտք է զա՞յ՝ թէ չէ: Էս մի բանը լաւ է, որ աշխարհքը դեռ կոյր է, մարդիկն իրանց օգուտն ու վնասը չեն ջոկում, շատ մասը տխմար փարբեցի Սէթօյի Մաղաքի օրումն են, փող չեն տեսել, որ պատիւն իմանան, երկու կոպէկ հաշուելու զուլս չ'ունին, ասածդ հալած

եղի տեղ ընդունում են, ուղածդ գրում ես, ծոցդ դնում: Երեկ մէկէլ օրն էր, որ Մաղաքի վերայ հինգ մանէթի տեղ երկու թուման ու կէս դրել տուի. մի քիչ հոգուցս որ ձեռք քաշէի, երեք թուման էլ կը գրէի: Բայց էս պատիկ կոպէկներով ինչ զլուխ կը քցենք, դրանցով մարդի մարմնից փուշ չի հանուիլ, պէտք է հարստանալ, պէտք է ջհուռ Աղաջանին հողի հետ հաւասարացնել, պէտք է մատով ցոյց տալու դառնալ. ինչ դար ու փոս էլ առաջ գալու լինի, պէտք է լոք տալ անցկենալ:

— Ինչո՞ւ չառ մի՛ փրթփրթալ, Բղդէ՛, զլուխը շաժեց մեր կօլոտը, դեռ տեսնենք՝ անատամ դարաչու պառաւ Ֆաթմէն իւր ծնօտներն ի՛նչ տեսակ է շարժում:

— Մ'հ, օրհնեա՛լ է Աստուած, ձորը դուրս եկանք, ազատ շունչ քաշեց նա տափարակի բերանին:

Բղդէի ուրախութիւնը կարճատեւ եղաւ. տւերակաների միջից, ինչպէս զետնի տակից, յարձակուեցին նորա վերայ 10, 15 որսկան. բարակներ, որսի մեծ ու մանր շներ ու լակոտներ և հաւոցի արձագանդը մինչև ձորի անդունդը թնկացրին:

— Մ'չո՞ւ, օշ՛ա, ա՛յ շուն, ա՛յ թուլաց, կուտո՛ւ, կուտո՛ւ, կուտո՛ւ, մի քանի սպառնական և համոզիկ բացականչութիւններ արեց Բղդէն, բայց աներես շները ոչնչով չը նմանեցին Բղդէի քաջածանօթ գիւղական զալլ խեղդող գամփոններին, նրանք շարունակում են հաչալը:

Մի երկու աւելի կատաղիները, առ ոչինչ համարելով մինչև անգամ Բղդէի յաջող մահախաշարժութիւնը, անցկացան գաւազանի հարուածից, մինը վարտիկը պատառեց, միւսն արխալղի քղանցը դուրս պոկեց և բերանն առած թափէ թափ էր տալիս:

Մինչև որ զարաչիքը դանդաղաքալ վրաններից դուրս կը գալին օգնութիւն հասնելու, Բղդէն չիշեց իւր մօրից լսած շների մի առանձնայատկութիւնը:

Ձարչի դառնալու առաջին օրուան մօր խրատներից մէկն էլ այն էր, որ երբեք շների վերայ փայտ չը պէտք է բարձրացնել նրանց յարձակում դորձած ժամանակը, ընդհակառակն՝ պէտք է փայտը վախճողը՝ նոյնն արեց այսօր Բղդէն և չը սխալուեց:

Շատ չը տևեց Բղդէի բանտարդելութիւնը. զարաչիքը հասան, շներին հալածեցին և այս ջօժարակամ կալանաւորին ազատեցին:

(Եւ շարունակւի)

ԱՅՑ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրխտի յիշողութիւններէց)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

IV.

ՎԵՐԱԳՆԱԲԱՐՁ

(Շարունակութիւն 1)

Հին Պոնտոսը, այժմեան Տրապիզոնի վիլայէթը, նեղ շերտով ձգւած է Սև ծովի հարաւային եզերքին, ունենալով արևելքից ուսաց սահմանը (Բաթումի շրջան), արևմուտքից անցնելով Սամսուն և Բաֆրա քաղաքներից անդր, հարաւից կցւելով Երզրումի և Սիվասի (Սեբաստիա) վիլայէթներին։ Չորս սանջակներ՝ Բիզէի, Տրապիզոնի, Գիւմիւշհանէի և Սամսունի (Ջանիկ)՝ կազմում են Տրապիզոնի վիլայէթը։ Այդ սանջակներից միայն Գիւմիւշհանէինը, ուր մենք այժմ դռնւում ենք, կարւած է ծովից։

Առհասարակ Տրապիզոնի վիլայէթում հայերի թիւը, համեմատած յոյների և մուսուլմանների թւի հետ, աննշան է, եղածն էլ խմբւած է քաղաքներում ու նրանցից ոչ այնքան հեռու մի քանի գիւղերում։ Ես ասացի մուսուլմանների և ոչ տաճիկների. որովհետև այդ մուսուլմանների մեծ մասը մահմեդականացած հայեր, յոյներ և վրացիներին ցեղակից լազեր ու աջարցիներն են։ Նոյն իսկ բուն տաճիկ համարւածներն էլ իրանց երաւների մէջ

1) Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. 4, 5, 7, 9, 11 և 12 համարները։

աւելի վերոյիշեալ ազգերի արիւնն են կրում, քան այն թաթարական ցեղերի, որոնք Միջին-Ասիայի խորքերից թափւելով Հայաստան ու աւեր—կոտորածով հասնելով մինչև Նւրուստի՝ ամեն տեղ ահ ու սաբասափ էին տարածում թէ իրանց դժոխային բարբարոսութիւններով և թէ դէմքերի ալյանդակ գծազրութեամբ, Հարեմները լըքցւում էին հաց, յոյն և լազ աղջիկներով. վայրագ մոլեռանդութեամբ բռնի տարածւում էր իսլամը «գեաւորներին» մէջ:

Մի քանի կողմերում, ուր հայերը իսպառ մահմեդականացել են, օրինակ՝ Ռիզ սանջակի (Ազատանի) Համամաշէն նահիյէում, դեռ մնում են մի քանի տասնեակ հայ-քրիստոնեաներ: Այդ կողմի մահմեդականացածների կանայք, ինչպէս ինձ պատմեց ձիապան Յովհաննէսը, դեռ պահպանել են մի քանի քրիստոնէական սովորութիւններ, օրինակ՝ խմորի վերայ խաչակնքելը: Այդ մահմեդականացածներից շատերի տներում պահպանւում են, իբրեւ իրանց պապերից ստացած սքբութիւններ, հին հայոց դրքեր ու ձեռագիրներ:

Վիլայէթումս հայերը առաւելապէս տարածւած են Տրապիզոնի և Սամսունի սանջակներում (մօտ 18 հազար հոգի), իսկ Ռիզէի ու Պիւմիւշհանէի սանջակներում նրանց թիւը հազիւ հասնի երկու հազարի: Պէտք է այտուղ նկատեմ, որ Ազատան կոչւում է այն ծովեզրեայ երկիրը, որ Տրապիզոնից սկսած դէպի արեւելք՝ մինչև ուսաց սահմանն է հասնում, այլ խօսքերով՝ Տրապիզոնի սանջակի մի մասը և ամբողջապէս Ռիզէինը, որին այժմ միմիայն յատկացնւում է «Ազդիստանի սանջակ» անունը:

Քեռօօղլու ձորից դուրս դալով, մենք ընթանում էինք բլրակաձև սարերով շրջապատած լայն հովիտով: Ճանապարհի կողքին պատահող դուքաններում յոյները ծախում էին հաց, խնձոր, ձու, իւղ, պանիր և այլն: Սեր հանդէպ դալիս էր վանեցի վաճառականների մի քարւան: Վանեցիները, բազմած բեռների վերայ և ոտները կոխած շաւլների մէջ, որպէս զի տաք լինի, այնպէս էին փաթաթւած, որ ոչ մի շարժում չէին կարողանում անել առանց իրանց ձիապան լազերի օգնութեան. երևակայում եմ այդ վաճառականների դրութիւնը, եթէ աւազակներ յարձակւեն վրաները: Դոքա բոլորն էլ՝ թիւրքաց կառավարութիւնից մի քանի անգամ բանտարկւած, քննւած մարդիկ

էին: Նոքա ուրախ էին, տեսնելով իմ ուղեկից վանեցուն. հարց
ու փորձերով տեղեկանում էին իրար ծանօթների, ազգականների
մասին:

Մենք արդէն մտել էինք 10—15 անից բաղկացած մի զիւղ,
յոյն ու տաճիկ բնակիչներով, որոնցից մեծ մասը մանրավաճառներ
էին: Փայտեայ աների տանիքները ծածկւած էին փոքրիկ բարակ
տախտակի կտորներով: Մենք իջանք խաներից մինում քիչ հանգս-
տանալու և տաքանալու: Նախաճաշեցինք յոյն մանրավաճառից ա-
ռած մեղրով ու ձւաներով ու կրկին պատրաստուում էինք շարու-
նակել մեր ճանապարհը: Մեր կաթրչիները շինում էին բեռները,
եբբ մօտեցաւ նրանց մի երկարահասակ տաճիկ՝ զափթիների տաս-
նապետի կեղտոտ, պատառոտած հագուստով: Նա գոռոզութեամբ
հրամայեց քակել բեռները, որովհետեւ ուզում էր քննել մեզ՝ թըղ-
թեր և արգելւած զրքեր գտնելու համար: Նա իմ ձիապանիս ար-
գելեցի այդ անել ու մեկնեցի էֆէնդուն անցաթղթերս: Վանեցին
աղաչում էր, որ ես էլ թոյլ տամ բանալու բեռս. և ինքը զիմելով
զափթիին ասում էր. «Ազա՛, զուրբա՛ն, համեցէ՛ք, սրբան քէֆդ
է՛ քրքրի՛ր. ոչինչ չը կայ»:

—Նա չեմ արձակիլ ձեզ մինչև չը տեսնեմ երկուսիդ բեռներն
էլ, ասաց էֆէնդին ու կրկին հրամայեց Սիմօնին քակել բեռները:

Թէև վանեցին պատրաստ էր ամեն ինչ կատարել, բայց էֆէն-
դին հիմա նորա վերայ ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում: Նա
հրամայեց ձիապանիս բանալ բեռս, բայց ես արդելեցի:

—Ինձ, իբրև ռուսահպատակի, դուք քննելու ու խուզարկելու իրա-
ւունք չ'ունիք առանց հիւպատոսարանի որ և է ներկայացուցչի,
նկատեցի էֆէնդուն: Ինձ կարող էին խուզարկել սահմանադիւրսն և
Վարինից դուրս գալիս, որ և կատարել են. այժմ ամեն մի ցանկա-
ցողին ճանապարհի վերայ ես թոյլ չեմ տալ խուզարկելու ինձ:

—Չը շարժւէ՛ք տեղերիցդ, զիմեց բարկացած տասնապետը ձիա-
պաններին և հեռացաւ ու մի քանի բոպէից յետոյ վերադարձաւ,
ասելով.

—Գնա՛նք վեր, միւղիւր էֆէնդու մօտ:

Այդ զիւղը նահիլէի վարչական (Կի-Կիմալ) կենդրոնն էր. այդ-
տեղ նստում էր միւղիւրը:

Ես հետեւեցի նրան. ինձ հետ եկաւ և երկիւղից շարած վանեցին, որ աշխատում էր ինձ համոզել զիջանել. բայց ես գիտէի իմ իրաւունքներս և վճռել էի ամեն բան տանել օրինական կերպով, տեսնելու համար թէ ճաճկատանում ո՛րքան այդ հնարին է: Կարող էի և կաշառով վերջացնել ամեն բան:

Կիսախարխուլ փայտեայ սանդուղքներով բարձրացանք խրճի երկրորդ յարկը և մտանք մի փոքրիկ, ցած սենեակ անշափ կեղտոտ տախտակամածով, զուրկ որ և է կահ կարասիքից: Օղացի միջ տեղում սօբան էր: Մը պատում երևում էին 3 փոքրիկ պատուհաններ՝ մեծ մասամբ թղթածածք: Սենեակի մի անկիւնում թախտ էր, որի առջև դրած էր մի սեղան վրան թղթեր և մի զիրք: Թախտի վերայ ծալապատիկ նստած էին երկու երիտասարդ տաճիկ պաշտօնականներ—ինքը միւղիլը և նորա օգնական-զրազիրը: Այդ էֆէնդիները, երեւի, կամենալով տպաւորութիւն անել և սարսափեցնել ինձ, իրանց դէմքերին տւել էին զուռոզ, պաշտօնական արտայայտութիւն, որ, սակայն, աւելի ծիծաղ էր յարուցանում, քան երկիւղ ու յարգանք: Օղան թափուցին մի քանի յոյն ու տաճիկ զիւղացիներ ու մանրավաճառներ:

Միւղիլը, 25 տարեկան մի երիտասարդ, մի քանի անգամ ասեցից ցզլուխ չափեց ինձ իւր հպարտ զննողական հայեացքով և ասաց.

—Ինչո՞ւ թոյլ չես տալիս իրերդ խուզարկելու:

Ես կրկնեցի նոյնը, ինչ ասել էի տասնապետին:

—Մեզ հրամայւած է խստիւ քննել կասկածաւոր ճանապարհորդներին և դու պէտք է հնազանդւես:

—Նախ՝ եթէ այդ ձեր պարտականութիւնն է, ինչո՞ւ մեզ ոչ ոք չը կանգնեցրեց զիւղը մտնելիս. եթէ մենք չ'իջնէինք՝ մեզ չէիք էլ արգելիլ շարունակել մեր ճանապարհը, ուրեմն ձեր քննութիւնը պատահական է և քէֆից կախւած: Նրկրորդ՝ ես, իբրև ռուսահպատակ, կատարեալ իրաւունք ունիմ մերժել ձեր պահանջը. ի՞նչ կը լինէր, եթէ, ուրիշ—ինչը օրւայ ճանապարհի վերայ, ո՛ր միւղիլ կամ զափթին էլ որ ցանկանայ՝ ինձ կանգնեցնի և խուզարկի: Սահմանազլխին և Կարինում, որքան ուղղում էիք, կարող էիք և իրաւունք ունէիք խուզարկել, նոյնպէս և Տրապիզոնում. իսկ կէս ճանապարհին թոյլ

կը տամ, եթէ մեր հիւպատոսարանի մի որ և է ծառայողի ներկայութեամբ ու միջոցով այդ կատարէք:

Իմ ընդդիմախօսութիւնը զւարճացնում էր ունկնդիր զիւղացիներին ու մանրավաճառներին, և նրանք հս.հսում էին:

— Սոս... դիմեց ինձ միւղիւրը, մատները տանելով դէպի շրթունքը, յօնքերը բարձրացնելով ու աչքերը լսելով — շատ մի՛ խօսիր. եթէ մեզ թոյլ չը տաս խուզարկելու, զաւթթիներով կ'ուղարկենք Գիւմիւշ-հանէի փաշայի մօտ:

— Եթէ այնտեղ էլ ուսաց հիւպատոսարանի ներկայացուցիչ չը լինի, նոյնպէս թոյլ չեմ տալ և կը բողբեմ ձեր կամայականութեան դէմ Տրապիզօն հասնելուց:

— Այդ մեզ համար մի և նոյնն է: Գրի՛ր թուղթ միւթեսարի՛Ք փաշային, դիմեց նա իւր օգնականին, որը վերցրեց թուղթը, դրեց իւր ծնկան վերայ և ինչ որ խզեցեց. «իսկ դու, դիմեց նա սենեակի դրան մօտ կանգնած մի զաւթթիի, պատրաստելի՛ր սոցա տանելու մինչև մօտակայ կօրդօնը, ուր կը յանձնես այնտեղի զաւթթիին, որ նա այս նամակի հետ հասցնի սրանց Գիւմիւշհանէ միւթեսարի՛Ք փաշայի մօտ: Աը տեսնենք, այնտեղ կը թողնե՞ս խուզարկել թէ ոչ, ասաց նա ինձ հեգնական ժպիտը երեսին:

Վանեցին աղաչում էր միւղիւրին, որ քակեն իւր բռները և քննեն որքան կամին, բաց միւղիւրը պատասխանում էր թէ՛ մինչև ուսաստանցին թոյլ չը տայ, քննել չենք քննի. դուցէ քո ծածուկ թղթերը նորա մօտ են:

Ես կրկնեցի, որ թոյլ չեմ տալ նաև Գիւմիւշհանէում, եթէ այնտեղ էլ չը լինի մեր հիւպատոսարանի ներկայացուցիչը:

— Այդ դեռ կը տեսնենք. այն ժամանակ զաւթթիներով կ'ուղարկեն ձեզ Տրապիզօն, ասաց միւղիւրը, դնելով ծրարի մէջ նամակը:

— Հը՛, տեսնո՞ւմ ես, էֆէնդի՛, ինչպէս հոգ ենք տանում, որ աւազակները ճանապարհին չը յարձակեն քո վերայ. զաւթթիներով ենք քեզ ճանապարհ ձգում, նկատեց հեգնօրէն ծիծաղելով տասնապետը:

Գուրս եկաց միւղիւրի մօտից: Յուսահատ վանեցին զլուսը շարժում էր և ինձնից անբաւական անդադար կրկնում. «ամա՛ն, ամա՛ն,

աս ի՞նչ խաթի մէջ ընկանք. ի՞նչ հարկ կար ընդդիմանալ: Աստուած մեզի փրկէ:

— Նստ մի՛ մտածէք, Մ. աղա՛, ձեզ բան չի հասնիլ. հաւատացած կացէ՛ք, որ մի և նոյնը կը լինէր, եթէ թոյլ տայի անգամ խուզարկել իրերս: Նրեակացէ՛ք, որ մի թղթի կտոր, ուսերէն թէ հայերէն գիրք գտան. այդ տգէտ միւզիկը ի՞նչ պէտք է հասկանար, նա էլի պիտի ուղարկէր մեզ Գիւմիւշհանէ, որպէս զի այդ թղթերը կամ զրքերը քննեն:

— Ա՛խ, ամա՛ն, ամա՛ն, կրկնում էր նա սաստիկ երկիւղի մէջ: — Ես յետոյ հասկացալ նորա այդքան վախենալու պատճառը, որ և իւր տեղում կը պատմեմ ձեզ:

Մենք հեծանք ձիերը ու ճանապարհ ընկանք: Զափթին, որին յանձնւած էր մեզ տանել մինչև մօտակայ կօրդօնը, գնում էր ուքով իմ ձիու կողքից՝ լի հրացանը ուսին: Բաւականին խղճալի էր այդ զափթի արտաքինը. հին պաշտօնագրեւորի երկու-երեք կոճակներ էին մնացել բաց կուրծքի վերայ. կարճ փոխանը ծածկւած էր կարկատաններով, իսկ ոտքերին տրեխներ էին: Մենք գնում էինք ձորով՝ Գիւմիւշհանէի մօտից անցնող գետի աջ ափով: Նրբ հասանք կօրդօնը, մեր զափթին մտաւ անցնող ու յանձնեց նամակը և մեզ մի ուրիշ զափթի, որ այդ ժամանակ դահլէ էր խմում:

— Հը՛, է՛թէնդ՛մ, համեցէ՛ք մի մի ֆինջան դահլէ խմենք, ասաց երիտասարդ զափթին, ծուլանալով իսկոյն հաւաքւել ու ճանապարհ ընկնել:

— Շնորհակա՛լ եմ, ես շտապում եմ, որպէս զի մինչև երեկոյ վերջացնեմ Գիւմիւշհանէում այդ գործը:

— Դէ, սպասէ՛ք քիչ, դահլէ խմեմ, դեռ նոր եմ կէսօրւայ քնից վեր կացել:

Ես քշեցի ձիս առաջ, ինձ հետևեցին վանեցին ու ձիապանները: Զափթին տոխլւած մի քանի ընկերացի յետոյ քշելով իւր ձին հասաւ մեզ: Նա նստած էր մի փոքրիկ նիհար ողորմելի ձիու վերայ. մաշւած հին թամբից կախ էր հրացանը. ինքը բաւական լաւ էր հագւած, գլխէր, որ փաշայի մօտ է գնում:

Գիւմիւշհանէն ճանապարհից զուրս էր. զափթին խորհուրդ էր

տալիս, որ ես ու ինքը առաջ ընկնենք, իսկ իմ ուղեկիցներս Գիւմիւշ-
Հանէի մօտ, ճանապարհի մի խանութ կը սպասեն մինչև իմ վերա-
դարձը:

— Չէ՞ որ բեռիս համար էր բոլոր աղմուկը, հիմի նրան թող-
նում է՞ք:

— Մենք կը զնանք, իսկ ձեր կաթիլին կամաց կամաց կը գայ
Գիւմիւշհանէ:

Ես պատուիրեցի Սիմօնին բարձրանալ Գիւմիւշհանէ, խոտուանա-
լով նրան բոլոր աւելորդ ծախսը վճարել, որովհետև Գիւմիւշհանէն
մեր ճանապարհից դուրս էր, և զափթիի հետ քշեցինք առաջ մեր
ձիերը:

Գետի երկու ափերին էլ ցրած էին բազմաթիւ տներ, խա-
նութներ, խաներ, խնձորենիներով ու տանձենիներով առատ պարտեզ-
ներ: Այդ բոլորը Գիւմիւշհանէի արւարձաններն էին: Զափթիս սո-
վորութիւն ունէր ամեն մի կրպակի և խանի առաջ կանգնել, մէ-
կում զահվէ խմել, միւսում ծխախոտ վերցնել, երբորդում խնձոր
և ալյն, բոլորը ի հարկէ ձրիապէս:

Ճանապարհին երթւեկների թիւը քանի զնում շատանում էր:

Ահա՛ և կամուրջը, որով անցանք գետի ձախ կողմը, բաց գեռ
քաղաքը չի երևում. նա զանաւում է բարձր լեռան զոդաւոր զազա-
թին և ծածկւած է մեզնից: Ոլոր պտոյտներով խճուղին տանում
է մեզ քաղաքը:

Ճանապարհին պատահում էին քաղաքից վերայարձող տղամար-
դիկ և կանայք՝ փաթաթւած իրանց չարտաւներում. նոքա, կարճաց-
նելու համար ճանապարհը, իջնում էին այնպիսի զառիվայրներով,
որ մարդ սարսափում է նոցա տեղ: Մի քանի պտոյտներից յետոյ ե-
րևեցաւ քաղաքը. սպիտակ, փոքրիկ, հարթ տանիքներով միասօրինակ
տխուր տները զետեղւած են մինը միւսի յետևից, այնպէս որ մէկի կտու-
րը միւսի բակին է հաւասար: Որովհետև այդպիսի զառիվայրներում
ոչինչ չի կարելի բուսցնել, ուստի եղած մի երկու պարտեզներն էլ շին-
ւած են արհեստական կերպով սանդուղքների աստիճանների ձևով:
Քաղաքի միջով անցնող միակ լացն փողոցը ներկայացնում է այն
խճուղին, որով բարձրացանք. միւս փողոցները այնքան զառիվեր ու
անձուկ են, որ տաւար չի կարող բարձրանալ, իսկ մարդիկ՝ ձմեռը

այլ փողոցներով իջնելու ու բարձրանալու համար՝ իրանց կոշիկների տակ խփում են սրածայր երկայն մեխեր:

Զափթին ինձ տարաւ մի խան, որ քաղաքում ամենապատւա-
կանն էր. այնտեղ թողինք մեր ձիաները և դիմեցինք հիւքիմաթը
(Հասապարտ-Խիւն): Փողոցներով անցնելիս, գիւմիւշհանեցիք ապշած
նայում էին օտարականիս վերայ, որ զափթիի հսկողութեան տակ
տանուում էր պօլիցիան: Մասնք բանտի բակը, ուր մի քանի պաշ-
տօնեաներ ջնկում էին բռնութեամբ ու վշակութներին տալով մի քանի
ողորմելի կալանաւորներ: Զափթին մօտեցաւ պաշտօնեաներից մէ-
կին, տւեց միւղիւրի նամակը և պատմեց ինչ գիտէր իմ մասին:
Պաշտօնեան մի քանի հարցեր առաջարկեց ինձ և յետոյ դրեց մեզ
հետ մի զափթի ևս: Դոքա գեցեցին ինձ իրանց մէջ տեղ և, մէկը
առջևիցս միւսը ետևիցս, տարան ինձ փողոցների միջով, խանութ-
ների առջևից բին-բաշու մօտ (զափթիների հազարապետ):

Հասնելով բին-բաշու տունը, որը միմիայն մեծութեամբ էր
զանազանում միւսներից, մտանք լայն դարպասով փոքրիկ քառա-
կուսի բակը, որ գտնուում էր նոյն տանիքի տակ: Ցածկական տնե-
րում մեր հասկացողութեամբ բակ ասածը չէր կայ. դա ընդհանուր
կոտորի տակ գտնուող մի շատ է: Դարպասի հանդէպ գտնու-
ող փայտեայ սանդուղքները տանում էին բին-բաշու ապարանք.
աջ՝ խոհանոցի դուռն էր, ձախ՝ ախոռատան: Մի զզւելի դար-
շահոտութիւն էր տիրում այդ տեղ: Զափթիներից մէկը մնաց ինձ
վերայ հսկելու, իսկ միւսը գնաց բին-բաշուն զեկուցանելու:
Մի քանի ժամանակից յետոյ սանդուղքների վերայ երևեց բին-
բաշին, որ խոժոռած դէմքով, կոպիտ ձայնով ինձ մի քանի
հարց առաջարկեց և յետոյ հրամայեց տանել ինձ միւթեսարիի
փաշայի մօտ, ասելով թէ ինքը հիմի կը գայ այնտեղ:

Փաշայի տունն էլ շատ քիչ էր զանազանում բին-բաշու տնից.
նոյն տեսակ ծածկւած փոքրիկ բակ, ուր ախոռատանից, խոհանոցից
և դուք գիտէք էլ ինչ-«ոցից» բուրոյ դարշահոտութիւնը անտանելի
էր ոչ-տաճկական քթի համար:

Զափթին բարձրացաւ վերև:

Փայտեայ տոթիճաններով իջաւ մի երկարահասակ մարդ երկայն
սեւ միրուքով և սկսեց խօսել ինձ հետ հայերէն: Նրան բոլորը կո-

չում էին «մեւսիօ», որովհետեւ Ֆրանսերէնի թարգմանն էր փաշայի մօտ: Նա բարեկամաբար ինձ խորհուրդ էր տալիս շողոքորթել, զի- ջանել և, որքան կարելի է, խոնարհ երևալ բին-բաշու և փաշայի առջև, խորհրդաւոր կերպով աւելացնելով. «այստեղ Տաճկաստան է, ի զուր էք իրաւունքի, օրէնքի մասին խօսում»:

Նկաւ և բին-բաշին, որը ուղղակի բարձրացաւ վերև փաշայի մօտ: Ար քանի անգամ զնացին — եկան մուսիօն ու բին-բաշին, հարց ու փորձ արին և վերջապէս տարան ինձ վերև միւլթեսարիֆի մօտ:

Փայտեայ սանդուղքների զլուխը ներկայացնում էր փոք- րիկ նախասենեակ, որի ձախ պատում փաշայի ապարանքը տանող դուռն էր, իսկ աջ՝ ծալքերով (драпри) վարագուրած մուտքն էր դէպի առանձնասենեակը: Ինձ ներս տարան: Դրան մօտ կանգնեցին զաւթիթիները, փաշայի թիկնապահը և մուսիօն:

Քառակուսի մաքուր սենեակը լուսաւորւում էր երկու մեծ պա- տուհաններով, որոնք ունէին մինչև անգամ վարագոյրներ: Սենեակի ճակատին, պատուհանի մօտ, դրած էր մի թախտ թանկագին գորգե- րով ծածկած: Մուտքից աջ՝ սպիտակ վառարանն էր, եւրոպական արհեստի գործ: Թախտի դէմու դէմ՝ դռնից ձախ՝ դահաւորակ (չի- վան) էր դրած. բացի այդ սենեակում կային և մի քանի աթոռներ:

Թախտի վերայ, յենած փափուկ մետաքսեայ բարձերին, կիսա- պառկած էր ինքը միւլթեսարիֆ փաշան, մօտ 50 տարեկան մի մարդ, կարճ, կոյր կտրած սպիտակախառն միրուքով: Նա գլխին ուներ սպիտակ թելերից նուրբ գործած մի ֆէս, և հագած էր մոխրա- գոյն երկայն խալաթ: Նրբ ես մտայ, մեղկասէր փաշան չը փոխեց իւր անքաղաքավարի զիրքը, այլ զրեց իւր քթին պէսնէն, որը մինչև այդ ժամանակ խաղացնում էր ձեռքին, և սկսեց ինձ ոտքից ցղուիլ զննել:

Թախտի կողքին, աթոռի վերայ նստած էր մի չալմաւոր սեւա- միրուք տաճիկ: Նա ծնինների վերայ դրած էր մի քանի հաստ գլոր- քեր, որոնցից մի քանին զանազան պաշտօնական թղթերի հետ լն- կած էին նաև թախտի վերայ, փաշայի գուլպաւոր ոտքերի տակ: Վառարանի մօտ նստած էր ալաֆրանկա հագւած մի ֆէտաւոր երի- տասարդ, որին «դօխտօր էֆէնդի» էին յորջորջում: Իին-բաշին նըս- տեց պատուհանի մօտ աթոռի վերայ: Նա առնակելով, որ քաղաքիս

տաճկական այդ ամենաբարձր շրջանը քաղաքապարտութիւնը դեռ մօնղոլական կերպով հասկանալով, չի էլ առաջարկում ինձ նստել, ինքս ինձ թոյլ աւելի այդ:

Երբ միւթեսարիֆի փաշան իւր հետաքրքրութիւնը իմ արտաքինով զոհացրեց, բարեհաճեց հարցնել.

—Ո՞րտեղացի ես, ինչո՞ւ ես եկել Տաճկաստան:

Ես պատասխանեցի և խնդրեցի թարգման կանչել, որովհետև այնքան ազատ չեմ հասկանում տաճկերէն: Բին-բաշին, որ մաղձոտ տաճիկ բռնբռնէր, ոտաց.

—Սուտ ես ասում, միայն ձեանում ես թէ չը գիտես տաճկերէն: Պէտք է դրան խուզարկել, զիմեց նա փաշային:

—Յոյց տո՛ւր քո անցաթուղթը, ասաց փաշան:

Ես հանեցի երկուսն էլ: Բին-բաշին կոպտութեամբ խլեց ձեռքիցս, նայեց և տւեց միւթեսարիֆին, որը կրկին պէնսնէն դրեց քթին, այս կողմ աչն կողմ շուռ տւեց և յանձնեց իւր կողքին նստած չալմաւորին, երևի իւր քարտուղարին:

—Ինչո՞ւ թոյլ չեա տւել մեր միւլիբին խուզարկելու քեզ, հարցրեց միւթեսարիֆը:

—Ձեզ պէտք է յայտնի լինի, որ ինձ, իբրև ուստահպասակի, բացի մաքսատեղերից ուրիշ տեղ չէք կարող խուզարկել, առանց ուստաց հիւպատոսարանի ներկայացուցչի:

—Գու զանում ես մեր երկրում, ուրեմն մեր օրէնքներին պէտք է հպատակես, ընդմիջեց մաղձոտ բին-բաշին:

—Ձեր երկրում օտարահպատակներէ համար կան նրանց հիւպատոսները, ասացի ես:

—Ձէ, պէտք է մեր կանոններին հպատակես: Միչ շատ խօսել դորա հետ, Լիֆէնդի՛մ, զիմեց բռնբռնը փաշային. խուզարկենք դրան այս րոպէիս:

—Ես թոյլ չեմ տալ մինչև որ ուստաց հիւպատոսարանի որ և է ներկայացուցիչ չը լինի. դա իմ իրաւունքս է:

—Այտեղ ուստաց հիւպատոսարան չը կայ, նկատեց չալմաւորը:

—Աւղարկեցէ՛ք ինձ զափթիւններով Տրապիզոն, թող այնտեղ խուզարկեն:

—Ի՛նչ շատ խօսելու հարկ կայ է՝ հրամայեցէ՛ք խուզարկել, շտապեցնում էր բին-բաշին:

—Ուժով կարող էք, բայց ես յետոյ կը բողբոքեմ, ասացի ես:

Փաշան մի քանի րոպէ խորհրդակցեց բարոուղարի հետ. լսեց մի քանի անգամ «մէքթէք» (ոսո-հարան) բառը: Քարտուղարը համոզում էր աւելի մեղմ և քաղաքավարի լինել հետո, առարկելով, որ ուսում առած մարդ է, կարող են բարգուժիւններ ծագել:

—Տրապիզոնի ուսաց կօնսուլը իմ լաւ բարեկամն է, նա ինձ «վաքիլ» է արել ուսու հոգատակների գործերը բնակելու, չ'ամաչեց ստել միւթեսարի՛ք փաշան:

—Իրաւունք չ'ունիմ չը հաւատալ ձեզ. այժմ կարող էք խուզարկել. բայց իմացած կացէ՛ք, որ հասնելով Տրապիզոն, ես այս բոլորի մասին յայտնելու եմ այնտեղի հիւպատոսին:

Քարտուղարը համոզում էր փաշային արձակել ինձ առանց խուզարկութեան. բին-բաշին պնդում էր, որ անհրաժեշտ է խուզարկութիւնը. միւթեսարի՛քը տատանում էր: Վերջապէս մագձոտ բուրբոնի կարծիքը յաղթեց և նա ստացաւ թոյլտւութիւն ինձ խուզարկել, որ և կատարեց նա իրան յատուկ կողտութեամբ:

Նա բացեց ուսիս ձգած ձանապարհորդական պալուսակը և սկսեց ամեն ինչ հանել այնտեղից: Նստախաղողութիւնից հետո ոչինչ չէի պահում և միմիայն ծոցի տետրակում գրում էի յիշողութեանս համար տեղի անուններ և թւանշաններ: Պալուսակիցս հանեց նա մի սանդուղ, սապօնի կտոր, այցեառման և բէվօլվերի փամփուշաները: Ուրիշ ոչինչ չը գտնելով բին-բաշին սկսեց քրքրել պալուսակի նաւ միւս ջիբերը և յաղթական կերպով քաշեց այնտեղից ձեռքը ընկած մի թուղթ ու հանեց դուրս: Մի քանի երես թղթեր էին հայերէն գրուած: Ինքը ոչինչ չը հասկանալով զոցանից, յանձնեց փաշային, որի պէնսնէն նոյնպէս չ'օգնեց, անցաւ շաւմաւորի ձեռքը, որը տւեց դօւտօրին. սա էլ պտտելով մուօիօին յանձնեց, որը դժւարանում էր այդ թղթերի վերնագիրը կարդալու: Նստեցի ու կարգացի՝ «Ի՛նչ է Պարվինի վարդապետութիւնը»: Դա մի չօլւած էր, որ ես Մօսկւալում ուսանող ժամանակս սկսել էի գրել և յետոյ թողել էի. տեղափոխելիս կոխել էի պալուսակը, ուր և մոռացւած մնացել էր:

Բոլորը, սկսած փաշայից մինչև մուսիօն, զարմացմամբ իրար երեսի էին նայում, ոչինչ չը հասկանալով:

— Ի՞նչ ըսել է ասո, հարցրեց մուսիօն:

— Այդ ի՞նչ ես գրել, հարցրեցին փաշան և բին-բաշին:

— La theorie de Darwin, ասացի ես Ֆրանսերէն դիմելով զօկտօրին, որը աւարտել էր իւր ուսումը Պօլսի տաճկաց հռչակաւոր բժշկական ուսումնարանում:

Ղօկտօրը զարմացմամբ նայում էր վերաս, ոչինչ չը հասկանալով:

— Մի անգլիացի գիտնական մի գիրք էր գրել բոյսերի ու կենդանիների մասին, ես էլ սկսել էի այդ գիրքը թարգմանել հայերէն. թարգմանութեանս սկիզբն էք տեսնում, ստիպւած էի ես այսկերպ բացատրել, որպէս զի էֆէնդիները բան հասկանան:

— Հիմի ջիբերդ ցոյց տո՛ւր, ասաց բին-բաշին, և ձեռքը կոխեց ջիբս ու հանեց ծոցի տետրակս, թերթեց և ոչինչ կասկածելի բան չը գտնելով՝ կրկին ձեռները կոխեց միւս ջիբերս:

— Մի քիչ էլ քաղաքավարի եղէ՛ք, վերջապէս նկատեցի ես վրդովւած:— Բայց տաճիկ բուրբոնը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում իմ վերայ:

Նա բացեց և պօրտմօնէս, բայց ոչինչ չը գտաւ:

— Բաւական է, իմ կարծիքով, դիմեց փաշային քարտուղարը:

— Ոչ, դեռ բեռները մեռւմ են, նկատեց բին-բաշին:

— Ո՞րտեղ են դորա բեռները, հարցրեց զափթիին միւթեսարիֆը:

— Խանումը, փաշա՛ էֆէնդի, պատասխանեց նա:

— Բայց ո՞ւր է քո ուղեկիցը և ո՞վ է նա, հարցրեց ինձ միւթեսարիֆը:

— Վանեցի մի վաճառական է. սարի տակ մնաց:

— Ի՞նչ կար դորա բեռներում, կրկին դիմեց զափթիին փաշան:

— Ոչինչ, էֆէնդի, երկու խուրջիներ էին շորերով և պաշաբեղէնով:

— Պէտք է գնալ քննել, ասում էր բին-բաշին:

— Լաւ, գնացէ՛ք, պատասխանեց փաշան:

— Չարժէ, իմ կարծիքով. էֆէնդին ինքը կ'ասի ինչ կայ իւր

բեռում, նկատեց քարտուղարը, որը լաւ գիտէր թէ ապօրէն է այս բոլորը:

— Դէ ասացէ՛ք ուղիղը, զիմեց ինձ փաշան:

— Մի խաւը ինձումս հաց է, բաստրմա, շաքար, թէյ, թէյաման, բաժակ, իսկ միւսում՝ շորերս, պատասխանեցի ես:

— Ելի՞ ինչ. թուղթ, գիրք չը կա՞յ, հարցրեց փաշան:

— Պէտք է մենք ինքներս խաւարիկէնք, դորա ասածին չի կարելի հաւատալ, պնդում էր բին-բաշին:

— Թող ասի, տեսնենք, ասաց քարտուղարը:

— Շորերիս մէջ մի գիրք կայ, այն էլ ռուսերէն լեզուով և սահմանազկիւն ձեր պաշտօնեաները տեսած են:

— Դի՛րք, ռուսերէ՛ն...

— Այո՛:

— Մեզնից ռուսերէն հասկացող չը կայ, ասացին նրանք իրար երեսի նայելով:

— Լա՛ւ, ի՞նչ գիրք է, ինչի՞ մասին է գրած, հարցրեց փաշան:

— Բոյսերի Ֆիզիոլոգիայի վերաբերեալ մի նոր բրոշուր է, որ ճանապարհին կարդալու համար էի գնել:

Բոլորը զիմեցին դօկտօրին, որպէս զի նա հանէ նրանց մը-թութիւնից թէ Ֆրանսերէն «Physiologie des plantes» ինչ ասել է, բայց դօկտօրը լուռ էր և ինքն էլ զարմացած:

— Դուք բժի՞շկ էք, զիմեց ինձ քարտուղարը:

— Ո՛չ, naturaliste.

Ելի անհասկանալի բառ:

— Ո՞րտեղ էք սովորել:

— Մօսկւա...

Այդ ժամանակ մուսիօն հետաքրքրութեամբ վերցրել էր իւր ձեռքը այցետոմսերս: Նա խնդրեց, որ մէկը տամ իրան: Պատարեցի նորա ցանկութիւնը: «Մի մի էլ տւէք էֆէնդիններին», խորհրդաւոր կերպով ասաց նա ինձ հայերէն: Ես զարմացայ. չը գիտէի ի՞նչ կարիք կայ բաժանել իմ այցետոմսերս. բայց նա ինքը տարաւ տւեց մէկը փաշային, և ես բաժանեցի նոյնպէս միւսներին: Հետաքրքրութեամբ նրանք նայում էին հայերէն և Ֆրանսերէն գրած այցետոմսերս:

Երկար խորհրդակցելուց յետոյ, վերջապէս վճռեցին ինձ արձակել: Ես պահանջեցի, որ ինձ թուղթ տան թէ խուզարկել են, որպէս զի ճանապարհին կրկին չ'ենթարկեամ միւլգիրների կամայականութեան. բայց տաճկական ծուլութիւնը և անհոգութիւնը այնքան զօրեղ էին, որ չը կարողացայ ես յաղթել, և ինձ արձակեցին առանց թղթի: Մուսիօն ինձ ճանապարհ ձգեց մինչև Կարսասը. նրան՝ ինչպէս Տաճկաստանում մեծացած մարդուն՝ զարմանալի էր թուում, որ մի հայ մարդ միւթեսարիֆի և բին-բաշու մօտ կարող է իրան արձակ, համարձակ պահել և նա արտայայտում էր այդ ինձ շողորթ մեծարական խօսքերով:

Մեր իջած խանը միայարկանի փայտեայ մի շինութիւնէր ընդարձակ ախոռատնով և երկու սենեակներով, որոնցից փոքրը, ախոռատան կիցը, ճանապարհորդների համար էր յատկացրեա՞ծ, իսկ մեծը՝ բաւական մաքուր և կարգին լուսամուտներով սենեակը՝ զահվէտուն—թէյարանն էր:

Այցելուներից մէկը, մի հայ երիտասարդ, մօտեցաւ ինձ, խօսակցութիւն բացեց և ծանօթացաւ հետս: Նա քաղաքիս հեռագրատան ղլխաւոր ծառայողն էր և ուսած էր Տրապիզոնի հայոց վարժարանում: Այդ պարոնը ինձ տարաւ քաղաքիս միակ հիւրանոց-ճաշարանը, որ գտնւում էր անձուկ, զաւիվեր փողոցներից մէկում: Այդ ճաշարանը բաղկացած էր միակ փոքրիկ սենեակից, որը ամբողջապէս բռնւած էր սեղանով և երկու-երեք նստարաններով: Սենեակում 8 հոգի միայն կարող էին տեղաւորւել: Սեղանին կից մի փոքրիկ բաժանմունք կար, ուր միաժամանակ և՛ խոհարար և՛ ճաշարանատէր և՛ սպասաւոր տաճիկը գործադրում էր իւր բոլոր խոհարարական հմտութիւնները: Տախտակներից շինած այդ փոքրիկ ճաշարանի այցելողները տեղիս մի քանի օտարականներն էին,—հանքային լեհ ինժեները, այդ երիտասարդը և մի քանի աւլ ծառայողներ:

Ճաշարանից պարոնը տարաւ ինձ իւր մօտ՝ հեռագրատունը, որը իմ իջեանած խանի հանդէպ էր գտնւում: Նոր, փայտաշէն տուն էր՝ կարգին լուսամուտներով: Հեռագրատան սենեակը նոյնաժամանակ և պարոնի ննջարանն էր: Պատանեկան պարծենկոտութեամբ ցոյց էր տալիս նա հեռագրական գործիքների գործածու-

թիւնը. չը մոռացաւ ցոյց տալ և Ֆրանսերէն լրագիրը, որ ստանում էր (հայոց թերթեր նա չէր կարդում. «օգուտ չը կայ նոցանից»), ասում էր նա): Առհասարակ այդ հայը բնաւ չէր քաշւում և երկնչում ինձ հետ մանդալու կամ խօսելու, ինչպէս այդ անում էին կարնեցիք. և հասկանալի է:—Հայաստանից դուրս Ցածկաստանում չը կայ հայերի վերայ այն վեհերոտ կասկածոտութիւնը և ճնշումը, որ հասնում է ծիծաղելի, եթէ այնքան ցաւալի չը լինէր, ծայրացեղութեան:

Երիտասարդը ինձ պատմեց ինչ զիտէր Գիւմիւշհանէի մասին: Այդ նախկին բազմամարդ և հարուստ քաղաքում հիմա հազիւ 1000 տուն բնակիչ լինի: Հայերը մօտ 200 տուն են, մնացածը տաճիկներ և յոյներ են: Հայերը ունին պարզ, աղքատիկ մի եկեղեցի և մի ողորմելի վարժարան: Քաղաքից մի ժամ հեռու գտնւում է Ամենափրկիչ անունով հայոց վանքը, զւարճալի և ծառազարդ ձորակում: Գիւմիւշհանէի սարերի միւս կողմում կան այժմ էլ անտառներ, սակայն քաղաքիս աներում հողի տակ պատահող ծառերի հաստ բունքը ցոյց են տալիս, որ առաջ սարի այս կողմում էլ անտառ է եղել: Արծաթի, ոսկուց և կապարի հանքերը, որոնց համար միայն կարող էին մարդիկ այս բարձրաբերձ սարերի կատարին բնակութիւն հիմնել, լափել են այդ առատ վառելիքը: Այդ հարուստ հանքերը, որ տղիտութեան շնորհիւ բաւական անկարգ են մշակւում՝ բոլորը յոյների ձեռքում են:

* * *

Մութով գուրս եկանք Գիւմիւշհանէից: Արպէս զի շուտ հասնենք սարի ստորոտը, Սիմօնը խոտորեց խճուղուց և սկսեց իջնել մի լեռնալին նեղ շաւիղով: Զիտները արել էինք մեր առաջ և ոտքով զգուշութեամբ իջնում: Մութ էր բոլորովին. ցրտից գետինը սառել էր. քարքարոտ նեղ շաւիղի ձախ կողմից խաւարով պատած խոր ձորեր էին: Սիմօնը այժմամի ճարպիկութեամբ անցնում էր ամենափափուկագուր նեղ տեղերից և նորա տրեխները չէին սահում: Խսկ ես, անսովոր այգալիսի ճանապարհների, կոյրի պէս բռնել էի նորա թեւից և այգալէս իջնում էինք այդ սառնասուցի ճանապարհով:

Մութ անդնդի խորքում ճրագներ երևացին. մօտ էինք ստորոտին:

Դուրս զալով խճուղին, տեղեկացանք մի քանի խաներում մեր ուղեկիցների մասին և ոչինչ չիմանալով, ճանապարհ ընկանք մտածելով, որ կամ մենք նրանց կը հասնենք կամ նոքա մեզ:

Խոր ձորամիջով անցնող զետի ափերին խնձորենիների և տանձենիների ծառատաններ էին: Զորում ձիւն չը կար. սակայն բարձր սարերի կոհակները թաղւած էին ձիւնի տակ, որի միջից խումբ խումբ երևում էին մշտադալար մարիթների (ель, пicea) կոնաձև զլուխները: Դեռ նոր էր լուսը բացւել. քարերի և թփերի տակից լսւում էին կաքաւների կկկղոցը. գետի մէջ ցցւած քարերի վերայ թռչկոտում էին խաղտոնիկները (motacilla, трясохвостка): Սարերի լանջերին իրարից հեռու ցրւած էին ուռումների խրճիթներ, իւրաքանչիւրը ունենալով իւր մօտ հերկած մի արտ: Այդ խաւար ու բիրտ բնակիչները, նոցա նահապետական զործիքները, խրճիթները ու սալերը իրանց շրջապատող վայրենի բնութեան հետ թոցնում էին մարդու երեւկացութիւնը նախապատմական ժամանակները: Խրճիթներից հները այն կերպ էին շինած, որ ոչ մէկ, ոչ էլ փոքր ի շատե բարդ զործիքներ են պահանջում: Նոցա պատերը շինւած են իրարից կէս արշին հեռու տնկած հաստ ձողերից, որոնք պահւում են ուղղահայեաց զլուծեամբ իրար մէջ թեք մոցրած ձողերով. այդպիսով ստացւած վանդակի արանքները լքցւած են քարով ու հողով. կոնաձև տանիքները ծածկւած են թիթեղափայտերով (дранн):

Ճանապարհին ստէպ ստէպ պատահում էին խաներ և մանրավաճառների դուքաններ: Կէսօրին իջանք մի յոյնի խանում, ուր ձւածեղ և թէյ էինք պատրաստում, երբ երեացին վանեցին և իւր ձիապանը, որոնք մեզ տեսնելով հեռուից ուրախութեան նշաններ էին ցոյց տալիս: Անշափ ու անկեղծ էր երկուսի ուրախութիւնը և զարմանքը մեզ տեսնելով: Նոքա հաւատացած էին, որ Գիւմիւշ-հանէում ինձ բանտարկել են: Առհասարակ մեծ տպաւորութիւն էր գործում այդ պարզ մարդկանց վերայ իմ յաջող դուրս պրծնելս սպաների, միւղիւրների, բին-բաշխների ու միւթեսարիֆների հետ ունեցած ընդհարումներից:

Այստեղից խճուղին կամաց-կամաց դառնում է դառիվեր. մենք պէտք է բարձրանանք Ջղանայ-դաղ սարը և իջնելով նորա միւս կողմը՝ մի կէս օր ճանապարհ գնալով՝ Տրապիզոն հասնենք:

Մի այդպիսի խճուղի շինել, որպիսին է Եղրումից Տրապիզոն տանողը, տաճկական կառավարութեան համար մեծ գործ է. սակայն ասիական Տաճկաստանում այդ համարեա միակ խճուղու շինութեան պատմութիւնն էլ բաւականի ուսանելի է: Տէրութիւնը կամենում է նախ ինքը զլուխ բերել այդ ձեռնարկութիւնը. ուղարկում է մի օրինակելի տաճիկ վաշա, որը երկու տարւայ մէջ տասը միլիոն ծախսելով միմիայն 30 վերստի վերայ խճուղի է բացում: Տէրութիւնը ուղարկում է մի ուրիշ օրինակելի պաշտօնեայ. նա էլ նոյն կերպ է վարւում. վերջը կառավարութիւնը հարկադրում է շրջակայ գիւղացիներին ձրի բանել և շինել այդ ճանապարհը ու այդպիսով վերջ դնել իւր պաշտօնեաների գերփութներին:

Ոլոր-մոլոր պտոյտներով ճանապարհը վեր է բարձրանում: Աեւների զառիվայրներին պատահում էին յոյների խղճուկ գիւղեր, հովուհիներ և հովիւներ սակաւաթիւ այծերի ու ոչխարների հօտերով: Զորում պատահող կաղնիների, նշտարիների (ჭაჭი, რახი) և կնձնու (კენძი) փոխարէն սկսում էին պատահել սոճիների (Բեղջ, сосна), մախրիների (Յձ) և եղևիների (Пихта, abies) մշտադալար խմբեր, որոնք պատում են ձիւնածածք լեռների լանջերը: Այնքան արդէն բարձրացել էինք, որ ձորի մէջ հոսող լայն գետը մի արծաթեայ ժապաւէնի էր նմանում:

Նրեկոյեան հասանք Զդանայ խանը, ուր և իջևանեցինք:

Նոր էր լուսանում նոյեմբերի 27-ը, երբ մենք արդէն բաւական հեռացել էինք մեր իջևանից և դեռ բարձրանում էինք Զդանայ-դաղը:

Զիւն էր դալիս: Ճանապարհը ընկած էր կուսական անտառով. ջրվէժների, խոխոջահոս լեռնային վտակների, հաստաբուն հսկայ ծառեր, որոնց բազումները ու ճիւղերը վերւում իրար հետ զրկախառնւելով ծածկում էին երկինքը ուղեորի աչքից, դէս ու դէն ընկած խորտակւած ծառեր, մամուռապատ ժայռեր, մշուշի մէջ կորած մութ ձորեր ու ծմակներ՝ ահա՛ այն վայրենի բնութիւնը, որ շրջապատում էր մեզ:

Իջնում էինք սարից: Յոյն կանայք ծանր բեռները շալակներին մի գիւղից միւսն էին գնում, իսկ նոցա կողքից դատարկաձեռն քայլում էին տղամարդիկ գօտիներից քարշ կէռ, եղջրաւոր երախա-

կալ ունեցող թրերով: Սարի լանջին ցրւած փոքրիկ փայտաշէն գիւղերի նեղ, զառիվայր շաւիղներով մեծ ճարպիկութեամբ ել և էջ էին անում տեղացիք:

Մի քանի պտոյտներից յետոյ դուրս եկանք ձիւնի սահմանից: Հիմի օդը տաք էր, իսկ վերևի ձիւնը այստեղ փոխարինւում էր անձրևի ու յեխի: Խաների մէկում առանք մեր կէսօրւայ հանգստութիւնը: Փորձեցի յոյն գիւղացիների շինած կարագ ու պանիրը, բայց անշափ դառն էր, կեղտոտ ու վատ պատրաստած: Ահա՛ մի երկիր, որը եւրոպական քաղաքակրթութիւնը մի երկրորդ Զաւցերիա կը դարձնէր և նոյն տգէտ, աղքատ բնակիչները՝ զաւցերացիք, եթէ տաճկաց կառավարութիւնը չը լինէր, որի երեսից գունդագունդ գաղթում են այստեղի նեղւած յոյները հաւատակից ռուսների նոր նւաճած Կարսի կողմերը:

Մենք դեռ շարունակում էինք պտոյտներ գործելով ցած իջնել և Զդանայի ահուելի բարձրութիւնը այժմ տեսնում էինք ներքեւից: Ամպերը հեղութեամբ լողում էին այդ լեռան շուրջ, չը վրասահանալով հասնել նորա բարձրաբերձ գագաթին: Սարի այս կողմից էլ՝ ինչպէս և Գիւմիւշհանէի՝ մի սարսափելի իւր խորութեամբ ձոր էր, յատակին վաղող փրփրադեղ կտուղի գետով: Զը նայած տարւայ ժամանակին բոլոր շրջակայ բնութիւնը դալար կանաչով էր պատած: Լայնանիստ լեռան խորշումնաժաժ լանջի վերայ ցրւած էին յոյների գիւղեր ու վանքեր: Կանաչ զառիվայրների ու ծառաշատ թմբերի վերայ արածում էին յոյն աղջկանց ու պատանիների հսկողութեան տակ այծեր, ոչխարներ ու կովեր:

Երեկոյ էր, երբ մենք հասել էինք ձորի յատակը: Ես նախ քան վճռել մի տեղ իջեանելու, տեղեկանում էի արդեօք այդ տեղ միւլիթ չէ՞ նստում, որպէս զի կրկին հետը գործ չ'ունենամ: Տոլորովին մութ էր, երբ մենք հասնելով Աթլի-քիլիսա կոչւած տեղը, վայր իջանք ծխով լիքը մի յոյնի օղալում, ուր և անցիւցրի վերջին գիշերը: Վաղը, — մտածում էի ես ուրախ-ուրախ — Տրապիզոն կը հասնեմ և վերջ կը լինի իմ տառապանքներին:

(Վերջը միւս համարում)

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»։ Աշխարհարար
 թարգմանեց և լուսաբանեց ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԱՆԷ։ Ս. Պետեր-
 բուրգ, տպարան Ի. Ն. Սիօրօխօզովի. 1889 թ., քառածալ, տառ
 № 12, մր+351+328 երես։ Գինն է 1 ռ. 50 կոպեկ։

Ոչ մի հայերէն երկ և ոչ մի հայ
 հեղինակ արժանացել են այն հե-
 տաքրքրութեան, ուսումնասիրու-
 թեան և գիտնական քննադատու-
 թեան եւրոպական գիտութեան և
 գրականութեան կողմից, որչափ մեր
 պատմահայր Մովսէս Խորենացին և
 իւր «Հայոց Պատմութիւնը»։ Արդէն
 XVIII դարու սկզբից եւրոպան ծա-
 նօթացել էր լատիներէն թարգմա-
 նութեամբ այդ նշանաւոր գործի
 հետ։ Այնուհետեւ մի շարք թարգմա-
 նութիւններ ֆրանսերէն, իտալերէն,
 գերմաներէն և ռուսերէն լեզուներ
 րով, Սէն-Մարտէնի, Լանդլուպի,
 Պետերմանի, Գուտչմիդտի, Էմինի և
 Պատկանեանի հետազօտութիւնները
 ու քննութիւնները աւելի ևս հռչա-
 կեցին այդ ընդհանուր և ոչ միայն
 նեղ հայկական նշանակութիւն ունե-
 ցող հեղինակի անունը, որի պատմու-
 թիւնը, բայց աղպարին հետաքրքրու-
 թիւնից, ունի նաեւ կշիռ արեւելքի
 պատմութեան համար։

Խորենացին՝ լինելով իրա նարու
 ամենալուսաւոր զարգացած մարդ-
 կանցից մինը, տեղեակ ժամա-
 նակակից գիտութեան, փիլիսո-
 փոսութեան և գրականութեան, Ա-
 թէնքի, Աղէքսանդրիայի և Բիւզան-
 ղիայի բարձր ուսումնարաններում
 կատարելագործւած և շատ ճանա-
 պարհորդած թէ օտար երկիրներում
 և թէ իւր հայրենիքում, ուր նա եր-
 կար տարիներ հալածւած էր և, իբրեւ
 մուրացկան, չըջնելով չփուլ էր հայ
 ժողովրդի հետ և ծանօթացել նորա
 բանաւոր վիպական երգերի հետ,—
 ունէր բոլոր պատրաստութիւնը գրե-
 լու մի այնպիսի ծանր գործ, ինչպիսին
 էր հայոց պատմութիւնը։ Համառօ-
 տախօս, հակիրճ, ուժեղ ոճը, մտքերի
 խորութիւնը, գրական բազմաձևու-
 թիւնը (эрудиция), նուրբ ճաշակը և
 անկեղծ ու բարձր հայրենասիրու-
 թիւնը ի միասին առած՝ տալիս են
 նորա գրւածքին մի այնպիսի վեհու-
 թիւն, որ չափու է միայն լատին ու
 չոյն կլատիկներին։

Եւ մեր պատմահօր աղ ճշմանաւոր վաստակը մնում էր հալ ընթերցող մեծամասնութեան համար անմատչելի, որովհետեւ մեծ զանազանութիւն կալ V-րդ դարու և ալժմեան մեր զրականական լեզուի մէջ: Ասկալն հալ հասարակութիւնը սկսել է զգալ պահանջ ծանօթանալու իւր անցեալի հետ: Այդ բնական պահանջը լրացնելու միջոցներէից մինն է՝ մատչելի անել ընթերցող մեծամասնութեան մեր հին կլասիկները, որոնցից ամենանշանաւորն խորենացու՝ հետ, ինչպէս տեսնում էք, լանձն է առնել ծանօթացնել հ. խորէն Ստեփանէն:

Նորա աշխատասիրութիւնը բացի բնագրի թարգմանութիւնից ունի նաև մի շուսջարան, ծանօթութիւններ և չաւելածներ:

Յառաջաբանի մէջ հալոց պատմութեան վերալ ձգած ընդհանուր հալեացքի միտքը ալն է, որ հալ աղղը միշտ զուրկ է եղել աշխարհակալութեան ձգտումից. խոփն ու արօրը, վաճառականութիւնն ու արհեստը և զկէ են հալի զերը: Հալատաւնը բաժանւած էր բաղմաթիւ, համարեա միմեանցից անկախ իշխանութիւններին, որոնք սեպականութիւն էին առանձին նախարարական տոհմերի, որ իրանց չարաբերութիւններով զէպի կենդորոնական իշխանութիւնը նման էին եւրոպական աւատական իշխաններին (Ֆեօդալներին): Ստիպան բաւականաչափ չի պարզւած, որ աղղ զրութիւնը մի հալական առանձնաշատութիւն չէր, որովհետեւ ամեն աղղերի մէջ էլ «իշխանները արղելք էին լինում և չէին կամենում ենթարկուել մի մեծ կենդորոնական իշ-

խանութեան»: Ալլ բանը ալն է, որ աղղ աւատական զրութիւնից, որը մի անցողական աստիճան էր և միւս աղղերի քաղաքական զարգացման մէջ, չը կարողացաւ հալ աղղը զուրա գալ. նա երկար աղղից քաղաքական զարգացման աղղ հասակում և չը կարողացաւ աղղ զրութիւնից զուրա գալ և անցնել միապետական շրջանին, որովհետեւ նորա ներքին քաղաքական կաղմակերպութեան զարգանալուն միշտ խոչընդոտ էին հանդիսանում արտաքին անընդհատ պատերաղմները և արշաւանքները, որոնք մեծ կապ ունէին Հալատանի աշխարհաղրական զիրքի հետ: Հալատաւնը աղղ պարմանեիրում չ'ունեցաւ մի շարք զօրիղ, և առանցտ թաղաւորներ, որոնք, ոչնչացնելով հալոց աւատականութիւնը, ի մի ձուլէին մանր-մունը իշխանութիւնները և մի հղօր միապետութիւն ստեղծէին, որը միալն կարող էր զէմ ոլնել ալնպիսի հղօր թշնամիներին, որպիսիք էին երկու կողմից բաժան-բաժան եղած Հալատաւնը իրանց մէջ ձմրող Բիւզանդիան ու Պարսից միապետութիւնները:

Աղղ աւատական ցեղերից չորսը ուժեղ էին և մեծ զեր էին կատարում հալոց պատմութեան մէջ. դոքս ևն՝ Սիւնի, Բագրատունի, Արծրունի և Մամիկոնեան իշխանները, որոնցից միմիալն Մամիկոնեանները ունէին ասպետական ողի, և հանդիսանում էին իբրև աղղի ընդհանուր շահերի պաշտպան. միւս ցեղերը լոկ մատում էին իրանց տոհմը բարձրացնելու և իրանց զլլսին թագ զնելու մասին. մանաւանդ ետական էին Բաղ-

բառաւորք, որոնք իրանց զգուշ, խոհեմ վարչադրութեամբ կամաց կամաց ահապին հարստութեան ու կալւածներն տէր դառան: Այս ցեղի V-րդ դարու ներկադարձցիւններն մինը, ցանկանալով իւր ցեղի գործերը անմահացնել, զիմում է Մովսէս Խորենացուն, որ նա զրի իւր տան պատմութիւնը: Սակայն Խորենացին, իւր լալն աշխարհագրոգիութեամբ ու անկեղծ հպրկնասիրութեամբ հանդերձ, չէր կարող մի աղբյուրի նեղ նպատակով բաւականանալ՝ նա մանաւանդ, որ Բագրատունիք ոչինչ ոգևորիչ, ասպետական գործեր արած չ'ունէին, և սկսում է գրել հալոց պատմութիւնը:

Հստաջարանում պատմում է

Խորենացին գրում է.

«Այս, ասէ, Հալի գեղապատշաճ և անձնազ, քաջազանդուր, խաղաղ և հաստարարուի. սա ի մէջ սկալիցն քաջ և երեսելի ընալ, ընդդիմակաց ամենեկուն, որք ամբառնալին զձեռն՝ միտարեալ ի վերայ ամենալն սկալիցն և զիւցաղանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բէլալ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լալնութիւն ամենալն երկրի ի մէջ բաղմակալ սկալիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ մտկոնեալ ալր իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանալին տիրել ի վերայ միմեանց, ուր պատահմանք ի գէպ ելանէին Բէլալ՝ բռնալն ունել զամենալն երկիր»:

Խորենացու կենսադրութիւնը, համառօտ տեղեկութիւն է տրւում նորաւ աշխատութիւններն ու Խորենացու մասին եղած եւրոպական գրականութեան վերադատահասարակ:

Թարգմանելը աշխատել է, որ թարգմանութեան լեզուն, որչափ կարելի է, մօտ լինի բնագրին, պահպանելով պատմաճօր գեղեցիկ, ազգու, պարզ և համառօտախօս ոճը և մի և նոյն ժամանակ «հեշտ հասկանալի, միշտ աշխարհարար ու ժողովրդական» մնալ: Սակայն պէտք է ստել, որ աղնքան էլ չի աջողել աղբյուրը իրագործել: Հակացոցութիւն տալու համար թարգմանութեան լեզուի մասին, բերենք մի քանի կտոր բնագրից և նորա թարգմանութիւնը.

Թարգմանած է.

«Այս Հալիք, ասում է, գեղեցիկ և վալելչակազմ, խիստ գանգուր մաղերով, գուարթ աչքերով և հաստաբաղուի էր. սա հսկաների մէջ քաջ և երեսելի լինելով, ընդդիմանում էր ալն ամենքին, որոնք ձեռք էին բարձրացնում հսկաների և գիւցաղների վերայ տիրապետելու համար: Սա խրոխտաւորով ձեռք բարձրացրեց Բէլի բռնաւորութեան դէմ—երբ մարդկալն ազգը տարածում էր բոլոր երկրի լալնութեան վերայ—կատաղի ուժեղ (?) բաղմալիւ հսկաների մէջ:

«Որովհետեւ այս ժամանակ իւրաքանչիւր մարդ կատաղած կոխում էր սուրբ իւր ընկերի կողը, աշխատելով մինը միւսին տիրելու, ալստեղ բաղըլ լալնում է Բէլին երկիրը նուաճելու և տիրելու»:

Մի ալ օրինակ խորհնացուց.

«Բանդի խորհելն չաղագո Աստուծոյ և ճգնազգեցիկ լինել՝ զոգ երկացունց, իսկ նուաճել հաւանեցուցանողականաւ կամ բռնաւորականաւ բանիւ՝ առաւել էր թագաւորին չնորհ. քանզի ընդ հաւատուն ոչ ինչ կասեցուցանէր զգործն»:

Վերջին օրինակն էլ բերեմ.

«Աւ զանեղսն ի նմա (երկրին) զիւրածել ի գետուն բերիւք, հանդիտակ կղզու առատագիւտս առնէ, չուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով, արոճմամբ երկոտասանից փռակաց»:

Թէ որքան «հեշտ հատկանալի, միշտ աշխարհաբար ու ժողովրդական» է և որչափ թարգմանութիւնը արտաբայտում է խորհնացու կորովի, պերճ (взяточник) և ոգորկ ոճը, թողնում ենք ընթերցողին հզրակացնելու:

Առանձին առանձին ոճեր և բառերում էլ կան շատ խորթութիւններ՝ օրինակ, ո՞վ է աշխարհաբար ստում «արու աղալ», մենք գիտենք, որ «էգ աղալ» չի լինում և, ճիշդն ասած, խորհնացիին էլ աղալէս չի տեսել, ալ ահա նորա խօսքերը.

Թարգմանած է.

«Արովհետեւ Աստուծու մասին խորհելը և ճգնութեամբ կեանք վարելը հասարակաց էր և բոլորին ևս, իսկ համողական կամ ստիպողական խօսքով նուաճելում թագաւորը աւելի ունեցաւ ազդեցութիւն. որովհետեւ հաւատի համեմատնաւ գործը չէր պակասեցնում»:

Թարգմանած է.

«Աւ ալն երկրի մէջ չ'եղածները հեշտութեամբ լինում են գետի ընթացքով, որ կղզու նման պտղաբեր է դարձնում երկիրը, նորա շուրջը պատելով և ամեն կողմը հոսելով տառներկու ջրանցքներ թողնուած և ամբ ¹⁾»:

«Ջնջելով զամենայն արու՝ վերտատարդաց մինչև ցտարնդեադս, բաց ի միտ աղալու, զոր առեալ մոտրիմ սան նորա» և ալն:

Իսկ թարգմանած է.

«Ջնջելով բոլոր արու տղաներին (?), երկտատարդներից սկսած մինչև կաթ ուտող երեխաները, բացի մի աղալից, որին առնելով նորա սան մոտրիմ» և ալն (երես 193):

Մինչդեռ ме мудрствуя лукаво կարելի էր թարգմանել.

«Ջնջելով բոլոր արուներին՝ երկտատարդներից սկսած մինչև կաթ

¹⁾ Էմիլը այսպէս է թարգմանել այս հոտը. «Что почва не въ состояннн произво-водить, обильно приноситъ рѣка, которая, будучи раздѣлена на двѣнадцать канавовъ, образуетъ изъ этой страны плодороднѣйшій островъ, окружая его и протекая по всемъ направлѣннямъ».

ուսող երեխաները, բայց մի աղա-
վից, և այլն:

Գրքի վերջում բառական մեծ
տեղ են բռնում (328 էրես) խորհնա-
ցու պատմութեան զանազան կէտերը
լուսարանող ծանօթութիւնները, քա-
ղած գլխաւորապէս Էմինից ու Լոնդ-
լուալից, և չաւելածները: Յարմար է,
որ խորհնացու պատմութիւնը հասկէ
մեկ երեք գրքով, բայց կարծում են,
որ չորրորդն էլ է եղել: Ահա ալի կարծ-
ւած չորրորդից բերած է իրրիս չա-
ւելած մի զլուսն «Տրդատ թագաւո-
րի սպանութիւնն ու թաղումն»: Բայց
ալի, կան և հետեւալ չաւելածները:
Հին Հայաստանի համառօտ աշխար-
հացոյցը, Ժամանակագրական ցու-
ցակը, Փսենտֆոնի Կիրօպէղիալից մի
կտոր և քաղածք Բիսութուն գիւղի
(Համադանի մօտ) բնեռագիր արձա-
նագրութիւններից, որ մեկնել են
կումս Գօբինօն և Ռաուլինսըն: Ալի
արձանագրութիւնները աղօտ լոյս են
սփռում Գարեհ Ա.-ի Ժամանակալ
հալոց պատմութեան վերալ:

Թարգմանիչը ունի ուրոյն ուղղա-
գրութիւն. նա վրդուօլ, վիճօլ, կարօլ և
այլն, օ է գրում, իսկ չաջող, Ասողիկ
և այլն: Թէ ի՞նչ գիւրութիւն է
մտցնում գրողների համար ալի նո-

րաձեւութիւնը. չը կարողացանք
հասկանալ:

Աւստրալի Կ. Ստեփանէի այս ուշ-
խառութիւնը իւր մէջ պարունա-
կում է ալի բոլոր նիւթերը, որ հար-
կաւոր են խորհնացու պատմութիւնը
ուսումնասիրելու համար: Ընթերցողը
կարող է լիակատար դադափար կադ-
մել խորհնացու վերալ եղած գիտա-
կան գրականութեան, քննութիւնների
և ծագած խնդիրների մասին: Եթէ
բնագրի թարգմանութիւնը կատար-
ւած լինելու աւելի պարզ հասկանալի
և ողորկ աշխարհաբար լեզուով և
ուսեհար բնագրի գեղարեւոտա-
կան ոճը, նա առաւել մեծ գրական
արժէք կ'ունենար: Ահա աւելի
նիւ, այս աշխատութիւնը համեմատ
է իւր նպատակին—միջոց տալ հալին
ծանօթանալ, ուսումնասիրել իւր
աղղի անցեալը: Պաշտօնականի պատ-
մութիւնը, որ որչալ է տարալրել
Հալերէն Գրքերի Հրատարակութեան
Ընկերութիւնը, Կ. Ստեփանէի աշխա-
տասիրութեան հետ միասին կարող
կը լինին չալունի չալով բաւականու-
թիւն տալ հալ նոր սերնդի բնական
պահանջին՝ ծանօթանալ իւր աղղի
անցեալի հետ:

Լ. Ս.

Ե. Մ. ՓՄԻՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴ. Վիեննա, տպ. Միթթարեան,
1890 թ., փոքր քառաժալ, V+52 էրես, տառ. № 10: Գինն է
50 կոպէկ:

Պարոն Եղիշէ Մաղաթեանը նոր
չէ գրում Փաւստոսի մասին: Մի
քանի տարի առաջ նա նւիրեց «Ար-

ձագանք» չաբաթաթերթում մի չօղ-
ւած, որի հիմնական կէտերը գտնում
ենք նաև այս գրքուկի մէջ: Այս աշ-

խառութիւնը նշանակւած է երեւում թէ մասնագէտ հաշագէտների և թէ առհասարակ ընթերցող հասարակութեան համար:

Հեղինակը աշխատում է պատասխանել հետեւի հարցերին. 1) Ո՞վ էր Փաւստոս (հա՛ջ թէ չո՛յն). 2) Ի՞նչ լեզուով է պատմագրել Փաւստոս. 3) Ո՞րքան հարազատ է հասել մեզ Փաւստոսի բնագիրը. 4) Որո՞նք են Փաւստոսի պատմութեան աղբիւրները և ի՞նչ տեսակէտից է նա զբոլում. 5) Փաւստոսի երկասիրութեան նշանակութիւնը:

Աւելորդ է ասելն անգամ, որ այդ հարցերը դեռ. եւ մի-մի խնդիրների են հաշկական գրականութեան համար և որոշ պատասխանների կարօտ: Հեղինակի նպատակն է նույն լուծմանը նպաստել, լատենով իւր կարծիքները և արած գիտողութիւնները:

Հեղինակը սպացուցանում է, որ Փաւստոսը լոյն էր. իսկ ապացույցը նա գտնում է մի երկու տողերի մէջ, որոնց իմաստը ցա՛ժմ սնուլ են հուկացել Սէն-Մարտէնը, Լամբը և ուրիշները: Փաւստոսը իւր պատմութեան վեցերորդ գլուխութեան ցանկի վերջում ասում է. «Ստորոտ ամենայն պատմութեանց լաղագս իմ տեղեկութեան, որք մի անգամ գմատեանս ընթեւեւոք, սունք սաւրն համարական թուօք»: Այդ պարբրութիւնը Լամբը թարգմանել է ֆրանսերէն այսպէս. «A la fin de toutes ces histoires, les lecteurs trouveront des renseignements sur ma personne, en dix versets bien complets», մինչդեռ պ. Մաղաթեա-

նը այսպէս է թարգմանում. «Իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր գլուխներից լետոյ, ընթերցողներդ կը գտնէք թւով տասը գլուխ»: Եւ վերաւի, ասում է պ. Մաղաթեանը, չինգերարդ և վեցերորդ գլուխներից լետոյ, որտեղ պատմիչը խօսում է Փաւստոս եպիսկոպոսի և նորա եղբայր Առստոմի մասին, զալիս են ուղիղ տասը գլուխ: Արեւմն պատմիչ Փաւստոսը նալն ալն Փաւստոս եպիսկոպոսն է: Եւ որովհետեւ ալնտեղ ալ Փաւստոս եպիսկոպոսի և նորա եղբայր Առստոմի մասին ասւած է, թէ «էին լեալ աղգաւ հոռոմ», դորանից պ. Մաղաթեանը եզրակացնում է, որ պատմիչ Փաւստոսը եպիսկոպոս էր և աղղով հոռոմ: Ուրեմն, որ Փաւստոսը եպիսկոպոս էր և հոռոմ, այդ ապացուցւած է. մնում է միայն իմանալ, թէ հոռոմ այստեղ «հռովմակցի» է նշանակում, թէ՞ «լոյն»: Պ. Մաղաթեանը ալս բանի համար չի գտնում ուղղակի պատասխան, բալց բերում է անուղղակի հանգամանքներ, որոնցից նա եզրակացնում է Փաւստոսի լոյն լինելը:

Իսկապէս ասած, ներկալ աշխատութեան ամենակարևոր կէտը հէնց ալ է: Դա է գլխաւոր հանգույցը, որի ճիշդ լուծումը հեշտացնում է բոլոր միւս հարցերին պատասխանելը: Երբ գտնւած է, որ Փաւստոսը լոյն էր, ալն ժամանակ պէտք էր գոնէ ենթադրել, որ նա պատմագրած է լուծարէն լեզուով: Արդ, Փաւստոսի չարագրութիւնից իսկ հեղինակը դուրս է բերում, որ նա գրել է իւր պատմութիւնը ոչ թէ չինգե-

բորդ դարում, երբ կարելի էր գրել նաև հայերէն, ալ չորրորդ դարու երկրորդ կիսում, ոչ ուշ քան 391 թւականը, երբ չէր կարելի գրել հայերէն լեզուով, քանի որ հայոց տառերը գոնեւցին աւելի ուշ, և գրել է լոնարէն լեզուով, բայց որ նա թարգմանակ է հայերէն 5-րդ դարում:

Բայց, ըստ մեզ, հեղինակը ի զուր է այնքան արհամարհում գիտնականների կողմնակի ապացույցները՝ Փաւստոսի լոն լինելու մասին: Երես 4 — 5 տրամ տրամաբանութիւնը մեզ թւում է թույլ: Մի պատմագիր, որը կրում է ոչ հայկական անուն և, առհասարակ, ուրիշ նշաններ է ցուց տալիս իւր հայ չը լինելուն և լոն լինելուն և դեռ պնդում էլ է, թէ Ներսէսի չաջորդները գրեւցին եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքից, բնական է, որ ազգային մի հեղինակ մեծապէս տեղիք է տալիս կարծիք ունի որ նա հայ չէ եղած, ալ օտարական և թերևս հայոց եկեղեցու թշնամի: Թէպէտև ճիշդ է, որ ալը բոլորը դեռ եւս գրական աղացուցներ չեն: Ազգային

վկայութիւնների դիմաց թույլ է երեւում հեղինակի հակա-աղացուցը. «Մի մարդ, ստում է պ. Մաղաթեանը, որ ազնային խորին ակնածութեամբ է խօսում Առաւորչի տոհմի մասին, չէ կարող հայոց եկեղեցու թշնամի լինել» (եր. 5):

Բնագրի խնդրական մասին հեղինակը պնդում է, որ Փաւստոսի պատմութեան մի բաւական նշանաւոր մասը կարել է, թերի է նաև ԺՁ զլուխները, բայց որ միւս կողմից՝ Փաւստոսի բնագրի մէջ մուտ գործած անհարազատ հատածների քանակութիւնը այնքան աննշան է, որ ալժման բնագիրը քիչ է որոշում սկզբնական բնագրից:

Գիրքը դրած է շատ սահուն և աշխոյժ լեզուով և կարգադրում է մեծ հետաքրքրութեամբ: Նկատենք նաև, ի վերջոյ, որ պ. Մաղաթեանը իւր ուղղագրութեան մէջ հետևել է միւս երկաստարդ ֆիլոսոֆներին՝ անձալն «ո» տառի նկատմամբ, առել է թէ չարել է «Աղբիւր»-ի և «Մուրճ»-ի ուղղագրութեան:

Ա. Ա.

ՆԱԶԱՐԵԱՆՅ, տարիաւագ ՅՈՎՀԱՆՆԷՍ. «ՕՐԱՅՈՅՅ» 1890 թ. Գր. և Հայկաց ՏՅԶԲ—4382 թ. (չորրորդ տարի). Թիֆլիս, տպ. Մարտիր., 16-աճալ. 255 երես, տառ № 10: Գինն է 20 կոպ.:

Բացի օրացուցից, գրքովը ունի չափաւոր, ուր պարունակւած են հետևեալ նիւթերը. 1) Տօն օրերը հայոց ուսումնարանների համար. 2)

Միտել-եկեղ. ուսումնարանների պաշտօնական ծրագիրը. 3) Կովկասի մասին աշխարհագրական տեղեկութիւններ. 4) Բնաւորական եւրոպական

բառերի և ոճերի. 5) Աերակրի և բմբեկիքի մասին տեղեկութիւններ. 6) Բժշկական. 7) Դիմադուշակ. 8) Բարոյական մտքեր. 9) Ազօթք:

Յաւելւածը բռնում է գրքովի մօտ 200 երեսը և շատ հետաքրքրական է: Աովկասի մասին աշխարհագրական տեղեկութիւնները քաղած են լատ. աղբիւրից՝ Վէլդենրատմի «*Путеводитель по Кавказу*», 1888 թ. լացոնի գրքից: Ազգ. բաժնում ընթերցողը կը գտնի բացի ընդհանուր տեղեկութիւններից Աովկասի մասին, նաեւ բաւական լիակի տեղեկութիւններ բաղմամբիւ գիւղաքաղաքների մասին, որոնք չստակ են բոլոր ուղեցոյցներին: Տեղերը զատուորած են տրականերով՝ Ռոստով—Վլադիկաւկաւ, Վլադիկաւկաւ—Աւարակակ, Վլադիկաւկաւ — Թիֆլիս, Թիմիրխան-Շուրա—Բաղու, Նովորոսիսկ—Բաթում, Բաթում—Թիֆլիս—Բաղու—Արա—Երևան:

Դա մի ուղեցոյց է, որը պէտք է ամենքը ունենան, մանաւանդ ճանապարհորդները:

Բառարանը նմանապէս չափազանց օգտակար կերպով է կազմուած. և, իբօք, հարպական խօսքեր աղնքան են պատահում մամուլի և խօսակցութեան մէջ, որ ալժմեան ընթերցող հալը մի աղբիւրի բառարանի կարօտութիւն պէտք է մագուց քաշում լինի: Բառարանը բռնում է 100 երես և բացատրում է, ըստ երևութին, 800—1000 հարպական բառեր և ոճեր, որոնք մուտք են գործած մեր լեզուի մէջ. բառերի բացատրութիւնները, ընդհանրապէս, ճիշդ են: Բայց կաղմողը ի դուր

է օտար բառերից մի քանիսի մէջ հետեւի ուստաց վերջաւորութիւններին. օրինակ, աւելի լաւ է տեւլ՝ մանուֆակտուր, քան թէ մանուֆակտուրա, նոմէնկլատուր, քան թէ նոմենկլատուրա, պրօգրամ, քան թէ պրօգրամմա, չը նաղած որ շատերի համար լաւ կանոնին հետեւած է՝ բուտին, պիէս, սիստեմ, ինտրիդ: Կան տառասխալներ՝ պիսէմիստ, զիվիդենա, բիւլժէա: Կան ոչ շատ չաճող բացատրութիւններ՝ էքսպլուատացիա—օգուտ քաղելը, օգտակարութիւն: Վերջին խօսքը սխալ է, նորա տեղ պէտք է լինէր՝ հարդատարութիւն: Շահ տաժ՝ փողի ետից ընկնելը: Շատ և շատ սխալ է թարգմանած Ուտիլիտարիստներ խօսքը:

«Դիմադուշակ» բաժնի օգտակարութիւնը շատ կասկածելի է: Ազգ. պիտի ժողովրդական գրքովներումնա մոլորեցուցիչ է, որպէս «Նրազանանը», թէ և աւելի անմեղ, քան վերջինը: Գովեստով պիտի լինէր, որ «Նրազանանը» դուրս է ձգւած ալս օրացոյցից:

Ընդհանրապէս կարող ենք լան ձնարարիւ Սարկաւազ Յ. Նազարեանցի օրացոյցը ձեռք բերելու:

Ի վերջոյ մի երկու խորհուրդ կաղմողին: Քանի որ նորա օրացոյցը ամեն տարի զանազան բովանդակութիւններ ունի և ամեն անգամ էլ հարուստ է շատ օգտակար բաժիններով, լաւ կը լինէր, որ նորա օրացոյցը աւելի մեծ գիրքով հրատարակէր, տաւնց թէկուզ ծաւալը մեծադնելու, որպէս զի մի

քանի տարւալ օրացոյցներն լաւելաւածները կարելի լինի միասին կազմել և, իբր գրքեր, գրադարանում ունենալ: Կազմողը ամեն տարի կը տար բովանդակութեան ընդհանուր ցուցակը, երեսների ցուցմունքներով: Հետաքրքրական դարձնելու համար, ալն ժամանակ, կազմողը ստիպւած էր լինի ամեն տարի կրկնել արդէն

հրատարակածները, իսկ եթէ ալման ձևով շարունակել, առաջնալ տարիների լաւելաւածները կը կորչեն: Աստծո նպատակի համար պէտք է լաւելաւածների երեսները իրանց թրուեր ունենան և շարունակին ամեն տարի՝ մինչ մի հաստի կազմելը և նոր հաստի սկսելը:

Ա.

ԱՂԱՆԵԱՆՅ ԳԻՒՏ քահանայ. «ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՅ» 1890 թ. ականի համար. տպ. Մարտիրոսեանցի: Գինն է 1 ռ.

Աս երկրորդ տարին է, որ կազմողը հրատարակում է իւր հաւաքածական օրացոյցը: Գալ պատի օրացոյց է, որի ամեն օրւալ թերթիկը կտրւում է, լաջորդ օրւալ թերթիկը բացելու համար: Գաղափարը վերցրած է «Кавказскій Календарь» անունով պատի օրացոյցից, որը տարիներից ի վեր հրատարակում է Կովկասեան ստատիստիքական կոմիտեով: Ամեն օրւալ թերթիկի վերալ նշանակւած է ալն բուրր, ինչ միւս օրացոյցներում կալ, բացի դրանից, վիշատակւած է ալց թւին պատահած մի կամ մի քանի կարևոր դէպքեր: «Кавказскій Календарь»-ի օրացոյցը քաղւում է իւր նիւթը, մեծ մասամբ, Կովկասի վարչական և պատերազմական կեանքից, իսկ Ազանեանցիներ՝ հալկական կեանքից:

Ալց օրացոյցի ձևը ունի ստատիստիկական, որանք նրան շարմար և զարձնում մանաւանդ կօնսօր-

ների համար: Գրական մասը երկրորդական դեր է խաղում: Բալց հէնց ալց է մեղ վերաբերելին: Ալց, պէտք է խոտովանած, որ ալց բաժինը կարելի էր գիււ ևս մշակել: Նախ, շատ ևն զանցառութեան տրւած ընդհանուր կովկասեան եղելութիւնները, որոնց նկատմամբ շատ հարուստ է «Кавк. Кал.» պատի օրացոյցը: Հալկական կեանքը, Կովկասում, շատ կազմերով նաեւ ընդհանուր կովկասեան կեանք է: Մի՞թէ Կովկասեան զանազան հիմնարկութիւնները՝ գտտարան, վարչութիւն և ալլն, մեղ չեն վերաբերում: Բալց զանք աւած սեղեկութիւններին: Ալտուղ մենք նկատում ենք մի չափազանց մեծ երկրալալութիւն մի քանի տնտեսներին: Օրինակ՝ լալտնւած է պրօֆ. Քերովի: Պատկանեանի հօր մահը (15 լուն.), մի ինչ որ «քաջ նկարիչ և երեւի պատկերահան» տիրացու Ռաֆայէլի մահը (27 լուն.): Ի՞նչ նշանակու-

թիւն ունի, որ «ուսումնասէր Տատեան Զովհաննէս Ամիրան Բ. Գրան հրամանով Եւրոպա ճանապարհորդեց» (23 փետր.): Աթէթէ մի մեծ ազգային եղելութիւն է, որ 1829 թ. 12 հրէաներ հաւոյց դաւանութիւն ընդունեցին Կ. Պօլստում: Կամ միթէ, իրօք, վանեցի Ռոտանիկ Տէր-Մարգարեանցը, ալի լաւանի բազղախնդիրը, 1875-ին ընտրուեց անգամ Պարիզի Ակադէմիայի, եթէ միայն ալի սխալ տնունով ուղում են տուել «Ֆրանսիական Ակադէմիան»: Չենք կարծում. իսկ ի՞նչ նշանաւոր բան է Գրիմիոնի երկրագ. վարժարանում ոսկէ մրցանակ ստանալը (առաջ 19 մայիս): Նկատենք, որ Իերլինի վեհաժողովը ուղարկեաւ երկու հալ պատգամաւորները էին ոչ թէ Խորեն-Նարայէ և Խրիմեան, այլ Խրիմեան և Խորեն-Նարայէ (1-ին լուսն.): Համաձայն ենք, որ աղտեղ զանազանութիւնը միմիայն և-ի մէջ է: Ալի ի՞նչ Մարաց հեծելազօր խողաւ կողպսեց Մշու և ո. Կարապետի վանքը (29 լուսն.):—Լուի Ֆիլիպպի կալոր չէր (4 օգոստոս), ալ թագաւոր և նորա որդին էր ոչ թէ Մոնպանսիէ, ալ զօւքս զը Մանդունիէ:

Կարելի էր չը մոռանալ Բաֆֆի մահաւան մատին, մանա-

ւանդ որ չիչեւած են Մերենցի, Շանչեանի, Պալատանեանի մահաւան օրերը:

Մենք կրկնում ենք, որ հատուածական օրացույցների առաւելութիւնները նոցա ձեռի մէջն են կապանում. ալիպէս որ, եթէ չը լինին էլ ուրիշ տեղեկութիւններ, արժէ նրանց ձեռք բերել և պատի վերադ կախել. ամեն սենեակում նոքա կարող են նոյն իսկ պատի զարդ համարել: Բոլոր բանի որ օգտակար է համարւած օրացույցների ալի ձեռ ծառայեցնել նաեւ գրական, քաղաքական, տնային տնտեսութեան և ալ տեղեկութիւններ հաղորդելու համար, մենք արդար ենք համարում պահանջել, որ ալի մասի վերադ կազմողները լուրջ կերպով աշխատեն: Եւ որպէս զի մեր պահանջը կարելի լինի կատարել, մեր առաջին պարտքն է ալի, մանաւանդ զաւառներում շատերին դեռ ևս անգալտ, օրացույցի տարածելուն նպաստենք: Թիֆլիսի, Բագուի և ալ տեղերի քաղաքացիներից շատ շատերը ոչինչ կորցրած չեն լինիլ, եթէ «ՀԱՅԿ. ՀԱՅ.» օրացույցի տեղ ձեռք բերեն Աղանեանցի հատուածական օրացույցը:

Ա.

ԶՄՆԿԵԱՆ ՄԱԿԱՐ. «ՄՈՅԻ ՕՐԱՅՈՅՑ» 1890 թ. Գր., (երրորդ տարի). Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 16-աճալ, 128 երես: Գինն է 15 կ.:

Ալի օրացույցի լուսնեւածը պատահի խորհուրդը չի կատարում և բունակում է ցուցակներ օրերի, երբ օրերի, երբ դպրոցներում արձա-

կուրդ է, ժամանակագրութիւն նշա-
նաւոր անցքերի, ռուսաց կալս. տու-
նը, Կովկասի նահանգների կառա-
վարիչներ, Հալաստանեայց Եկեղե.

յու վարչութիւն, 100 րուբլու : տո-
կոսները և Երազման:

Ա.

ԱՂԱՆԵԱՆՅ ԳԻԻՏ քահանայ. «ՕՐԱՅՈՅՅ» 1890 թ. Գր. և հայ-
կակ. ՏՅՁԲ (4382) և տոմարական թւակ. ազգիս ԽՅԼԹ: Թիֆլիս,
տպ. Մարտիրոս., հրատարակութիւն «Աղբիւր» պատկեր. ամսագրի:
 $\frac{1}{32}$ ծալ, 126 երես: Գինն է 15 կոպ.:

Յաւելածը տալիս է 1) համա-
ռօտ ժամանակագրութիւն հայոց
պատմութիւնից, 2) Կենդրոնական

գրաւահառանցի հաշիւէն գրքերի
ցուցակը:

„АРМЯНСКИЙ КАЛЕНДАРЬ“ (сокращенный) на 1890 г. съ пред-
казаніями. IV-и годъ. Тифлисъ, типогр. Мартиросянца, 1889 г.

Այս օրացույցի, որ հաշիւական է,
ռուսաց լիզուով թարգմանելու մի-
ակ հիմքը այն հետաքրքրութիւնն է,
որ մի քանի տարիներից ի վեր
սկսել է ցուց տալ ռուսաց տեղա-
կան (Թիֆլիսի) հասարակութիւնը
դէպի հաշիւական «Եփեմերդին»: Եթէ
հաշիւական Եփեմերդին կոչւած էլ լի-
նի բունել կնաուէրի, Հելլիգի և մա-
նաւանդ Տօբալդօի տեղը, որոնցից
մանաւանդ վերջինս մեծ հռչակ ըս-
տացաւ Արեւմտեան Եւրոպայում,—
հաշիւութիւնը չէր ձեռք բերիլ մինչոր

պարծանք կուտուրական աշխարհի
առջեւ, իսկ վերջինս մի նոր վաս-
տակ չէր ունենալ այդ բանից:

Այս օրացույցի հրապարակման-
բնից երկրորդն է՝ ձաշի օրացույց
Թիֆլիսի մօքալաքի, աչսինքն՝ բուն
Թիֆլիսցու: Այդ մասը կաղմած է
փորձած մարդու ձեռքով և մեծ
հմտութեամբ: Տեղական անուննե-
րից գերադասութիւն տւած է հայե-
րէն անուններին, որ միանգամայն
արդարութիւն է:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ս Ե Ր Կ Ե Ա Ն Ք Ի Ց

I.

Գրել հայոց կեանքից, դուրս բերել հայոց կեանքից հետաքրքրական, խրատական երևույթներ, մտքեր—դրանից աւելի ինչ դժւար բան... Մեղանում կեանք չը կալ—մինչև կոկորդը պատուիրը գոռում է ամեն մէկը, ուր և լինի նա—Թիֆլիս, Բագու, Երևան, Շուշի։ Գոռում են աղպէս, գոռում են, կրկնում հարիւր անգամ և ամենակատարեալ լուսահատութեամբ ձեռք են թափ տալիս, զգւանքով չըթռնքները վեր քաշում։ Եւ լետոյ։ Պարզ հետեանք.—ամենքը հեռանում են, մանում մի որ և է պատահական կեղևի տակ, կուչ են գալիս, անշարժանում և սուս ու փուս ապրում են, հաց ծամում...

«Այեանք բոլորովին չը կալ, զգւելի է, անտանելի. մարդ անատնանում է»։

Գեռ էլ աւելի խիստ, աղբու բառեր կան աղպէս ասողների բերանում։ Ընդհանուր վհատութիւն, ընդհանուր լուստեսութիւն։ Մրտում ես ալք բացականչութիւններից, աղպէս լուսահատ ձեռք թափ տալուց, ալք մի աշնայիս վարակիչ ցրտութիւն է, ձեռք, ոտք ու հոգի կաշկանդող մի ցրտութիւն, որ եթէ ճարում էլ են բաղդաւոր լաւատեսներ, փախչում են աչք ու ախանջ փակած և նոյն զրութեանն են հասնում, որպիսին արդէն վաղելում են ամեն ինչ բացասողները, աչսինքն՝ էլի ծածկւում են մի որ և է կեղևի տակ, սուս ու փուս կուչ գալիս ու հաց ծամում...

Գանդատների դարում ենք։ Գանդատ և գանդատ ամեն տեղից, ամեն կողմից։ Մէկը գրում է թէ արտասահմանի հայ ուսանողութիւնը իւր

կեանքով պատիւ չի բերում ուսանող անուան. մի ուրիշը գրում է թէ ուսաց համալսարանների հալ ուսանողները միայն գոռալ, անմիտ Փրագներ արտատանել զիտեն, բայց իրօք անպէտք մարդիկ են, զատարկ արարածներ և ալլն և ալլն. մի ուրիշը լալտնում է թէ Բագուի երկաթագործները հիասթափւած է, սառած, մեռած է, ոչինչ գործ չի կարողանում կատարել: Հալ զրաղէտը, ասում են, իւր գրչի անմիտ խաղերով է զբաղւած և կարծում է թէ մի անաղին, անգնահատելի գործ է կատարում: Մեր ազգային հռչակաւոր թղուկ մեծամիտները օրէցօր ուռչում են, փքւում և արդէն ալն աստիճանին են հասել, որ շատ նեղանում են, երբ մէկը չի ուզում հաւատալ թէ իրանք, ալլ թղուկներն են միայն, որ կարող են առարկան ալնպէս տեսնել, ինչպէս որ կալ, կարող են խելք սովորացնել, ուղղութիւն տալ, ապրեցնել բոլոր ալն հասարակ մահկանացուներին, որոնք ամեն օր տեսնում են նրանց և չեն հասկանում թէ ինչու են նրանք փքւում, ուռչում: Աւելացրէք ալլ բոլորի վերալ մեր ազգային աղաների, հոգաբարձուների, երեցփոխների մասին զիջւած գնահատները... Ո՛վ կարող է ալլ բոլոր գնահատների չափը, սահմանը որոշել...

Եւ ապախի մի դրութիւնից ինչ վերցնես, ինչ գրես, մանաւանդ երբ հարկւրաւոր, հազարաւոր բերաններ հաւատացնում են, որ ալլ զրութիւնը բոլորի համար զգուշի է, որ ալլ կեանք չէ, ալլ սատունան գիտ թէ ինչ բան է...

Չարմանալի է: Աշխարհիս մէջ կեանք տաւած բանից էլ ինչ որոշ հասկացողութիւն: Բայց մենք չենք հասկանում և միայն կրծքներս ենք ծեծում... Մենք ապրում ենք, մենք մեռած չենք, ամեն օր արեւ ու երկինք ենք տեսնում, բայց չամառութեամբ կրկնում ենք թէ կեանք չը կալ: Ալլ չի նշանակում արդեօք, որ մենք մեր չուրջը ետացող հազար ու մի բարի կամ չար կողմ և կերպարանք ունեցող աշխարհում կեանք չենք տեսնում: Կեանք, ի հարկէ, կալ, կան և կեանքի համար անհրաժեշտ պալմանները,—մարդ, լոյս, խաւար, աշխարհ, ուտել, խմել: Իսկ եթէ ալլ մեծ բանի գոյութիւնը հրապարակով ուրանում ենք, զբանով մեր սարսափելի անկարողութիւնն ենք ցոյց տալիս: Իսկ թէ լաւ է թէ վատ ալլ կեանքը—ալլ ուրիշ հարց է, որից, սակալն, տաւանատելիս ասիմ չը կալ:

Ամեն տեղ կարելի է տեսնել դրսի, հասարակական կեանք և ներքին, բնտանեկան կեանք: Ալլ երկու կեանքերը լինում են տխուր, ուրախ, զւարճալի և մեռած, ճահճալի: Եթէ եւրոպացին իւր կեանքի մասին խօսելիս նկարագրում է, օրինակ, ալն հեշտութիւնը, որ ժամանակակից գիտութիւնը տաւ է բնութեան կոշտ կրծքից հալ պոկող մարդուն, իսկ հալլ միայն իւր հոգաբարձուի օձիքիցն է բռնել, կամ ուրախանում է, հրճւում, երբ մի որ և է տիրացու խելքին զօր անելով երկու ու կէս լաւ խօսք է ասում, ալլ չի նշանակում թէ եւրոպացին ապրում է, իսկ մենք գոյութիւն չ'ունինք, ալս աշխարհից չենք: Նա ալնպէս է, մենք ապախիս Նո-

րա պատմածը կը լինի անպիտի բան, որի վերայ կը զարմանանք, իսկ մեր պատմածը անպիտի բան, որի վերայ ծանր կերպով գլուխներս կը թափահարենք: Ո՞վ կարող է ասել թէ միայն զարմանալն է լաւ, իսկ գլուխ թափահարելը բոլորովին անօգուտ է:

Հետեւաբար, փախել միայն ան պատճառով, որ մեր մէջ հիացնող բան չը կալ, լուսահատուել, պատճառ բերելով թէ մեր կեանքը կատարեալ ճահճալին է, երբէք չի վկայում թէ այդպէս անողները մի լաւ մտքի վերայ են: Ճահիճը մեզ վախեցնում է և մենք փախչում ենք, ուղում ենք ազատուել նրանից զտեք ինչպէս. — աւելի խոր թաղուելով նորա մէջ, անպիտի գիրք բռնելով, որ կեղտոտ տիղմը մեզ ծածկէ ամեն կողմից:

Ո՛չ. կ'ուզէք ճահիճ անուանեցէք. կ'ուզէք ուրիշ անուն տէք, բայց մեր կեանքն էլ կեանք է: Նայենք նրան, տեսնենք. դուցէ ամեն անգամ մեր առջեւ կեղա չը դուրս գալ, դուցէ հանդիպենք անպիտի տեղերի, որոնք մեր լուսահատ, լուստես ֆիլոսոֆաների համար մի խրախուս, վերջապէս լաւի մի կտոր բերեն:

Այս միտքը ինձ հարկադրում է գրել մեր կեանքից, որչափ ոլժս ու կարողութիւնս կը ներեն: Ամբողջ, վերջացրած բան չէ իմ խոտաւցածը: Նիւթի պակասութիւնը ակներև է. մենք չենք սիրում միմեանց բան հաղորդել, ապրիլ բաց և արձակ. մենք սիրում ենք ծածկուել, հեռանալ, աւանձնանալ: Բայց և այնպէս, պատահական նիւթեր միշտ կը լինին, որոնք լամենալն գէպս ուշադրութեան արժանի են: Այս կը խօսեմ զրանց մասին իբրև մի հասարակ մտածող:

Իմ ալս նախարանը բոլորովին աւելորդ բան կը լինէր, եթէ մեր մէջ գոնէ քիչ լինէր անպիտի մարդկանց թիւը, որոնք անքան խոտաւցած են գէպի ուրիշները և թող, ներողամիտ իրանց պակասութեան վերաբերմամբ, որոնք ամեն բանի նաչում են խոչորացուցի միջով և իրանց շատ բազդաւոր են համարում, որ այդպէս են և ոչ ուրիշ կերպ:

II.

Սկսենք մեր ընտանիքից:

Ի՞նչ է ընտանիքը մեզ համար: — Թող ալի հարցին պատասխանէ մեր ժամանակակից ամենաերեւելի հոգևորականը, մեր Խրիմեան Հայրիկը: Քիչ են անպիտի ընտանիքները, որոնք կարողանան նկարագրել Հայրիկի պէս: Այս բնութիւնը եմ նորա «Իրաւտի ընտանիք» անունով պատուական, բայց զփրազգապէս մոռացած գրքից ալս կտորը.

«Ժողովուրդը եթէ կը լառաջագիմէ՝ իր ստաջին քաղը ընտանեաց սրանէն կ'առնու. եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրպէն է. եթէ կը զօրանայ, իւր ուժ և բազուկն ընտանիքն է. եթէ կը հարստանայ, իւր դանձարան և գանձապիտան ընտանիքն է... եթէ զրախտի գե-

տերը կը վազեն իւր հրապարակը, աղբիւրը զրախտի ընտանիքն է... եթէ բարեփոխող զաւակներով օր ըստ օրէ բերապատիկ կաճի, իւր նախածնող խնամատար ընտանիքն է. եթէ իւր զաւակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կ'ուզէ, իւր բարեկիրթութեան առաջին համալսարան ընտանիքն է. եթէ աչս աշխարհիս վերայ երջանիկ ապրել կ'ուզէ, թող հաւատայ, որ երջանկութեան կեանք բաշխող աղբիւր ընտանիքն է. եթէ երկրէս չետող երկինքն եւ ժառանգել կ'ուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն, հաւատ և եկեղեցին, աչս, աչս սուրբ սրանդները անեղծ անկորուստ պահելու խորանն ընտանիքն է»:

Աւելացնելու ոչինչ բան չը կայ:

Կար մի ժամանակ—և աչս ժամանակը մեզանից շատ չէ հեռու—երբ մեր ընտանիքը կառավարուած էր որոշ աւանդական կարգերով, սովորութիւններով: Գրսի, հասարակական կեանքն էլ ունէր աշխարհի կարգ ու կանոններ, որոնք կապ ունէին ընտանիկան օրէնքների հետ: Կա թէ վատ, մէկը միւսի շարունակութիւնն էր, մէկը միւսի օժանդակն էր, և աչս երկու աշխարհները համերաշխ էին միմեանց հետ: Մէկի տեսակէտից նայելով, միւսը անհասկանալի չէր երևում, չէր ցուց տալիս իւր պակասութիւնը, սխալը: Ամեն ինչ գնում էր կարգին. ցաւը ցաւ էր, ուրախութիւնը ուրախութիւն: Ամեն մի մարդ բռնած ունէր իւր տեղը, ամեն մէկը հասկանում էր թէ ինչ է ինքը: Այսպէս, ընտանիքի մեծը, մայրը, տանը անփոխարինելի մի խիստութիւն էր, ինչպէս հայրը գրոսումն էր աղպէս. մեծ հարսը իւր տեղն ու նշանակութիւնն ունէր, փոքրը իւր տեղը. աղջիկը գիտէր թէ որին ինչպէս պէտք է հնազանդւի: Եթէ մի որ և իցէ պատճառով խանգարուած էր ընտանիքի աչս կարգն ու կանոնը, եթէ մէկը մոռանում էր իւր պատշաճաւոր տեղը, պարտականութիւնը, իսկոյն գրսի աշխարհը սկսում էր ճնշել անկարգութիւնը, դատապարտել, մինչև որ խանգարուած զրութիւնը աչս ու աչս կերպ իւր օրինական ընթացքն էր ստանում: Կար, մի խօսքով, ղեկ, որին նայում էին, որի կտելից շարժում էին:

Բայց ժամանակը փոխեց զրոյ հանդամանքները. վերցւեց հինը և նորա տեղ մուտ գործեց նորը: Մնաց ընտանիքը նոյն զրութեան մէջ. նա պիտի պահէր իւր աւանդական սովորութիւններով, բայց աչս ևս հատուտ ճանաչեալ էր, աչս ևս ոչ թի ու կարողութեան տէր չէր, որ զիմանար: Գրսինը վերանալուց չետող ներքինը մի անտաշ, կոպիտ բան էր երևում. զրսինը աչս ևս չէր օժանդակում նրան, չէր պահպանում, աչս քաղքաղում էր նորա ամբողջ կազմածքը: Ընտանիքը նոր կարգերից, փոխած հանգամանքներից չը ստացաւ ուրիշ կերպ կառավարելու կանոններ. զրսինը վաղ ի վերուէր, ինքն էլ չ'ունէր հաստատ, տեղական կերպարանք: Եւ ընտանիքը մնաց բաց, արձակ ամեն կողմից. նա սկսեց, եթէ կարելի է աչսպէս ասել, հողմահարել ամեն կողմից. նրան ոչ ոք չէր պահպանում, աչս ընդհակա-

աւակն, ամեն մէկը իւր շունչն էր հաղորդում նրան, իւր գոչն էր տալիս նրան: Եկաւ կնոջ էմանսիպացիան, թեթեւ կերպով մեր ականջին քուեց, և հազ կիներ զէն ձգեց իւր կեղեր, քալեց զէպի դաշնամուր, ձեռք առաւ հովհարը, երես քացաւ, տղամարդկանց ծանօթութիւններ որոնեց, սկսեց անվախ խօսել հրապարակներում, դարձաւ սալօնի դարդ, բալց ոչ երբէք աչն, ինչ որ ուսանջում էր էմանսիպացիայի ոգին:—Եկաւ ճաշակի խրճողիւրը, հազ ընտանիքը շտապեց զէն ձգել իւր Արզումաններին, Մկրտիչներին, Մեկքումներին, Նախշուններին, Մանիշակներին և սկսեց աջ ու ձախ մկրտել աւելի քնքույն անուններով: Եկաւ ոճի Ներութեան, մարդամէջ դուրս դալու խնդիրը: Եկաւ մտքի գաղափարի ազատութեան խնդիրը, հազ արկիւնը փողոցներ չափելը սովորեց, հիւր գնալ, հիւրեր ընդունել սկսեց, կանաչ սեղանների շուրջը նստեց մարդավայել թղթախաղի համար: Նա մի րոպէում հոսկացաւ, որ ինքը պարտաւոր է իւր սրտին խիստ ազդու տպաւորութիւններ պատճառել, ուստի սովորեց «խունջիկ-մունջիկ» անել, դուր դալ, գրաւել:

Այսպէս ահա կատարելութիւնը հասաւ ամեն կողմից, մտաւ ընտանիքի մէջ: Բալց հազ կիներ մնաց ճոյնը, ինչպէս էր ճորտութեան, ստրկութեան ժամանակներում, երբ կար տէր և հրամանատար, երբ կար բռնաւոր, կար արդելք մտքի, կամքի ազատութեան դէմ: Մնաց ճոյն անզարգացած, անհասկացող, նախապաշարած արարածը: Լուսաւորութեան, քաղաքակրթութեան արտաքին չափութիւնները, ձևերը թափուեցան նորա վերայ, ներքինը մնաց դարձեալ դատարկ, դարձեալ անմշակ, խոպան: Եւ նա ծանրացաւ ընտանիքի վերայ, նա դարձաւ մի անհաշիւ սպառող արարած, որ տուղծեց իւր համար անթիւ ծէսեր, արարողութիւններ: Մի այսպիսի վերածնութիւնը—թէ կարելի է վերածնութիւն անուանել—աչնպէս արագ կերպով կատարեց և կատարում է դեռ, որ անհնարին է ճոյն իսկ դիտել, իմանալ թէ ինչ տեսակ հոտանքն է ամենից զօրաւորը, որ տանում է իւր հետ հազ ընտանիքի անդամներին: Փոփոխութիւնները արագ չաջորդում են միմեանց, այսօրւայ տեսածի վաղը ուրիշ կերպարանքի տակ է լինում: Կանոնաւոր ընթացք, հետևողութիւն չը կայ:

Այդ ամենը, ի հարկէ, տղամարդի միջոցով կատարեց: Տղամարդն էր, որ դրսից բերում էր նոր կարգը, աչն ամենը, ինչ ինքն էր սովորում: Իսկ նրան սովորացնողները շատ էին: Վարեւով թափառակա՛ն կեանք, երկար տարիներ չփակելով զանազան ազդութիւնների, զանազան երկիրների կեանքի հետ, նա իրան չատուկ սրամտութեամբ որոնում, գտնում էր, իւրացնում իւր սեպհական կեանքի համար բոլորովին խորթ, անբնական, բալց իւր կարծիքով լաւ բաներ և այդ բոլորը բերում էր, տուն մտցնում: Նա ինքն էլ չ'ուներ պատրաստութիւն, նա ինքն էլ միայն արտաքին փաշտով ոգևորւող, հիացող մի միամիտն էր, ուստի կարծում էր թէ իւր գերը միայն նորութիւն ներս բերելն ու ցոյց տալն է: Նոյն լակ ալժմ էլ, մեր

աչքի տալ, դարձում են միամիտ ներմուծողները: Գիցուք մէկը, մի անգրագետ հազ մարդ, բազդի բերմունքով մի որ և է վնաս ընկած, մտացւած անկիւնում կարողացել է շատ թէ քիչ կարողութիւն ձեռք բերել: Նա փոխել է. նա չի կարող ոչ միայն առաջաջ հագուստը հագնել, այլ և առաջաջ պէս խօսել: Նա փոխում է հագուստը, փոխում է և լեզուն: Սակայն լեզու փոխելը հագուստ փոխելու պէս հեշտ չէ: Հագուստը հարստացնելու համար նորա կողմից հարկաւոր է միայն կամք. իսկ լեզուի հարստութեան համար նա ղիմում է մի կատարեալ մտաւոր ինքնասպաւնութեան: Նա հաւաքում է բազարների, փողոցների անկիւններում լսած հատ ու կտոր մտքեր, ոճեր, ըստ մեծի մասին առանց հասկանալու. նրանց խմատը, գրաււած միայն նրանով, որ այդ մտքերը, ոճերը դործ են ածել իրանից բարձր մարդիկ. և աջ ու ձախ դործ է ածում իւր լսածը, աւանջի մի անկիւնով ըմբռնածը: Մարդը, տեսնում էս, խօսում է, երկար խօսում է իբրեւ համողւած, նորութիւն բերած մարդ. նա դործ է ածում թէ մաքուր հայերէնի ճոճւան Ֆրաչները, թէ մաշւած օտար խօսքերը, և նկատում էս, որ ճղնում է հաստատուել մի վերացական միտք, աշխատում է մի ինչ որ իղէա քարողել: Նւ ի՞նչ—լսում էս, լսում և ոչինչ չէս հասկանում: Բառերով, ոճերով բեռնաւորւած մի ցաւազար, մի հիւանդոտ միտք, որի ինչ լինելը դարձեալ մութ է մնում, դարձեալ անհասկանալի, չը գիտես ո՞ւր է սկիզբը և ո՞րն է վերջը. չը գիտես թէ ի՞նչ նպատակի է ծառայում այդ անմիտ բառախաղութիւնը, որը, սակայն, նոր, վերանորոգւած մարդու համար մի խորիմաստ ֆիլոսոֆալութիւն է, մի աղնպիսի հաղւապիտ ֆիլոսոֆալութիւն, որին ամենքը պարտաւոր են ականջ դնել, լաւ ականջ դնել և անդատճառ հասկանալ:

Արդ, ով պէտք է ականջ դնէ նրան, հասկանալ, իւրացնէ նորա, աչապէս առած, անդամալոյծ գաղափարը: Դրսում նա աղնքան պահանջող չի կարող լինել, որովհետեւ դրսում նա գոնէ քաջութ է, գոնէ մէկի, երկուսի մօտ պարտաւորւած պիտի լինի խոստովանել, որ ինքն աղնքան պիտան չէ: Մնում է սուներ, ընտանիքը. աղտեղ նա կարող է պահանջել, աղտեղ չը կալ մէկը, որ կարողանալ իրան նրանից բարձր համարել. աղտեղ նրան մի փոքր աստուած են համարում: Նւ ընտանիքը իւրացնում է նրանից նորա սիրած գաղափարը, աչինքն անմիտ և անխմատ հոլմալին ճրթճրթոց: Այս երևութը անհատական չէ, թող ամենեին չը վրդովեն մեր աչն պարտները, որոնք վարդազոյն ակնոցները աչքերին դրած՝ դէս ու դէն են նայում և ամեն ինչ չափում, կշռում են իրանց ձեռքում բռնած արշիւնով: Հասարակ և միջին դասակարգը աչժմ եռանդով մի աչալիտի վերանորոգութիւնն է իւրացնում: Նւ ապապէս չի կարող լինել: Հաշկական հնաւանդ խմատութեան մի քարոզն էլ աչն է, թէ փողը պարունակում է իւր մէջ սմեն ինչ, թէ հարստութիւն, գեղեցիկ կեանք, թէ խելք, խմատութիւն: Առանց խելքի, և մեծ խելքի, անհնարին է փող աշխատելը.

եթէ այդ աղպէս չը լինէր, ամեն մէկը կը լինէր հարուստ: Այդ միտքը աղնպէս ամրացած է, աղնպէս հաստատ հիմք բռնած, առարկութիւն չ'ընդունող մի միտք է, որ ամեն դասակարգի մարդիկ զլուխ են իջեցնում այդ ուժի առաջ, միայն զրամական ուժի առաջ: Նոյն իսկ ուսում ստացած մարդը, նոյն իսկ աղնպիսին, որ խմբագրի նշաշտօնին է հասած, չի կարողանում ծածկել իւր թուլութիւնը, չի կարողանում չը խոնարհել լիքը գրպան ունեցողի առաջ: Շատ միամիտ կը լինինք, եթէ ենթադրենք թէ փողատէրերը աջքան համետ են, որ մերժում են ամբօխ իրանց մասին կազմած միտքը: Ո՛չ. նրանք ամենքից աղղու կերպով են տարածում այդ միտքը, նրանք ամեն մէկից լուս են հասկացած, որ, ճշմարիտ, խեղբը, իմաստութիւնը իրանց մօտ է: Հիմա երեսակակցէք գիւղից կամ քաղաքի ստորին խաւերից դուրս եկած մարդիկ, որոնք կարողանում են կանգնել հրապարակում և ստել թէ իրանք աղքատ չեն, փառք Աստուծու, շատ լաւ են: Նրանք ամեն տեղ տեսնում են չարքանք, ակնածութիւն գէպի իրանց անձնաւորութիւնները, ստանում են խոնարհ ողջոյններ, չղարարթ դովասանութիւններ: Հասարակական գործերում, կեանքի վերարեւել մի որ և է հարցում ուշադրութեամբ նրանց են լսում, նրանց են ականջ դնում և նրանցից են սպասում խելօք, վճռական մի խորհուրդ: Աղպիսի բաղդաւորները ինչպէս չ'ունենան իրանց առանձին, սեպական զաղափարները, ինչպէս անտարբեր մնան և չը ցոյց տան, թէ իրանք, ճշմարիտ որ, շատ խելօք են, հասկացող: Մարդը խելզուում է այդ բաղդից, սղանում է իւր առաջնաջ միտքը, ճմլում է իւր նախկին հասկացողութիւնները, և իւր անցկադրածից դուրս բերելով մտքերի, ֆրագների, խօսքերի կտորներ, կազմում է իւր սեպական ֆիլօսօֆայութիւնը, որը թէ և անտանելի է, բայց հրապարակում չի ծաղրւում, չի մերժում լսողներին չըջանից, քանի որ ասողը, քարոզողը ունի ուժ, ունի փող: Աղպիսի խելքեր առաջներում շատ էր տալիս մեր գաւառներին Բաքուն, իսկ այժմ տալիս է Անդրկասպեան երկիրը, ալն աւետեաց երկիրը, ուր զարմանալի, անհասկանալի հրաշքով երեկույ խեղճ կօշկակարը դառնում է փողի և փողի հետ կապւած խելքի տէր:

Սրանք են մեր կեանքի վերանորոգիչները, սրանք են ընտանիք կազմում և ընտանիքին գաղտնիք, իղէալ տալիս...

Ինչ տեսակ քարոզութիւններ անեն զրանք, ինչ տեսակ մտքի և խելքի տէր լինին, իրանց անձի, իրանց եւ-ի համար մի և նոյն են, ինչպէս էին առաջներում, անշարտութեան, անփողութեան և անխելքութեան ժամանակ: Ընտանիքը նրանց ստրուկը պիտի լինի, նա պիտի իւր բարօրութիւնը զո՛ր բերէ նրանց հաճոյքին, անձնական հանգստութեանը և կրքերի խաղաղ և անարգել զարգացմանը: Զո՛ր այժմ միայն մի տեսակի չէ, երկու տեսակի էլ չէ. որովհետեւ հաճոյքը, անձնական հանգստութիւնը այժմ բաղմաթիւ և բաղմատեսակ հասկացողութիւններ են պարունակում

իրանց մէջ: Կեանքը փոխուել է. եթէ առաջւաղ հարուստ վաճառականը բաւականանում էր մի տեսակ կերակուրով, մի չափաւոր կեանքով, ալժմեան վերանորոգիչը, որ աշխարհ է տեսել, մարդ է ճանաչում, ունի մի շուաղ ճաշակ: Բոլոր միւս գործերում էլ նա աղպէս է, իւր անձնական ապահովութեան, բարեկեցութեան համար ունի բաղմապիտի պահանջներ: Եւ աղքատահայերը պիտի կատարեն, ամենից հնազանդ կատարողը, ի հարկէ, ընտանիքն է:

Անցեալներում իմ ծանօթներից մէկը սաստիկ վրդովւած էր, խօսք չէր դնում իւր արդար զայրութիւն արտայայտելու համար: Նրան աղպէս չուզել էր մի դէպք, որ որքան ցաւալի է, այնքան էլ բնաորոշ փոփոխութիւն ունի մեր ներկայ հանդամանքների վերաբերմամբ:

—Նրեակալիւր, ասում էր ծանօթս, կարծելով թէ ես բաւականաչափ չեմ բմբռնում նորա արած պատմութիւնը.—երեւակալի՛ր քեզ, այս ի՞նչ հրէշալին ալլանդակութիւն է:

Այդ օրը թաղել էին մի ջահիլ կնոջ: Այդ կինը նոր էր ալրի մնացել, մի չորս ամիս դրանից առաջ թաղել էր իր ամուսնուն: Նա բաւական գեղեցիկ էր, ժիր, անարար. «Այ խելօ՛ք, աւելացնում էր ծանօթս,—չը գիտես թէ ինչպէս խելօքն էր»: Նա ունէր մի երեխայ, բայց և այնպէս մէկը, վերև նկարագրած վերանորոգիչներից մէկը, համաձայնել էր նորա հետ ստակւել: Աղպիտի մի վարմունք պատիւ է բերում աղք մարդուն. մեր ժամանակներն ով է ալրի կնոջ հետ կապւում ամուսնական կապերով, եթէ աղք կապերի համար չը կաջ բաւականաչափ դումար: Մարդը հաւանել է չքաւոր ալրիին, հաւանել է նորա վարքի և արտաքինի գեղեցկութիւնները և աղք պատճառով համաձայնել է վերցնել ուրիշի երեխային և պահել: Գուցէ աղք վերանորոգիչը իւր զարմանալի աղբարանական լեզուով մի աղպիտի գաղափար քարոզել էլ է: Բայց կնոջ մաղրը իմանում է, որ իւր աղջիկը չղի է: Գիտէք, որ մի չղի կնոջ հետ պսակւելը մի հրապուրիչ բան չէ. մանաւանդ որ փեսան երիտասարդ է, նոր պէտք է ճաշակէ ընտանեկան կեանքի քաղցրութիւնը. մաղրը մանաւանդ վիշում է, որ փեսան մի կերպ գժւարութեամբ էր համաձայնում ուրիշի երեխային պահել, համաձայնում է աւելի ալն պատճառով, որ աղք երեխան է միայն, որին աւանդաբար պիտի պահէ, ուրիշը չը կաջ: Մաղրը չի ուզում այնպիսի փեսայից զրկուել, և, սուանց երկար մտածելու, մի ինչ որ պատուից ձեռք է բերում մի թունդ դեղ, խմացնում է իւր անբաղդ տղջկան, որպէս զի սա ազատուի արգելառութիւն կապանքից, որպէս զի փչաղնէ նորա արգանդի երեխան: Խելօք և գեղեցիկ աղջիկը չի կարողանում գիմարել մօր կամքին, որովհետև որքան էլ խելօք լինի, չի կարող չ'իմանալ, որ ուրիշ կերպ անկարելի է: Իմում է աղք դեղը և երեխան կտոր կտոր գուրս վիժելուց փառո՛ լինքն էլ մեռնում է:

Այս դէպքից էր ծանօթս այնքան վրդովւել: Ճշմարիտ, դա մի շատ

տխուր երևոյթ է: Մի կողմից ներկայանում է մեր առաջ մի մայր, որ մոռացել է աւանդական առարկներէն: Բի՛չ են եղել անպիսի մայրեր, որոնք նստել են իրանց տանը, սեպրեւ են իրանց ջահիլութիւնը, պահել, մեծացրել են իրանց որբերին: Բայց աչժամ որդեծնութիւնը շատ դէպքերում զժրադուլութիւն է համարւում, ազատ քալն արդիւող մի հանգամանք, որը վերացնելու համար պատահենքի զեղերին են զխում: Չորս ամսաւ ալրի կնոջ համար ամօթ է երեխայ ծնելը: Ամօթ բառը, ի հարկէ, մենք չենք գործածում: ամօթ բառը միակ փաստն է, որով արդարանում են աղջկայ մայրը և փեսան:—Միւս կողմից մենք տեսնում ենք մի խեղճ էակ, որ զո՛հ է բերւում աղամարդի հեշտասիրութեանը, անձնական բարեկեցութեանը: Տղամարդի ցանկութեան, այս կամ այն կերպ տրամադրութեան առաջ ոչնչանում է մայրական սէրը, ոչնչանում է մի լղի մօր անձնական կամքը, փափաղը, ցանկութիւնը: Եւ բաւական չէ, փչանում է և խեղճ, խեղճ մայրը և թողնելով օրօրոցում լալիս մի անմեղ երեխայ, պատկում է սառն հողի մէջ: Այդ մայրը մի անլեղու, անկարող կամակատար էր. նրանից պահանջում էին, նրան գուրս էին դրւում հասարակութեան շրջանից, նրան չէին թող տալիս մի բաղդաւոր ընտանիք կազմելու, որովհետեւ նա կրում էր իւր կրօքի տակ մի փոքրիկ արարած: Եւ ճշշած աչգ պահանջների, աչգ տեսակ պալմանների ծանրութեան տակ, նա աղատւելու փոխարէն կոտորւած, փչացած ընկնում է. նորա ձեռքին չը կար պահելու, ազատ մնալու մի ամենաթուլ միջոց անգամ: Ի՞նչ անուն տաս... Մէկից օրիորդը Մուսա-բէկի բռնութեան դէմ բողոքելու համար Պօլիս է գնում, եւրոպական մամուլի ուշադրութեանն է արժանանում: Իսկ այս զոհը: Թէեւ սա աւելի սարսափելի կերպով է բռնաբարւած իւր տան մէջ, իւր ընտանիքում, բայց ոչ ոք իրան մեղաւոր չի համարում աչգ գործի մէջ: Ո՛չ ոք... որովհետեւ աչգպէս էր կարող, աչգպէս էր տրամադրւում այն հասկացողութիւնը, որին հետևում էին զոհի պատճառները:

Ի հարկէ, բոլոր զոհերը մի և նոյն կերպ չեն պատկերանում, մի և նոյն լեզուով չեն խօսում: Իմ պատմած դէպքը անհատական երևոյթ է. բայց խնդիրը աչգ երևոյթին չի վերաբերում, խնդիրը նրանումն է, որ հալ ընտանիքը զոհեր և անմեղ զոհեր շատ է տալիս: Նթէ տեսնենք դրանց, քրննենք, ամեն կողմից քննենք, կ'իմանանք, որ աչգ զոհաբերութիւնը կատարւում է առանց մի որոշ օրէնքի ազդեցութեան, այլ, աչգպէս ասած, պատահաբար, դանապան կողմերից եկած հոսանքների զօրութեամբ, հոսանքների, որոնք աղօթ մի կերպ են գործել տալիս, մայր բոլորովին ուրիշ կերպ: Եւ աչգ բոլորը ցոյց է տալիս, որ հալ ընտանիքի աչգմեան ցաւը նրանումն է, որ նա չ'ունի ընտանեկան մի որոշ, անխախտ դիրք, որ նա զրկւել է հաստատ փնակէտից. նա չ'ունի մի հաստատ իղէպ, որին կարողանար հետևել, նրան չեն տալիս բարոյական կրթութիւն, նա գուրկ է մտաւոր գործունեութիւնից, լալն և պարզ գաղափարից:

ԲԱՆՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍՈՒՄ

ՆՐՈՒԱՆԻ ԴԱՁԱՐԵԱՆԻ

Շատ սրտակոտոր տեսարան է ներկայացնում բանւորների կեանքը՝ որ ըստ օրէ նորոգւող և կերպարանափոխող Կարսում: Բաղմաթիւ արքունական և մասնաւոր շինութիւնները անդադար ժողովում են այս փոքրիկ քաղաքի մէջ բանւորների մի աշնայի մեծ քանակութիւն, որ ամենեւեւ չը տեսնւած երևոյթ է միւս գաւառական և նահանգական քաղաքների համար: Ներկայումս Կարսի զանազան մասերում՝ թէ քաղաքի մէջ և թէ քաղաքից դուրս՝ ամառը, արեգակի տըրող ճառագայթների տակ, զարնանք և աշնանք՝ ցրտի, տնձրիների և կտրող քամիների հեթարկւած՝ աշխատում են բաղմաթիւ անտուն և աղքատ մարդիկ, որոնք տեղական լեզուով կոչւում են «իրդատներ» (բռնագնդ): Նրանք բոլորն էլ օտարական են, Տաճկա-Հալաստանի գիւղերից և քաղաքներից ծնւած, հալածւած և օտարութեան մէջ իրանց ապրուստը որոնող մարդիկ: Տաճկա-Հալաստանի անտեսական և բարոյական կրիդիսը ծանր հարւածներ է տալիս ժողովրդի ստորին դասակարգի, ամբոխի ընդհանրութեանը և բաժանում, ցրում, հեռացնում է ժողովուրդը իւր հայրենիքից: Ահա՛ այդ բաժանւած և հալածւած ամբոխն է, որ գաղթում է ահագին խմբերով գէպի մեր կողմերը և, իւր առօրեայ կտոր հացի համար, լանձնառու է լինում կատարել ամեն տեսակ ծանր ֆիզիքական աշխատանք: Այդ գաղթական հալ մարդկանց դրութիւնը աւելի պարզ կերպով աչքի է ընկնում, երբ նրանք խմբւած, ժողովւած են լինում որ և իցէ մի տեղում և պարապում են միատեսակ ընդհանուր աշխատանքով: Հէնց այդպիսի պայմանների մէջ են և Կարսի իրդատ-բանւորները: Նրանք ապրում են խմբերով, աշխատում են միասին և կեանքի մի և նոյն պայմանները, մի և նոյն զրկանքը, մի և նոյն չարչարանքը և նեղութիւնը տանում են ընդհանուր և ներդաշնակ համբերութեամբ: Շատ հետաքրքրական է դիտել նրանց հասարակական կեանքը և շարաբերութիւնները, նրանց խմբական ընդհանուր ոգին, աշն ընդհանուր ոգի, որ կապում, ամրացնում է աղ խեղճ հասարակութեան

անդամներին: Նստապէս, հասարակութիւն խօսքը աշտակ անգարմար է. հասարակական կեանք և շարաքերութիւններ, բուն մտքով, ինչպէս որ հասկացուած է զիտակցական շարաքերութիւնների մէջ, ամենին չը կառ աշտակ: Չը նախելով բանտարական կեանքի և ապրուստի միակերպութեանը, չը նախելով որ նրանք միշտ և ամեն հանդամանքում, թէ բարոյական և թէ տնտեսական կապերով միացած են իրար հետ, բայց մենք տեսնում ենք, որ ազդ տնտեսական և բարոյական կապը, այդ ընդհանուր միացնող ոգին չի տալիս բանտներին ոչ մի ուժ, ոչ մի օգտակար հասարակական արտօնութիւն: Բանտների միացած համայնական կեանքը շատ քիչ է նպաստում նրանց բարեկաւութեանը, շատ չնչին ազդեցութիւն է տեսնում նրանց ընդհանուր ապահովութեան և երջանկութեան վերաջ: Նրանք թէև ապրում, աշխատում և չարչարում են միասին, թէև կեանքի բոլոր դառնութիւնները տանում են ընդհանուր, համայնական ուժերով, բայց նրանցից իւրաքանչիւրը, որպէս անհատ, չի զգում այդ խմբական ուժի նշանակութիւնը իւր մէջ, և կեանքի վտանգալից լուսէներում, գոյութեան կռւի փոթորկալից ալեկոծութիւնների ժամանակ՝ բանտը, որպէս մի առանձին և տնօրնական էակ, երևում է վախկոտ, թույլ և անսպաշտուն...

Որպէս զի համագինք՝ թէ որքան մեծամեծ միասններ է տալիս այդ վախկոտութեան և թուլասրտութեան զգացմունքը հաշ ժողովրդին, մենք ուշադրութեամբ դիտենք կարծում աշխատող բանտարների առօրեայ կեանքը, նրանց ընդհանուր դրութիւնը և ալն շարաքերութիւնը, որ գտանւում է այդ բանտների և տեղական ռուսահայատակ հայերի մէջ:

Ամենից առաջ պէտք է նկատել ալն աչքի ընկնող երևութիւն, որ տեղացին, կարսի և Ալէքսանդրօպօլի բնիկ ժողովուրդը, երբեք չի ուզում ընդունել, որ այդ գաղթական բանտները մեղ նման հայեր են, որ աչք խեղճ և ցնցոտիներով սլատած ամբոխը՝ մեր արիւնակից հարազատ եղբայրներն են... Մի տեսակ անզգալ սառնասրտութեամբ, մի տեսակ խորթ զգացմունքով են վերաբերում տեղացի հայերը դէպի աչք խեղճ մարդիկ, դէպի աչք անտէր և անօգնական արարածները: Տեսնելով նրանց սաստիկ աղքատութիւնը, տեսնելով նրանց տոկուն, համբերող և անխօս աշխատասիրութիւնը, նրանց վերին աստիճան ազնիւ, միամիտ և հեղ, ենթարկող քնաւորութիւնը՝ տեղացի ժողովուրդը, կարծես, աւելի 'զայրանում, աւելի գրգռւում է նրանց դէմ, աւելի սառնասիրտ և անզգալ է դառնում դէպի նրանց թշուառութիւնը: Մեր ժողովրդի կարծիքով, տանկատանցի բանտը անասուն է, նա չէ արժանի մարդկանց ուշադրութեան, նա ստեղծւած է 'չարունակ աշխատելու, չարունակ տանջելու և կեանքի մէջ ամեն տեսակ նեղութիւններ ու զրկանքներ տանելու համար:

Ահա ալն ընդհանուր կարծիքը, որ տիրում է մեր ժողովրդի մէջ բանտների մասին, ահա ալն դիտաւոր անբարոյական սկզբունքը, որով առաջնորդւում են մերոնք, սկսած հարուստ պօղրեաղչիկներից մինչև

լետին խանութպանը—վերաբերութեամբ աղքատ և մոլորած բանւորներին: Բանւորը խեղճ է, նա լեզու չ'ունի, նա չի կարող պաշտպանել իւր իրաւունքը, իւր ստացւածքը, իւր պատիւը... ուրեմն պէտք է խտրել նրան, պէտք է «էջի նման» ծառաւեցնել նրան, պէտք է օղտուկ աղ անխօս և միամիտ մարդկանց թուութիւնից:—Ահա թէ ինչպէս են մտածում մեր վաչխառու տղաները, մեր դուքանդար, անխիղճ չարչիւները: Եւ ճշմարիտ որ նրանք օգտուում են բանւորներից և օգտուում են անողորմ կերպով... Փողրաղչիկ աղան երբէք չի խղճահարւում կտրել բանւորների թոշակից մի քանի կոպէկ՝ հաստատ գիտեմալով, որ աղ մեղքը ոչ մի հետեանք չի ունենալ, որ խեղճ բանւորները անկարող են դանդաղուել: Եւ նա կտրում է հարիւրաւոր բանւորների թոշակից մի կամ երկու կոպէկ խաւքանջիւրից և տարւալ վերջը՝ ստացւում է աղալի բիւջետում «տօլիդնի կապիտալ»: Զարչի մանրավաճառը անողորմաբար զրաւում է բանւորներին իւր մօտ, դողանում է նրանց հաւատարմութիւնը և ստանալով իւր մօտ պահելու հարիւրաւոր բանւորների տնտեսած փողերը, մի զեղեցիկ օր բոլորովին ուրանում է աղ փողերը, թողնելով բանւորներին ծալրալեզ կենսական պահմանների մէջ: Իսկ ինքը սկսում է սուկի ճոխացնել իւր դուքանք, աւելի շատացնել ապրանքի «էջիւտները»... Եւ աղալիսի զէպքերը այնքան սովորական, առօրեայ բաներ են, որ հասարակութիւնը չի էլ զարմանում դրանցով, չի էլ զրգոււում աղալիսի շահադիտական «հերոսութիւններով»:

Տաճկաստանցի պանդուխտ բանւորը, ձմրան ցրտերի և անդործութեան ժամանակ, դիմում է տեղացի աղաներին, որ ընդունեն նրան, որպէս տան ծառայ, կամ դուքանի աշխատող և ալն: Այստեղ նոյնպէս աղաները աշխատում են օգտուել աղ անգործ ուժից, աղ էժանազին և օգտակար ապրանքից:

—Փոր հացի, կ'ուզես արի, չես դա՛ ուրիշներ շատ կան,—ասում է դուքանդար աղան՝ դուրսը մնացած, սովից և ցրտից կապտած բանւորին: Եւ բանւորը, գլխենալով որ «ուրիշներ շատ կան», համաձայնում է ամբողջ ձմրան ընթացքում, շարունակ 5—6 ամիս, դառն աշխատանքով ծառայել հարստահարիչ աղալի տանը՝ վալելելով նրանց տան սեղանի մնացորդները և դորա հետ էլ անվերջ անէծքների, հախոյանքների ու շատ անգամ էլ վալրենի ծեծ՝ իւր խանութների և աղաների կողմից...

Եւ ալս բոլոր գրկանքները համբերութեամբ, գլխակոր և հլու հնա-

դիւնքը, չը հարստահարեն նրանց ֆիզիքական ուժը,—կարօր բանւորները, աչդ բոլորի փոխարէն, աշխատում են, որքան կարելի է, «իրանց զրկել», իրանց կեանքի և ապրուստի պահանջները քչացնել, ողել և անուաման փոքր քանակութեան հոսցնել... Նրանք իրանց բոլոր դառնութիւնը և վիշտը թափում են իրանց վերայ՝ կեանքի արտաքին հանգամանքներից ճնշւած, զաւրացած։ Նրանք բոլոր ուժով սկսում են հալածել, տանջել և մաշել իրանց՝ առանց աչն էլ տանջւած և չարչարւած մարմինը... Սե աչդ է բանւորների միակ «խելացի», միակ լուրջ հասկացողութիւնը կեանքի մէջ, փողը տնտեսել, «չխիշ» անել, կտրել իւր բերանի հացը, ամիսներով տաք կերակուր չ'ուտել, մի կեղտոտ չապիկով ամբողջ տարին անցկացնել, որպէս զի տարւաջ վերջը մի 30—40 մանէթ ունենալ իւր ծոցում, երբ հարկատու է վերադառնալ հայրենիք, իւր ծնողներին, իւր կնոջն և դաւակներին ուրախացնելու։ Ահա աչդ վերջնական նստատակի համար է մտածում բանւորը, աչդ է նորա երեւակաւած ապագայ երջանկութիւնը։ Բաց թէ կը հասնի՞ նա իւր նպատակին,—աչդ դեռ ճակատագրական մի հարց է... Կեանքի անողորմ և դառն հանգամանքները ինչէր չեն բերում խեղճ մարդու զլխին. և վերջապէս, միթէ հեշտ բան է ասել՝ «մի կերպ եօլա գնալ».—աչոք քաղցած, վաղը կիսակուշտ, միւս օրը դարձեալ քաղցած... ծանր աշխատանք, ցուրտ, քամի, անձրևներ, քրտինք, լողնածութիւն... Ահա թէ ինչ ասել է բանւորների լեզուով «եօլա գնալ» խօսքերը։ Մարմինը չափազանց կեղտոտում է աշխատանքից, փոշուց, քրտինքից. նորա չապիկը անտանելի հոտ է արձակում,—պէտք է լւացւել, պէտք է մաքրւել աչդ կեղտերից... Զի որ նա էլ մարդ է, նրանումն էլ կա մաքրասիրութեան դաղափարը։ Սե ահա բանւորները խմբերով վազում են գէպի գետը լողանալու։ Նախ հանում են վերալի ցնցոտիները, լեռոյ կեղտոտ հաստ կտաւէ չապիկը,—աչն չապիկը, որ ամբողջ տարին հագնում են նրանք—և սկսում են լւանալ։ Լւացքի ժամանակ, որ սկսում է բաւական երկուր, բանւորներից շատերը մերկ մարմնով նստած են արևի և քամու տակ... Բաց աչդ ոչինչ, նրանք ջանասիրութեամբ լւանում են չապիկները, վրոտում են արևի տակ, քարերի, կամ աւազի վերայ և վերջապէս իրանք էլ քնկնում են ջուրը, լողանում են։ Սալօն ունեցողը իւր սալօնի կտորը տալիս է միւսին, որ գլուխը լւանալ, իսկ եթէ ոչ՝ առանց սալօնի էլ «եօլա» կ'երթալ։ Աչպէս մի ժամ, երկու ժամ լողանալուց և մաքրւելուց ցետոյ, բանւորները զուրս են գալիս գետից, հագնում են իրանց «մաքուր» շորերը, նստոտում են գետի եզերքին և ազլութներից հացի կտորները հանելով՝ սկսում են ուտել աչդ ցամաք հացը և աշխուժ խօսակցութիւններ անել... Նրանց խօսակցութիւնը շատ միակողմանի, պարզ և անմեղ է։ Նրանք ալտուղ էլ չարունակ խօսում են «չխիշ անելու», փող լիտ դրելու, հայրենիք վերադառնալու մասին... Յանկարծ գետի միւս ափին՝ մաքուր խճուղու վրայով՝ անցնում է մի հարուստ կառք, լծւած երկու գե-

դեցիկ սե ձիերով: Ատոքի միջից մի չքեզ հագուստով, սիրուն երիտասարդ, պապիրոսը բերանին, դուրս հանեց իւր գլուխը և արհամարհական հետաքրքրութեամբ նայեց բանւորներին:

—Աղէ՛ն, աղէ՛ն, աղէ՛ն, իրար անցան չփոխւած բանւորները: Ատոքը արագութեամբ անցաւ, տանելով իւր մէջ գլեթական աղալին: Բայց աղալի մասին զարթնած փշոզութիւնները դեռ երկար չփոթում, զարթոնում և ալէկոծում էին բանւորների անարատ հոգին. նրանք չափ երկար խօսում և վիճում էին աղալի «գործերի» և արարքների մասին... Սակալն, այդ բոլոր խօսակցութիւններից փառլ, տիրեց մի երկարատև, մեռելալին լուծիւն, երբ խօսակցները զարձեւալ մտաբերեցին իրանց անկարողութիւնը, իրանց թուլութիւնը և վախկոտութիւնը աղաների դէմ:

Այս փոքրիկ պատկերով եւ կամեցաւ լրացնել այն տպւորութիւնը, որ մարդ տառնում է Աարսի բանւորների զրութիւնից, երբ ուշադրութեամբ և բարեխղճօրէն հետևում է նրանց սուօրեալ կեանքի մանրամասն երևոթներին: Այս ասում եմ «բարեխղճօրէն», որովհետեւ հասարակական կեանքի չարիքը և խոշոր թերութիւնները նշմարելու, զգալու համար՝ անհրաժեշտ է ունենալ ազնիւ և անարատ խիղճ, ամկաշատ և մարդասիրական բարձր զգացմունքներ: Հէնց այդ հոգեկան ընդունակութիւնների պակասութիւնիցն է, որ մարդ կարողանում է սառնութեամբ և անփրդով նայել ուրիշի թշաւութեան վերալ, կարողանում է հասարակական ողբալի անարդարութիւնների «մօտով անցնել»...

Աարսի բանւորների թէ տնտեսական և թէ հոգեկան կեանքը չափ ողբալի տպւորութիւն է անում ամեն մի զգալուն մարդու վերալ, այդ թերութիւնները նշմարելու, զգալու համար՝ պէտք է, որ մարդ միտն փրշացած չը լինի բարոյապէս, պէտք է, որ նորա խիղճը բողբոլվին մեռած չը լինի վաճառականական ստոր «հաշիւների» աղլեցութեան տակ: Այն ինչ մենք տեսնում ենք, որ կարացի վաճառականը, փօղբաղչիկը, փաշխառուն, փոխանակ ցաւակցելու Տաճկա-Հաղատանից եկած մեր թշաւեղբայրներին, փոխանակ աշխատելու սփոփել նրանց ցաւերը, մեղմացնել նրանց վիշտը և տառապանքը,—աշխատում են դեռ միտակ նրանց, աշխատում են հարստահարել, կողոպտել ալգ խեղճ պոնդութեաներին... Արդէն չաղտնի է թէ ինչպիսի մեծամեծ լոյսերով են զալիս մեզ մօտ ալգ բանւորները և ինչ բարիքներ են սպասում, տաճառարակ, տաճկահաղ զիղացիք մեղանից: Փոխանակ օգնելու ալգ խեղճերին, որ չուտով կարողանան «գրտել» իրանց գործը և վերագառնալ հալքները,—իրանց ընտանիքի օգնութեանը հասնելու, մենք, ուստահարս, աւելի նպատում ենք ալգ պանդխտութեան երկարելուն, աւելի չարչարում, տանջում և տնտեսական նոր կապերով ամրացնում ենք նրանց մեր շահաւէտ գործերի և ծառայութիւնների հաւ: Այսպիսով, տաճկահաղ գիւղացին, ցոռիալով տ-

դատել իւր ճշող վաշխառուների գիշակեր ճանկերից, թողնում գալիս է մեկ մօտ, զրկւում է իւր ընտանիքից, իւր հայրենի երկրից, իւր սիրած պարապմունքից, միայն թէ կարողանալ դրսուել ինքն իրան... և աչստեղ, մեկ մօտ, նա նորից բռնւում է վաշխառուների ճանկերում, նորից պարտքերի մէջ է ընկնում: Այսպիսով շարունակւում է նորա պանդրխտութիւնը, նորա օտարական, մերկ, քաղցած և սնպատիւ, արհամարհած կեանքը: Նա աշխատում, կաշուց դուրս է գալիս, առանց խրնակելու իւր ումերը, իւր առողջութիւնը, իւր կեանքը: Սակաւն դարձեալ չի կարողանում վտ զցել իւր ցանկացած 30—40 ռ. գումարը, որ թողնի և հեռանալ պանդխտութիւնից, որ գնալ իւր եղբայրների, իւր սիրելիների «հաւարին հասնի»: Անցնում են տարիներ միմեանց ետեից, գալիս են նորերը և պանդուխտի սիրտը չի տաքանում: Կարսի անհիւրընկալ ապստամբների տակ... Նա օր ըստ օրէ սառւում, հովանում, տնդպալ է դառնում գէպի իւր հայրենի երկիրը, դէպի իւր քաղցր բարեկամները և ազգակիցները: Կը աչսպիսի վախճան սպասում է հարիւրաւոր, հազարաւոր մարդկանց...

Ալմ գառնանք Կարսի բանւորների աշխատութեան խնդրին և տեսնենք թէ ի՞նչ պայմաններում, ի՞նչ եղանակով է կատարւում ալղ և ի՞նչպիսի վարձատրութիւն է տալիս բանւորներին: Արովհետեւ Կարսում չը կան գործարաններ և արդիւնաբերական պարապմունք, ուստի և բանւորների աշխատանքը չ'ունի մշտական բնւորութիւն, չ'ունի ալն սխտեմը, ինչ որ կտրելի է նշմարել՝ օրինակ՝ Բագուի նման մի արդիւնաբերական կենդրոնում: Ինչպէս վերևումն էլ ասացի՝ Կարսում շարունակ լինում են բազմաթիւ թէ արքունական և թէ մասնաւոր շինութիւններ: Հէնց ալղ շինութիւնները—կաղարմներ, հիւանդանոցներ, մասնաւոր տներ և մանաւանդ կրպակներ—գրաւում են բանւորների ահագին խումբերին՝ դէպի վերանորոգող շինարարական Կարսը: Բացի ալղ շինութիւններից, բանւորների համար մշտական աշխատանքի առպարէզ են ներկաւացնում խճուղիները, որոնց վերալ շարունակ աշխատում են նրանք: Ուրեմն ալղաւոր բանւորական աշխատանքը ոչ թէ փակւած է գանաղան հիմնարկութիւնների մէջ, ալղ բացօդեալ, ազատ աշխատանք է: Բանւորները աշխատում են ճանապարհների վերալ, աշխատում են շինութիւնների մէջ—և ալղ բոլոր աշխատանքը նրանք կատարում են բացօդեալ՝ մեծ մասամբ հողի, աւաղի և քարերի հետ: Հէնց ալղպիսի պարապմունքին՝ Կարսի, Ալէքսանդրոպօլի կողմերում տալիս են լատկապէս «իրդատութիւն» անունը: Կարսի բանւորները, գլխաւորապէս, իրդատներ են: Աշխատութեան ալս եղանակը ունի ալն առաւելութիւնը, որ բանւորները միշտ չնչում են մաքուր օդ և բոլորովին աղատ ևն գործարանական ապականւած և փեսաակար մթնոլորտից: Ալս է պատճառը, որ առողջապահական միւս վատ պայմանները, մանաւանդ սնունդի վատութիւնը, չատ չի ազդում բանւոր-

ների առողջութեան վերաջ. այս է պատճառը, որ Կարսի բանւորները, թէեւ ամիսներով («տաք կերակուր») չեն ուտում, — բայց դարձեալ առողջ են, դարձեալ կարողանում են աշխատել: Մաքուր օդը և մշտական շարժողութիւնը փրկարար ազդեցութիւն են անում բանւորներին առողջութեան վերաջ և ազատում են նրանց թոքախտից, արեան սակաւութիւնից (малокровіе), սրտի և կուրծքի զանազան հիւանդութիւններից, որոնք անբաժան են գործարաններում աշխատող բանւորների հետ: Ի հարկէ բացօդեալ ֆիզիքական աշխատանքը ունի և իւր անւարձարուքիւնները. ամառուայ արեգակը և լանկարձական փշող ցուրտ քամիները՝ աշխատութիւնից քրտնած բանւորների վերաջ՝ կարող են երբեմն զգալի վնասներ տալ նրանց: Բայց աչտեղ սովորութիւնը և կեանքի փոթորիկներից ստացած տոկունութիւնը, անշուշտ, ունին մեծ նշանակութիւն՝ մարմնի առողջութիւնը պահպանելու համար: Ընդհանրապէս՝ Կարսի բանւորները աւելի առողջ են, քան տկար. զանազան տարափոխիկ վատ ախտեր, որ շատ լատուկ են մեծ կենդրոններում ապրող բանւորներին — աչտեղ զեռ մուտք չեն գործել բանւորների մէջ: Աչտեղի բանւորները մաքուր, անարատ, «քրիստոնէական» կեանք են վարում. — նրանք աւելի աշխատում են, քան թէ ուտում իրանց աշխատածը, աւելի ընդունակ են պահնցողութիւն անել, քան թէ անկանոն վատնողութիւն... Այդ մաքուր և առաքինի սովորութիւնները նրանք ստացել են փոքր հասակից երկրագործական պարագամոնքի շնորհիւ:

Կարսի արքունական բոլոր շինութիւնները և խնուղիներ բանալու՝ նորոգելու գործերը ամբողջովին զտնւում են մի քանի հարուստ կապալառուների ձեռքում: Այդ հարուստ գլխաւոր «պօղբեաղչիկները» վերցնում են ահագին գործեր, ահագին գումարների շինութիւններ: Գործի չափազանց մեծութիւնը և բարդ կազմակերպութիւնը ստիպում է նրանց սլարդել, հեշտացնել աղ գործը, զիմելով աշխատանքի բաժանման սկզբունքին: Եւ ահա գլխաւոր պօղբեաղչիկը առաջարկում է ուրիշ աւելի քիչ հարուստներին՝ վերցնել իւր ունեցած գործի այս ինչ կամ այն ինչ մասը և կատարել առանձին պայմաններով, առանձին ուժերով ու ժամանակով: Այդ երկրորդական կապալառուները, կամ, ինչպէս ասում են՝ «րեաղչիկները», որոշ գումարով և որոշ պայմաններով առնում են մի կտոր գործ և իրանք դառնում են այդ գործի լիակատար տէրը: Ի հարկէ այս վերջիները, առնելով գլխաւոր կապալառուներից աղ գործը, նրան վճարում են որոշ չափով օգուտ կամ ինտերես, աչքիառաջ ունենալով, որ գործից դուրս կը հանեն թէ աղ վճարած ինտերեսը և թէ աւելի օգուտ: Նրանք չոյս ունին, որ թէ նիւթերի և թէ աշխատանքի «հարստահարութիւնից» կարող են շատ մեծ օգուտներ ստանալ... Այսպիսի լոյսերով ընաղչիկները սկսում են գործը՝ առանց մոռանալու, որ «հարստահարութիւնը» միակ միջոցն է, որով կարելի է ցանկացած նպատակին հասնել — կարճ ժամանակում՝ ահագին փողեր աշխատել... Եւ ահա սկսում է գործը:

«Հեշտ միջոցով, կարճ ժամանակում շատ փող աշխատելու» մտածմունքը անդադար առնելով է գործի տիրոջը և նա գիշեր ցերեկ մտածում, գլուխ է կոտրում՝ հարստահարութեան նորանոր և սրամիտ միջոցներ հնարելու վերաջ: Ամենից առաջ նա մտածում է բանւորների հետ «գործը շինելը»: Կարտում բանւորների վարձատրութեան մասին ոչ մի օրէնք և մըշտական դիրք չը կայ: Թէ օրական վարձի—«գինսալիկի» և թէ աշխատութեան ժամերի չափը կախած է վարձողի և բանւորների փոխադարձ համաձայնութիւններէ: Անա հէնց ալ համաձայնութիւն կապանելու պրօցեսի մէջ մեր ճարտիկ վաճառականները գործ են դնում իրանց առևտրական թուր հանձարը... Ի հարկէ նրանց գլխաւոր և ամենամեծ ցանկութիւնն այն է, որ ստիպեն նրանց, ամենաշատ աշխատութեան համար, ստանալ ամենաքիչ վարձատրութիւն: Այդ նպատակին հասնելու համար՝ վաճառական-բեաղչիկները լաւն կերպով օգտւում են բանւորների միաստութիւնից, նրանց փոխադարձ անհամաձայնութիւնից, նրանց աղքատ և անգործ դրութիւնից: Գարնան սկզբին, երբ դրսի աշխատութիւնները դեռ նոր են սկսւում, երբ աշխատութիւն խնդրողները հարկաւոր եղածից անհամեմատ շատ են,—այս դէպքում խօշտ հեշտ է իրադրութիւն «շատ աշխատեցնելու և քիչ վճարելու» գաղափարը: Այս դէպքում հանդամանքներն ուժը վարձողների կողմն է և բանւորները ստիպւած են օրական 30—40 կոպէկով առաւօտից մինչև երեկոյ աշխատել: Այդ աշխատութեան ժամանակ օրավարձի քանակութիւնը ենթարկւում է չաճախակի և արագ փոփոխութիւնների, որ պատճառւում են դարձեալ ոչ թէ բանւորները, այլ իրանք վարձողները: Յանկարծ՝ մի առաւօտ, նրանք չափաբարտւում են թէ ալ ևս աշխատանք չը կայ, սղ ևս հարկաւոր չեն բանւորները... Այդ մտացածին գործադուլով բեաղչիկները 1—2 օր ստիպւում են բազմաթիւ մարդկանց անգործ և պարապ մանդալ, թափառելով Կարսի փողոցներում՝ գործ որոնելու: Այդ պարապութեան ժամանակ՝ բանւորները ծախսում են իրանց խնայած մի քանի կոպէկները, որ շատ զգալի է նրանց համար: Տեսնելով նրանց պաշտպ և խեղճ դրութիւնը, չիչեալ բեաղչիկները «գիծում են» նրանց վերայ և տալիս են աշխատանք, ի հարկէ, աւելի էժան վարձատրութիւնով: Այս հարստահարութեան միջոցը ամենից շատ գործադրականն է Կարտում:

Բանւորների աշխատութեան գինը ամենից շատ բարձրանում է աւառ. ժամանակ, երբ դրսի աշխատանքը շատ է և բազմակողմանի և, բացի դրանից, երբ գիւղերում սկսւում է քաղը ու գիւղացիք շատ հարկաւորութիւն ունին քաղւորների: Ամառւալ տալիս, օգոստոս ամիսներում Կարսի բանւորները ստանում են 60—65—70 կոպէկ օրավարձ: Անպէս որ՝ եթէ միջին թւով հաշուել լինինք՝ բանւորները ամբողջ աշխատութեան սեզօնում, որ տևում է մօտ 6 ամիս, ստանում են օրական 50 կոպէկ, իսկ ձմեռը մնում են շատերը բոլորովին պարապ: Եթէ պարապութեան 6 ա-

միսն էլ հաշւենք—դուրս կը գալ, որ տարւալ ընթացքում նրանք ստանում են, միջին թւով, օրական 25 կոպէկ, ալսինքն՝ ալնքան փող, որքան մենք մտնում ենք օրական լոկ պապի ռոսի վերայ... Իսկ բանւորը աչդ փողերով պէտք է «ինքը» ապրի և մէկ էլ չկտ գցէ, որ մի օր ունենալ 40—50 լուբլի ճակատադրական գումարը՝ իւր հալոյնիքում քաջքալւած գործերը զրստելու համար:

Այստեղ ես աչքի առաջ չ'ունիմ այն պատահական դժբաղդութիւնները, որ միշտ հեռու չեն բանւորներից: Օրինակ՝ աշխատութեան ընդհատումները վատ եղանակի պատճառով, կապալառուների անճշդութիւնը փող վճարելու վերաբերութեամբ և այլն: Այդ բոլոր դէպքերում զրկւում են միայն աշխատաւորները: Ամենքին լպտնի է պողրեաղչիկ Թ.-ի վարմունքը, որ նա հարկւարաւոր մարդկանց զրկեց աշխատութեան վարձից, մատենելով նրանց վերջին շուտահատութեան... Մտաբերելով ալս բոլոր խճճւած հանգամանքները, որ չըջապատում են բանւորական աշխատանքը, շատ հեշտ է եղրակացնել, թէ ո՛րքան ծալլալեղ ստտիճանի անապահով է բանւորների զրութիւնը կարսում: Այո՛, թէն նրանք ապրում և աշխատում են խմբերով, թէն կեանքի բոլոր հանգամանքներում կապւած են նրանք իրար հետ, բայց այդ միութիւնը ոչ մի արտապատութիւն չ'ունի կեանքի մէջ, նրանց աշխատութեան և ընդհանուր շահերի նկատմամբ: Բանւորները խմբւած են, միացած են իրար հետ, որովհետև կեանքի նեղ հանգամանքները՝ աղքատութիւնը, պանդխտութիւնը, պարապմունքի ընդհանուր լինելը ստիպում են նրանց իրար հետ լինել... Իսկ գիտակցական միութիւն, ընկերական ընդհանուր ներդաշնակութիւն, ընդհանուր շահերի և ինտերեսների լպն հասկացողութիւն,—այդ բոլորը չը կալ բանւորների մէջ: Հէնց աչդ միութեան և ոյժերի ընդհանուր կապակցութեան (ассоциація) բացակայութիւնից՝ առաջանում է կարսի բանւորների թշւառ և ընկած դրութիւնը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

ՎԻԼԼԻԱՄ ԷԻԱՐՏ ԳԼԱԳՍՏՕՆ

Լոնդոն, 28 դեկտեմբերի (նոր տոմար)։

«Ձը կալ ոչինչ աւելի մեծ, քան Գլադստօնի ոգին, եթէ ոչ նորա մարմինը», ասում է նորա անձնական բարեկամը. «և ոչինչ չը կալ աւելի մեծ, աւելացնում է մի ուրիշը, քան իւր մարմինը, եթէ ոչ նորա ոգին»։ Եւ այդ երկուսն էլ ասում են մի մարդու համար, որը վաղը ութսուն տարեկան է լինելու։ Թէ մենք նորա բարեկամներից ենք, թէ ոչ—մենք պէտք է նորա թէ ոգու և թէ մարմնի արտակարգ չատկութիւնները ընդունենք առանց սղ և ապուքեան։ Մեր դարում չի եղել մի ուրիշ անդլիացի պետական մարդ, որը Անգլիայի քաղաքական գիրքին տաժ լինի աչնբան անձնական կնիք, որքան ալս Great Old Man (մեծ ձերունին)։

Բազմ աղ մարդը ալսոր էլ մնում է անգերազանցելի հռետօր, որպէս գրող և մտնաղէտ գիտնական՝ նա նշանաւոր գործքիր է ստեղծել աւելի քան մի ճիւղում, «քաթունի գործերում, որպէս և կրթական գործում, գործարանական Մանչեստրում, որպէս և համալսարանական Օքսֆօրդում, նա հաւասարապէս իւր տանն է զգում։ Նա գիտեցաւ միացնել անկեղծ ազնիւ հրճանքը խալիւլի վերակենդանութեան և Յունաստանի անկախութեան համար, խորը անգլիական հետաքրքրութեան հետ չունական Յանտէի չամիչի և խալական փալասների մաքրալին տարիֆի համար. դէպի իրան է զրաւում երկաթուղալին վարչութիւնների ուշադրութիւնը, որքան եպիսկոպոսներինը»։ Մի տիեղերական հանճար ցոլց տւց իրան աչն մարդը, որին ալսում տօնում է Անգլիայի ադատամլտ կուսակցութիւնը նորա ութսունամեակի սուիթով։ Աւելի քան կէս դար իւր երկրացիների և օտարների ուշադրութիւնը գրաւել է դէպի իրան և դեռ ով գիտէ, գուցէ, չը նաչած նորա խորը ծերութեան, ինչ դեր է վիճակած նրան խաղալու ալսունեան։

Նորա հալըր մի շարգւած վաճառական էր, շտղանդական ծաղումլց և հաստատւած Լիլլերպուլ, ուր և ծնւեց Գլադստօնը 1809 թւականին։ Եւ

ապլ երկու հանգամանքներն են, թէ շտաճանդական արիւնը և թէ իւր հօր վաճառականական դիրքը լքցնում են նրան մի առանձին հպարտութիւնով, որը նա ամեն դէպքում արտապատում է: Գեո. և 1872 թւականին մի անգամ նա ասաց. «Ն» չը գիտեմ, թէ ինչո՞ւ վաճառականութիւնը Անգլիայում չը պէտք է ունենալ իւր հին վերդաստները, որոնք ուրախ լինէին սերնդից սերունդ կապ ունենալ առևտուրի հետ: Ուրիշ երկիրներում ազգական է եղած և ևս չուր ունիւմ, թէ մեղանում էլ նույն է լինելու: Տխրալի է և գրեթէ խաղաղակշուծիւն է, որ այնպիսի գերդաստներ, որոնք առևտուրով են ձեռք բերել զիրք և կարողութիւն, դէպի նա երես են շուռ տալիս և նրանից, կարծես, ամաչում են: Այդ ի հարկէ, չի կարելի ասել եղբորս կամ իմ մասին: Նորա որդիքը գնում են նորա չափով և ևս ուրախ եմ, որ կարող եմ ասել, թէ իմ որդեկերանցից մէկը իմ հօր և եղբորս օրինակին է հետևում»:

Հալը թէ չարգւած և թէ կարողութեան տէր մարդ էր, որը, պահպանողական կուսակցութեան պատկանելով, իւր որդուն, սորա տասներկու տարեկան հասակում, խօսնի բարձր պահպանողական, արխատկրատական դպրոցն ուղարկեց: Նւ շատ պահպանողական էր նաև որդին, երբ նա, 1832 թւականին, ուրեմն դեռ ոչ լիովին 23 տարեկան հասակում, սկսեց իւր քաղաքական ասպարէզը: Նորա գրաւիչ անձնաւորութիւնը, աշխատասիրութիւնը և ամենից առաջ նորա մեծ ճարտարախօսութիւնը ամենքի աչքը իւր վերաջ դարձրին իբրև «անպարման անընկճելի տօրինների (պահպանողականների) ապագայ լոյսը»: Ինչպէս նոյնաժամանակ նորա մեծ հակառակորդը, Դիդլաշլին, ապագայ լօրդ Բիկօնսֆիլդը, իւր քաղաքական ասպարէզը սկսեց որպէս ամենադրոշմած դեմօկրատներից մէկը, իբր բարձր տօրինների օրինակելի ներկայացուցիչ վերջացնելու համար, նոյնպէս և Գլադստօնը, որը հակառակ կարգով աստիճանաբար պահպանողականութիւնից հասաւ ադատամտութեան այն ծալքալից սահմանին, ուր շափաւոր ազատամիտները նրանից ջոկւեցին և Անգլիայի արմատական մեծ կուսակցութիւնը նորա մէջ իւր առաջնորդը ձանաչեց:

Որպէս Դիդլաշլին, նոյնպէս և Գլադստօնը իւր ամբողջ կեանքում մի վերին աստիճանի բեղմնաւոր գրող էր: Եթէ առաջինի ֆանտաստական բնաւորութիւնը արտապատեց նրանում, որ դեռ ևս իբր մինիստրների նախագահ՝ նա բոմաններ էր գրում, երկրորդը, Գլադստօնը, իւր գրածքների մէջ չօչափում է ոչ միայն հասարակաց կեանքի բոլոր ասպարէզները, այլ նա է մի և նոյն ժամանակ լեզուագիտութեան և բնութեան հետազոտող, աստուածաբան և հնագէտ, բոլորը մի անձնաւորութեան մէջ միացած. աչք, հազիւ թէ կա մի գիտութիւն, որը նա ուսած չը լինի և որի նկատմամբ նա կարծում չը լինի թէ կարող է հաւասար կերպով խօսել:

Նորա ուսածքները «Հոմերոսի և հոմերական դարի» մասին պատւի դիրք տուեցին Անգլիայում այն բանաստեղծի համար, որ ցարդօր արհա-

մարհամար էր ալդ երկրում: Ոչ պակաս նշանաւոր է նորա ընդարձակ դըր-
ւածքը „Juventus Mundi“. Բայց աւելի քան հին դարերը հետաքրքրում
են ալդ զղալուն մարդուն մեր ժամանակաւ մեծ—ան, նաև փոքրիկ—
խնդիրները, և զեռ աղօթք անգլիական ամսագրերը չեն դուրս գալիս ա-
ւանց որ նոցանից մէկը կամ միւսը, չաճախ նաև մի քանիսը միաժամա-
նակի, Վլադստոնի գրչից բղխած մի լոռւած չը բերէին, թէկուզ մի քննա-
դատութիւն որ և է նշանաւոր րօմանի Ալբ, նա հէնց ալժմ գրականա-
պէս չափազանց գործօն է, ինչպէս ալդ միշտ լինում էր, երբ քաղաքա-
կանութեան անբարեադատեցութիւնը հրել է նրան գէպի ընդդիմադիր կու-
սակցութիւնը և նրան տել է մի ախամալ աղատութիւն:

Բայց չը նալած ալդ լոլոր բաղմակողմանի գործունէութեան, ալդ
ծերունին յայց է տալիս մի առարկալի նկատմամբ մի եռանդ և գործու-
նէութեան ուժ, որոնք մի միակ մարդու ուժերի համար—և մի երկտասարդ
մարդու—միանգամալն բաւական կարող էին համարուել: Ալդ առարկան է՝
Խրչանդիալի հանգամանքների բարւոքումը, որը Վլադստոնը, ինչպէս չափա-
նի է, նրանով է ուղղում չառաջացնել, որ ալդ կղղուն նա մի սրոչ չափով
անկախութիւն է ուղղում տաւ լինել, մի սեպհական պարլամենտի ներքոյ,
մի նախագիծ, որը հանդիպեց մեծ ընդդիմադրութեան ոչ միայն պահպա-
նողական բանակում, ալ և իւր կուսակցութեան ամբողջ աջ թիւի վերալ,
և զորա մի քանի նշանաւոր մարդկանց կողմից: Մի չալտնի չարժում հա-
տարակաց կարծիքի մէջ նորա օգտին, չամենալն դէպս, նկատուելի եղաւ, սա-
կալն նա պէտք է տեսնէ՝ ալդ վերանորոգութիւնը իւր կեանքի իրիկնա-
ժամին և կամ երբ և իցէ նա պիտի կալանալ, —ո՛վ կարող է ալդ ալօթք
նախատեսել:

Իւր ծննդեան օրը Վլադստոնը անց է կացնում իւր գիւղական բնա-
կարանում՝ Հաւարդէնում, Ֆլինտշիր գաւառում, ուր նա համեմատալէս
աւելի առանձնակի կեանք է վարում և իւր սիրած պարապմունքներին անձ-
նատուր լինում: Այստեղ մօտիկ բնակում է նաև իւր որդին իւր հոգե-
րական Հաւարդէնի եկեղեցու, ուր նաև հայրը, անգլիական գիւղական
մեծերի սովորութեան համեմատ, չաճախ կարդում է աւետարանի բնագիրը,
և թէ հեռուից, թէ մօտիկից գալիս են ծխականներ մեծ ուրախութեամբ, մեծ
ծեր մարդու գեղահնչիւն ձալնին տկանջ դնելու համար: Այստեղ, Հաւար-
դէնի պարկում, նա անձնատուր է լինում իւր առանձին գիրոյ առարկա-
լին՝ ծառեր կտրելուն: Փալտ կարողի հագստտով, և չամենալն դէպս չափի-
կի թեկերով և ի հարկէ՝ առանց ամենքին չալտնի Վլադստոնի օձիւրի, նա
չրջում է իւր որդու հասարակութեան մէջ: Բայց և առհասարակ նա սի-
լում է զւարթ բնութեան մէջ ազատ չրջել, որի չնորհիւ նա պահպանած
է ցալժմ մի գօրեղ առողջութիւն:—Երանի՜ թէ ալդ առողջութիւնը նա եր-
կար պահպանի,—անա անց ցանկութիւնը, որը նորա ոգևորւած կուսակցի-
ները չեն կարող բաւականաչափ գօրեղ կերպով չարտադրուել:

ԳԻՆՈՒ ԲԵՐՔԸ ՖԲԱՆՍԻԱՅՈՒՄ 1889 Թ.

Պարիզ, 6 յունւարի (նոր տոմար).

Ֆինանսների մինիստրութիւնը ազօր հրատարակեց 1889 թ. գինու բերքի մասին ժողոված թւերը: Դորա համեմատ, գինու բերքն էր Ֆրանսիայում 23.223.600 հեկտոլիտր (հեկտոլիտրը հաւասար է 100 լիտրի): Այդ քանակութիւնը 6.878.500 հեկտոլիտրով աւելի նւազ է, քան 1888 թւականինը և 6.700.000 հեկտոլիտրով աւելի նւազ է, քան վերջին տասը տարիների միջին բերքը: Անցեալ 1889 թւականին վատ բերքը, պաշտօնական հաղորդագրութեան համեմատ, պէտք է վերադրել Ֆիլօփսերային, միլդիւլին և վազի ծառերի միւս հիւանդութիւններին: Ամենից շատ վնասւեցին նահանգները՝ Ստորին-Ալպերի, Մովլի-Ալպերի և Խլապի, մինչդեռ Շամպայն, Նիվերնէ և ուրիշ նահանգները շատ քաջով բերք ունեցան:

Գինու լատիւթիւնը վերին աստիճանի բաւարար էր:

Բերքի պահատորը նաև 1889 թւականին լրացւեց օտար գինիների ներմուծումով: Առաջին տասնութէկ ամիսներում ազդ ներմուծումը հասաւ 9.504.000 հեկտոլիտրի: Սոցանից՝

6.372.000	հեկտոլիտր	Իսպանիայից
1.346.000	»	Ալժիրիայից
820.000	»	Պորտուգալիայից
92.000	»	Իտալիայից

Գինեգործութիւնը խնձորից և շաքարից, որպէս նաև չամիչից, չարու-նակեց պահասել. առաջիններից ստացւեց 1.479.000 հեկտոլիտր, վերջինից՝ 1.826.000 հեկտոլիտր, միասին ուրեմն՝ 3.305.000 հեկտոլիտր, մինչդեռ 1888 թւականին ազդ Նիւթերից գինի էր պատրաստուել 4.693.000 հեկտոլիտր: Այդ ուրախալի երևութ է:

ՊԱՐԻՋԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Պարիզ, 5 յունւարի.

Համառնքի խորհրդական լաւի հրատարակում է ալօր մի ղեկուցում Պարիզի ուսումնարանների մասին: Զեկուցման հեղինակը նախկին ուսուցիչ է: Նորա հրատարակած թւերից քաղում ենք հետևեալը.

Կադսերութեան վերջին տարում (1870 թ.) Պարիզը ունէր՝

96 ուսումնարան փոքրիկ երեխաների համար:

127 տղայաց տարրական ուսումնարան:

129 աղջկերանց տարրական ուսումնարան:

1889 թւին ազդ թւերը փոխւեցին սպալէս՝

129 ուսումնարան փոքրիկ երեխաների համար:

194 տղապոչ տարրական ուսումնարան:

176 աղջկերանց տարրական ուսումնարան:

Այդ փոփոխութիւնների հետ փոփոխւեցին նաև ալլ ուսումնարանների պերսոնալը և նոցա ուսիկները: Փոքրիկ երեխաների ուսումնարանները ունին 129 տեսչուհիներ և 323 վարժուհիներ, տղապոչ տարրական ուսումնարանները՝ 194 տեսուչ և 1332 ուսուցիչներ, աղջկերանց տարրական ուսումնարանները՝ 176 տեսչուհիներ և 1269 ուսուցիչներ:

Գանձ ալժմ միջնակարգ դպրոցներին, որոնք կամ տէրուհական են, կամ քաղաքային: Առաջինները կոչւում լիցէ (lycée), երկրորդները՝ կոլլէժ (collège) և էկոլ (école—ուսումնարան, դպրոց): Կոլլէժներին մի քանիսը համապատասխանում են Գերմանիայի և Ռուսիայի կաթոլիկական գիմնազներին, իսկ մի քանիսը՝ բէալական դպրոցներին: Արդ, 1870 թ. Պարիզը ունէր միայն 4 քաղաքային կոլլէժներ՝ Կոլլէժ Ռոլլէն, և Շապտալ և Էկոլ Տիւրգո և Կոլլէժ: Վերջին երկուսը բէալական դպրոցներ են: 1870-ից դէս բացւած են 5 ուրիշ միջնակարգ դպրոցներ քաղաքի հաշտով երեքը տղապոչ և երկուսը՝ աղջկերանց: Բացի դոցանից բացւած են աղջկերանց համար նաև 5 արհեստագիտական դպրոցներ: Որպէս տղապոչ համար, Նոնդպէս և աղջկերանց համար կան տէրուհական լիցէներ, որպէս՝ Լիցէ Ֆենելոն, Լիցէ Ռասին և այլն. բայց այստեղ խօսքը միայն քաղաքային դպրոցների մասին է:

Ուսուցչական պերսոնալի ուսիկները շատ բարւոյւնեցին: Տարրական դպրոցների տեսուչների ուսիկները առաջ էին 2.500 առ նւազն և 3.500 ֆրանկ առ առաւելը, իսկ ալժմ 4.100 և 5.300 ֆրանկ են: Տեսչուհիներին էին 2.300 և 3.550 ֆրանկ, ալժմ՝ 2.900—4.550 ֆրանկ: Տարրական ուսումնարանի ուսուցիչները ստանում էին 1.700—2.400 ֆրանկ, ալժմ՝ 2.100—3.600 ֆրանկ, վարժուհիները՝ առաջ 1.500—2.000 ֆրանկ, ալժմ՝ 1.900—3.100 ֆրանկ և այլն:

Պարիզ քաղաքը 1889 թ. իւր ուսումնարանների համար նշանակած էր իբր սովորական ծախք՝ 24.724.403 ֆրանկ, մինչդեռ 1871 թւականին ուսումնարանների համար նշանակւած էր միայն 9.600.896 ֆրանկ: Բացի ալլ՝ տարիկան սովորական ծախքերից, քաղաքը 1871—1877 թ. միսնեց ուսումնարանների վերաջ արտակարգ կերպով 84 միլլիոն ֆրանկ, ուսումնարանների շինութիւնները կառուցանելու և այլ պարագաներով հարստացնելու համար:

ԱՉԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԵՍ ՆԵՂԿԱՍՏԱՆՈՒՄ

Նոր տոմարով դեկտեմբերի սկզբներին, անցեալ տարի կապացու Հնդկաստանի Բօմբէյ քաղաքում «հնդկական բնիկներին կօնգրեսը», կամ այսպէս կոչւած՝ Ազգային Կօնգրեսը։ Այդ վեցերորդ անգամն է, որ կազմուած է հնդկաստանցիների Ազգային Կօնգրեսը։ Եւրոպական մամուլը շարունակ ստանում էր նամակներ և հեռագիրներ այդ եղելութեան մասին, որի բնաւորութիւնը և նշանակութիւնը «Մուրճ»-ի ընթերցողները կարող են դատել ներկալ չօրւածից, որ տպւած էր Միւնխենի «Ալլեմաննէ Յալտունգ» լրագրի ներկալ տարւալ № 9-ի մէջ, որպէս երևում է, գրւած մի մարդուց, որը Հնդկաստանը անձամբ ճանաչում է։ Յօղւածի վերնագիրն է՝ Անգլիական կառավարութիւնը և Ազգային Կօնգրեսը։

«Այս վերջին օրերը նամակներ և հեռագիրներ են ստացւում Հնդկաստանից, որոնք տեղեկացնում են վեցերորդ «հնդկական բնիկների կօնգրեսի» մասին, որը Բօմբէյում կապացու։ Քանի որ այդ, այսպէս կոչւած, Ազգային Կօնգրեսը բաւականի նշանաւոր երեոյթ է հնդկական հանգամանքների մասին դատողութիւն տալու համար, կ'ուղենալի հաղորդել մի քանի զիտողութիւններ, որ ես անցեալ տարի առիթ ունեցալ անելու և որոնք կը լուսաբանեն ալն քաղաքական շարժումը, որը Ազգային Կօնգրեսի հիմքն է կազմում։

«1888 թ. վերջում ես Բենգալիայումն էի (Հնդկաստանի մի մասը) և այնուհ շէքիս ընկալ, որ քաղաքներում, փողոցների անկիւններում, անգլիական և հնդկական լեզուներով գրւած մեծ աֆիշներով հրաւիրւում էին Ազգային Կօնգրեսի համար, որը ալն ժամանակ, եթէ չեմ սխալւում, Ալլահաբադում պէտք է գումարւէր։ Բնիկներից դանազան խմբեր, կանդնած նոցա առջև, տաք տաք խօսում էին, բայց ես առիթ չը գտալ Կօնգրեսի մասին տեղեկանալու։ Երբ անցեալ 1889 թւականի դարձանը Հնդկաստանի հարաւային չետ ընկած տեղերում ճանապարհորդում էի և ամբողջ շաբաթներով ես միայն բնիկների հետ գործ ունէի, առիթ գտալ Ազգային Կօնգրեսի մասին տեղեկութիւններ ստանալու։ Ինձ ալդ մասին տեղեկացրին այնպիսի բաց սրտով, որ ինձ զարմացրեց, և որը ինձ ապացուցեց, թէ ալն դադափարները, որ Ազգային Կօնգրեսը փաշտալում է, սրբան խորը թափանցել են ժողովրդի մէջ և թէ սրբան հնդկաստանցիք ճանաչ են նոցա չեղափոխական բնաւորութեանը։

«Մի չափ կրթւած բրամին, որը իմ երկրաբանական ուղևորութիւններին ժամանակ մի քանի օր շարունակ ինձ ուղեկցում էր, հետաքրքրական բաներ հաղորդեց, որոնցից ես քաղում եմ հետեւեալը։—Ազգային Կօնգրեսը բնիկ հնդկացիների միութիւն է, որի նպատակն է՝ Արեւելեան Հնդկաստանի անկախութիւնը առաջ տանել։ Ամենից առաջ պահանջւում են, որ բը-

Նիկ ժողովուրդը պարլամենտական ներկայացուցչութիւն ունենալ կառավարութեան մէջ, օրինակի համար, որ մի անասկ սենատ կազմւի՝ կառավարութեան վճիռներն մէջ մասնակցութիւն ունենալու իրաւունքով: Սանատոյ պէտք է, որ բոլոր օրէնքները՝ հարկերի վերաբերեալ՝ աղ ազգաւորն պատգամաւորներն ժողովից կախումն ունենան: Երկրորդ՝ պահանջում են, որ անդլիական թոշակաւոր զօրքը փոխարինւի ընդհանուր ղեւորական ծառայութիւնով, որը սակայն չը պէտք է մշտական կանգուն զօրք լինի, որը երկրի տուրքերի մի մեծ մասը սպառւի, ալ կանչւի միայն հարկաւոր եղած ժամանակ:

«Երբ ես ասացի, թէ մի նշանած երկրում աղ պահանջները ինձ շատ չեղափոխական են թւում, բրամինը ինձ պատասխանեց. — մեզնից հեռու է այս միտքը, որ աղ նպատակներին հասնելու համար չեղափոխական միջոցներ գործ դնենք. մենք ուզում ենք Անգլիային հաւասարիմ մնալ, բայց մենք մեզ տիրապետողների արդարամտութիւնից սպասում ենք, որ նոքա մեզ քաղաքական իրաւունքներ տան աչն մեծ ֆինանսական ծանրութիւնների փոխարէն, որ մենք կրում ենք:

«Խնդիրը սրանումն է, թէ Հնդկաստանցիք պիտի կարողանան իրանց նպատակին հասնել, թէ ոչ:

«Ապտեղ պէտք է նկատել, որ Աղգային Կոնգրեսի անդամների, աչն, անգամ ղեկավարների մէջ գտնւում են նաև անգլիացիք, և նոն իսկ Բօմբէյում նորիւումս կապացած Կոնգրեսի նախագահն էր մի անգլիացի՝ սիր Վիլլիամ Վեդդերբորն: Ուրեմն անգլիացիք չեն վախենում, որ Աղգային Կոնգրեսը կարող է տանել զէպի Հնդկաստանի անկախութիւնը. և գուցէ Կոնգրեսին մասնակցող անգլիացիք ջանք են անում, որ Աղգային Կոնգրեսի նպատակները պահպանեն կարելիութեան սահմանների մէջ: Պարտերը, որոնք Հիւսիսային Հնդկաստանում մեծ առևտուրի ներկայացուցիչներ են, չարժումից հեռու են կանգնած, որովհետև անգլիական կառավարութեան ներքոյ իրանց շատ լաւ են զգում: Նաև մահմեդականները, որպէս ալք երևում է Բօմբէյի լրագիրներից, չարժման բարեկամ չեն ցոյց տալիս իրանց, չը նաչած որ Հնդկաստանում նոքա կազմում են ամենակեղափոխական տարրը և վերջին ապստամբութեան միջոցին ղեկավարների դեր էին կատարում:

«Թէ ինչ դիրք են բռնած զէպի խնդիրը հարաւային Հնդկաստանի մահմեդականները, — չը կարողացաւ իմանալ. բայց ինձ թւաց, թէ Աղգային Կոնգրեսը գտնում է իւր լինակէտը երկրագործ հնդկի և թամիլ աղադրնակութեան մէջ:

«Անգլիացոյ արևելա-հնդկական տիրապետութիւնից առաջ, Հնդկաստանը կազմած էր իշխանութիւններից, որոնք ազգով, կրօնով և կատա-ներով բաժանւած լինելով, իրար հետ եռանդով կռւում էին և որոնց բնակիչները, իրանց իշխանների կամաւականութեան ներքոյ, շատ չարիքներ

էին կրում: Անցնէր, որոնք աւուր տնդլիական պալատնի ներքոյ խաղաղ կերպով իրար հետ ապրում են, բացի տնդլիական կառավարութիւնից՝ չ'ունին ոչ մի ուրիշ ընդհանուր կապ, և նոյն խոյ Ազգապէն Կոնգրեսը, իւր հայրենասիրական ձգտումներով, անկարող կը լինի պարտերին, հնդկներին, մոնղոլներին, մահմեդականներին, թամիլներին և ուրիշ մանրը էթնոգրաֆիական ցեղերը միացնել:

«Բացի դրանից, տնդլիական կառավարութիւնը շատ է ուժեղ, որպէս զի մի ազգապէն ապստամբութիւն կարողանալ իւր ցանկութիւնները դուրս իրագործել: Պէտք է շնդկատանի մէջը ճանապարհորդած լինել, հասկանալու համար, թէ Անգլիան աշխույ ինչ հիանալի ուժ է ցոյց տալիս: Իւր գործելու կարեւոր միջոցներից մէկը՝ երկաթուղիներն են, որոնք երեք կարգի կարելի է բաժանել. 1) երկաթուղիներն մեծ երկաթուղիների համար (որպէս Բոմբէյ—Կալկաթա—Մագրաս), 2) երկաթուղիներ, որոնք տանում են դէպի առողջական կայարանները, որպէս Գարջիլինգ Զիմալաթում (7.200 ոտնաչափ բարձր), Սիմլա, Նիլգիրի, Նալեղլիա (Յէլոնում) և, վերջապէս, 3) երկաթուղիների մեծագոյն մասը, որոնք, ինչպէս երևում է, շինւած են զինուորական նպատակներով և որոնք տանում են դէպի որ և է մեծ բանակատեղի:

«Հեռագրական թելերի հետ միասին՝ երկաթուղիները կաղմում են ամենագործը միջոցը Անգլիայի համար՝ որ և է ապստամբութիւն ըստէապէս խեղդելու: Գոքա են կարելի դարձնում, որ ամենահեռուսր նահանգական քաղաքներում մի կօլլեկտոր (նահանգապետ) նստի, որը առանց որ և է զինուորական պաշտպանութեան, նահանգի, վիճակի տէրն է և տառնում է ամենամեծ տուրքերը առանց վտանգի իւր անձի համար: Նահանգում նա ամենակարող անձն է: Եղներով լծած սպայերի վերաջ ճանապարհորդելիս ևս ունէի հետս, բացի մի խոհարարից և մի թարգմանից, նաև մի պաշտօնեալ, որին ինձ տրւած էր կօլլեկտորի բարեհաճութեամբ. գիւղերի տանուտէրերին նամակներ էին ուղարկւում առաջուց: Հէնց որ ևս մօտենում էի մի գիւղի, ինձ զիմաւորում էին գիւղի ազատիկալները, որ ոտաւորիկ և ձեռները հողով լքցւած ինձ ողջունէին. մի տուն ինձ համար պատրաստ էր՝ ամեն չարմարութիւններով, ինչ միայն այդ հեռուսր տեղերում դառնել կարելի է: Գիւղի տանուտէրը ինձ ապրելում էր երաժիշտներով և պարողներով ուղեկցած, և ամենուրեք աշխատում էին, որ ևս բարեհաճ լինիմ: Մի գիւղ խնդրում էր մի թանկ (Չրամբար), մի ուրիշը՝ գիւղի ճանապարհ, և միւշտ պէտք է բարեխօսէի կօլլեկտորի մօտ, որը իբր մի աւելի բարձր էակ էր նկատւում:

«Անկարեւոր չէ ևս այն հանգամանքը, որ շնդկատանի քաղաքներում առհասարակ ղէները չեն տեսնուում: Ոչ սուր և ոչ հրացան չէք տեսնիլ այն տեղերում, որոնք տնդլիական անմիջական իշխանութեան ներքոյ են:

«Այս պայմանների մէջ միզ չը պիտի զարմացնի, որ հնդկական կառավարութիւնը առանց հոգսի նստում է Ազգապէն Կոնգրեսի վերաջ: Եթէ Ազգապէն Կոնգրեսը մի նպատակի հասնի, ադ նա կարող է անել միմիայն Անգլիայի համաձայնութեամբ և ոչ ոտրա կամքի հակառակ:»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՆ 1890 ԹԻԱԿԱՆԻ ՇԵՄԲՈՒՄ

Այս անգամ մենք մտադիր ենք «Մուրճ»-ի ընթերցողներին հաշիւ տալ այն բոլոր քաղաքական անցքերի մասին, որոնք պատահեցին անցեալ 1889 թւականին: Այդ անցքերից մի քանիսը միջազգային բնաւորութիւն են կրում, մի քանիսը՝ ներքին քաղաքականութեանն են վերաբերում:

Միջազգային յարաբերութիւնների մասին մենք կ'աշխատենք կարճ խօսել, որովհետեւ անցեալ 1889 թւականի ընթացքում մենք շարունակ առիթ ունեցանք նոցանով զբաղւելու:

Ընդհանուր հանգամանքները յայտնի են. 1871 թւականից սկսած՝ Ֆրանսիան պատրաստուում էր revanche-ի՝ քէնը հանելու Գերմանիայից և իւր նախկին ամենատաջնակարգ դիրքը վերստին հաստատելու ընդհանուր քաղաքականութեան մէջ: Այդ թւականից մինչ 1878 թւականը ընդհանուր քաղաքականութեան ամենազլխաւոր հանգամանքը՝ Ֆրանսիայի և Գերմանիայի փոխադարձ յարաբերութիւններն էին, որոնց բնաւորութիւնը ուղղակի թշնամական էր: 1878 թւականից սկսած այդ հանգամանքի վերայ աւելացաւ մի երկրորդը՝ Գերմանիան թոյլ տւեց, Անգլիայի և Աւստրիայի հաճոյքի համար, քանզեւ Սան-Ստեֆանօի ուռա-տաճկական դաշնադրութիւնը և փոխարինել նրան մի նոր դաշնադրութիւնով, որի ոյժով Ռուսիան զրկւեց զէնքով ու արիւնով ձեռք բերած առաւելութիւնների մեծագոյն մասից Բալկանեան թերակղզում:

Խաղաղութիւնը անմիջապէս կը խանդարւէր, եթէ միայն Ֆրանսիան ու Ռուսիան իրար ձեռք տային և միանային որ և է պատեւրագմական դաշնադրութիւնով: Միութիւնը, սակայն, այդ աստիճանի

հետու չը գնաց. բայց Վերմանիան, յամենայն դէպս, շտապեց իւր զլիսի ճարը տեսնել 1879 թւականին՝ կապելով Աւստրիա-Ունգարիայի հետ: Այդ մեծ դէպքից յետոյ պատահեց ահա ինչ. 1881 թւականին Պրանսիան զրաւեց Տունիսիան, Աֆրիկայում, Միջերկրական ծովի ափին, Իտալիայի գրեթէ հանդէպ: Արդ, իրաւացի թէ անիրաւացի կերպով Իտալիան վազուց աչք ունէր անկած այդ երկրի վերայ, որին նա ուզում էր դարձնել իբր Իտալիայի աֆրիկական պրովինց: Դէպքը այն ատիճանի՝ զգալի եղաւ Իտալիային, որը Պրանսիային անընդունակ էր կարծում մի այդպիսի համարձակութիւն գործելու 1870—71 թւականի պարտութիւններից յետոյ, որ նա քիչ մնաց կորէր իւր զիւլումառիական յարաբերութիւնները Պրանսիայի հետ: Դժգոհ Պրանսիայից՝ Իտալիան 1882 թւականին մի որոշ չափով մօտեցաւ Վերմանիային: Այդ ժամանականից դէս Իտալիան, քանի դնաց, այնքան աւելի ու աւելի մոտաւ Վերմանիայի բարեկամութեան մէջ և, վերջապէս, 1887 թ. մարտին նոցա մէջ կապուեց մի պատերազմական դաշնագրութիւն, որը, երևի, ուղղած է Պրանսիայի դէմ: Այսպիսով կազմեց Նիւրպայի մէջ եռապետեան դաշնակցութիւնը, որը այս րոպէին կազմում է, միասին առած, ամենահզօր պատերազմական ոյժը եւրոպայում: Բայց որքան էլ նա մեծ լինի, այնու ամենայնիւ Պրանսիայի և Ռուսիայի ոյժերը գրեթէ հաւասար են առաջինին, այս զանազանութեամբ միայն, որ առաջինները իրար հետ կապւած են, մինչդեռ նոցա հակակշիռը կազմող Պրանսիան և Ռուսիան միմիայն իրար պաշտպանում են, բայց կապւած չեն որոշ դաշնագրութիւնով:

Բխմարիք շատ ճապիկ կերպով օգտւում էր ամեն մի դէպքից Վերմանիային ցոյց տալու համար, որ ահա՛ — ահա ուրիշները պատրաստւում են Վերմանիայի վերայ յարձակելու: Նա զիտէ, հարկաւոր եղած ժամանակ, այնպէս խոշորացնել ամեն մի հակա-գերմանական ցոյցի նշանակութիւնը, որ կարողանում էր պարլամենտի վերայ ազդել և դուրս կորզել որ և է օրէնք յօդուտ զինւորականութեան: Դոցանից ամենանշանաւորը պէտք է համարել անկասկած այն, որ Բխմարիկին յաջողեց գերմանական զօրքը գրեթէ բոլորովին անկախացնել պարլամենտից, զօրքի բիւջեւը ամեն եօթ տարի մի անգամ վաւերացնել տալով պարլամենտից և ոչ թէ

անն տարի: Այդպիսի ազդեցութիւն ունեցաւ Բուլանժի երեւան զալը Ֆրանսիացում, երեք տարի սրանից առաջ, երբ նա, իբր պատերազմական մինիստր, կարծես մի բոլորովին մոտալուս պատերազմի էր պատրաստում Ֆրանսիական զօրքը:

Իրողութիւնների կապի համար հարկաւոր էր վերալիշեցնել ընթերցողին քաղաքական աշխարհի ընդհանուր դրութիւնը: Ինչ 1889 թւականին կատարւեց, — այդ դրութեան հետեանքն էր: Մեզ մնում է միայն թւել մի առ մի այդ քաղաքական դէպքերը, որոնց իմաստը առանձին լուսաբանութեան ալ լսւ կատարուի:

Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ը շարունակեց 1889 թւականին իւր այցելութիւնները եւրոպական միապետներին: Մինչ 1889 թ. նա արդէն այցելել էր ռուսաց, շեդացոց, դանիացոց միապետներին, յետոյ հարաւային գերմանիայի իւր զաշնակիցներին, յետ այնու Աւստրիա-Ունգարիայի թագաւոր-կայսրին և Հոմմում խուլացոց թագաւորին:

Արդ, 2-ին մայիսի (նոր տոմար) 1889 թ. ևկաւ Բերլին խուլացոց թագաւոր Հոմմերտ, 12-ին օգոստոսի՝ կայսր Ֆրանց-Յոլսէփ, 11-ին հոկտեմբերի՝ կայսր Ալէքսանդր III: Իսկ Վիլհելմ II-ը այցելեց օգոստոսի սկզբին իւր տասին՝ Անգլիայի թագուհի Վիկտորիային Օսթրնում, 27-ին հոկտեմբերի՝ յունաց թագաւոր Գէորգին, որի առաջին որդի Կոստանդինը այդ ժամանակ ամուսնանում էր գերմանացոց կայսեր քրոջ Սօֆիայի հետ Աթէնքում: յետոյ, նոյեմբերի 2-ին, Վիլհելմ II-ը և իւր ամուսինը եկան Կ. Պօլիս Սուլթան Աբդուլ-Համիդին այցելելու և մնացին այնտեղ մինչև նոյեմբերի 5-ը:

Մենք առանձին ենք յիշում Պարսից Շահ Նասր-է-Ղ-զինի Բերլին դալը, ամբանը, որովհետև իշխանական այցելութիւնների շարքում նա սերտ կերպով չի կապւում ընդհանուր քաղաքականութեան հետ: Նասր-է-Ղ-զին Շահը այցելեց նաև Պետերբուրգ, Լօնդոն, Պարիզ, Վիեննա և այլն:

Բայց Նատալիայի նկատմամբ կարեւոր է յիշել այն, իբրք, ահագին ցոյցը, որ խուլական բազմութիւ դիւղատները՝ արմատական կուսակցութիւնից՝ սարքեցին Պարիզում ուղիղ այն ժամանակ, երբ

Խոտալիացի թագաւորը իւր առաջին մինիստրով Բերլինումն էր գլխավորուում:

Կարևորութիւն ունեցաւ Վիլհելմ II-ի այցելութիւնը Վիկտորիա թագուհուն: Մինչև 1889 թ., Աւստրիացի և Գերմանիացի քաղաքական յարաբերութիւնները պլատոնականութիւնից գէնը չէին անցնում: Միմիայն Խոտալիան վաղուց ապահովւած էր, որ Անգլիան չէր թող տայ, որ Ֆրանսիան Միջերկրական ծովի վերայ տարածի իւր միակ իշխանութիւնը: Բայց պէտք է ընդունել, որ կայսրը Վիլհելմը վերադարձաւ Օսթրիից և Սպիտհիլից, ուր նա ամբողջ 90 անգլիական հսկայական նաւերին տեսութիւն արաւ, որոշ խոստովանքներով անգլիական կառավարութեան կողմից, որոնց իմաստն էր թերևս ամփոփում անգլիացոց թագաժառանգը, Պրինց Ուէլս, երբ սա, մի խնձոյքի ժամանակ, արտասանեց. «Բրիտանական նաւատորմը և գերմանական զօրքը խաղաղութեան զրաւականներն են»:

Թէ արդե՞օք Սոմարսեթումն էլ որ և իցէ բանի մասին համաձայնութիւն է կայացել, այդ դեռ ևս բոլորովին չափանի չէ: Բայց միայն այն հաստատ պէտք է համարել, որ Սուլթանի քաղաքական դիրքը մի առ ժամանակ աւելի ամրացած է և, այսպէս ասած, նա կրկին ընդունւած է եւրոպական խորհրդի անդամ:

Այսպիսի մեծախորհուրդ համաձայնութիւններ կայացնելը պատմական անցեալից մեզ չի չեցնում է 1756 թ. Լահանը, Պրուսիացի Մեծն Ֆրիդերիկոսի ժամանակ: Այն ժամանակ այդ համաձայնութիւնները կատարւեցին յարձակողական նպատակներով. այժմեան համար պնդում են, թէ նոքա պիտի ծառայէն խաղաղութիւնը պահպանելուն: Պէտք է հաւատալ, որովհետև խաղաղութիւնը մեծապէս ձեռնառու է եռապետեան դաշնակցութիւնը կազմողներին, բայց ոչ միայն ունեցածը պահպանելու համար, այլ իրանց իշխանութիւնը առանց զօրեղ ընդլիմադրութեան տարածելու համար մէկ կողմից Բալկանեան թերակղզու վերայ, միւս կողմից՝ հեռաւոր կոլոնիաներ ձեռք բերելու համար և երրորդ, միջազգային առևտրական դաշնադրութիւնները իրանց համար նպաստաւոր կերպով կապելու համար:

Բալկանեան թերակղզում մի քանի բան փոփոխեց 1889 թ.: 6-ին մարտի 1889 թ. Սերբիացի թագաւոր Միլանը զահից հրա-

ժարեց: Նորա պատճառով էր զլիաւորապէս, որ Սերբիան Աւստրիայի ազդեցութեան ներքոյ էր: Այդ ժամանակից զէս ուսաց կուսակցութիւնը Սերբիայում զերիշխող գարձաւ: Աւստրիան շտապեց իւր կորուստը զրստել նրանով, որ մօտեցաւ Բուլղարիային: Կայսր Ֆրանց-Յովսէփը ընդունեց բուլղարական պատգամաւորութիւնները, յայտնելով իւր ուրախութիւնը, որ Բուլղարիայում լաւ կարգ է պահպանւած, մինչդեռ, այդ, ինչպէս յայտնի է, ուսաց զաղափարներին հակառակ է: Բայց թէ արդեօք իշխան Ֆերդինանդի ճանապարհորդութիւնը Եւրոպայում կ'ալ ունի այդ բոլորի հետ և կամ Բուլղարիայի անկախութիւնը հռչակելու խնդրի հետ—այդ դեռ պարզւած չէ: Այսքանը միայն յայտնի է, որ այն օրից, երբ կայսր Ալեքսանդր III-ը Բերլին էր, այդ մասին ոչ խօսք, ոչ զրոյց եղած է, որից եզրահանջում են, որ Վիեննան և Պետերբուրգը Բալկանեան խնդիրներում առ այժմ չեն միջամտում և իրար հետեւ են պահում:

Ահա՛ այսքանը, ինչ կարելի է տեսլ միջազգային դէպքերի նըկատմամբ 1889 թւականին:

Դառնանք այժմ իւրաքանչիւր երկրի ներքին քաղաքական անցքերին:

Ռուսիա: Ռուսիայի արտաքին քաղաքականութեան մասին մեր առաձների վերայ աւելցնելու է, որ, երբ մայիսի վերջը թաղաւոր կայսեր եղբոր որդին Մեծ իշխան Պետրը Մօնտենեգրօ'ի իշխանի դուստր պրինցես Միլիցայի հետ նշանուում էր, թաղաւոր կայսրը, Մօնտենեգրօ'ի իշխան Նիկիտայի կենացը խմելիս, անուանեց նրան իբր Ռուսիայի միակ հաւատարիմ բարեկամ: Իւր ժամանակին այդ խօսքերը քաղաքական մամուլը ամեն կողմից մեկնեց, բայց Բերլին այցելելուց յետոյ, թաղաւոր կայսեր կողմից, այն խօսքերի տպաւորութիւնը մի յայտնի չափով անցաւ:

Տարիներից ի վեր ուսաց կառավարութեան և հռովմէական Պապի մէջ բանակցութիւններ կային մի տեսակ modus vivendi մասին. այդ բանակցութիւնները վերջացան նոյեմբերի սկզբին նրանով, որ Ռուսիայի մէջ թափուր մնացած եպիսկոպոսական տեղերի համար նոր առաջնորդներ նշանակեցին:

Ռուսիայի ներքին կառավարութեան նկատմամբ՝ հանդուցեալ կոմս Տոլստոյ առաջարկել էր մի հիմնաւոր փոփոխութիւն. նա մշակում էր մի ծրագիր, որի զօրութեամբ ռուսական տեղային ինքնավարութիւնները, ղեմսուօնէր կոչւած, պէտք է նոր կազմակերպութիւնով փոխարինւին, ուր նահանգական ազնականների առաջնորդները պէտք է վերահսկողութիւն ունենան զեմսուօնների վերայ: 1889 թ. փետրւարին թագաւոր կայսրը տւեց իւր համաձայնութիւնը այդ նախագծին: Կոմս Տոլստոյի տեղը նշանակեց Դուրնօ:

Բալթեան նահանգներում, ուր զխաւորապէս գերմանական ազգաբնակչութիւն է, որը իւր հնաւանդ վարչական, դատարանական և դպրոցական արտօնութիւններն ունէր, շարունակեց համառուսական կարգերը մոցնելու քաղաքականութիւնը: Դեկտեմբերի 16-ից (նոր տոմար) Րիգայի քաղաքային վարչութիւնը սկսեց իւր նիստերում ռուսաց լեզուի պարտադիր զործածութիւնը: Դատարանները ենթարկւած են նոյն պարտաւորութեան: Դորպատի համալսարանի ընկալողը այսուհետեւ պէտք է նշանակւի կայսերական հրամանով:

Գերմանիա: Միջազգային յարաբերութիւնների մասին ընդհանրապէս արդէն խօսւած է: Բայց ահա նաև մի քանի զեպքեր արտաքին քաղաքականութիւնից Գերմանիայի վերաբերեալ:

Այդ երկրորդ կարգի միջազգային զեպքերից ամենանշանաւորը Գերմանիայի և Զւիցերիայի միջ պատահած զեպքն է գերմանական գաղտնի ոստիկան Վոհլգեմիւսի առիթով, որի մասին մենք խօսեցինք անցեալ տարւոյ «Մուրճ»-ի Ձեռքից մէկում: Քաղաքական Տեսութեան մէջ: Պէտք է խոստովանած մի բան. անարդարութիւնը Գերմանիայի կողմն էր, բայց մի ուրիշ տէրութիւն, նոյնքան ուժեղ, որքան Գերմանիան է, թերևս զործը աւելի հեռու տանէր, օգուելով իւր ոյժից, ոտի տակ տալով ոչ միայն արդարութիւնը, այլ և քաղաքակրթութեան պատիւը: Զւիցերիան այժմ լրջօրէն զբաղւած է Սէն-Գոտարդի միջանցք-երկաթուղու դռները ամրայնելու զործով, որի շտապացնելուն զարկ տւեց վերոյիշեալ զեպքը:

Սաֆօս կղզիների վերայ եղան ընդհարումներ գերմանական նաւատորմի մարպկանց և տեղացիների հետ: Մի սարսափելի փոթորիկ

փչացրեց գերմանական մի քանի պատերազմական նաւեր, որոնց 80 հոգին կորան ծովի մէջ:

Այդ դէպքից յետոյ սկսեց Գերմանիայում նաւատորմի նոր կազմակերպութեան գործը, որով նորա վարչութիւնը բաժանեց հրամանատարութեան գործից, նման ցամաքի զօրքին: Կորա համեմատ նաւատորմի համար ստեղծեց առանձին մինիստրութիւն և մի հրամայող ազմիրալ:

Յամաքի զօրքը Գերմանիայում կազմում էր 18 կորպուս, իսկ յունւարի 1-ից 1890 թ. կորպուսների թիւը կը լինի 20, որոնցից մէկը աւելցած է արեւմտեան Պրուսիայում, երկրորդը՝ Լօտարինգիայում, ուրեմն երկուսն էլ Ֆրանսիական սահմանների մօտ:

Ներքին գործերից ամենից առաջ պէտք է յիշել վերին աստիճանի կարևոր սօցիալական օրէնքը՝ բանւորների ապահովութիւնը ծերութեան և ինւալիդութեան ժամանակ, օրէնք, որը ընդունեց 24 մայիսի: Հետաքրքրական է, որ բայխտագի (պատգամաւորների ժողով) անդամներից ձայն տւին յօգուտ այդ օրէնքի 185 հոգի, իսկ հակառակ՝ 165 հոգի: Պէտք է հիմանալ, որ այդ ապահովութեան դանձարանին մասնակցում է տէրութիւնը տարեկան մինչ 70 միլլիօն մարկով (3 մարկը մի ռուբլի ոսկուն): Հակառակ ձայն տւողներից շատերը այդ օրէնքը ուղղակի կօմունիստական էին համարում, բայց բոլորովին ի զուր:

Այդ օրէնքը այնքան կարևոր օրէնք է, որ «Մուրճ»-ի ընթերցողներին չենք կարող բաւականաչափ չը յանձնարարել՝ իրանց յիշողութեան մէջ լաւ պահել, որովհետեւ «Մուրճ»-ը շատ անգամ առիթներ է ունենալու այն յիշատակելու: Այդ օրէնքի հիմքում մեծ դադափար կայ, որի իրազօրծումը մեծապէս պատիւ է բերում նորագոյն Գերմանիային, և, աւելացնենք, Բիսմարկի Գերմանիային, որովհետեւ նա է այդ մեծ օրէնքի նախաձեռնողը, թէպէտ և ներշնչւած է սօցիալիզմից, որի կուսակցութիւնը նա ամենայամառ կերպով հալածում է՝ սորա չափից դուրս զրգուող բնաւորութեան պատճառով:

Ոչ այնքան յաջող ելքի հասան Գերմանիայի քարածուխի վիճակներում բանող բանւորների դեռ ևս չը տեսնւած մեծութեամբ գործադուլը: Աւելի քան 100.000 հանքաբանւոր մայիս ամսին

գործը զարգացրին, յայտնելով, որ աշխատանքը կրկին կը սկսեն, երբ օրավարձը կ'աւելացնուի և օրւայ աշխատանքի ժամանակամիջոցը կը կարճացնուի: 4 մայիսի այդ բանւորներինց 3 պատգամաւոր ներկայացան կայսր Վիլհելմ II-ին, որը նրանց յորդորեց հեռու կենալ ապստամբութիւնից և սօցիալիստական զրդումներէից, իսկ 16 մայիսի նրան ներկայացած գործատէրերի պատգամաւորութեան յորդորեց՝ հեռու կենալ չափազանցութիւնից, իրանց շահերի յետևից ընկնելով և բանւորներին կայր հարստահարութիւնից: Հրամայեց բանւորներին զրութեան մասին հետադատութիւն անելու, որի հետևանքները շուտով յայտնի կը լինին: 19 մայիսի կայացաւ մի որոշ համաձայնութիւն, որով 9 ժամից աւելի չը պէտք է բանէին: Գործադուլը ստիպեց նորոգւեց, բայց աւելի կարճ միջոցով:

Աւստրիա-Ունգարիա: Այս պետութեան ներքին խնդիրներինց նոքա, որոնք ընդհանուր նշանակութիւն ունին և որոնք միշտ զբաղեցնում են թէ պետական անձերին և թէ պարլամենտին և ազգաբնակչութեանը, կատարած են պետութիւնը կազմող զանազան ազգերի ձգտումների հետ՝ իրանց լեզուն օրինապէս ընդունել տալ իբր հաւասար՝ իշխող ազգերի լեզուներին և ձեռք բերել լայն ինքնավարութիւն: Աւստրիայում այժմ քաղաքական ներքին անցքերից ամենաազդեակները հենց նոքա են, որոնք կապ ունին այդ խնդիրների հետ, որոնց նկատմամբ չեխերը առաջին դերն են խաղում: Այդ անցքերը այդքան բացառիկ բնաւորութիւն կրելով, քիչ են յայտնի մեր հասարակութեան: Միմիայն ընդհանուր զիտողութիւններով կարելի է դէպի այդ խնդիրները հետաքրքրութիւն զարթեցնել մեր ընթերցողների մեծադոյն մասի մէջ: Այդ պատճառով մենք այժմ, դոցա նկատմամբ, մանրամասնութիւնների մէջ չենք մտնում:

Մասնաւորապէս Ռենդաբիայի համար յիշենք, որ ամբողջ 1889 թ. այդ երկրի առաջին մինիստր Տիսցայի դէմ մեծ փողոցային բողոքներ եղան, առանց նրան տեղից շարժել կարողանալու:

Սերբիա: Այս երկիրը վերջին տարիներս մեծ յուզմունքներ կրեց: Նախ՝ թաղաւոր Միլանի թաղութի նստալիայի մէջ ծագած տարաձայնութիւնների պատճառով, որոնք վերջացան բաժան-

մունքով: Յետոյ լուեց, որ Միլանը պատրաստում է մի նոր սահմանադրութիւն, որով ժողովրդին տրւում են աւելի մեծ իրաւունքներ, բայց որով նա ուզում էր նախապատրաստել իւր հրաժարականը գահից: Յունարի 3-ին 1889 թ. արտակարգ սկուպչինան փակեց. նոյն օրւոյ երեկոյեան մի փալուն ժողովրդական ցոյց եղաւ թագաւորի օգտին. և արդէն 6-ին մարտի Միլանը անապատելի կերպով յայտարարեց իւր հրաժարականը գահից՝ յօգուտ իւր անհափաճաս որդու՝ Սէէքսանդր I-ի, որի համար Ռիտտիչը ընդունեց խնամակալութիւնը: Կազմեց նոր մինիստրութիւն, սկուպչինայի մեծամասնութեան համեմատ, լոկ արմատականներէց՝ Տաուշանուիչի նախագահութեամբ: Դոքա Ռուսիայի բարեկամ քաղաքական անձեր էին: Աւստրիական կողմը պահող կուսակցութիւնը, Վարաշանինի ղեկավարութեամբ, բոլորովին հեռացաւ ասպարիզից փողոցային մեծ և աննպաստ ցոյցերից ստիպւած: Յունիսի 9-ին Միլանից 1888-ին հրաժարեցրած Միքայէլը կրկին հաստատուեց մեարսուլիտ սերբիական եկեղեցու: Սկսեմբերի 29-ին վերադարձաւ Բելլերադ թագուհի Նատալիան, նոյն իսկ խնամակալութեան կամքի հակառակ: Ազատամիտները, Ռիտտիչի կուսակիցները, յունիսի 11-ին յայտարարեցին բոլոր սերբիական ցեղերի միութիւնը մի միակ թագաւորական տան ներքոյ: Յունիսի 27-ին տօնեց 500-ամեակը Կոստօւյի կուրի և այդ օրը մեարսուլիտ Միքայէլը աղօթեց սուրբ Ղազարին, որ սա Աստուծու մօտ բարեխօս լինի ջլատւած սերբերի միանալու համար:

Այս բոլորը ցոյցեր էին Աւստրիայի դէմ:

Թիւրքիա: Թիւրքիայի մեծ քաղաքական խնդիրը 1889 թւականին կազմեց Կրետա կղզու յոյների ապստամբութիւնը: Կրետայի խնդիրը առիթ տւեց Յունաստանին 5 օգոստոսի մի նօտա ուղղելու եւրոպական պետութիւններին, միջամտելու սպառնալիքով: Բայց պետութիւնները համապատասխան չէին քննեցին Թիւրքիայի դէմ, այլ թողին, որ սա ինքը ապստամբութեան վերջ զնի և հարկաւոր բաւարարութիւնները տալ: Սուլթանի կոմիսար Շաքիր-փաշան հետեւեալ ամիսներում ապստամբութիւնը կարողացաւ վաճնաչարի զսպել, որից յետոյ, ղեկեմբերի 10 ին, Սուլթանի ֆիրմանով կղզու վերայ նոր կարգ

Հաստատուեց: Համաձայն այդ Ֆիրմանի, Կրետայի պատգամաւորների ժողովը պէտք է բաղկանայ 35 քրիստոնեաներից և 22 մահմեդականներից: Ոստիկանութիւնը պէտք է կազմւած լինի ոչ միայն կրե-տացիներից, այլ և Թիւրքիայի այլ ազգերից. փոխարքան կարող է լինել թէ քրիստոնեայ և թէ մահմեդական: Այսպիսով Կրետայի քրիստոնեայ ազգաբնակութեան ազատութիւնը աւելի սահմա-նափակւեց. բայց այդ վատ տպաւորութիւն գործեց Եւրոպայի և նոյն իսկ մամուլի այն մասի վերայ, որը բարեկամական լեզու էր բանեցնում Թիւրքիայի համար:

Վատ տպաւորութիւն գործեց նոյնպէս քուրդ գլխաւոր Մուսա-բէյի արդարացնելը թուրքական դատարանների կող-մից, այն Մուսա-բէյի, որը մեղադրուած էր տաճկաստանցի հա-յերից զանազան յանցագործութիւնների մէջ: Խնդիրը ստա-ցաւ մեծ նշանակութիւն և դարձրեց իւր վերայ Եւրոպա-յի ուշադրութիւնը: Եւ նոյն իսկ մի այնպիսի թերթ, որ-պիսին է Միւնխենի «Allgemeine Zeitung», որը ամբողջ ժամա-նակ աշխատում էր Մուսա-բէյի գործը գրեթէ մի առաւելել ցոյց տալ և «Դէյլի Նիւսի» հնարած մի գործ, այժմ ստիպւած է տես-նում իրան ասել հետեւեալը.

«Այդ անարդար դատարանական վճռով Անգլիայի ազատամիտ կուսակցութիւնը իրաւունք ձեռք բերեց գանդատուելու Armenian atrocities (ոճրադործութիւն հայերի դէմ) վերայ, և եթէ նորա-գոյն լուրերը ճիշդ են, դէպքը մինչև անգամ դիւանագիտական գոր-ծողութեան առարկայ է դարձած»:

Ֆրանսիա: 1889 թւականին Ֆրանսիայի ամենագլխաւոր խնդիրները երեք էին՝ Պարիզի համաշխարհային հանդէսը յաջո-ղացնել, Բուլանժէին վայր գցել և երրորդ՝ հանրապետութեան յա-մար յաջող ընտրութիւններ անել: Այդ նպատակներին Ֆրանսիան հասաւ ամենափայլուն կերպով: Բուլանժական շարժման և ընդհա-նուր ընտրութիւնների մասին մենք առիթ ունեցանք իւր ժամա-նակին խօսելու: Այդ պատճառով մենք այժմ կարող ենք լոկ յի-շատակութիւնով բաւականանալ:

Օրէնսդրական գործերից յիշենք մասնաւորապէս հետեւեալները: Յուլիոսի Զ-ին պատգամաւորների ժողովը, սենատի առաջարկութեան

Համեմատ, ընդունեց նոր զինուորական օրէնքը, որի համաձայն զինուորական ծառայութիւնը 3 տարի է, փոխանակ մինչեւ այժմ եղած 5 տարւայ ծառայութեան: Մի տարի միայն ծառայելու արտօնութիւնը պէտք է վաչեղեն միայն ուսանողները (բարձրագոյն զարոյցներում). ուրեմն սեմինարիստները, այսինքն աստուածաբանութեան կանդիդատները ազատ չեն ծառայութիւնից, որպէս այդ պահանջում են հանրապետութեան հակառակորդները: Ազատ չը պէտք է լինի ոչ ոք: Այդպիսով Ֆրանսիան, որպէս այդ խրոխտ կերպով յայտարարեց պատերազմական մինիստր Ֆրէյսինէ, շուտով կ'ունենայ 3 միլիօն զինուոր, փոխանակ 2 միլիօնի:

Համաշխարհային հանդիսի միջոցին եղան բազմաթիւ կօնգրեսներ Պարիզում, որոնցից մէկն էր՝ բանւորների միջազգային կօնգրեսը, որին մասնակցեցին նաև սօցիալ-դեմօկրատներ շատ երկիրներից: Այստեղ սակայն կրկին երևան եկաւ հակառակութիւնը Մարքսիստների և այսպէս կոչւած «պոստիրիլիստ»-ների մէջ:

Այն գլխաւ: Յունւարին կայացան կոմսութիւնների մէջ ընտրութիւններ (ինքնավարութեան համար), ուր Լօնդօն քաղաքը իբր մի առանձին կոմսութիւն ընդունեց, փոխանակ 14 վիճակների բաժանւելու, ինչպէս առաջ էր: Լօնդօնի մէջ յաղթեց այն կուսակցութիւնը, որը պահանջում է քաղաքային ինքնավարութեան համար նոր րեփօրմ:

Դեռ ևս 1888 թուականից ժառանգեց 1889 թւականը այն նշանաւոր քաղաքական պրօցեսը, որ սկսել էր Իրլանդիայի դատը պաշտպանող Պարնելը «Times» լրագրի դէմ: Գործը նրանից սկսեց, որ այդ տիեզերահռչակ թերթը, իբր թէ Պարնելից զրաժ, նամակներ հրատարակեց, որոնց մէջ Պարնելը իբր թէ հաւանութիւն է տալիս Իրլանդիացում կատարւած ոճիրների համար: Հէնց սկզբից Պարնելը հերքեց այդ նամակների իսկութիւնը: Փետրւարի 25-ին հաստատուեց, որ այդ կեղծ նամակների հեղինակն է Պիզօտտ անունով մէկը: Սա փախաւ Պարիզ, որտեղից նա ընդունեց իւր յանցանքը. այդտեղից փախաւ նա Մադրիդ, ուր նա իրան սպանեց: Պարնելը, որին այդ պրօցեսով կամենում էին բարոյապէս սպանել, դուրս եկաւ գործից աւելի հաստատուն քան երբ և իցէ: Ազատամիտների ընկերութիւնները նորա պատուին ուեցին խնձողքներ. Վլադստօնը, որը

արդէն վաղուց նորա դաշնակիցն է, հրաւիրեց նրան իւր մօտ հիւր: Բայց և այնպէս այժմեան պահպանողական մինիստրութիւնը, Իրլանդիայի նկատմամբ, չը վիժեց իւր երեք տարի արդէն բանեցրած քաղաքականութիւնը:

Անգլիայի պետական զինքը արտաքին գործերում պահպանելու համար, պարլամենտը աւելց արկիւի 1-ին 21^{1/2} միլիոն ոսկի բուբլու չափ դումար, որով նոր պատերազմական նաւեր պէտք է շինուեն:

Իւր նաւային զօրութիւնը Անգլիան առիթ ունեցաւ ցոյց տալու զերմանացոյց կայսր Վիլհելմ II-ին, օգոստոսի 5-ին, Ապիտահիւի նաւահանգստում:

Բանւորների գործադուլներ եղան 1889 թ. Անգլիայում, որպէս և առաջ: Անպոկեմբերին Լօնդօնի նաւահանգիստների բոլոր բանւորները իրանց աշխատանքը վեր դրեցին, իսկ գեկտեմբերին՝ դաղի բանւորները: Առաջինները նպատակին հասան, երկրորդների համար՝ այդ դեռ խնդիր է:

Իտալիա: 1889 թ. իւր կոնսիտական քաղաքականութեան մէջ Իտալիան մի քանի յառաջադիմութիւններ արաւ: Մարտ ամսին Արիսինիայի թագաւոր (Նեղոս) Յովհաննէսը մեռաւ մի կուր մէջ զերւիշների դէմ, զրանից յետոյ նորա քրոջ որդին՝ Մանգաշա և Շօա՛ի թագաւոր Մենելիք ուղեցին Արիսինիայի թափուր մնացած գահը իրարից խել: Մենելիքը յենեց Իտալիային, որը յունիսի սկզբին գրաւեց Փերեն և օգոստոսի 4-ին՝ Ամարա: Այդպիսով իտալացիք ձեռք բերին Մասսաուայի նման տաք և վատասողջ քաղաքի զօրքերի համար բարձր և առողջ բանակատեղեր: Դեռ օգոստոսին ներկայացաւ Հում Մենելիքի գեսպանութիւնը, որը Իտալիայի Հումբերտ թագաւորի հետ մի պաշտպանութեան դաշինք ստորագրեց, որի զօրութեամբ Մենելիք թագաւորը իւր բոլոր արտաքին գործերում Իտալիայի միջնորդութեանը պէտք է դիմէր:

Նոյեմբերի 15-ին Իտալիան իւր պաշտպանութեան ներքոյ վերցրեց Սոմալի՛ի ափը՝ սկսած Կիամպու՛ից մինչ Կարչէյի: Իտալիայից պաշտպանւած Մենելիքը գեկտեմբերի 3-ին յաջողեցրեց Սօնտուսո՛յում իրր Արիսինիայի թագաւոր ձեռնադրել:

Զը նայած այդ յաջողութիւններին, մեծ դժւարութիւնների

Հանդիպեց Կրիստին ներքին գործերի մէջ: Հռովմում, փետրւարի 7-ին, գործից զուրկ բանւորների բազմութիւնը մեծամեծ աղմուկներով յարձակեցին խանութների վերայ, որոնցից շատերը, հարուսաներից, կործանւեցին: Միւս կողմից Նոալիան մաքսային կռիւ սկսեց Պրանսիայի դէմ, որի հետ քաղաքականապէս վատ յարաբերութիւնների մէջ է տարիներից ի վեր: Պրանսիան պատասխանեց նրան նոյն ձեով և այնպիսի սոսկալի հարւած տւեց Նոալիայի ատւորական յարաբերութիւններին, որ Նոալիան այժմ կրկին բարեկամութեան ձեռք է կարկառում: Արովհետև, եթէ բարձրացրած մաքսերի պատճառով Քրանսիական արտահանութիւնը դէպի Նոալիա պակասեց միայն մի քանի տասնեակ միլիոն Ֆրանկով, իտալական արտահանութիւնը դէպի Պրանսիա պակասեց հարիւրաւոր միլիոններով: Եւ տեղըն էր:

Ասիա: Ասիական երկիրներից պէտք է յիշատակել ամենից առաջ Փապուանիան, որը մտաւ պարլամենտական երկիրների շարքը: Փետրւարի 11-ին կայսրը (Միխայ) հրատարակեց նոր սահմանադրութիւն, որով կայսրից դատ, սահղծւում են մի սենատ և 300 անդամներից բաղկացած պատգամաւորների ժողով: Սահմանադրութիւնը երաշխաւորում է կրօնի, խօսելու և ժողովների ազատութեան մասին: Հրատարակւած է ընդհանուր զինւորադրութեան օրէնքը:

Պարսկաստան: Պարսից Նահի հետ, Լոնտոն եղած ժամանակ, անգլիական կառավարութիւնը կապեց մի դաշնագրով, որի զօրութեամբ Պարսկաստանում հիմնւում է մի պետական բանկ, անգլիական կապիտալով, և այդ բանկին տրւում է միակ իրաւունքը՝ Պարսկաստանի բոլոր հանքերը բովազործելու:

Աֆրիկա. (Եգիպտոս): Եգիպտոսը ընթացիկ տարիներից, որոնք արդէն Աբիսինիայի Նեգուսին ջարդել էին: Այդ՝ յուլիսի սկզբներին էր: Բայց անգլիական զենեքալ Գրինֆելդի յաղթութիւնը Տոսկիի մօտ, օգոստոսի 3-ին, սպանեց զերեւելներից 1500 հոգի, որոնց մէջ և նոցա առաջնորդ Վանգէլ-Աւյումին:

Եգիպտական կառավարութիւնը պետական պարտքերի տոկոսները իջեցրեց, որով տարեկան մեծ զուճար պէտք է խնայել: Դորա փոխարէն, նախագծի համեմատ, եգիպտական Ֆելլահները

պէտք է ձրի մշակութեան պարտաւորութիւնից ազատեն: Բայց Թրանսիան իւր համաձայնութիւնը մերժեց, մինչև որ Անգլիան չ'որոշի, թէ երբ պէտք է իւր զօրքերը դուրս բերէ Եգիպտոսից:

Միջին Աֆրիկա: Այժմ ընդհանուր ուշադրութեան արժանացած խնդիրներից կարևորագոյնը՝ ստրկութեան վերացումն է Աֆրիկայում: Այդ խնդիրը 1889 թ. քաջ արաւ դէպ առաջ: Զանգիբարի սուլթանը՝ Սալիւ խալիֆան, սեպտեմբերի 20-ին հրամայեց, որ 1889 թ. նոյեմբերի 1-ից իւր երկիրները ներմուծած ստրուկները ազատ մարդիկ են: Բայց դորա հակառակ՝ մահգիլի հակաքաղաքակրթական շարժումը յաջողութիւններ ունեցաւ, այնպէս որ ներկայումս հերոսի անուն վաստակած Էմին փաշան, որ երկար ժամանակ Աֆրիկայի այրեցեալ գօտիի նահանգները պաշտպանում էր, մահգիլատների ձեռքը զցեց այդ երկիրները և նրան ազատելու համար գնացած մի այլ հերոսի, այն է Ստեյկի հետ անցաւ գերմանական Սրբեկեան-Աֆրիկան: Գեկտեմբերի 4-ին այդ երկու համարձակ մարդիկ հանդիպեցին իրար Բազամօյիօ'ում, ուր ասիացի, Էմին փաշան դժբաղդութիւն ունեցաւ իւր կիսակոյր դրութեան մէջ պատուհանից վայր ընկնելու: Կեանքը զոնէ ազատւած է: Գերմանացիների կողմից Էմին փաշային օղնութեան էր գնացած դ-ր Պետերս, որի մասին տեղեկութիւնները առայժմ հակասող են:

Ամերիկա: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները, որոնք ցայժմ 39 տէրութիւններից էին բաղկացած, 1889 թ. յունւարին ընդունեցին երեք ուրիշ տէրութիւններ իրանց գիրկը՝ Հիւսիսային և Հարաւային Դաիոտա, Մոնտանա և Վաշինգտոն. այնպէս որ նոցա դրօշակը այսուհետև 42 աստղ պիտի ունենայ:—Մարտի 4-ին նոր ընտրւած նախագահ Հերիսօն (հանրապետական կուսակցութիւնից) մուտք գործեց Վաշինգտոն մայրաքաղաքի Սպիտակ-Տունը: Նոր նախագահը մի կօնգրես կազմեց Ամերիկայի բոլոր պետութիւններից, սկզբնաւորութեան համար, առ այժմ տնտեսական միութիւն կազմելու: Այդ մասին «Մուրճ»-ի նոյեմբերի տետրը ընդարձակօրէն խօսեց:

Ամերիկական պետութիւնների սահմանադրութիւնների միա-

կերպութիւնը իրագործւեց 'Բրազիլիայում եղած յեղափոխութիւնով, որով այդ երկրում վերացւեց միապետութիւնը, Պոմ-Պեդրօ ¹⁾ կայսրը աքսորւեց և հիմնւեց այսպէս կոչւած՝ «Բրազիլիայի Միացեալ-Նահանգները» (Տե՛ս «Մուրճ»-ի № 11):

Z.

¹⁾ Մեր բոլոր միւս թերթերը յալած չ'ուղեցին ուղղել իրանց սխալը, անուանելով Բրազիլիայի նախկին կայսրին՝ Պոմ-Պեդրօ, մինչդեռ նաքա պէտք է գիտենալին, որ այդ անունը պօրտուգալական է և ոչ իսպանական:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս զամազան տեղերից, մոնաւանդ ու-
սանդական խմբերից և չքաւոր ուսումնարանների հոգաբար-
ձութիւններից ստացած է նամակներ, խնդրելով, որ «Մուրճ»-ը
ներանց ուղարկւի ձրիապէս 1890 թւականին: Ամենքի համար
մեր պատասխանը եղած է միատեսակ.—մինչև որ «Մուրճ»-ի
բաժանորդագրութիւնը չ'անցնի 650 թիւը, մենք մեր կողմից
ձրի ոչ սրին ուղարկել չենք կարող, հետեապէս կը մնալ, որ
հասարակութիւնից մարդիկ գտնւին, որոնք նոցա փոխարէն
վճարեն: Այդպիսի նամակներ ստացւած են սու ալժով՝ Ժրնեի
հայ ուսանողութիւնից, Գաւրէժի հայկական զբաղարանից,
Քարաւնսարալի ուսումնարանի հոգաբարձութիւնից, Թիֆլիսի
Էմանուէլի Գրադարանից, Վաւալի ուսումնարանի հոգաբար-
ձութիւնից:

Նուիրալ, Զաքարիալի և Յզնալի հայոց ուսումնարան-
ներին «Մուրճ» կ'ուղարկւի 1890 թւականին՝ իբր նւէր պ. պ.
Յովհաննէս և Արրահամ Բունիաթեանցներից, Վլադիկաւկազի
Գպրացին՝ նւէր նոյն ուսումնարանի հոգար. պ. Հախէր-
դեանցից, Ռաչտի հայոց զբաղարանին՝ նւէր պ. Ա. Մելիք-Աղա-
րեանցից և Ակիերմանի (Բեսարաբիա) հայոց ուսումնարանին՝
նւէր նոյն ուսումնարանի հոգաբարձու պ. Խուդաւերդի Աստուա-
ծատրեանից:

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ չափաւորում ենք, որ անցեալ 1889 թւականի
«Մուրճ»-ի 12 №-ները կարող են ստանալ 8 ռուբլիով, երկու
հատորով կազմած, (չը կազմած՝ 7 ռ.), իսկ ոչ-բաժանորդներին
1889 թւականի «Մուրճ»-ը կը ծախուի 12 ռուբլիով:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Մօսկւայի 15 հալ ուսանողներից խմբադրութիւնս ստացաւ մի նա-
մակ, որով նշքա խնդրում են մեզ տպել «Մուրճ»-ում նոցա բողոքը՝ ուղ-
ղած լանտառեղծ Ռաֆայէլ Պատկանեանցի մի գրածքի դէմ, և թէ պ.
Մկրտիչ Բարխուդարեանցի գէմ, որը ալ գրածքը հիւրընկալել է «Գրա-
կանական և Պատմական Հանգչեում»: Ահա ալ գրութիւնը.

«Խորին գգւանքով կարդացինք «Հանգչեւ» գրականական և պատմա-
կան» հրատարակութեան երկրորդ գրքում տպւած Սիւլիսի «Աստանայի
(Սիւլ)» պատկերը: Յաւ է տեսնել, որ մեր մանուկ գրականութիւնը աշխա-
տում են դարձնել անձնական կեղտոտ հաշիւների և կրքերի ասպարէզ և
ալն՝ ալնպիսի մի հեղինակ, որի երգերը միշտ ոգևորել են հալ ժողովրդին
համակրելի զգացմունքներով: Առանց զարույթի չի կարելի կարգաւ ալ
կեղտոտ հաշիւները և ստոր գրադարութիւնների հաւաքածուն, որին
զո՛ւ է դարձել մեր հոգեորականութեան ամենապարզելի ներկայացուցիչնե-
րից մէկը, մի վարդապետ, որին բոլոր մօտիկից ճանաչողները համարում են
անպալման բարոյական անձնաւորութիւն: Մենք բողոքում ենք լանուշ
սրբապղծւած հալ գրականութեան և տոնակոխ արած մարդկային պատւի՝
Սիւլիսի և հրատարակիչ պ. Մ. Բարխուդարեանցի դէմ, որ ուսանո-
ղական նստարանի վերալից տեղ է տւել իւր «Հանգչեւ»-ում ալգպիսի զղւելի
պատկերին:

Տ. Յովհաննիսեան, Մկրտիչ Տէրեան, Յ. Ամիրխանեանց, Մ.
Մուրադեանց, Մ. Շաթիրեանց, Քէորդ Զուբար, Լևոն Պարո-
նեանց, Ս. Աբրահամեանց, Ա. Մատուրեանց, Վ. Վարդանեանց,
Գ. Տէր-Ղազարեանց, Ար. Զարգարեանց, Յ. Յովհաննիսեան,
Կ. Գոնեանց, Յ. Իգիտեանց:»

«Մուրճ»-ի խմբադրութիւնը ուրախութեամբ տպում է ալս գրութիւնը,
չոյս ունենալով, որ դորանով նա նպատաւ կը լինի գրական բարքերի
մաքրւելուն: Իսկ միւս կողմից՝ մենք մեծ շահ տեսնք, որ պաշտպանւի մի
մարդու պատիւ, որը կարողացել է ալգքան բարի անուն վաստակել թէ
իւր բաղմաթիւ ծանօթների և թէ մասնաւորապէս ուսանողական երիտա-
սարդութեան մօտ: Սակայն հարկ ենք համարում նկատել ալթմուանից, որ
ստորադրողների բողոքի հետ միացնելով մերը, մենք ալն չենք ուղղում
ճակ ոչ. հրատարակչի դէմ, որը կարող էր ալս գէղքում անդիտակ լինել
իւր աշխատակցի անձնական գիտաւորութիւններին:

открыта подписка

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Содержаніе газеты: частныя объявленія и рекламы, которыя принимаются къ напечатанію на русскомъ, французскомъ, нѣмецкомъ, армянскомъ, грузинскомъ и татарскомъ языкахъ; свѣдѣнія, имѣющія справочный характеръ, какъ то: получаемыя въ Тифлисъ телеграммы „Сѣвернаго Агентства“, биржевыя, промышленныя, торговыя и коммисіонныя справки, полицейскій, думскій и судебный бюллетени съ извѣстіями о банкротствахъ и торговой несостоятельности, некрологи, списки недоставленныхъ телеграммъ, такса на продукты, календарь, время отхода и прихода поѣздовъ з. ж. дороги и пароходовъ на Черномъ и Каспійскомъ моряхъ, а также срочныхъ экипажей по военно-грузинской дорогѣ; врачи и врачебная помощь, театры, зрѣлища, увѣдомленія о засѣданіяхъ обществъ, актахъ, юбилейныхъ и другихъ торжествахъ и народныхъ праздникахъ, свѣдѣнія о полученныхъ грузахъ и товарахъ и т. под.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городскимъ подписчикамъ:

На годъ съ доставкой на домъ. 1 р. 20 к.
 На полгода » » 80 »

Городскіе подписчики, получающіе какія либо изданія, выходящія въ г. Тифлисъ, платять, по предъявленіи ими квитанцій на подписку въ контору газеты „Кавказскія Объявленія“ и въ отдѣл., лишь 60 н. въ годъ.

Иногороднымъ подписчикамъ:

На годъ съ пересылкою. 1 р. 80 к.
 На полгода » 1 » — »

Для прочтенія „Кавказскія Объявленія“ предлагаются публикѣ въ вагонахъ тифлисск. трамвая, въ подъѣзжающихъ къ Тифлису поѣздахъ за-кавказск. ж. дор. изъ Баку и Батума и срочныхъ экипажахъ по военно-грузинской дорогѣ. За помѣщеніе объявленій взимается по 4 коп. со строки петита. Подписавшіеся же на газету „Кавказскія Объявленія“, при сдачѣ объявленій не менѣе 15 разъ, пользуются большою скидкой по соглашенію съ конторою Траурныя объявленія лишь на первой страницѣ; плата за каждый разъ по 2 рубля.

Контора и редакція газеты „Кавказскія Объявленія“ помѣщается на Гаповской улицѣ, при конторѣ нотаріуса А. Т. Мамаиконсва, а отдѣленіе: на углу Головинскаго проспекта и Барятинской улицы, въ павильонѣ Хидкекли.

Адресъ для телеграммъ: Тифлисъ, „Кавказскія Объявленія“.

1890 „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ" 1890

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒՆՍԱԳԻՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

«Հանդիս»-ի դ. տարւոյ բաժանորդք տարւոյն վերջը կ'ընդունին մէկ մէկ օրինակ նոր վէպ իբր յաւելուած:

Բաժանորդագրինն է 8 ֆրանք, — 4 րուբլի թղթով: — 4 ֆլորին: Հասցէն՝ Вѣ Вѣну (Австрія). Редакция „Андець“. Vien, V'II. Mechitharisteng. 4. և կամ՝ Rédaction de la Revue „Hantess“, Vienne (Autriche) V'II. Mechitharisteng. 4.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ դրուել պ. Յովակիմ Զաթալ-պաշեանի մօտ, պ. Մութաֆեանի գրասենեակում:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԻՍԻ»

1890
VIII ՏԱՐԻ

Ա Ղ Բ Ի Ի Ր

1890
VIII ՏԱՐԻ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

Կը հրատարակի նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցներէ մասնակցութեամբ, զիւրքն աւելի մեծացրած, չքեղ թղթի վերայ և նորագոյն տառերով, երեք ՊՐԵՄԻԱՆԵՐՈՎ, ՏԱՐԻԱՅ ԸՆԹԱՅԻՈՒՄ:

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Ե Ի Յ Ա Ի Ե Լ Ի Ա Յ

1890 „Տ Ա Ր Ա Չ" 1890

ԳԵՂԱՐԻՆՍԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

«ՏԱՐԱՉԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՈՎ 3 Բ. Ի.

«Տարազին» և «Աղբիւրին» միանալով բաժանորդ դրուողը մի և նոյն հասցէով, մինչև առաջիկայ դեկտեմբերի 1-ը, փոխանակ 3 ր. պիտի վճարէ 2 ր., այսինքն «Տարազ» և «Աղբիւր» միասին փոխանակ 6 րուբլու 5 ր. և 28 կ. փոստի մարկա «Աղբիւրին» պրէմիա «ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ» պատկերի ճանապարհածախս:

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՎԻՅ ԶԻ ԸՆԴՈՒՆԵՆՈՒՄ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакция иллюстриров. Журнала «ТАРАЗЪ», իսկ Արտասահմանից. Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré «TARAZ».

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌԻՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵԻՆԱԼ ԳՐԲԵՐԸ. Բ. Կ.

«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով.	12	—
ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻ. — «Աղգաբնակութիւնը և աղգա- բնակչական շարժումները»	—	40
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասարա- կութիւնը»	—	40
ԲՕԿ ԲԺԼԶԿ. — «Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին»	—	30
АРАСХАНИАНЦЪ А. — «Закавказская хлебная тор- говля»	—	75
— — — — — «Закавказские шелкометалльные заводы»	—	80
ՊԻՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (վէպ)	1	—
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղլարցի)՝ Ման- կաւանութիւն.	—	50
ԱՏԲԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ» — վէպ հայ-կաթօլիկներ- ի կեանքից.	1	—
ԼԼԹ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (վէպ)	—	50
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (Ղլարցի)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԱՆ. ՄԻ ԲԱՆԻ ՀԻՒԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ» —	5	

ձանապարհածախար խմբագրութեան վերայ է: Գրամի տեղ կա-
րելի է ուղարկել պատրի մարիաներ:

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿ, ԲԱՆԱՍԻՐԱԿ, ԱԶԳԱՅԻՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

Ս Ո Յ Ն 1890 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն

Կը հրատարակուի նոյն ուղղութեամբ և պրօգրամմայով:
Բաժանորդագրինն է Ռուսաստանում՝ 4 ր., Եւրոպայում՝ 5 ր.,
Հնդկաստանում՝ 6 րուբլի:

Հասցէն՝ Эчмиадзинъ. Типогр. Комитетъ.

«ԲԱԶՄԱՎԷՊ» ԱՄՍԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1890 թ.

«ԲԱԶՄԱՎԷՊ» ամսագիրն պիտի հրատարակուի 1890 տարւոյն չոր-
ջանին մէջ մինչոյն դիրքով. միայն թէ ամեն երկու ամիս մէկ թերթ
պիտի աւելացուին սովորական թերթից վերայ:

Տարեկան գինն է 10 ֆրանկ (4 րուբլի) կանխիկ վճարելի:

Դիմել՝ Rédaction de la Revue «Bazmavep».

Venise (Italie). St. Lazare. — R. P. Mékhitharisten.

Իսկ ի Տիգրիս և չրջակայքը կարող են դիմել առ մեր զործակալն
պ. Յախկիմ Զաթարպաշեան: Խմբագրութիւն «Բազմավէպ»-ի

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ԹԻՖԼԻՍ, ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՓԱՂԱՅՈՒՄ)

Տրուած են հայերէն գրքեր: Ամսական վճարը 20 կօպէկ է: Սկզբնական դպրոցների աշակերտները և աշակերտուհիները վճարուած են 10 կօպէկ:

Գրողարանը բաց է առաւօտան 9 ժամից մինչև 2, և երեկոյան 5 ժամից մինչև 8 ժամը, իսկ կիրակի օրերը առաւօտան 9—12 ժամը:



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ

ԴԻՏԵԱԿՈՎՍԿՈՒ ԹՂԹԵԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:

Աւելի մեծ քանակութեամբ պատի, գրեւ, գրքերի, քաղաքական, ծխախոտի, դոյնաւոր, փաթեթների և այլ թղթերի՝ զործարանական գներով, որպէս նաև մեծ ասորտիմենտ գրասեղանի իրեղէնների:

Հասցէն նամակների համար՝ Թիֆլիս. Дворцовая ул., д. Дворянскаго банка, складъ Дитяковск фабрикъ.

Հեռագրերի համար՝ Թիֆլիս. Дитяковское Общество

РЕСТОРАНЪ ПУРЪ-ГВИНО

На Головинскомъ проспектъ. въ домъ князя Баграціонъ-Мухранскаго (подъ Тифлисскимъ собраніемъ).

Ежедневно приготавливаютъ кушанья Европейской и Азіятской кухни. Специальность гурійскихъ блюдъ. Обѣды по-мѣсячно изъ 2-хъ блюдъ отъ 12 руб. Отпущаются также и на домъ.

Напитки и вина изъ лучшихъ фирмъ кн. И. К. Баграціонъ-Мухранскаго и другихъ фирмъ отъ 40 коп. бутылка и дороже. Пиво мѣстныхъ заводовъ, а также одесское и жигулевское.

При ресторанѣ отдѣльные семейные кабинеты. Билліарды русскій и французскій, нардъ и шахматъ. Получаются журналы и газеты мѣсячныя и столичныя. Для прїѣзжихъ меблированныя комнаты отъ 50 коп. до 1 р. 50 коп. по-суточно и отъ 12—30 руб. по-мѣсячно. Русскій билліардъ пріобрѣтенъ на кавказской выставкѣ, гдѣ получилъ первую награду.

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեւորեցնանք թուր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր բնկերներ տան տիկիճների և աղջիկ օղնակաճներ
թուր արհեստաւորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Զենդերի բնկերութեան կենդրոնական պահեստում, Գո-
սվենսկի պրօսպեկտի վերայ, Միլիմանովի տան և նրա բաժանմանը-
նքին մէջ:

Բաղում: Միքայելեան փողոցում,
Միքա Սեւաքեանի տ.
Քաթայիսում: Քաթվարի գէմ
Չերեկովի տ.

Բաթումում: Պօլեյկական փողո-
ցում, Թէքզի օղլու տ.
Թէհրանում: Մարշ-Մէյլանի
գէմ, բուլվարի վերայ:


և նրանց ճանապարհորդող գործաւորներին ծօր

Միջին եւ Հիւսիսային Ամերիկայի ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
Գլխավոր ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՈՏ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամբ հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ալն է՝ չարաթով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց տաճալ զրաւակաճով զրամբ վճարելու համար:

Յ. Գ. Զինդերի և բնկ. թուր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, լնչպէս ևն.
ասեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:



THE
JOURNAL OF THE
ROYAL ANTHROPOLOGICAL INSTITUTE
OF GREAT BRITAIN AND IRELAND



Volume 100
Part 1
1970



Published by the
Royal Anthropological Institute
of Great Britain and Ireland
21, BEDFORD SQUARE, LONDON, W.C.2

Subscription prices
£12.00 per annum
in advance

Single copies
£1.00 each

„Մ Ո Ւ Ր Ճ“

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

Տարեկան բաժանորդագրւելն	10 ռ.
Կէս տարւանը	6 ռ.
Երեք ամսւանը	4 ռ.
Մի գրքովը	1 ռ. 50 կ.

Ընդունուած է բաժանորդագրութիւն նաեւ մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վաշելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարէցտարի մեծացնելը միանգամայն կախած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Շաւաղիցն է կախւած նիւթերի հարստութիւնը: Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամստկան մի երեսի համար	10 ռ.
„ կէս երեսի համար	6 ռ.
„ քառորդ երեսի համար	4 ռ.

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաեւ յայտարարւած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրութիւնը գտանւում է՝ Գանձեան փողոց, նախկին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Іоаннисіани), բոլորովին մօտ Երևանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».